ՍՈՒՐՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 10 1892 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1892 № 10

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

		Երես	
1	ՍԵՆԿԵՎԻՉ, ՀԵՆՐԻԿ	1391	Անանց գաւառների (վեպ)։
2	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . .	1422	Գամառա-Քաթիպայի վիշտ. (բան.)։
3	ԴԷ ՄՈՊԱՍԱՆ, ԳԻՒԻ	1424	Վալտեր Շնաֆի արկածները։
4	ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆՆԷՍ .	1433	*** (բանաստեղծութիւն)։
5	ՆՈՅՆԸ	1434	*** (բանաստեղծութիւն)։
6	ԽԱՓԱԿՆԵԱՆ, ԳԱԲԵԳԻՆ . . .	1435	Նաւթաշրջանի բանաւորները։
7	ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀ. . . .	1449	Հին ու Նոր Աթէնք (վերջ)։
8	ՄԱԳԱԼԹԵԱՆ, ԵՂԻՇԷ.	1469	Ագգի Երգիչը — Ե. Պատկանեան։
9	Ա., Ա.	1482	«Ազնկամարտական Գրադարան»։
10	ԲԱՐ.	1484	«Գաղտագիրք կրօնիս»։
11	ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆՆԷՍ .	1485	«Բանաստեղծութիւններ»։
12	ԼԱԼԱՅԵԱՆ, ԵՐԻԱՆԴ.	1488	«Զատիկի Բարեմուտք»։
13	ԱՐԱՄԵԱՆԵԱՆՑ, ԱԼԵՔՍԻՔ. . .	1495	Դպրոց-վարչ. բնիգարտ. II. (վերջ)։
14	ԼՈՒՍԻՆԻ.	1509	Ամուսնի Քրանիկ։ Թատր. կոմիտեատ։
15	»	1513	Ժողովրդական ընթերցումներ։
16	ՂՈՒԼԵԱՆՑ, ԱԼԻ.	1516	Գրականական մի տեղ երեսի։
17	Ֆ..	1518	Աղատատմանեան քրանիկ։
18	Ζ..	1538	Քաղաքական տեսութիւն։
19	ԽՄԲ.	1542	Խմբագրութեան կողմից։

ՑԱՑՏԱԼԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.
1892

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 10 1892 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1892 № 10

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.
1892

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Октября 1892 г.

ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկեւիչի

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն [1])

---

17 ապրիլի։

Այսօր եկայ Պլոշով և ամեն բան երևակայածիցս տարբեր գտայ։ Մի կառք վարձեցի ու առաւօտուայ եօթին ճանապարհ ընկայ Վարշաւայից, հաշուելով, որ ժամի ութին մօտ տեղ կը հասնեմ։ Հօրաքոյրս ինձ ասել էր, որ իւր հիւրերը վաղ են վեր կենում։ Երեկուան պէս էլի շարունակ սիրտս տրորւում էր և մտքերը անհանգիստ վիսում էին գլխումս։ Ինքս ինձ խօսք տուեցի, որ ոչ մի ծրագիր չեմ կազմիլ ոչ Անելկային ողջունելու համար, ոչ էլ այնուհետև նրա հետ վարուելու համար։ Թող լինի այնպէս, ինչպէս պէտք է լինի և ինչպէս կը պատահի,—վճռեցի ինձ ու ինձ։ Սակայն չէի կարողանում չը մտածել, թէ արդեօք ինչպէս կը լինի, ինչպէս է Անելկան, ինչպէս կը հանդիպի ինձ, ինչ կ'ուզենայ զրալ տալ ինձ, ինչ ուղղութիւն կը տայ մեր յարաբերութիւններին։ Որովհետև ես ինքս դրա նկատմամբ ոչինչ չէի վճռել և չէի ուզում վճռել, հաւատացած էի, չը գիտեմ ինչու, որ նա անպատճառ մի

---

[1]) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1, 2, 3, 4, 5, 6, 7—8։

բան վճռած կը լինի։ Նախատեսելով այդ, ես երբեմն նրա վերաբերմամբ թշնամական տրամադրութեան մէջ էի ընկնում, երբեմն էլ, մոռանալով՝ որ ինչ էլ լինի նա էլ իրան ազատ չի կարող զգալ իմ ներկայութեամբ, կարեկցութեան նման մի բան էի սկսում զգալ դէպի նա։ Երևակայութիւնս այն աստիճան զբաղուած էր նրանով, որ նա կարծես աչքիս առաջին կանգնած լինէր։ Վերին աստիճանի պլաստիկաբար յիշում էի նրա ճակատը ծածկող շագանակագոյն մազերը, նրա երկար թերթևունքները, աչքերը, փոքրիկ ու նրբագիծ դէմքը։ Աշխատում էի զուշակել, թէ ինչպէս կը լինի հագնուած։ Միտքս էին գալիս նրա այս ու այն խօսքերը, շարժումները, հագուստները, նրա դէմքի արտայայտութիւնները։ Զարմանալի յամառութեամբ միտքս էր գալիս մանաւանդ այն բոպէն, երբ նա մի օր վերևի սենեակներից վերադարձաւ հիւրասենեակը՝ բորբոքուած դէմքին պուդր քսած։ Վերջապէս այդ յիշողութիւններս այն աստիճան սաստկացան, որ գրեթէ տեսիլք դարձան։ «Էլի հաւաքեցին գլխիս»,—մտածեցի ինձ ու ինձ և, աշխատելով ազատուել այդ պատկերներից, սկսեցի կառապանի հետ խօսել։ Հարցրեցի նրանից, պսակուած է արդեօք։ Նա պատասխանեց,—«առանց կնկայ ինչպէս կ'ապրի», ու յետոյ ինչ որ շարունակեց, բայց ես չը լսեցի, որովհետև իսկոյն աչքովս ընկան Պլոշովի՝ հեռուում նշմարուող կամախները։ Ինձ համար բոլորովին անհասկանալի կերպով արդէն մի քանի վերստ ճանապարհ էինք եկել։

Պլոշովը որ տեսայ, սրտիս անհանգստութիւնը աւելի սաստկացաւ, մտքերս էլ աւելի արագութեամբ սկսեցին պտոյտ գալ գլխումս։ Աշխատում էի ուշադրութիւնս դարձնել արտաքին առարկաների վրայ, իմ բացակայութեանս միջոցին կատարուած փոփոխութիւնների, ճանապարհի կողքերին նոր շինուած տների վրայ։ Մեքենայաբար կրկնում էի ինձ ու ինձ, թէ շատ լաւ եղանակ է և գարունը շատ շուտ է սկսել։ Օրը ճիշտ որ հիանալի էր, պայծառ առաւօտ էր և օդում զգացւում էր վաղորդեան կազդուրիչ զովութիւն, տների առաջին ծաղկազարդ կանգնած էին խնձորենիները, որոնց տակին ծաղիկը փռուած էր ձիւնի նման. ինձ կարծես շրջապատում էր գեղարուեստագիտական նոր դպրոցի նկարների մի շարք։ Ուր նայում էի, տեսնում էի լուսաւոր ու թափանցիկ «plein-air» (բաց օդ),

որի պայծառ խորքում շարժւում էին դաշտում ու իրանց տների առաջին բանող մարդկանց կերպարանքները։ Զարմանալի բան է, այդ բոլորը տեսնում էի, այդ բոլորը նկատեցի, բայց չը կարողացայ տոդորւել այդ տպաւորութիւններով, ոչ էլ լիովին անձնատուր լինել նրանց։ Այդ տպաւորութիւնները մի տեսակ կորցրել էին իրանց թափանցողութիւնը և կեարոնանում էին ու դիտակցւում միայն ուղեղիս մակերևոյթի վրայ, չը կարողանալով թափանցել աւելի խոր, ուր ծածկւած էին բոլորովին ուրիշ մտքեր։ Ուշադրութեան այդպիսի երկբաժան դրութեան մէջ ես մնացայ Պլոշովին։ Յանկարծ ինձ վրայ փչեց լորենիների ծառուղու հովը։ Հեռւից երևում էին հօրաքրոջս տան պատուհանները։ Ցիր ու ցան մտքերս աւելի անհանգստութեամբ սկսեցին պտոյտ գալ գլխումս։ Չեմ կարող ճիշտ ասել, թէ ինչու փոխանակ բակը մտնելու, դարպասի մօտ կանգնացրեցի կառքը և ոտով գնացի դէպի պատշգամբը՝ տանելով հետս կառապանի շնորհակալիքները։

Ընդհանրապէս էլ չեմ կարողանում հասկանալ թէ ինչու այնքան անհանգիստ էի.—թերևս այն պատճառով, որ այդ՝ ինձ յայտնի տան մէջ սպասում էր ինձ մի անյայտ բան, որը սակայն տրագիկական կապով կապւած էր իմ անցեալի հետ։ Բակովը անցնելիս կուրծքս այնքան սաստիկ էր սղմւում, որ ժամանակ առ ժամանակ շունչս բռնւում էր։ «Այս ինչ զահրումար էր», — կրկնում էի մտքումս։ Կառքը դարպասի մօտ կանգնացրած լինելուս պատճառով ոչ ոք առաջս դուրս չ'եկաւ։ Սրահում ոչ ոք չը կար։ Մտայ սեղանատուն և վճռեցի այնտեղ սպասել մինչև մերոնք ներս գային։

Այդ շուտով պէտք է տեղի ունենար, որովհետև սեղանը գցած էր, ամանները դասած և սամովարը քչփչում էր ու թշթշում փաթիլ-փաթիլ գոլորշի արձակելով դէպի վեր։ Դարձեալ ամենաչնչին մանրամասնութիւն անդամ չը խուսափեց ուշադրութիւնից։ Նկատեցի, որ սենեակումը ցուրտ էր ու համեմատաբար մութ, որովհետև պատուհանները նայում էին դէպի հիւսիս։ Մի քիչ անցած ուշադրութիւնս կենտրոնացրի այն բանի վրայ, որ սենեակի երեք պատուհաններիցը մութ տախտակամածի վրայ երեք լուսաւոր շերտեր են ընկնում. յետոյ սկսեցի դիտել իբրև նոր բան պահարանը, որ ինձ ծանօթ էր երեխայ ժամանակիցս. ապա յիշեցի այն խո-

սակցութիւնը, որ մի ժամանակ տեղի էր ունեցել իմ ու Անեաոինակու մէջ, երբ մենք պատուհանովը նայում էինք նրա կնոջն ու Անելկային, որոնք տաք ոսնամանները հագած՝ ձեռան միջով գնում էին ջերմանոց։

Վերջ ի վերջոյ պատարկութեան զգացմունք տիրեց սրտիս ու տխրութիւն իջաւ իմ վրայ։ Նստեցի պատուհանի մէջ, որպէս զի լոյսին մօտիկ լինէի ու գիտէի պարտէզը։ Բայց այդ բոլորը չ՚ազատեց ինձ այն երկբաժանութիւնից, որի մասին վերը յիշեցի,— ես այդ բոլորի հետ միասին ու միաժամանակ մտածում էի, որ շուտով, գուցէ մէկ-երկու րոպէից յետոյ, կը տեսնեմ նրան, որ պէտք է բարևեմ նրան, խօսեմ հետը ու այնուհետև տեսնեմ նրա հետ ամեն օր մի քանի ամսւայ ընթացքում։ Գլխումս իրար յետևից պտոյտ էին գալիս զանազան հարցեր—«ինչպէս կը լինի, ինչ կը լինի»։ Կան մարդիկ, որոնք վախից խենթային քաջագործութիւններ են անում, – ինձ հետ էլ յաճախ պատահում է, որ ներքին անհանգստութիւնս, անվճռականութիւնս ու ապագայի անյայտութեան պատճառած զգացմունքս տեղի են տալիս բուռն անհամբերութեան ու զայրոյթի։ Այս անգամ էլ այդպէս եղաւ։ Նախկին Անելկայի ու այժմեան պանի Կրոմիցկայի մէջ եղած տարբերութիւնը այնպէս պարզուեց ինձ համար ինչպէս երբէք դրանից առաջ չէր պարզուել։ «Թէկուզ լուսինը վարսիդ զարդ շինես, թէկուզ հարիւրապատիկ աւելի գեղեցիկ, աւելի դրաւիչ լինես քան ես կարող եմ երևակայել, ինձ համար դու այնուամենայնիւ ոչինչ կը լինես կամ աւելի վատ՝ խորշելի բան կը լինես»։ Եւ իմ զայրոյթս աւելի ևս սաստկացաւ, որովհետև, չը գիտեմ ինչու, ինձ յանկարծ սկսեց թւալ, թէ նա միմիայն նրա համար կը գայ այժմ և կը տեսնուի ինձ հետ ապագայում, որպէս զի ինձ ապացուցանի, թէ ես սխալւում եմ և թէ ինքը կը մնայ ինձ համար միշտ ցանկալի ու միշտ անմատչելի։ «Կը տեսնենք»—պատասխանեցի նրան մտքումս այնպիսի տպաւորութեան ներքոյ, թէ ես այդ կնոջ հետ ինչ որ մի տարօրինակ ու անորոշ մենամարտ պէտք է ունենամ, ինչ որ մի կռիւ, որի մէջ միաժամանակ թէ կը յաղթեմ թէ կը յաղթուեմ, որովհետև կը կորցնեմ նրա յիշատակը, բայց նորից ձեռք կը բերեմ հանդիսաս։ Ինձ այդ րոպէին թւում էր, թէ բա-

ւականաչափ ոյժ ու արիութիւն ունեմ դիմադրելու ամենասաստիկ յարձակման անգամ։

Այդ ժամանակ դուռը կամաց բացուեց և ներս մտաւ Անելկան։

Նրան որ տեսայ գլխումս աղմուկ բարձրացաւ ու մարմնովս սարսուռ անցաւ։ Այդ րոպէին աչքիս առջև եղող կինը ճիշտ է պանի Կրոմիցկայի անունն էր կրում, բայց իմ նախկին Անելկայի քաղցր, սիրելի դէմքն ու աննկարագրելի հրապոյրն ունէր։ Գլխումս տիրող քաոսում մի ձայն ամենից բարձր էր հնչում և դոռում էր, - «Անելկա, Անելկա, Անելկա»։ Իսկ նա ինձ չէր նկատում կամ ուրիշ մարդու տեղ էր ընդունում, որովհետև լոյսը յետևիս կողմից էր։ Միայն այն ժամանակ, երբ ես մօտեցայ նրան, նա աչքերը բարձրացրեց, կանգ առաւ՝ տեղումը մեխուած նման - ու նկարագրել անգամ չեմ կարող այն՝ վախի, շփոթութեան, վրդովման ու խոնարհութեան արտայայտութիւնը, որ երևեց նրա երեսին։ Նա այնքան սաստիկ զունաթափուեց, որ վախեցայ թէ ուշքից կը գնայ։ Ձեռքը սեղմելիս կարծես սառոյցի կտոր էի սեղմում ձեռքումս։ Ամեն բան սպասում էի, բայց ոչ այդպիսի ընդունելութիւն։ Մի րոպէ առաջ երդում կ'ուտէի, որ նա ինձ պատահելիս որ և է ձևով ինձ զգալ կը տայ թէ հետս խօսողը պանի Կրոմիցկան է։ Եւ յանկարծ ոչ մի այդպիսի բան։ Առաջիս՝ յուզուած ու վախտորած կանգնած էր իմ վաղեմի Անելկան։ Ես եմ նրան անբախտացրել, ես եմ եղել մեղաւորը, հարիւրապատիկ մեղաւորը, իսկ այժմ նա այնպէս էր նայում ինձ կարծես ինքն էր ինձնից ներողութիւն խնդրում։ Սրտիս այնքան սաստիկ կերպով տիրեցին նախկին սէրիս և զղջման ու կարեկցութեան զգացմունքները, որ ինձ բոլորովին կորցրեցի։ Գլխումս այնքան խելք էր մնացել միայն, որ չը գրկեցի նրան, չը սեղմեցի կուրծքիս ու չը սկսեցի հանգստացնել նրան այնպիսի խօսքերով, որով մարդ խօսում է իւր սիրելի էակի հետ։ Սիրտս լիքն էր այդպիսի խօսքերով։ Եւ ես այն աստիճան յուզուած ու շփոթուած էի այդ անակնկալ ու անենթադրելի հանդիպմամբ, - պանի Կրոմիցկայի տեղ Անելկային տեսնելով, - որ բերանս ոչ մի խօսք չէր գալիս ու միայն սեղմում էի նրա ձեռքը։ Սակայն պէտք էր խօսել, ուստի խելքիս մնացորդները գլուխս հաւաքելով հարցրեցի նրանից խեղդուած ու կարծես ուրիշ մարդու ձայնով.

—Հօրաքոյրը քեզ չի՞ ասել որ եկել եմ։

—Հօրաքոյրը... ասաց...—պատասխանեց Անելկան իւր վրայ ճիգ գործ դնելով։

Եւ երկուսս էլ դարձեալ լռեցինք։ Զգում էի, որ պէտք էր շարունակել խօսակցութիւնը, հարցնել մօր ու իւր առողջութեան մասին, բայց լեզուս կարծես կապւել էր։ Եթէ մէկը ներս մտնէր ու մեզ ազատէր այդ անտանելի դրութիւնից, կը կարծէի թէ երկինքից է իջել։ Վերջապէս ներս մտաւ հօրաքոյրս՝ կառավարչի ամենափոքր որդու, Ջահել բժիշկ Խուստովսկու հետ, որ մի ամսից ի վեր հօրաքրոջս տանն է կենում պանի Ցելինայից մօտիկ լինելու համար։ Անելկան իսկոյն քաշւեց դնաց սեղանի մօտ թէյ ածելու, իսկ ես բարևեցի հօրաքրոջս ու սկսեցի հետը խօսել։ Այդ միջոցում ես արդէն բոլորովին ուշքի եկայ և մենք նստեցինք թէյ խմելու։

Սկսեցի հարց ու փորձ անել պանի Ցելինայի առողջութեան մասին։ Հօրաքոյրս պատասխանելիս խօսքի սկզբին—վերջին բժշկի կարծիքն էր հարցնում, իսկ նա ինձ հետ խօսում էր այն թեթև արհամարհական եղանակով, որով նոր-թխւած գիտնականները վերաբերւում են դէպի համբակները և որով դեմոկրատները, որոնք նախանձայոյզ պաշտպանում են իրանց արժանապատուութիւնը, նաև այն ժամանակ, երբ վիրաւորել ցանկացող չկայ, պատասխանում են այն մարդուն, որին արիստոկրատ են համարում։ Նա իմ աչքիս շատ անձնապաստան մարդ երևեց։ Ես նրա հետ աւելի քաղաքավարի եղանակով էի խօսում քան նա ինձ հետ։ Այդ ինձ մի քիչ զւարճութիւն էր պատճառում և հնարաւորութիւն էր տալիս կարդի բերել միտքս, որ՝ աչքս Անելկայի վրայ քցելուն պէս շփոթւում էր։ Ժամանակ առ ժամանակ սեղանի սարքի արանքով նայում էի նրան ու յուսահատւած կրկնում մտքումս,—«Նոյն դիմագծերն են, նոյն փոքրիկ դէմքն է՝ ճակատին հովանի մազերով, նոյն Անելկան է դրեթէ երեխայութիւնից նոր դուրս եկած. նոյն սէրն է, նոյն երջանկութիւնը, բայց ոչ իմը և յաւիտեանս կորած»։ Այդ տպաւորութեան մէջ չափից վեր քաղցրութիւն կար՝ խառն նոյնքան սատիկ կսկիծի հետ։ Անելկան արդէն քիչ թէ շատ զսպել էր յուզմունքը, բայց դեռ ևս կարծես ահը սրտումն էր։ Սիրտ արեցի մի

քանի անգամ դիմեցի նրան ու հարցրեցի մեր առողջութեան մասին՝ մեր յարաբերութիւնը մի քիչ աւելի հարթ ճանապարհի վրայ դնելու ու աւելի ազատ դարձնելու համար։ Մասամբ այդ ինձ յաջողեց։ Նա մինչև անգամ ինձ ասաց, -- «Մայրիկը քեզ որ տեսնի կ'ուրախանայ»։ Չէի հաւատում որ այդ ճիշտ լինի, բայց աչքերս փակած էի ականջ դնում նրա խօսքերին, որովհետև ոչ մի երաժշտութիւն ինձ համար նրա ձայնի քաղցրութիւնը չէր կարող ունենալ։ Հետզհետէ սկսեցին իրար հետ աւելի ազատ խօսել։ Հօրաքոյրս հիանալի տրամադրութեան մէջ էր, մէկ՝ իմ գալուս պատճառով, մէկ էլ այն պատճառով, որ արդէն գնացել էր Կլարայի մօտ ու Կլարան խոստացել էր նրան՝ կոնցերտ տալ։ Նրա մօտից դուրս գալիս հօրաքոյրս պատահել էր երկու ուրիշ բարեգործական հիմնարկութիւնների խնամակալուհիների։ Նրանք ուշացել էին, և հէնց այդ էր հօրաքրոջս ուրախութեան գլխաւոր պատճառը։ Նա ինձնից հարց ու փորձ էր անում Կլարայի մասին, որը նրա վրայ չափազանց լաւ տպաւորութիւն էր գործել։ Նախաճաշի վերջին պատասխանելով հօրաքրոջս հարցերին սկսեցի մի քանի բան պատմել ճանապարհորդութիւններից։ Հօրաքոյրս զարմանում էր, որ մինչև անգամ Իսլանդիա էլ եմ գնացել և այնտեղի մասին հարց ու փորձ անելուց յետոյ ասաց.

—Մարդ պէտք է յուսահատուած լինի, որ այնտեղ գնայ։

—Հա, այն ժամանակ շատ վատ էի, պատասխանեցի ես։

Անելկան այդ բոպէին նայեց ինձ վրայ և ես նրա աչքերում նորից նկատեցի ահ ու խոնարհութիւն։ Եթէ նա ուղղակի ձեռքը կոխէր կրծքիս մէջ ու բռնէր սիրտս, չէր կարող դրանից աւելի սաստիկ ճմլել։ Որքան աւելի խոր էր համոզմունքս, թէ նա ինձ կ'ընդունի յաղթական սառնութեամբ, չարախնդացութեամբ դէպի իմ անբախտութիւնս ու իւր գերազանցութեան արհամարհալից գիտակցութեամբ, այնքան աւելի սաստիկ էր յուզում ինձ ու միևնոյն ժամանակ գեռին տապալում նրա այդ հրեշտակային կարեկցութիւնը։ Խաբուսիկ էին իմ բոլոր հաշիւները, բոլոր ենթադրութիւնները։ Ես կարծում էի որ, եթէ մինչև անգամ նա ուզենար իմ վերաբերմամբ պանի Կրոմիցկա չը լինել, այդ չէր յաջողիլ նրան և դրանով նա կը խորշեցնէր ու կը վիրա որէր ինձ, և սակայն

այժմ տեսնում էի, որ նա մարդու գնացած կնոջ տպաւորութիւն անդամ չէր զործում։ Ես ինքս ինձ պէտք է յիշեցնէի, որ նա արամբի է, բայց այդ յիշողութիւնները զգւանքով չէին լցնում սիրտս, այլ միայն անասելի դառնութեամբ։

Բնութիւնս այնպէս է, որ բարոյապէս տանջւելիս՝ միշտ սիրում եմ փորփորել ինձ տանջող վէրքը։ Այս անդամ էլ ուզեցի նոյնն անել ու խօսք բանալ նրա մարդու մասին։ Բայց չը կարողացայ. զգում էի, որ այդ դաժան ու անպատկառ բան կը լինի։ Դրա փոխարէն ցանկութիւն յայտնեցի պանի Յելինային այցելելու։ Անելկան գնաց նրանից հարցնելու, թէ արդեօք կարող է ընդունել ինձ, ու մի քիչ անցած վերադառնալով ասաց.

—Մայրիկը խնդրում է որ այժմ և եթ գնաս մօտը։

Ես ու Անելկան գնացինք տան միւս կողմը, հօրաքոյրս էլ մեզ հետ։ Պահանջ էի զգում Անելկային մի որ և է քաղցր խօսք ասելու, որ հանգստացնէր նրան, բայց հօրաքրոջիցս քաշւում էի. սակայն մի քիչ յետոյ վճռեցի, որ ընդհակառակը աւելի լաւ կը լինի, եթէ նրան ասելիքս հօրաքրոջս ներկայութեամբ ասեմ, ուստի պանի Յելինայի սենեակը տանող դուռն առաջ կանգ առայ ու ասացի.

—Ձեռքդ տուր ինձ, սիրելի քոյրիկ...

Անելկան ձեռքը մեկնեց դէպի ինձ։ Զգում էի, որ նա շնորհակալ է ինձնից «քոյրիկ» խօսքիս համար, որ ահագին քար դլորւեց նրա սրտի վրայից և որ այդպէս սրտանց ձեռքս սեղմելով ուզում է ինձ ասել.

— Օհ, բարեկամ լինենք միմեանց, ամեն բան ներենք մէկ-մէկի։

— Ցուսամ, հաշտ կ'ապրէք իրար հետ, — տեսնելով այդ մրմըռաց հօրաքոյրս։

—Անշուշտ, անշուշտ։ Լէօնը շատ բարի է, — պատասխանեց Անելկան։

Եւ իրօք այդ բոպէին սիրտս լի էր բարութեամբ։ Պանի Յելինայի սենեակը որ մտանք, նրան շատ սիրալիր կերպով բարևեցի։ Նա ինձ պատասխանեց մի քիչ բռնազբօսիկ կերպով. պարզ երևում էր, որ եթէ չը վախենար հօրաքրոջս վիրաւորել, բոլորովին սառը կ'ընդունէր ինձ։ Բայց ես չը նեղացայ նրանից. նրա զայրոյթը իմ դէմ աւելի քան արդարացի էր։ Գուցէ նա համոզւած է, թէ ես

էլ նրա տոհմական կալուածի ծախելումը մասամբ մեղաւոր եմ, որովհետև եթէ ես պէտք եղած ժամանակը ուրիշ տեսակ վարուած լինէի, այդ բոլորը կարելի է տեղի չունենար։

Նա շատ փոխուած երևեց աչքիս։ Բաւական ժամանակից ի վեր ամենևին չի վեր կենում անիւաւոր բազկաթոռից, որով լաւ օրերը պարտէզն են դուրս բերում նրան։ Դէմքը, որ առաջ էլ նուրբ ու քնքոյշ էր, այնպէս նրբացել է կարծես մոմից շինած լինի։ Երևում է, որ մի ժամանակ շատ դեղեցիկ ու ամբողջ կեանքում շատ անբախտ է եղել։

Սկսեցի աւողջութիւնից հարցնել և յոյս յայտնեցի, թէ գարնան կենսաբար ազդեցութիւնը նրան էլ կը կազդուրի։ Լսելիս տխուր ժպտում էր ու գլուխը թափ տալիս, իսկ վերջը աչքերումը արտասուքի երկու խոշոր կաթիլներ երևեցին, որ նա չը սրբեց ու թողեց որ հանդիստ գլորուեն երեսովը։

Յետոյ դառնալով դէպի ինձ հարցրեց.

—Գիտես, որ Գլուխովը ծախուած է։

Երևում էր, որ այդ միտքը ոչ մի բոպէ նրան ազատ չէր թողնում։ Երևում էր, որ այդ նրա յարատև տանջանքը, նրա մշտական դարդը, նրա անբախտութիւնն էր։

Անելկան նրա հարցը որ լսեց՝ խսկոյն կարմրատակեց։ Այդ անդուր կարմրութիւն էր,—զայրոյթից ու ամօթից յառաջացած կարմրութիւն։ Իսկ ես պատասխանեցի.

—Գիտեմ։ Բայց կամ այդ անդառնալի բան չէ և ուրեմն ոչինչ չէք կորցրել, կամ թէ անդառնալի է և այդ դէպքում պէտք է հնազանդել Աստծու կամքին։

Անելկան երախտագէտ հայեացք գցեց ինձ վրայ, իսկ պանի Յելինան ասաց.

—Ես այլ ևս զուր յոյսերով չեմ խաբում ինձ։

Սա՛յն ճիշտ չէր ասում,—նա դեռ ինքն իրան խաբում էր։ Աչքերը բերնիցս չէր հեռացնում, սպասելով որ մի խօսք ասէի, որ հաստատէր նրա սրտի խորքում տարածուող յոյսը։ Ցանկանալով մինչև վերջը մեծահոգի լինել, ասացի.

Ամեն մարդ պէտք է տեղի տայ անհրաժեշտութեանը և դժուար է ում և ինչ մեղադրել դրա համար, բայց միւս կողմից ինձ թւում

է, սիրելի մօրաքոյր, թէ աշխարհումս ոչ մի խոչընդոտ չը կայ, որին անկարելի լինէր յաղթել տոկունութեամբ ու համապատասխան միջոցներով։

Յետոյ սկսեցի ասել, թէ լաւ կամ, որ եղել են դէպքեր, երբ ձեւական պայմանագրով չը կատարուած լինելու պատճառով վաճառումը անվաւեր է համարուել։ Ինչ թագցնեմ, ասածս սուտ էր, բայց տեսնում էի, որ այդպէս խօսելով պանի Յելինայի սրտից ջուր էի խմում։ Բացի այդ ես կողմնակի կերպով պաշտպանում էի Կրոմիցկուն, առանց սակայն յիշելու նրա անունը։ Ասենք իմ ներկայութեամբ դեռ ոչ ոք մի անգամ նրա անունը չէր տուել։

Պէտք է սակայն ճիշտն ասել։ Մեծահոգութիւնը միայն մասամբ էր ինձ այդ խօսքերը թելադրողը, իսկ գլխաւորապէս այդպէս խօսելուս պատճառն այն էր, որ զգում էի, թէ այդպիսով գրաւում եմ դէպի ինձ Անելկային և ինքս երևում բարութեան ու ազնուութեան փայլի մէջ։

Եւ իրօք Անելկան շնորհակալ էր ինձնից, որովհետև, երբ որ ես ու հօրաքոյրս դուրս էինք գնում սենեակից, նա վազեց մեր յետևից ու ձեռքը մեկնելով ինձ ասաց.

—Շնորհակալ եմ քեզնից մօրս կողմից։

Ի պատասխան ես լուռ մօտեցրի նրա ձեռքը շրթունքներիս։

Հօրաքոյրս նոյնպէս խանդաղատուել էր իմ բարութիւնից։ Բաժանուելով նրանից ես սիգար ծխելով գնացի պարտէզը՝ տպաւորութիւններս ու մտքերս կարգի բերելու։ Բայց այնտեղ պատահեցի բժիշկ Խուաստովսկուն, որ դուրս էր եկել իւր առաւօտեան զբօսանքը կատարելու։ Որովհետև ուզում էի Պլոշովում եղողների ամենքի համակրութիւնը գրաւել, մօտեցայ նրան ու սկսեցի հարց ու փորձ անել պանի Յելինայի առողջութեան մասին՝ այն ակնածութեամբ, որով առհասարակ վերաբերում են գիտուն ու լուրջ մարդկանց։ Տեսայ, որ այդ ասոտիկ շոյեց նրա ինքնասիրութիւնը. մի քիչ անցած նա դէն գցեց իւր դեմոկրատական յուշառութիւնը, որ պատրաստ էր ամեն մի չնչին խօսքից հնչկահաւի պէս փետուրները տնկել, և սկսեց խօսել Անելկայի մեր հիւանդութեան մասին մի տեսակ շատպղական ախորժանքով, որ սովորաբար ցոյց են տալիս գիտութեան երիտասարդ ադեպտները. որոնք դեռ ևս չեն շշմել կաս-

կածների ծուխից։ Նա խօսքի դլխին—վերջին լսոիներէն բառեր էր գործ ածում, կարծես մի ուրիշ բժշկի հետ խօսելիս լինէր։ Նրա յաղթանդամ ու առողջ կերպարանքը և խօսքի ու հայեացքի ոյժը ինձ վրայ նպաստաւոր տպաւորութիւն գործեցին. նա իմ աչքումս հանդիսանում էր ներկայացուցիչ այն նոր, անպորտֆեօյլ հանճարներին ամենևին նմանութիւն չունեցող, սերունդի որի մասին մի ժամանակ շատ էր խօսում ինձ Մնեատինակին։ Ծառաստանի երկար ծառուղիներով մանդալով մենք ի վերջոյ սկսեցինք այսպէս կոչւող ինտելլիգենտ խօսակցութիւն, որ կայանում է զանազան գիտնականների անուններ ու գրքերի վերնագիրներ յիշելում։ Խլաստովսկին ինչ որ գիտի, անշուշտ ինձնից լաւ գիտի, բայց ես նրանից շատ եմ կարդացել, ուստի կարծում եմ, սաստիկ զարմացած պէտք է լինէր ինձ վրայ։ Երբեմն-երբեմն գրեթէ դժկամակութեամբ էր նայում ինձ, կարծես թէ նա ուրիշի իրաւունքների ոտնակոխումն էր համարում այն, որ մի մարդ, որին նա արիստոկրատների կարգն էր դցել, թոյլ է տալիս իրան տեղեկութիւն ունենալ այս ու այն գրքի կամ հեղինակի մասին։ Սակայն միւս կողմից նրա համակրութիւնը գրաւեցի հայեացքներիս ազատութեամբ։ Ճիշտ է՝ իմ ազատամտութիւնս կայանում է նրանում, որ համբերող եմ դէպի ամեն մի ուղղութիւն, որովհետև կասկածով եմ վերաբերւում դէպի ամեն բան. սակայն հէնց միայն այն, որ ինձ նման հարստութեան ու դիրքի տէր մարդը միանգամայն յեռադիմական համոզմունքներ չունի, բոլորովին իմ կողմը գրաւեց երիտասարդ արմատականի համակրութիւնը։ Խօսակցութեան վերջում մենք իրար այնպէս էինք վերաբերւում, ինչպէս կարող են վերաբերել մէկ-մէկի ճանաչած ու հասկացած մարդիկ։

Կարծում եմ, որ մի ժամանակ ես բժիշկ Խլաստովսկու համար՝ կանոնից բացառութիւն կազմող բան կը դառնամ։ Վայելուչ եմ նկատել, որ ինչպէս մեզանում ամեն մի ազնուական ունի մի հրէայ, որին բացառում է դէպի հրէաները զգացած ընդհանուր հակակրութիւնից, այնպէս էլ ամեն մի դեմոկրատ ունի իւր արիստոկրատը, որի վերաբերմամբ բացառական համակրութիւն է տածում։

Բաժանուելիս բժիշկ Խլաստովսկուց հարցրեցի եղբայրների մասին։ Ասաց, թէ մէկը Պլոշովում դարձրի գործարան է հիմնել, որ

գիտէի, որովհետև հօրաքոյրս այդ ինձ առաջ դրել էր. միւսը տարրական գրքերի խանութ է բաց արել, իսկ երրորդին, որ վերջացրել է առևտրական դպրոցում, Կրոմիցկին հեռը տարել է իբրև օգնական։

— Մեր մէջ ամենից լաւ զարեջրի գործարանատէրի բաներն են գնում, — ասաց երիտասարդ բժիշկը, — սակայն բոլորս էլ լաւ ենք աշխատում և յոյս կայ, որ մի բան դուրս կը գայ մեր աշխատանքից։ Մեր բախտն էր, որ մեր հայրը կորցրել է հարստութիւնը, թէ չէ «Glebae adscripti» կը լինէինք, նստած կը մնայինք իւրաքանչիւրս իւր գիւղում և վերջ ի վերջոյ մեր հօր նման կը մնանկանայինք։

Զը նայելով որ ուշքս ոչ միայն զբաղւած, այլ ուղղակի գրաււած էր ուրիշ բանով, բաւական հետաքրքրութեամբ էի ականջ դնում բժշկին։ Այ, մտածում էի ինձ ու ինձ, սրանք ոչ քաղաքակրթութիւնից չափից վեր նրբացած են, ոչ էլ միւս կողմից թաղւած են խաւարում։ Դուրս է գալիս, որ մեզնում կան մարդիկ, որոնք կարող են մի բան անել և որոնք միջին ու առողջ օգակ են կազմում թուլամորթութեան ու բարբարոսութեան մէջ։ Թերևս այդպիսի խաւեր միայն մեծ քաղաքներումն են գոյանում և օրէցօր լցւում են մնանկացած ազնուականների զաւակներով, որոնք անհրաժեշտաբար իւրացնում են աշխատանքի բուրժուական աւանդութիւններն, իսկ իրանց կողմից բերում են ամուր ջղեր ու միանուն քներ։ Ակամայ յիշեցի այն օրը, երբ Անեատինակին սանդուխքների վրայից զոռում էր իմ յետևից. «Ձեզնից այլ ևս բան չի դուրս գալ, բայց ձեր զաւակներից դեռ կարող են մարդիկ դուրս գալ. միայն թէ դուք պէտք է նախ և առաջ մնանկանաք, ապա թէ ոչ ձեր թոռներն էլ ոչ մի գործի չեն կպչիլ»։ Եւ ահա պան Խլաստովսկու որդիքը գործի կպել են ու աշխատում են մարդ դառնալ միայն իրանց անձնական ոյժերով։ Ես էլ, եթէ որ հարուստ չը լինէի, ստիպւած պէտք է լինէի մի ճար գտնել գլուխս պահելու և դուցէ մէջս զարգացնէի այն վճռելու եռանդը, որից զուրկ եմ եղել կեանքումս։

Բժիշկը շուտով հեռացաւ ինձնից, որովհետև մի ուրիշ հիւանդ էլ ունէր Պլոշովում, որին պէտք է այցելէր։ Այդ հիւանդը Պլոշովցի գիւղացիներից մէկի որդին էր, աւարտել էր Վարշաւայի հոգևոր

դպրանոցը և այժմ դպիր էր։ Նա թոքախտի վերջին աստիճանումն էր։ Հօրաքոյրս նրան զետեղել էր իւր տան Փլիդելում և ամեն օր Անելկայի հետ հիւանդատես էր գնում։ Այդ իմանալով, ես էլ գնացի նրա մօտ և սպասածիս հակառակ մահամերձ հիւանդի փոխարէն տեսայ նիհար, բայց կարմրաթուշիկ դէմքով և կենսալից ու ուրախ զարթ մի պատանի։ Սակայն, բժշկի ասելով, այդ՝ հանդչող ճրագի վերջին փայլփլոցն էր։ Պատանի դպրին խնամում էր մայրը, որ ինձ տեսնելուն պէս հօրաքրոջս պատճառով գլխիս օրհնանքների այնպիսի հեղեղ թափեց, որ միջին կարող էի խեղդուել։

Անելկան այդ օրը չեկաւ հիւանդին տեսութեան. բոլոր ժամանակը մօր մօտ էր։ Միայն ճաշին տեսայ նրան։ Ճաշին ներկայ էր և պանի Ցելինան, - նրան ամեն օր իւր բազկաթոռով բերում են ճաշելու։ Շատ բնական էր, որ Անելկան դրանից առաջ բոլոր ժամանակը մօր մօտ էր անցրել. սակայն ինձ թւաց, թէ նա խուսափում է ինձ հետ հանդիպելուց։ Մեր յարաբերութիւնները մի ժամանակ անշուշտ մի կերպ կը յարդարուեն, սակայն շատ լաւ հասկանում եմ, որ սկզբում մեր մէջ ազատ յարաբերութիւններ չեն կարող լինել։ Անելկան այնքան զգայուն, տպաւորուող ու բարի սիրտ ունի, որ չի կարող անտարբերութեամբ վերաբերուել դէպի այն դրութիւնը, որի մէջ ես ու նա գտնուում ենք. միւս կողմից էլ նա չունի ընկերական կեանքի այն փորձառութիւնը, որի շնորհիւ շատերը կարողանում են ամենավճռաւոր պայմաններում արտաքուստ ազատ յարաբերութիւններ պահպանել։ Այդպիսի փորձառութիւն ձեռք է բերում հասակն առնելուց յետոյ, երբ զգացմունքների կենսակիր աղբիւրները սկսում են ցամաքել, իսկ հոգին յարմարւում է արտաքին պայմաններին։

Գալով ինձ, ես հասկացրեցի Անելկային, որ ոչ քէն կայ սրտումն նրա դէմ, ոչ ատելութիւն, այն պատճառով, որ սիրտս այդպէս թելադրեց ինձ։ Անցեալի մասին երբէք չեմ խօսիլ նրա հետ և այդ պատճառով այսօր չէի աշխատում առիթ գտնել նրա հետ առանձին խօսելու երեկոյեան։ Թէյի ժամանակ մենք ընդհանուր բաների մասին էինք խօսում՝ արտասահմանի կեանքից, մեր հասարակութեան կեանքից։ Հօրաքոյրս էլի հարց ու փորձ էր անում Կլարայի մասին, որ նրան սաստիկ հետաքրքրեցրել է, ես ինչ որ

գիտէի պատմեցի նրա մասին. և հետզհետէ խօսքն անցաւ ընդհանրապէս արտիստների վրայ։ Հօրաքոյրս արտիստների վրայ նայում է իբրև այնպիսի մարդկանց վրայ, որոնց Աստուած նրա համար է ստեղծել, որ բարեգործական ընկերութիւնների անդամները ժամանակ առ ժամանակ կարողանան նրանց օգնութեամբ հանդէսներ սարքել յօգուտ չէ աւարների։ Ես պնդում էի, թէ արտիստը,—եթէ որ ունենայ մաքուր սիրտ, լի՝ ոչ ողորմելի անձնասիրութեամբ, այլ արուեստասիրութեամբ, – կարող է աշխարհիս ամենաերջանիկ մարդը լինել, որովհետև շարունակ գործ է ունենում այնպիսի բանի հետ, որ անհուն է և բացարձակապէս կատարեալ։ Կեանքը ծնեցնում է ամէն տեսակ չարիքներ, գեղարուեստից միմիայն երջանկութիւն է բղխում։ Այդ իմ կարծիքս է և ստուգած է դիտողութիւններով։ Անելկան իմ կողմն էր և եթէ այդ խօսակցութիւնը գրի եմ անցնում, այդ այն պատճառով է, որ ինձ վրայ սաստիկ տպաւորութիւն գործեց նրա արած մի շատ հասարակ, բայց ինձ համար շատ մեծ նշանակութիւն ունեցող նկատողութիւն։ Երբ որ մենք խօսում էինք գեղարուեստի պատճառած զարմանքի մասին, նա ասաց,—«երաժշտութիւնը ամենալաւ սիրոփանքն է»։ Նրա այդ խօսքերը ինձ թուացին ակամայ խոստովանութիւն, թէ նա բախտաւոր չէ և թէ ինքը այդ հասկանում է։ Ասենք առանց նրա խոստովանելուն էլ այդ ինձ համար բոլորովին անկասկածելի է։

Նրա դէմքն անգամ բախտաւոր կնոջ դէմք չէ։ Նա առաջուայ վրայ կարելի է ասել աւելի ևս դեղեցկացել է, արտայայտութիւնը կարծես հանգիստ լինի ու մինչև անգամ պարզ, բայց այդ պարզութիւնը նեքսևից ցոլացող ուրախութեան լոյսի պայծառութիւն չէ և նրանում մի տեսակ կեսրօնացումն է երևում, որ առաջ չկար։ Նկատեցի, որ նրա քունքերը մի քիչ դեղնաւուն են՝ փղոսկրի նման։ Շարունակ նայում էի նրան, որովհետև այդ ինձ անպատմելի զարմանք էր պատճառում, կամ աւելի ճիշտ ասած, զարթեցնում էի յիշողութեանս մէջ նրա պատկերը և մի տեսակ տարօրինակ, դրգռող ու միևնոյն ժամանակ քաղցր զգացմունքով ստուգում էի, որ այդ՝ նոյն դէմքն է, նոյն երկայն թերթևունքները, նոյն աչքերը, որոնք սև չեն, բայց սևի պէս են երևում, նոյն բերանը՝ աղամազոտ վերին շրթունքով։ Չէի կարողանում կշտանալ այդ՝ յիշողու-

թիւններիս իրականութիւն դառնալուցը։ Անելկայի մէջ ինձ համար այն աստիճան անդիմադրելի դրաւիչ մի բան կայ, որ եթէ նրան առաջուց երբէք տեսած չը լինէի և նրան հազար հատ աշխարհիս ամենագեղեցիկ կանանց մէջ դնէին ու ինձ առաջարկէին ընտրութիւն անել, զգում եմ, որ ուղղակի կ'երթայի նրա մօտ ու կ'ասէի,—սա է իմ ընտրածը։ Թերևս նրանից գեղեցիկները կան աշխարհումս, բայց այնպիսի կին, որ աւելի համապատասխանէր այն կնոջ նախատիպարին, որ ամեն մի տղամարդ կրում է իւր երևակայութեան մէջ, ինձ համար չկայ։ Կարծում եմ, նա չէր կարող չը տեսնել, որ նրան դիտում էի ու հիանում էի նրա վրայ։

Պլոշովից ճանապարհ ընկայ իրիկնադէմին։ Այնքան սաստիկ շշմել էի օրւայ ընթացքում ստացած տպաւորութիւններից և առաջւան ենթադրութիւններս ու յոյսերս այն աստիճան ջարդ ու փշուր էին եղել, որ ճանապարհին չէի կարողանում ու դեռ այժմ էլ չեմ կարողանում ըստ իմ սովորութեան խորասուզել ինքս իմ մէջ։ Պանի Կրոմիցկային էի սպասում տեսնել, տեսայ Անելկային։ Մի անգամ էլ եմ այդ գրում։ Միմիայն Աստծուն է յայտնի, թէ ինչ կարող է դրանից ծագել ինձ ու Անելկայի համար։ Դրա մասին մտածելիս միաժամանակ համ սաստիկ երջանկութիւն եմ զգում, համ էլ կարծես մի տեսակ հիասթափութիւն։ Ինչ էլ լինի տեսակետորէն ես չէի սխալւում, որովհետև իրաւունք ունէի սպասել, որ նրա մէջ՝ մարդու գնալուց յետոյ կը կատարւեն այն հոգեկան փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտաբար կատարւում են ամեն մի կնոջ մէջ, և իրաւունք ունէի սպասել, որ նա գոնէ այն զգացնել կտար ինձ, թէ ուրախ է որ ինձ չի ընտրել։ Աշխարհումս չկայ մի ուրիշ կին, որ ընդունակ լինէր ինքն իրան զրկել այդպիսի զարմանութիւնից... Իսկ քանի որ ես ինքս ինձ լաւ եմ ճանաչում, ճանաչում եմ իմ տպաւորող բնութիւնս ու ջղերս, ինչով ասէք երդում կ'ուտէի, որ այդ դէպքում Պլոշովից կը վերադառնայի դառնութեամբ, հեգնութեամբ ու զայրոյթով լի սրտով, բայց՝ բժշկւած։ Եւ սակայն սպասածիս բոլորովին հակառակը դուրս եկաւ։ Անելկան այնքան պարզ հոգի ու այնքան անհուն բարի սիրտ ունի, որ այն չափը, որով ես չափում էի մարդկանց բարութիւնը, նրա բարութեան համար շատ փոքր է դուրս գալիս։ Ինչ կը լինի այժմ,

ինչ կը պատահի ինձ, չեմ ուզում պատասխանել այդ հարցերին։ Իմ կեանքս էլ կարող էր վճիտ ու հանդարտ գետի նման թափուել այն ծովը, ուր հոսում են բոլոր գետերը, իսկ այժմ ջրվէժի պէս դահավիժւում է անդունդը։ Սակայն ինչ լինում է լինի։ Ամենավատ դէպքում սաստիկ անբախտ եմ լինելու։ Առաջ էլ վարդերի վրայ չէի հանգչում՝ այս ողորմելի հոգով։ Միտս չէ, կարծեմ հայրս էր ասում ինձ, թէ կեանքի ընթացքում մի որ և է բան պէտք է աճի բնութեան օրէնքի համաձայն։ Եթէ աճելու է, կ՚աճի։ Մինչև անգամ անապատում՝ երկրի խորքերում ծածկւած կենսական ոյժերը տեղ-տեղ, օազիսներում արմատի ծառեր են բուսցնում։

Ապրիլի 21։

Իբր թէ Վարշաւայումն եմ կենում, բայց չորս օր շարունակ Պլոշովումն էի։ Ցելինան այժմ առաջւանից լաւ է, բայց լաւիշ դպիրը անցեալ օրը մեռաւ։ Բժիշկ Խւաստովսկին նրա հիւանդութիւնը «թոքերի տուբերկուլոզի հիանալի ընթացք» է անւանում և դժւարութեամբ է կարողանում ծածկել սրտի ուրախութիւնը, որ ինքը այդ հիանալի ընթացքի վերջը դուշակել է մի ժամւայ մօտաւորութեամբ։ Մենք հանդուցեալին այցելութեան գնացինք մահից տասներկու ժամ առաջ։ Կատակներ էր անում մեզ հետ և սիրալի էր յոյսերով, որովհետև տաքութիւնը պակասել էր, որ իսկապէս նրա թուլանալուցն էր յառաջացել։ Երէկ առաւօտեան ես ու Անելկան պատշգամբումը նստած էինք, որ խեղճ դպրի մայրն եկաւ ու սկսեց նրա մահուան մասին պատմել այն առանձին գեղջկական ձևով, որի մէջ վիշտը և կատարւած իրողութեան հետ կատարելապէս հաշտւելը միախառնւում են իրար հետ։ Իմ կարեկցութեան մէջ հետաքրքրութիւն էլ կար, որովհետև մինչև այժմ ժողովրդի հետ քիչ եմ գործ ունեցել և նրա վրայ քիչ եմ ուշադրութիւն դարձրել։ Ի՛նչ տարօրինակ լեզուով են խօսում այդ մարդիկը։ Աշխատում էի միտքս պահել նրա խօսքերը, որպէս զի յետոյ գրի անցնէի։ Պառաւ գեղջկուհին, մենք որ բարևեցինք, առանց խօսելու ընկաւ իմ ու Անելկայի ոտները, իսկ յետոյ աչքերը ձեռքովը ծածկելով լաց ու շիւանը դրեց.

—Օ՛ֆ, Յիսուս Քրիստոս, օ՛ֆ, Մարիամ Աստուածածին։ Մե-

ուաւ, ձեռքիցս գնաց խեղճիկ երեխէս։ Չ'ուզեց հօրն ու մօր մնալ մնաց, գնաց Աստծու մօտ։ Աղջիկ-պարոնների աշխատանքը չ'օգնեց խեղճին։ Դինին էլ զուր էին տալիս, գինին էլ չ'օգնեց։ Ով Յիսուս Քրիստոս, ով Աստուած իմ, ով Աստուած։

Նրա ձայնը անկասկած մայրական անկեղծ վիշտ էր արտայայտում. բայց ինձ զարմացրեց այն հանգամանքը, որ այդ սուգ ու շիւանը կարծես մի տեսակ ընդունուած, սովորական դարձած ձևով էր կատարւում։ Մինչև օրս տեսած չը կամ իրանց սիրելիներին ողբացող դեղջկուհիներ, բայց երդում կ'ուտեմ, որ նրանք բոլորն էլ այդտեսակ պէտք է ողբալիս լինեն՝ ոնց որ թէ մի տեսակ դեղջկական կարգ լինէր սահմանուած դրա համար։

Անելկան, արտասուքն աչքերին և այն անկարագրելի բարութեամբ, որ միմիայն կանանց է յատուկ, սկսեց հարց ու փորձ անել մահուան մանրամասնութիւնների մասին, զգալով որ պատմելը խեղճ կնկայ սիրտը կը թեթևացնի։ Եւ իրաւ պառաւը սկսեց պատմել գրեթէ յօժարութեամբ.

—Տէր-հայրը որ սրբութիւնը տուեց ու գնաց, ասացի, —որդի ջան, մեռնելու ես թէ ողջ ես մնալու, Աստծու կամքն է։ Դու պատրաստուեցիր մահն ընդունելու, ինչ անելու էիր՝ արեցիր, հիմա մի քիչ քնիր։ Ասաց, լաւ, նանի ջան, ու քնեց, ինձ վրայ էլ նինջ եկաւ, ասենք գոհանամ Աստծուց, նրա կամքն էր, բայց երեք գիշեր աչքս չէի խփել, հալից ընկել էի։ Հաւախօսի ժամանակն էր, որ հալւորն եկաւ ինձ զարթնեցրեց։ Մենք երկուսով նստել էինք կողքին. նա դեռ խորը քնած էր, սկի շարժ չէր գալիս։ Հալւորին ասում եմ, այ մարդ, մեռած չը լինի։ Ասում է, հէնց իմանաս մեռել է։ Կամաց ձեռ տուեց երեխիս, նա քնից զարթնեց ու ասաց՝ հիմա աւելի լաւ եմ։ Մի քիչ ժամանակ հանդիստ պառկած մնաց, յետոյ սկսեց աչքերն առաստաղին քցած ծիծաղել։ Այդ որ տեսայ, բարկութիւնս եկաւ ու ասացի, իմ աղքատութեան վրայ ես ծիծաղում հա, շան լակոտ։ Իսկ խեղճը իմ աղքատութեան վրայ չէր ծիծաղում, մահուան վրայ էր ուրախանում, որովհետև շուտով սկսեց ծանր շունչ քաշել ու արևածագին հոգին տուեց։

Այդտեղ նա նորից սկսեց հեկեկալ ու յետոյ հրաւիրեց մեզ գնալ տեսնել ննջեցեալին։ Ասում էր, որ արդէն նրան հագցրել էր

ու նա «այնպէս սիրուն էր ոնց որ քաշած պատկեր լինէր»։ Անելկան ուզում էր հեռը գնալ, բայց ես չը թողեցի. ասենք՝ պառաւն էլ շուտով մոռացաւ իւր խնդիրքն ու սկսեց խօսել իւր չքաւորութեան մասին։ Նրա մարդը մի ժամանակ ունևոր գիւղացի է եղել, բայց նրանք իրանց ունեցած-չունեցածը ծախսել են իրանց տղային ուսում տալու վրայ։ Ունեցած հողները օրավար-օրավար ծախել են հարևան գիւղացիներին, այնպէս որ այժմ միայն խրճիթն է մնացել իրանց, իսկ հող՝ ամենևին։ Հազար երկու հարիւր բուբլի ծախսած կը լինեն։ Յոյս են ունեցել, որ ծերութեան օրերը տղան տիրութիւն կ'անի իրանց, բայց Աստուած տղային ձեռներից առաւ։ Պառաւը իսկը զեղջկական խոնարհահոգութեամբ (résignation) յայտնեց մեզ, որ ինքն ու մարդը արդէն պատրաստութիւնները տեսել են և տղային թաղելուն պէս կ'երթան մուրալու։ Ինչպէս երևում էր այդ նրան ամենևին չէր սարսափեցնում. նա այդ բանի մասին մինչև անգամ մի տեսակ ներքին զարմանութեամբ էր խօսում, և վախենում էր միայն, որ շինական վարչութիւնը ուշացնէր վկայականը, որը չը գիտեմ ինչի համար պէտք էր նրան։ Նա պատմելիս հազար ու մի իրական մանրամասնութիւններ խառնում էր Յիսուս Քրիստոսի ու Մարիամ Աստուածածնի անուան և լացի ու հառաչանքների հետ։

Անելկան վազեց տուն ու մի քիչ անցած վերադարձաւ հետը փող բերելով, որ ուզում էր տալ պառաւին, բայց իմ գլխումս մի ուրիշ միտք ծագեց, որ ինձ շատ յաջող էր թւում։ Անելկայի ձեռքը բռնեցի ու պառաւին դիմելով հարցրեցի.

—Հազար երկու հարիւր բուբլի՞ էք ծախսել ձեր որդու ուսման վրայ։

—Հրամանքս, պարոն։ Միտք էինք անում, թէ տէրտէր կը դառնայ, ծուխ կ'ունենայ, մեզ էլ կը պահի, տիրութիւն կ'անի, բայց Աստուած ուզեց, մեռնեմ Նրա կամքին, որ մենք տէրտէրի տանը կենալու տեղակ ժամի դռանը նստենք։

—Ես ձեզ հազար երկու հարիւր բուբլի կը բաշխեմ։ Նորից տուն ու տեղ դրէք և հանգիստ ապրէք ձեր խրճիթումը։

Իսկոյն կը տայի փողը, բայց ձեռիս չը կար. սակայն միտք ունէի հօրաքրոջիցս վերցնել պէտք եղած գումարը և պառաւին

ասացի, որ մի ժամից յետոյ դայ փողը տանալու։ Նա այն աստիճան զարմացել էր, որ երկար ժամանակ աչքերը չուած լուռ նայում էր երեսիս, իսկ յետոյ համարեա գոռալով ընկաւ տոներս։ Սակայն շուտով ազատուեցի նրա ձեռքից, գլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ նա շտապում էր վազելվազ գնալ մարդու մօտ ու հաղորդել նրան ուրախալի լուրը։ Ես ու Անելկան մնացինք մենակ։ Նա էլ յուզուել էր ու սկզբում խօսք չէր գտնում զգացածն արտայայտելու և միայն բաւական ժամանակ անցնելուց յետոյ սկսեց կրկնել.

—Որքան բարի ես, որքան բարի ես։

Բայց ես ուսերս թափ տուեցի ու պատասխանեցի նրան այնպիսի տոնով, ոնցոր թէ խօսելիս լինէի բոլորովին բնական ու ինձ համար նշանակութիւն չունեցող բանի մասին։

—Ես, սիրելի Անելկա, այդ ոչ բարութիւնից արեցի, ոչ էլ այն մարդկանց լաւութիւն արած լինելու համար, որոնց առաջին անգամն եմ տեսնում։ Ես այդպէս վարուեցի միմիայն այն պատճառով, որ դու հետաքրքրուում ես նրանցով և որ յոյս ունէի, թէ այդ քեզ զարճութիւն կը պատճառի. թէ չէ ողորմութիւն կը տայի ու ճանապարհ կը գցէի։

Առաջս բոլորովին անկեղծ էր ու ճշմարիտ։ Այդ լատիշները ինձ համար նոյնքան նշանակութիւն ունէին որքան ամեն մի աղքատ. միւս կողմից՝ ես նոյնքան հեշտ ու հանդիստ տուածիս կրկնապատիկն ու եռապատիկը կը տայի՝ Անելկային զարճութիւն պատճառելու համար։ Սակայն ես այդ դիտմամբ ասացի. ես գիտէի, որ այդպիսի խօսքեր շատ սաստիկ են ներգործում կանանց սրտերի վրայ, որովհետև սիրոյ խոստովանութեան ձև չունենալով՝ գրեթէ հաւասար են խոստովանութեան։ Այդ միւնոյնն է թէ մարդ ասի կնոջ,—քո խաթեր ամեն բան կանեմ, որովհետև դու ինձ համար ամեն բանից վեր ես։ Եւ որ գլխաւորն է, ոչ մի կին չի կարող պաշտպանուել այդպիսի խոստովանութեան դէմ, ոչ էլ իրաւունք ունի նեղանալ։ Իսկ ես բացի դրանից այն պատճառով էի ուզում այդ յայտնել Անելկային, որ իրաք այդպէս էի զգում։ Միայն թէ մեղմացրեցի խօսքերիս գաղտնի իմաստը նրանով, որ այնպիսի տոնով ասացի ոնցոր թէ ամենասովորական ու ինքն ըստ ինքեան հասկանալի բանի մասին լիներ խօսքս։ Սակայն Անելկան հասկացաւ

թէ ինչ էի ուզում ասել, որովհետև աչքերը կախ գցեց ու չէր իմանում ինչ պատասխանէր։ Վերջ ի վերջոյ սատիկ շփոթուած ասաց, որ պէտք է գնայ մօր մօտ ու հեռացաւ ինձնից։

Ես շատ լաւ դիտակցում եմ, որ այդպէս վարուելով, Անելկայի հոգու մէջ՝ նրան խորթ և տաղնապիչ մտքեր եմ յղացնում։ Բայց զարմացմամբ նկատում եմ, որ թէև այդ մի կողմից վրդովում է խիղճս և տանջող ահ է զարթեցնում սրտումս թէ անդորրութիւնից կը զրկուի այն էակը, որի համար պատրաստ եմ կեանքս զոհել, սակայն միւս կողմից այդ ինձ մի տեսակ արիւնարբուշտ զարմանութիւն է պատճառում, ոնցոր թէ բաւարարութիւն տալիս լինէի մարդուս բնածին աւերիչ բնազդման։ Բացի այդ, համոզուած եմ, որ հաղար էլ դիտակցեմ թէ չարիք է արածս, հաղար էլ խղճահարուեմ, միևնոյնն է, օգուտ չունի, անելիքս կանեմ։ Զգացմունքներս այնքան բուռն են, որ ձեռքիցս չի գալ ու չեմ կարող այդ ճանապարհի կէսին կանգ առնել, ևս առաւել որ այդ կինը, անդիմադրելի, աննկարագրելի թովիչ ազդեցութիւն է գործում ինձ վրայ։ Հիմա որ իսկ և իսկ այն Հնդիկի նման եմ, որ ջրվէժի հոսանքից տարուելուց յետոյ վայր է դրել թիերն ու տրուել է յորձանքի ոյժին։ Մինչև անգամ չեմ մտածում իմ մեղաւորութեան մասին, չեմ մտածում նրա մասին, որ ամեն ինչ կարող էր ուրիշ կերպ լինել, որ ինձ մնում էր միայն ձեռքս մեկնել, որպէս զի տիրանայի այն կնոջը, որի մասին այժմ ասում եմ ինձ ու ինձ,—էլ ո՞ւմ համար արժէ ապրել եթէ ոչ նրա համար. էլ ո՞ւմ արժէ սիրել եթէ ոչ նրան։ Սկսում եմ դեսերմինիստ դառնալ և յաճախ ինձ թւում է, թէ ուրիշ կերպ չէր կարող լինել, թէ իմ կենսական անընդունակութիւնը պատրաստուել ու զարգացել է մի քանի սերունդների շնորհիւ, որոնք վաղուց արդէն սպառել են մեր տոհմի կենսական պաշարը, թէ ես այնպիսի մարդ եմ եղել ու եմ, ինչպէս լինելու էի ու պէտք է այժմ լինէի, և թէ ոչինչ չի մնում ինձ անել եթէ ոչ վայր դնել թիերս։

Այսօր առաւօտեան ես, Անելկան ու հօրաքոյրս գնացել էինք դպրի թաղմանը։ Եղանակը հիանալի էր. թաղման հանդէսը առաւօտեան վերջացաւ և չը նեղացրեց տիկիններին, որովհետև մեր տանից մինչև եկեղեցին ու հանգստարանը հեռու չէ։ Տարօրինակ տե-

սարան է ներկայացնում գիւղական յուղարկաւորութիւնը, որ սկսւում է քահանայից ու սայլի վրայ դրած դագաղից և վերջանում է գիւղացիների ու գեղջկուհիների խուռն բազմութեամբ։ Բոլորը միասին երգում են չափից վեր տխուր եղանակներ, որ լսելիս կարծես մարդ մի տեսակ քալդէական երաժշտութիւն է լսում։ Գնացքի վերջում տղամարդիկ ու կանայք զրոյց են անում քնէած, ծորուն ձայնով, միշտ սկսելով իրանց ասելիքը՝ «Էհ, փուչ աշխարհ» խօսքերով։ Այդ խօսքերը ամեն բոպէ ականջովս էին դիպչում։ Նոյնպէս տարօրինակ տպաւորութիւն են գործում թաղման նման հանդէսի ժամանակ աղջկերքանց գլխաշորերի վառ գոյները։ Մինչև եկեղեցի սիների (рябина) ծառուղիով էինք գնում, և երբ գնացքը ծառերի անջրպետներում արևի առաջն էր ընկնում, այդ գլխաշորերը բոցավառւում էին դեղին, կարմիր ու կապոյտ գոյներով, որ ամբողջ հանդէսին ուրախ տեսք էր տալիս, այնպէս որ եթէ քահանան, դագաղն ու գիրապաղի [1]) հոտը չը լինէր, մարդ կը կարծէր թէ պսակ են տանում եկեղեցի։ Ես նկատեցի նոյնպէս, թէ որքան ուրախութեամբ են գիւղացիք մասնակցում յուղարկաւորութեան հանդէսին։ Առհասարակ մահը նրանց վրայ ոչ ասես տպաւորութիւն չի գործում։ Թերևս նրանց հայեացքով մահը յաւիտենական հանգիստ է աշխատանքից։ Երբ որ կանգնեցինք գերեզմանի շուրջը, ես նրանց երեսներին նկատեցի միմիայն հեռաքրքրութիւն և կենտրոնացած ուշադրութիւն դէպի ծիսակատարութիւնը. ոչ մի հեռք, ոչ մի նշոյլ թէ այդ՝ անողոք վախճան է, որից յետոյ սկսւում է ինչ որ մի սարսափելի ու անյայտ բան։ Նայում էի Անելկային այն ժամանակ, երբ նա կռացաւ մի բուռը հող վերցնելու, որպէսզի գցէր գերեզմանի վրայ։ Նա մի քիչ գունատ էր. արևն էլ ուղղակի երեսին էր ընկնում, այնպէս որ նրա թափանցիկ դէմքի արտայայտութիւնը կարելի էր կարդալ գրքում տպած տողերի նման։ Ինչով ասէք երդում կ'ուտէի, որ նա այդ բոպէին իւր մահուան մասին էր մտածում։ Ինձ միանգամայն անհեթեթ ու հրէշաւոր թւաց այն

---

[1]) Գիրապաղ (можжевельникъ) յուղարկաւորութեան ժամանակ շաղ են տալիս ճանապարհին տանից մինչև եկեղեցի ու եկեղեցուց՝ գերեզմանատան։ Ծան. թարգմ.

միաքը, թէ այդ դէմքը, այդ վառվռուն դէմքը՝ լի բուռն երիտասարդութեամբ, որ երևում է այդ վերին շրթունքի աղամազում, այդ երկար թերթևունքներում, այդ դրաւիչ անհատականութեան մէջ,—կարող էր երբ և իցէ սպրտնել, փայտանալ ու մնալ յաւիտենական խաւարում։ Ո՛չ, այդ այն բոպէին ինձ միանգամայն անհնարին բան էր թւում։

Եւ սակայն ես ինձ այնպէս էի զգում կարծես մոքերս ցրտից սառած լինէին գլխումս։ Ինձ ու ինձ մտածեցի, որ առաջին ծէսը, որին ես ու Անելկան միասին մասնակցում ենք Պլոշովում՝ թաղումն է։ Ինչպէս որ դէպի գիտական բժշկականութիւնը հաւատը կորցրած մահամերձ հիւանդը պատրաստ է հաւատալ պառաւական դեղերին, այնպէս էլ մերձիմահ հիւանդ, ամեն բանի կասկածով վերաբերուող հոգին պատրաստ է հաւատալ մինչև անգամ նախապաշարմունքներին։ Երևի ոչ ոք այնքան մօտիկ չէ միստիկականութեան անդունդին, որքան բացարձակ սկեպտիկը։ Նրանք, որոնք կասկածով են վերաբերւում դէպի կրօնական ու հասարակական իդէալները, նրանք, որոնք կորցրել են հաւատը դէպի գիտութեան ու մարդկային բանականութեան ոյժը, անթիւ՝ ամենաբարձր զարգացման տէր մարդիկ, որոնք տանջւում են առանց ուղեցոյց աստղի, զուրկ որ և է դաւանանքից, զուրկ յոյսերից, ներկայումս օրէցօր աւելի ու աւելի են խորասուզւում միստիցիզմի մառախուղի մէջ։ Միստիցիզմը ռէակցիայի սովորական ոյժով ամեն տեղ հանդէս է գալիս ընդդէմ այժմեան կեանքի, որի հիմքը կազմում են մարդկային մոքի պոզիտիւական սահմանափակումն, իդէալների սանձահարումն, հեշտասիրութիւն և անհոգի բանկիրութիւն։ Մարդկային ոգին սկսում է քանդել այն շէնքը, որի մէջ նրան հրամայւած է բնակել, որովհետև այդ շինութիւնը ամեն կողմից չափից վեր նմանում է բուրսայի։ Ինչ որ մի շրջան վերջանում է, էվոլիւցիա է սկսւում բոլոր աստիճաններում։ Շատ անգամ ես ինձ ու ինձ զարմացել եմ մտածելով այն բանի մասին, թէ օրինակ նորագոյն մեծ վիպասանները իրանք անգամ չը գիտեն թէ որքան քիչ բան է մնում, որ իրանք միստիկ դառնան։ Ոմանք արդէն գիտակցում են, որ միստիկ են և բացարձակ խոստովանում են այդ։ Վերջին ժամանակներս ինչ գիրք բաց եմ արել, տեսել եմ մէջը ոչ թէ մարդկային հոգին, ոչ թէ

կամքն ու անձնական կրքերը, այլ սարսափելի էակների կերպարանք կրող ընդհանուր ճակատագրական ոյժեր, որոնք անկախ են առանձին երևոյթներից, ապրում են իրանք իրանց մէջ՝ ինչպէս Գեօթէի «մայրերը»։

Գալով ինձ, հաւանօրէն ես էլ սահմանին հասել եմ։ Տեսնում եմ այդ և չեմ վախենում։ Անդունդը քաշում է. անձամբ ինձ այնքան սաստիկ է քաշում, որ եթէ հէնց կարողանայի, կ'ընկնէի մէջը ու կ'երթայի մինչև յատակը, և կ'երթամ՝ հէնց որ կարողանամ։

28 ապրիլի.

Հոդիս զմայլում է Պլոշովի կեանքից, Անելկային ամեն օր տեսնելուց և մոռանում եմ, թէ նա ուրիշին է պատկանում։ Բաքուում կամ ով գիտէ գուցէ մի աւելի հեռու տեղ նստած Կրոմիցկին ինձ թւում է իրական գոյութիւնից զուրկ, երևակայական մի էակ, մի չարիք, որ մի ժամանակ գալու է, այնպէս՝ ինչպէս օրինակ գալու է մահը, որի մասին սակայն մարդ չի մտածում։ Բայց երէկ memento-ի նման մի բան պատահեց։ Ըստ երևոյթին՝ չնչին ու շատ սովորական բան։ Անելկան առաւօտեան թէյի ժամանակ երկու նամակ ստացաւ։ Հօրաքոյրս հարցրեց՝ մարդիցն է,—պատասխանեց՝ «այո»։ Այդ որ լսեցի, այնպիսի բան զգացի, ինչպէս կը զգայ մահուան դատապարտուածը, որ գլխատման նախընթաց գիշերը քաղցր երազ է տեսնում ու յանկարծ գալիս զարթեցնում են, թէ պէտք է մազերը խուզել տայ ու գնայ՝ գլուխը դնի գիլիոտինի դանակի տակ։ Յանկարծ այնպէս պարզ տեսայ իմ անբախտութիւնը ինչպէս երբէք չէի տեսել։ Ամբողջ օրը սիրտս չ'ազատուեց այդ չարագուշակ զգացմունքից, ես առաւել որ՝ հօրաքոյրս կարծես երդուել էր ինձ տանջել։ Անելկան ուզում էր նամակները թողնել՝ թէյից յետոյ ազատ ժամանակը կարդալ, բայց հօրաքոյրս ասաց, որ խսկոյն և եթ կարդայ, և յետոյ սկսեց հարց ու փորձ անել, թէ ինչպէս է Կրոմիցկին։

—Շնորհակալ եմ, լաւ է, – պատասխանեց Անելկան։

—Իսկ բաներն ինչպէս են գնում։

— Փառք Աստծու, գրում է, որ իւր սպասածից էլ լաւ են գնում։

—Ե՞րբ է վերադառնալու։

—Գրում է՝ հէնց որ հնարաւոր լինի կը գայ։

Եւ ես, այս ջղերով, ստիպւած էի լսել այդ հարց ու պատասխանները։ Եթէ որ հօրաքոյրս ու Անելկան մի աներեւակայելի, ցինիկական խօսակցութիւն բանային, դրանից աւելի չէին կարող կորատել ջղերս։ Պլոշով գալուցս յետոյ այդ առաջին անգամը զայրոյթ ու սաստիկ քէն զգացի դէպի Անելկան։ «Գոնէ մի փոքր գութ ունեցիր ու իմ մօտ մի խօսիլ այդ մարդու մասին, շնորհակալութիւն մի անիլ, երբ որ հարցնում են նրա առողջութեան մասին ու մի ասիլ՝ փառք Աստծու»,—մտածեցի ինձ ու ինձ։ Մինչ այդ՝ նա բաց արեց միւս նամակը և նայելով ամսաթիւին ասաց՝ «Այս աւելի առաջ է դրած» ու սկսեց կարդալ։ Նայում էի նրա կռացրած գլխին, վարսամէջին, ճակատին ու քաշ ղցած կոպերին և ինձ թւում էր, թէ այդ ընթերցումը անտանելի երկար է տեւում։ Բացի այդ՝ ես այդ ժամանակ հասկացայ, որ նրանց, այսինքն Անելկային ու Կրոմիցկուն, միացնում է ընդհանուր շահերի ու նպատակների մի ամբողջ աշխարհ,—որ նրանք կապւած են անխզելի հանգոյցներով,—որ կան անհրաժեշտ պատճառներ, որոնց շնորհիւ նրանք պէտք է զգան, որ կապւած են իրար հետ ու փոխադարձաբար պատկանում են միմեանց։ Հասկացայ, որ ես այդ միութեան վերաբերմամբ դրսի մարդ եմ և դրսի մարդ կը մնամ, եթէ մինչև անգամ Անելկայի փոխադարձ սէրը գրաւեմ։ Անելկայի հետ տեսնւելուս առաջին օրից ի վեր՝ մինչև այդ րոպէին այնպէս էի զգում դժբախտութեանս խորութիւնը, ինչպէս զգացւում է մառախլապատ վիհի խորութիւնը։ Այժմ մառախուղը ցրւեց ու ես տեսայ անդունդի վիթխարի ծաւալը։

Սակայն ես մի յատկութիւն ունեմ, որ չափազանց ճնշման տակ սկսում եմ ընդդիմադրել։ Մինչև այդ ժամանակ սէրս չէր համարձակւում որ և է բան ցանկանալ, բայց այդ րոպէին նախանձս սկսեց կատաղաբար բաղձալ՝ ոչնչացնել ու ոտնակոխ անել այդ բոլոր անողոք օրէնքները, այդ կապերն ու կախումը։ Անելկայի կարդալը երկու րոպէ ժամանակ հանգիստ տւեց, բայց ես այդքան ժամանակում աշխարհքումս եղած բոլոր տանջանքները քաշեցի, մանաւանդ որ ըստ սովորականին ինձ ճնշում էին և ուրիշ մտած-

մունքներ, որոնք ոչ այլ ինչ էին եթէ ոչ հիմնական վշտիս անալիզն ու քննադատութիւնը։ Ինձ ու ինձ ասում էի օրինակ, թէ զգացած զայրոյթս ու կսկիծս մի քիչ նման են խառված կնոջ ծիծաղելի զգացմունքին, յետոյ մտածում էի, թէ այդպիսի ջղերով ապրել չի կարելի և վերջապէս ինքս ինձ հարցնում էի, եթէ այնպիսի մի ամենահասարակ բան՝ ինչպէս այն, որ մարդը կնոջը նամակ է գրում ու կինը կարդում է գրածը, քեզ բոլորովին տակն ու վրայ է անում, հապա ինչ կը լինի, երբ որ նա գայ և դու ամեն բոպէ տեսնես ու ստուգես, որ նրանք միմեանց են պատկանում։

Մտքումս պատասխանում էի՝ կը սպանեմ նրան – և միևնոյն ժամանակը զգում էի, որ սաստիկ ցիմար ու ծիծաղելի պատասխան է այդ։

Հասկանալի է, որ այդ տեսակ հարցումներ չէին կարող հանդստացնել ինձ։ Անելկան՝ կարդալը վերջացնելուն պէս նկատեց, որ ես արտասովոր տրամադրութեան մէջ եմ ու սկսեց անհանդիստ հայեացքներ քցել ինձ վրայ։ Նա այն քաղցր բնաւորութիւններից է, որոնց անհրաժեշտ հարկաւոր է շրջապատած լինել բարեկամական մթնոլորտով և որոնք այլապէս վատ են զգում իրանց ու ահուդողի մէջ են լինում։ Այդ՝ սրտի անչափ զգայութիւնից է յառաջանում։ Յիշում եմ, որ այն ժամանակ, երբ Խլաստովսկին իւր գարեջրագործ որդու մօտ չէր ճաշում, այլ մեր տանը ու հօրաքոյրս ամեն անգամ լեզւակռիւ էր տալիս նրա հետ, Անելկան քանի դեռ չը գիտէր որ այդ՝ դատարկ վէճեր են, վախենում էր և չէր կարողանում տանել նրանց կռիւները։ Այժմ, երևում էր, նրան անհանդստացնում էր իմ յուզած դրութիւնը, թէև նա չէր կարողանում հասկանալ նրա պատճառները։ Մի քանի անգամ հարց տուեց ինձ Կլարայի կոնցերտի մասին, բայց նրա աչքերն հարցնում էին՝ ինչ է պատահել քեզ։

Սակայն ես նրան պատասխանեցի սառն հայեացքով,—չէի կարողանում նրան ներել ոչ նամակ ստանալը, ոչ էլ հօրաքրոջս հետ խօսածը։ Թէյից յետոյ իսկոյն վեր կացայ և ասացի, որ պէտք է գնամ Վարշաւա։

Հօրաքոյրս ուզում էր, որ ես մնայի ճաշին ու յետոյ, ինչպէս առաջուց պայմանաւորուել էինք, միասին գնայինք կոնցերտ։ Բայց

ես պատասխանեցի, թէ մի քանի գործ ունեմ Վարշաւայում անելու, և յիրաւի սաստիկ ուզում էի մենակ մնալ։ Պատուիրեցի՝ կառքը լծել, իսկ հօրաքոյրս ասաց.

—Ուզում եմ մի կերպ շնորհակալութիւն ցոյց տալ Հիլստին. մտածում եմ, լաւ չի՞ լինիլ արդեօք՝ մի օրով հրաւիրեմ նրան այստեղ։

Երևում էր, հօրաքոյրս Պլոշով հրաւիրելը այն աստիճան մեծ մեծարանք էր համարում, որ երկմտում էր, թէ արդեօք այդ չափից վեր չի՞ լինիլ Կլարայի համար։

Մի բոպէ անցած աւելցրեց.

—Եթէ հաւատի լինէի, որ նա լաւ հասարակութեան պատկանող կին է...

—Օրիորդ Հիլստը Ռումենիայի թագուհու բարեկամուհին է, պատասխանեցի ես անհամբերութեամբ,—և ամեն տարի՝ շաբաթներով նրա մօտ հիւր է լինում։ Եթէ նրա այստեղ գալը պատիւ պէտք է համարուի, մեզ համար պէտք է համարուի։

—Է՛, լաւ, լաւ,—մրմրթաց հօրաքոյրս։

Մնաս բարև անելիս դարձայ դէպի Անելկան։

—Իսկ դու կը գաս կոնցերտ։

—Պէտք է մայրիկի մօտ մնամ և, բացի այդ, նամակ պէտք է գրեմ։

—Որ բանն ընկաւ կարօտած ամուսնու զգացմունքին, ես վոնս։

Սկզբի բոպէին այդ հեգնական խօսքերը սփոփեցին սիրտս։ Թող գիտենայ, որ խանդոտ եմ, մտածեցի ես. նա էլ՝ հօրաքրոջս ու իւր մօր նման՝ այն «հրեշտակատեսակ» կանանցից է, որոնք չարի գոյութիւնը չեն ընդունում։ Թող ուրեմն հասկանայ, որ ես իրան սիրում եմ, թող այդ միտքը բուն դնի նրա սրտում, թող նա ընտելանայ այդ գաղափարին, թող սկսի անհանգիստ լինել նրանից, թող մաքառի նրա դէմ։ Նրա հոգու մէջ այդպիսի խորթ ու քայքայիչ տարր, այդպիսի խմոր մացնելը գրեթէ յաղթութիւն է։ Տեսնենք ինչ կը լինի վերջը։

Այդ՝ բոպէական սփոփանք էր, բայց սաստիկ սփոփանք՝ նման չարախնդացութեան։ Սակայն հէնց որ նստեցի կառքը բարկութիւն ու դժգոհութիւն զգացի ինքս ինձ դէմ։ Այդ դժգոհութիւնը նրա-

նից էր յառաջանում, որ զզում էի, որ բոլոր ասածներս ու մտածածներս մանր ու չնչին բաներ էին և հիմնուած էին՝ աւելի հիստերայնին կնոջ քան տղամարդի վայել խեղաթիւրուած ու քմահաճ ջղերի վերայ։ Շատ վատ էի զզում ինձ ամբողջ ճանապարհին,— աւելի վատ՝ քան այն ժամանակ, երբ արտասահմանից վերջին վերադարձիցս յետոյ առաջին անգամ Պլոշով էի գնում։ Միտք էի անում, թէ այն կենսական սարսափելի անընդունակութիւնը, որ ճակատագրի պէս ծանրանում է ինձ նման մարդկանց վրայ ընդհանրապէս՝ իսկ ինձ վրայ մասնաւորապէս, նրանից է յառաջանում, որ մեր բնաւորութիւնների մէջ կանացի տարրը գերակշռում է առնականին։ Ասելս այն չէ, թէ իբր մենք ֆիզիկապէս կնատ, վախկոտ ու անեռանդ մարդիկ ենք։ Ո՛չ. ասածս բոլորովին ուրիշ բան է. եռանդ ու արիութիւն, եթէ ոչ աւելի, գոնէ այնքան ունենք՝ որքան և ամենքը. մեզնից իւրաքանչիւրը առանց այլևայլութեան կը նստի անսանձ ձիու վրայ և ուր ուզէք կ'երթայ։ Բայց հոգեկան տեսակէտից ամեն մէկիս մասին կարելի է ասել—նէ և ոչ նա։ Մեր հոգեկան կազմի մէջ չկայ հանգիստ, սինթետիկական և չնչին բաները արհամարհող հաւասարակշռութիւն։ Ամեն չնչին բան սիրտներս ցաւացնում, դառնացնում ու վհատեցնում է, որի շնորհիւ մենք ամեն մի քայլափոխում անչափ մեծ բաներ զոհում ենք անչափ փոքր բաների։ Իմ անցեալը ապացոյց է դրան։ Չէ՞ որ՝ ես զոհեցի ամբողջ կեանքիս անպատմելի երջանկութիւնը, իմ ապագան և սիրածս կնոջ ապագան միմիայն այն պատճառով, որ հօրաքրօջս նամակում կարդացի, թէ Կրոմիցկին մտադրութիւն ունի ուզել Անելկայինն։ Ջղերս սանձակոտոր փախցրեցին ինձ ու տարան այնտեղ, ուր ամենևին մտադիր չէի գնալ։ Այդ ոչ այլ ինչ էր եթէ ոչ կամքի հիւանդութեան արտայայտութիւն։ Բայց արդ տեսակ հիւանդ են լինում ոչ թէ ներանք, այլ նէրանք։ Էլ ինչու պէտք է զարմանալ, որ այժմ էլ հիստերիկային կնոջ պէս եմ վարւում։ Այդ մի դժբախտութիւն է, որ ինձ հետ միասին է աշխարհ եկել և որ յառաջացրել են մի շարք սերունդներ ու կեանքի այն պայմանները, որոնց մէջ մենք ստիպուած ենք ապրել։

Բայց այդպիսով պատասխանատուութիւնը վրայիցս վերցնելը ամենևին չը սփոփեց սիրտս։ Միտքս դրել էի Վարշաւա հասնելուս

պէս այցելել Կլարային, բայց մինչև տեղ հասնելս սարսափելի գըլխացաւ բռնեց ինձ ու անցաւ միայն երեկոյեան՝ հօրաքրոջս գալուց մի քիչ առաջ։

Հօրաքոյրս որ եկաւ, ես արդէն հագնուած՝ պատրաստ էի և մենք շուտով գնացինք կոնցերտ, որ չափազանց յաջող էր գլուխ եկել։ Կլարայի հռչակը գրաւել էր ինտելլիգենտ ու երաժշտական աշխարհը, իսկ բարեգործական նպատակը՝ ամբողջ բարձր հասարակութիւնը։ Ծանօթներ շատ կային, ի միջի այլոց Մնեատինսկիները։ Դահլիճը լիքն էր։ Բայց այնպէս վատ էր տրամադրութիւնս ու ջղերս այն աստիճան խանգարուած էին, որ ամեն ինչ ինձ զայրացնում էր։ Զը գիտեմ ինչու ահ ծաղեց սրտումս, թէ Կլարան Ֆիասկո կը կրի։ Էստրադան բարձրանալիս մի ափֆիշա կպաւ նրա շորիցը և նա փէշովը քաշ տալով տարաւ հետը։ Ինձ թւաց թէ այդ՝ նրան ծիծաղելի է դարձնում։ Նա՝ պարահանդէսի շորը հագին ու ամբոխի սև ֆոնից էստրադայի դատարկ տարածութեամբ բաժանուած՝ ինձ վրայ աւելի անծանօթ արտիստուհու տպաւորութիւն էր գործում քան մօտիկ ծանօթի ու բարեկամի։ Ակամայ ինքս ինձ հարց էի առաջարկում, միթէ այդ՝ այն Կլարան է, որի հետ ես կապուած եմ սերտ բարեկամական զգացմունքով։ Մինչ այդ՝ ողջունական ծափահարութիւնները դադարեցին։ Հանդիսատեսների երեսներին երևաց այն իրր խելացի կեցուածքն ու ուշադրութիւնը, որոնց շնորհիւ գեղարուեստի մասին ամենևին գաղափար չ՝ունեցող մարդիկ գիտակ ու դատաւոր են ձևանում։ Կլարան նստեց ածելու և թէպէտ չարացած էի նրա վրայ ինչպէս և ամբողջ աշխարհի վրայ, մոքումս պէտք է խոստովանէի սակայն, որ նա ոտից մինչև գլուխ չափից վեր պարզ է ու ազատ սեթևեթանքից, գլուխը աղնիւ է ու թեթևակի յենուած և տեսքը արտիստական։ Սկսեց ածել Մենդելսոնի կոնցերտը, որը ես անգիր յիշում եմ,—և նրանից էր արդեօք, որ զգում էր թէ իրանից չափազանց մեծ բան են սպասում, թէ նրանից, որ յուզուած էր արտասովոր սրտագին ընդունելութիւնից, ինչ և իցէ՝ նա սպասածից վատ սկսեց ածել։ Այդ ինձ սաստիկ տհաճութիւն պատճառեց։ զարմացած նայում էի Կլարային և մեր հայեացքները մի բոպէով իրար հանդիպեցին։ Դէմքիս արտայայտութիւնը վերջնականապէս շփոթեցրեց նրան և ես դար-

ձեալ լսեցի մի քանի անորոշ և պատշաճաւոր ոյժից ու արտայայտութիւնից զուրկ բաղխումներ։ Արդէն հաւատացած էի որ Ֆիասկո կը կրի։ Երբէք դաշնամուրը իւր հնչիւններով, որոնց պակասութիւնը ծորունութեան կողմից աւելի ևս սաստկանում էր դահլիճի ընդարձակութեան և բազմութիւնից խլացած ակուստիկայի շնորհիւ, չէր թաւացել ինձ այդքան ողորմելի իբրև կոնցերտային գործիք։ Երբեմն-երբեմն ինձ թւում էր թէ տաւիղի (arpa) ընդհատուող հընչիւններ եմ լսում։ Մի քիչ ժամանակից յետոյ Կլարայի այլայլութիւնն անցաւ, սակայն ըստիս ամբողջ կոնցերտը միջակ ածեց։ Կատարելապէս ապշած մնացի, երբ որ վերջացնելուց յետոյ այնպիսի ծափահարութիւններ թնդացին, որոնց նմանը երբէք լսած չեմ Պարիզում, ուր Կլարային ընդունում են արտակարգ յափշտակութեամբ։ Երաժշտագէտները վերկացան տեղներից ու սկսեցին տաք-տաք խօսել բիցենզենտների հետ. նրանց զարթացած երևսներին ակներև զարմանք էր արտափայլում։ Ծափահարութիւնները չը դադարեցին մինչև որ Կլարան դուրս չեկաւ էստրադան։ Նա դուրս եկաւ աչքերը քաշ գցած և ես, որ գիտեմ կարդալ նրա դէմքի արտայայտութիւնը, պարզ կարդացի,—«Շատ բարի էք, շնորհակալ եմ, բայց վատ ածեցի և լացս գալիս է»։ Ես էի ծափահարում, որի համար ստացայ նրանից թաւուցիկ, յանդիմանութեամբ լի հայեացք։ Կլարան այն աստիճան սաստիկ է սիրում գեղարուեստը, որ անհիմն ծափահարութիւնները նրան զարմանք պատճառել չեն կարող։ Խեղճս գալիս էր նրա վրայ. ուզում էի գնալ ու մի քանի մխիթարական խօսք ասել նրան, բայց անվերջանալի բրաւոները չէին թողնում որ էստրադայից իջնէր։ Նա նորից նստեց ու սկսեց ածել Բէթովէնի Cis-mol սոնատան, որ յայտագրում չկար։

Ըստ իս աշխարհքումն չը կայ մի ուրիշ երկասիրութիւն, որի մէջ այդ աստիճան պարզ երևար ինչ որ տրագիկական անհանդըստութիւնից կսկծահար եղող մարդկային հոգին։ Խօսքս գլխաւորապէս վերաբերւում է սոնատայի երրորդ մասին—«presto agitato»-ին։ Այդ տրամադրութիւնը երևի համապատասխանում էր Կլարայի բոպէական գրգռմանը և անկասկած ներդաշնակում էր իմ տրամադրութեանը, այնպէս որ կեանքումս լսած չը կամ Բէթովէնի երա-

ժշտութեան այդպիսի նուագումն և երբէք այդ աստիճան կատարեալ չեմ ըմբռնել նրան։ Ես երաժշտագէտ չեմ, բայց կարծում եմ, երաժիշտներն էլ մինչև այդ ժամանակ չը գիտէին թէ որքան բան է պարունակւում այդ սոնատայի մէջ։ Ուրիշ ոչինչ չեմ գտնում ամենքի կրած տպաւորութիւնը որոշելու համար՝ քան ճնշումն խօսքը։ Մարդ զգում էր, թէ ինչ որ միստիկական բան է կատարւում, երևում է ինչ որ չափազանց տխուր, անկերպարան, լուսնի լոյսով աղօտ լուսաւորուած անաշխարհիկ անապատ, որի մէջ աղաղակում է, հառաչում ու մազերը փետում յուսահատ վիշտը։ Այդ և՛ զարհուրելի էր և՛ հրաշալի, որովհետև կարծես ամբողջ աշխարհումն էր կատարւում, և միևնոյն ժամանակը անդիմադրելի գրաւիչ, որովհետև, գոնէ իմ վերաբերմամբ, երաժշտութիւնը երբէք այդ աստիճան չէր մոտեցրել ինձ ինչ որ բացարձակ (absolu) բանի։ Ուրիշներից աւելի ապաւորւող չը լինելով, ես գրեթէ հալլուցինացիայի մէջ էի ընկել։ Ինձ թւում էր թէ այդ անապատում, այդ անկերպարան, այդ անդրդեղեղմանային խաւարում որոնում եմ մի էակի, որ աւելի թանկ է ինձ համար քան ամբողջ աշխարհը, առանց որի ապրել անհնար է ինձ համար, առանց որի ապրել չեմ կարող, չեմ ապրիլ և որոնում եմ այն համոզմունքով, թէ յաւիտեանս պէտք է փնտռեմ նրան և երբէք չը գտնեմ։ Սիրտս այնպէս ճմլւում էր, որ շնչասպառւում էի.—ամենևին ուշք չը դարձրի նուագածութեան արտաքին կողմի վրայ, որը անշուշտ պէտք է հասած լինէր այն կատարելութեան, որի ժամանակ արդէն այլ ևս խօսք չի լինում նրա մասին։ Ամբողջ դահլիճը՝ Կլարան էլ մէջը՝ նոյն տպաւորութեան ներքոյ էր։

Ածելը որ վերջացրեց, բաւական ժամանակ մնաց նստած՝ գլուխն ու աչքերը վեր բարձրացրած, դէմքը գունաթափ և բերանը կիսաբաց։ Եւ այդ՝ բեմական էֆֆեկտ չէր, այդ՝ պարզ, ամեն կասկածից բարձր ոգևորութիւն ու ինքնամոռացութիւն էր։ Դահլիճում տիրում էր խորին լռութիւն, կարծես հանդիսատեսները էլի մի բանի էին սպասում, կարծես քարացել էին վշտից կամ թէ ականջները սրել էին լսելու վերջին արձագանքը այն լայնատարած յուսահատութեան, որ թռցրել՝ տանում էր անաշխարհային մրրիկը։ Ցեռոյ այնպիսի բան եղաւ, որ երևի երբէք ոչ մի կոնցերտում չի

եղել։ Այնպիսի ազազակ բարձրացաւ, կարծես հանդիսատեսներին մի սարսափելի աղէտ էր սպառնում։ Մի քանի բեցենզենտներ ու երաժշտագէտներ մօտեցան էստրադային։ Տեսնում էի՝ դէպի Կլարայի ձեռները խոնարհուած գլուխներ։ Նրա աչքերը արտասուակալած էին, բայց դէմքը ոգևորուած էր, պայծառ ու հանդիստ։ Գնացի ուրիշների հետ միասին սեղմելու նրա ձեռքը։

Մեր ծանօթութեան սկզբից մինչև այդ րոպէն Կլարան միշտ ինձ հետ ֆրանսերէն էր խօսում, իսկ այժմ պինդ սեղմելով ձեռքս առաջին անգամը հետս գերմաներէն խօսեց.

—Haben Sie mich verstanden?—հարցրեց նա ինձ։

—Ja,—պատասխանեցի ես,—und ich war sehr unglücklich [1])։

Առածս ճիշտ էր։ Կոնցերտի շարունակութիւնը Կլարայի համար անընդհատ փայլուն յաղթանակ էր։ Վերջացնելուց յետոյ Սնեատինսկիները նրան տարան իրանց տունը երեկոյթի։ Ես չը գնացի, —սիրտ չունէի։ Տուն որ վերադարձայ այն աստիճան յոգնած էի զգում ինձ, որ առանց հանուելու ընկայ բազմոցի վրայ ու այդպէս մօտ մի ժամ զարթուն պառկած մնացի։ Ցիշատակարան գրել սկսելուց մի քանի րոպէ առաջ միայն նկատեցի, որ շարունակ մտածում եմ դպրի թաղման, Անելկայի և մահուան մասին։ Յետոյ պատուիրեցի ճրագ վառել ու գրիչը ձեռքս առայ։

(Կը շարունակուի)

---

[1]) —Հասկացա՞ք,—հարցրեց նա ինձ։
—Այո՛, պատասխանեցի ես,—և շատ դժբախտ եմ։
Ծան. Թարգմ.

ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Երգիչը լռեց։
Ցանկարծ նեռահար սէգ արծուի նման,
Աչքերը խրփեց
Եւ խաղաղ քընով քընեց յաւիտեան։
Մեր անգին երգիչ, էլ չենք լսելու
Քո սրտից բըղխող նորանոր տաղեր.
Բայց քո վաղեմի երգերըն աղդու
Դեռ թարմ կը մընան երկար տարիներ։
Որ տեղ լըսւում է հայի հարազատ
Մայրենի բարբառ,
Ամեն տեղ լըսւում հընչում են ազատ
Քո երգ, քո քընար։

Երկար ժամանակ ականջ էր դընում
Նա ժողովրդեան սրտի բաբախման.
Եւ տրխուր մի ձայն էր նա միշտ լսում—
Ձայնը խոր վըշտի, ձայնը դառնութեան.
Եւ նա խոր ցըցւեց մեր երգչի սրտում
Շատ երկար տանջեց և մաշեց նորան.
Նա այդ վիշտն էր իւր աղգին պատմում
Ոկեայ քընարի լարերի վերան։
Նա թափեց այդ վիշտն—արտասուքներով,
Նա թափեց այդ վիշտն—բարկութեան հըրով,

Նա թափեց այդ վիշտն – ծաղրանքի թոյնով։
Բայց ամեն մի երգն՝ հրբավառ, անշէջ,
Որպէս գոհարներ, ազգը ժողովեց
Եւ ճոխ, փառակազմ հատորների մէջ
Եռնորդ սերընդին նոցա կրտակեց։
Եւ այդ սերունդը, ինչպէս սրբբութիւն,
Պիտի փայփայէ այդ ըղձն աւանդ.
Յուսահատ հայի վրհատուած հոգուն
Նա և յոյս կը տայ և գործի եռանդ։

Էջմիածին. 1892 թ., սեպտեմբերի 23։

ՎԱԼՏԵՐ ՇՆԱՓՍԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԳԻՅԻ ԴԸ ՄՈՊԱՍԱՆԻ

Սկսած այն օրից երբ յարձակւող գերմանական զօրքը ոտ կոխեց Ֆրանսիական սահմանի վրայ—այդ զօրքին մասնակից Վալտեր Շնաֆսը իրան համարում է աշխարհիս ամենադժբաղդ արարածը։ Նա գեր էր, ծանրաշարժ, մանգալիս խոր շունչ քաշող և ամենասաստիկ ցաւ զգացող իւր կաղ, տափակ ոտների թաթերում։ Նա մի հեզ մարդ էր և բոլորովին զուրկ արիւնարբութիւնից։ Նա թողեց հայրենիքում իւր չորս երեխաներին՝ որոնց նա պաշտում էր, և շիկահեր կնոջը՝ որի փայփայուածները և հոգատարութիւնները շատ ստէպ միտն էին գալիս մանաւանդ իրիկնապահի դադարներին։ Նա սիրում էր նաև լաւ ուտել, առանց շտապելու խմել լաւ գարեջրի մի երկու մեծ բաժակ և լաւ քնել։ Սարսափելի ատելութիւն էր զգում նա դէպի թնդանօթները, հրացանները, սարճանակները և թրերը,—բայց ամենից շատ ատում էր նա սւիններին. ուրիշ զէնքից դեռ կարելի է մի կերպ խոյս տալ, բայց սւինից ինչպէս ազատել իւր հաստ փորը։

Եւ ամեն երեկոյ հողի վրա պառկելով իւր քնած ընկերակիցների կողքին՝ նա երկար մտածում էր թէ այնտեղ, հեռւում թոզածների մասին և թէ պատերազմի անընդհատ վտանգների մասին։ Ապա եթէ իրան սպանեն,—ով հաց կը տայ նրա երեխաներին, ով կը կրթի նրանց. զուցէ հէնց հիմայ նրանք քաղցած են, թէև արշաւանքի դուրս գալուց առաջ նա փոխ էր առել նրանց համար ինչքան կարողացել էր։ Երբեմն, գիշերները, Շնաֆսը լաց էր լինում, պառկած հողի վրա և զինւորական վերարկուով փաթաթ-

ւած։ Արշաւանքի սկզբում նա ոտների այնպիսի սաստիկ թուլութիւն էր զգում, որ նրանում ցանկութիւն էր յղանում՝ պառկել և այլ ևս վեր չը կենալ, բայց այն ահը թէ ամբողջ գերմանական զօրքը պիտի անցնի նրա մարմնի վրայով՝ նրան ստիպում էր դէպի առաջ գնալ։ Նրա մազերը բիզ-բիզ էին կանգնում գնդակների սուլումից։

Արդէն քանի ամիս է ինչ որ նա ապրում է այս ձևով՝ շարունակ գտնւելով թէ ահի և թէ սարսափելի սպանիչ տաղտկութեան մէջ։

Նրանց զօրաբաժինը մօտենում էր Նորմանդիային։ Մի անգամ Շնաֆսը ուղարկւած էր միւսների հետ տեղեկութիւններ հաւաքելու. նրանց փոքրիկ գունդը պիտի հետախուզէր շրջակայքը և էլի միանար զօրաբաժնի հետ։ Թւում էր թէ երկիրը խաղաղ է և առիթ չը կար կարծելու թէ մի դիմադրութիւն է պատրաստւում։

Պրուսական գունդը առաջ էր ընթանում կատաբեալ խաղաղութեան մէջ և նոր էր ոտ դնում մի փոքրիկ դաշտավայրի մէջ, երբ ստիպւեց կանգ առնել յանկարծակի թունդ հրացանաձգութեան առաջ, որից մօտ քսան հոգի մեռած ընկան և ապա հարևան անտառից նրանց առաջը դուրս եկաւ ազատ հրացանաձիգների մի խումբ, որի կազմ պատրաստ պահած հրացանների սուինները փայլփլում էին արեգակի տակ։

Այս ամենը կատարւեց այնքան անսպասելի կերպով և այնպէս շլացրեց Շնաֆսին, որ մի քանի վայրկեան անշարժ մնաց իւր տեղում մեխւածի նման։ Այնուհետև մտքովը անցաւ փախչել, բայց և իսկոյն հասկացաւ որ իւր փախուստը կրիայի փախուստ կը լինի համեմատութեամբ նիհար ֆրանսիացիների վազելու հետ, ֆրանսիացիների՝ որոնք արագ մօտենում էին իրան և իրանց ցատկոտելով յիշեցնում վայրի այծերի հօտը։ Նա նայեց իւր շուրջը և մի հինգ քայլափոխի վրա նկատեց մի խոր խրամ, ծածկւած խիտ թուփերով... և ցատկեց մէջը, ինչպէս որ ցատկում են կամրջից գետի մէջ առանց հոգս քաշելու նրա խորութեան մասին։

Գետի նման նա անցաւ խիտ բուսած փուշերի միջով, որոնք անխնամ կերպով ճանկռտեցին նրա երեսը և նա իրան նստած գտաւ քարերի մի կոյտի վրա։

Վեր բարձրացնելով իւր հայեացքը՝ նա նկատեց երկինքը իւր

անկումից գոյացած ճեղքի միջից։ Այդ վտանգաւոր ճեղքը կարող էր նրան մատնել. նա սկսեց սողալ չորս ոտների վրա առուի երկարութեամբ, որի գլխին աճած թփերը տանիքի ձև էին կազմել։ Նա աշխատում էր սողալով փախչել կարելոյն չափ հեռու կուի տեղից։ Վերջապէս նա կանգ առաւ, նորից նստեց և թանձր խոտի մէջ թաղ կացաւ նապաստակի նման։

Մի առժամանակ նրան լսելի էին լինում հրացանաձգութիւնը, կուողների աղաղակները և հառաչանքները, բայց փոքր առ փոքր նրանք թուլանում էին և շուտով խապառ դադարեցին՝ տեղի տալով մեռելային լռութեան։

Ցանկարծ նրա գլխին ինչ որ է շարժուեց։ Նա դողաց ահից։ Ոստոստող մի թռչուն խշխշացրեց չորացրած տերևներ, բայց Վալտեր Շնաֆսը ամբողջ մի ժամ չը կարողացաւ ուշքի գալ։

Գիշերը վրայ էր հասնում, առուն մթնում էր և խեղճ զինուորը սկսեց մտածել իւր դրութեան մասին։

Ի՞նչ է սատահելու իրան։ Ի՞նչ անել։ Հասնել զօրաբաժնին։ Բայց ի՞նչպէս։ Ո՞ր կողմը պէտք է գնալ։ Եւ ի՞նչու վերադառնալ. Որ էլի վերսկի՞ մի սարսափելի կեանք՝ լի վտանգներով, ձանձրոյթով և չարչարանքներով։ Չէ, այդքանը հերիք է իրան։ Նա այլ ևս ոյժ չունի ամեն օր ոտով քայլելու և իրան ամեն րոպէ վտանգի ենթարկելու։

Բայց ի՞նչ անել, ի՞նչի ձեռնարկել։ Չէ՞ որ անկարելի է առուի մէջ մնալ մինչև պատերազմի վերջը։ Ի հարկէ, չէ։ Դեռ եթէ հնար լինէր առանց ուտելու կառավարուել—ապագան նրան շատ էլ չէր վախեցնիլ, բայց ուտելը անհրաժեշտ է և այն՝ ամեն օր։

Իսկ այստեղ նա բոլորովին միայնակ է, թշնամու հողի վրա, հեռու նրանցից, որոնք նրան կը կերակրէին էլ, կը պաշտպանէին էլ։ Նա դողդողաց և ամբողջ մարմնովը սարսուռ անցաւ։

Իսկ եթէ ինձ կալանաւորէին—անցաւ յանկարծ նրա մտքովը։ Նրա սիրտը սկսեց սաստիկ բաբախել. մի վառ ցանկութիւն աիրեց նրան՝ կալանաւորուել ֆրանսիացիներից։ Կալանաւորուել։ Նա կը լինէր ազատուած, կուշտ, կը նստէր մի լաւ բանտի մէջ. հեռու գնդակներից սուիններից, ու ամեն տեսակ վտանգներից։ Կալանաւորուել։ Ի՛նչ գեղեցիկ միտք»

Իսկոյն ինձ կալանաւորել կը կամ, վճռեց նա։ Նա վեր կացաւ իւր տեղից հաստատ որոշումով իւր ծրագիրը իսկոյն ի կատար ածելու։ Բայց յանկարծ նա կանգ առաւ նոր մտածումներով և սարսափով պաշարուած։

Ապա ինքն իրան ուր կալանաւորել տայ։ Ի՞նչպէս իրան ենթարկէ ահաւոր վտանգների՝ միայնակ ճանապարհորդելով, թշնամու երկրում։ Եթէ նրան պատահեն գիւղացիները։ Տեսնելով իրան, այդ անպաշտպան պրուսիացուն՝ նրանք իրան կը ստիպեն իբրև մի անտուն անտիրական շան, նրանք կը զզգզեն նրան իրանց հեծանոցներով, բահերով, գերանդիներով, կացիններով ու կը դարձնեն մի կտոր ծեծած միս։

Եթէ նա հանդիպելու լինի կամովին հրացանաձիգներին։ Օ՛Ֆ այդ աւազակները նրան հրացանի կը բռնեն առանց դատաստանի և հարցաքննութեան հէնց այն պատճառով, որ մի ժամաչափ զարձանան վրան։ Եւ նա արդէն ինքն իրան երևակայում էր յենուած մի պատի դէմը՝ տասներկու հրացանի փողեր իրանց մանր, կոլոլ, սև բերաններով կարծես նայում էին արդէն վրան։

Եթէ նրան հանդիպելու լինին Ֆրանսիական զօրաբաժինները։ Ցառաջապահները անշուշտ իրան հետախուզողի տեղ կ՚ընդունեն, մի յանդուգնի՝ որը համարձակուեց միայնակ գնալ շրջակայքը խուզարկելու և անկասկած է որ իւր մորթը հէնց իսկոյն մաղ կը դարձնեն։

Նա նորից նստեց։ Դրութիւնը նրան անելանելի էր թուում։

Արդէն վրա հասաւ մութ, անթափանցելի գիշերը։ Վալտեր Շնաֆսը չէր շարժուում, ներքուստ դողալով ամեն մի խշշոցից, ամենաթոյլ մի ձայնից որ լսելի էր լինում մթութեան մէջ։

Նա սևեռում էր իւր խոշոր աչքերը՝ աշխատելով և միևնոյն ժամանակ վախենալով մի բան նկատել շրջապատող խաւարի մէջ. ամեն րոպէ նրան թուում էր թէ մէկը մոտ է գալիս նրա գլխին։

Ապանիչ սարսափի մէջ անցկացրած անվերջանալի գիշերից յետոյ նա նկատեց առաւօտեան լուսաբացը իւր գլխին աճող մացառների ճիւղերի միջից։ Նա նոր սկսեց հանգստանալ, նրա փետացած անդամները կարգի եկան, սրտի ստատիկ բաբախումը պակսեց և նրա աչքերը փակուեցան։ Նա քնեց և զարթնեց կէսօրին։ Վալտեր

Ենաֆսը սաստիկ քաղց զգաց։ Մտաբերելով երշիկը, սոլդատի լաւ երշիկը՝ Նրա բերանի ջուրը սկսեց գնալ, իսկ փորը վավսում էր։ Եւ նորից... Նոյն իրար հակասող դիտողութիւնները, իրար հերքող, իրար ջնջող որոշումները տիրեցին Նրան աւելի բուռն հոսանքներով։

Վերջապէս մի նախագիծ Նրան թւաց ամենից ուղիղը և ամենից հեշտ գործադրելին. իւր դարանից նա կը դիտէ և վրա կը պրծնի առաջին պատահած անզէն զիւղացու վրա և իրան կալանաւորել կը տայ՝ նշաններով ցոյց տալով և հասկացներով իւր կալանաւորուել ուզելու մտադրութիւնը։

Ամենամեծ զգուշութիւններով նա հանեց իւր գլուխը ճեղքի միջից և սկսեց նայել շուրջը։

Բոլոր շրջակայքում չէր երևում ոչ մի կենդանի արարած։ Դէպի աջ նկատելի էր մի փոքրիկ գիւղ և մի քանի տների ծխնելոյզներից ծուխ էր բարձրանում։

Այս դրութեան մէջ նա մնաց մինչև երեկոյ ոչ ոքի չը տեսնելով բացի իւր ստամոքսի թախանձագին պահանջները։

Հասաւ գիշերը։ Նա փուեց իւր ապաստարանի խորքում և քնեց տենդային քնով ահաւոր տեսիլների հետ—քաղցած մարդու մի քնով։

Լուսաբացին նա նորից գիմեց դէպի իւր դիտատեղը, բայց շրջակայքը էլի ամայի էր նախընթաց օրուայ պէս և մի նոր սարսափ տիրեց Վալտեր Ենաֆսի հոգուն—քաղցից մեռնելու սարսափը։ Նա արդէն իրան տեսնում էր այդ աւուի խորքում փակուած աչքերով պառկած։ Նրան մտնում են զանազան տեսակի մանր միջատներ, մեծ քանակութեամբ թափում են վրան ամէն կողմից, թափանցում հագուստի տակը և իրանց սուր ատամիկները խորը խրում նրա անշնչացած մարմինը. իսկ ահագին ագռաւը իւր սուր կտուցով հանում է նրա աչքերը։ Նա վճռեց ինչ էլ որ լինի դուրս գալ չը նայած սպառնացող վտանգին, դուրս գալ և մի կերպ մտնել գիւղը. բայց այդ բոպէին դաշտի միջով անցան երեք գիւղացիներ ուսերին երկժանիներ. և Վալտեր Ենաֆսը նորից մնաց իւր ծակը։

Վերջապէս, իրիկնադէմին, նա դուրս եկաւ կամաց կամաց իւր աւուից և կուչ գալով՝ ահ ու դողով ուղղեց իւր քայլերը դէպի

դղեակը։ Նա չը վստահացաւ գնալ դէպի գիւղը որը նրան վաղրնե-
րով լի որջ էր երևում։

Դղեակի ներքին յարկի լուսամուտները լուսաւորւած էին,
նրանցից մէկը նոյն իսկ բաց էր և նրա միջից բուրում էր տապա-
կած մսի հոտ, մի հոտ, որը Վալտեր Շնաֆսի քթին հասաւ թէ չէ—
քիչ էր մնում նրան գժւացնի. այդ հոտը անդիմադրելի կերպով
քարշում էր դէպի ինքը և Վալտեր Շնաֆսին ներշնչում յուսահա-
տական վճռականութիւն։

Յանկարծ առանց այլ և այլի և առանց մտածելու նա կոխեց
լուսամուտի մէջ իւր՝ գերմանական զինուորական կասկայով ծածկւած
գլուխը։

Մօտ ութը հոգի ծառաներ սեղան նստած իրիկնահաց էին
ուտում։ Յանկարծ կինարմատներից մէկը վայր գցեց իւր ձեռքերի
միջից բաժակը և սառած մնաց աչքերը յառելով դէպի լուսամուտը։
Ամենքի հայեացքները ուղղւեցան դէպի նոյն կէտը։

Ներանք տեսան թշնամուն։

Ոհ, Արարիչ. պրուսացիները յարձակում են գործել դղեակի վրա։

Սկզբում—լսւեցին ութը զանազան ձայներ, որոնք միախառն-
ւեցան սարսափելի ահի մի աղաղակի մէջ. այնուհետև ամենքը յան-
կարծ վեր թռան իրար տեղերից և վայր գլորելով աթոռները՝
իրար կոխկռտելով իրանց իրանց գցեցին դէպի դռները։

Սենեակը դատարկւեց մի ակնթարթում, սեղանի վրա մնացին
շոգի արձակող կերակուրները ամաններում, իսկ լուսամուտի միջով
շարունակում էր նայել զարմացած Վալտեր Շնաֆսը։

Մի քանի վայրկեան վարանումի մէջ մնալուց յետոյ նա ներս
թռաւ լուսամուտի միջով և նետւեց դէպի սեղանը։ Գրգռւած
քաղցը դողցնում էր նրան ինչպէս տենդի ժամանակ—բայց ահը այ-
նուամենայնիւ յաղթեց քաղցին։ Նա կանգ առաւ և սկսեց ականջ
դնել։ Ամբողջ դղեակը կարծես դղրդում էր. լսւում էին աղաղակներ,
դռների թրբխկոց, արագաշարժ քայլեր, այնուհետև զեռին ընկնող
մարմինների խուլ ձայներ, և մէկը ցաձր էր թռչում ներքին յարկի
լուսամուտների մէկից։

Այնուհետև այս բոլոր աղաղակը, խառնաշփոթութիւնը դա-
դարեց և մեռելային մի լռութիւն տիրեց ամբողջ դղեակին։

Վալտեր Շնաֆիսը սեղան նստեց և սկսեց ուտել։ Նա երկու ձեռքերով ագահութեամբ վերցնում էր պատառները, դնում բերանը և կուլ տալիս առանց ծամելու։ Երբեմն որ և է մեծ կտոր կանգ էր առնում բդի մէջ—այդ դէպքում նա վերցնում էր կողքին գըտնուող գինու կուժը և իւր բուգը խողովակի պէս մաքրելուց յետոյ՝ նորից սկսում ուտել և ուտել անվերջանալի կերպով։

Բոլոր սկուտեղները, ամանները և շիշերը մաքրելուց և դատարկելուց յետոյ՝ նա բացեց իւր համազգեստի կոճակները և անկարող գանուելով տեղից շարժուելու՝ հէնց տեղն ու տեղը դրեց իւր գլուխը սեղանի վրա և քնեց խորը քնով։

Նոր լուսնի արծգոյն ճառագայթները աղօտ կերպով լուսաւորում էին ծառուղիի ծառերի գագաթները։ Օդի մէջ թարմութիւն էր զգացւում—առաւօտը գուշակող մի թարմութիւն։ Ծառերի մէջ ինչ որ է սուերներ էին շարժւում, նրանք թուով շատ էին և շարժւում էին խորին լռութեան մէջ։

Բարձր դղեակի մռայլ սուերը որոշակի գծագրւում էր պարզ հորիզոնի վրա։ Ներքին յարկի լուսամուտներից միմիայն երկուսում էր լոյս երևում։

Լսելի եղաւ յանկարծ մի ձայն։

Տղերք, յառաջ, յառաջ։

Մի ակնթարթում դռները, լուսամուտների շրջանակները, լուսամուտները ճռճռացին և զընգընգացին մի մեծ ամբոխի ընդհարումի ներքոյ, ամբոխի՝ որը իւր ճանապարհին ամեն ինչ կոտրելով, ջարդ ու փշուր անելով տիրեց ամբողջ դղեակին։

Վալտեր Շնաֆիսը շարունակում էր անվրդով քնով քնել խոհանոցում։ Ցիսուն զինուած սոլդատներ վրան թափուեցան և կրծքին դէմ տալով լցրած հրացանների փողերը գետին գլորեցին, ջարդեցին, գանակոծեցին և վերջապէս կապկպոտեցին էլ նրան։

Շաարած նա չը կարողացաւ ըմբռնել առաջին րոպէին թէ հետը ինչ է կատարւում և անմիտ աչքերով նայում էր յաղթութիւն տարածների վրա։

Եւ յանկարծ մի գիրուկ՝ զինուորական ոսկեթել ժապաւէն կրող համազգեստով՝ փորին դրեց իւր ոտքը ու արտասանեց.

Դուք իմ կալանաւորն էք — անձնատուր եղէք։

Պրուսացին մի բառ միայն հասկացաւ այն է՝ կալանաւոր և մրմնջաց՝ այո, այո։ Նրան բարձրացրին, սեղանի վրա նստացրին և սկսեցին զննել մեծ հետաքրքրութեամբ։ Նա ժպտում էր այժմ և նայում շուրջը ուրախացած աչքերով։ Վերջապէս նրա մտադրութիւնը իրագործուեց. և նա կալանաւորուած է։

Ներս մտաւ մի ուրիշ սպայ և արտասանեց.

Պարոն գնդապետ, թշնամին փախստի դիմեց և կարծես մեծ կորուստներ ունեցաւ. դղեակը մեր ձեռքին է։

Գէր զինուորականը, որը այդ բոպէին սրբում էր իւր լիքը դէմքը, բացականչեց.

—Յաղթութիւն!

Եւ գրպանից մի կտոր թուղթ հանելով գրեց. «Յամառ դիմադրութիւնից յետոյ պրուսիացիք ստիպուեցան յետ մղել՝ հեռները տանելով իրանց սպանուածները և վիրաւորուածները։ Մի քանի հոգի կալանաւորուած են մեր ձեռքով»։

—Ի՞նչ, կարդադրութիւններ պիտի լինեն ձեր կողմից, պարո՛ն գնդապետ, հարցրեց երիտասարդ սպան։

—Մենք պէտք է յետ քաշուենք որպէս զի խուսափենք թշնամու աւելի զօրեղ յարձակումից, նա կարող է վերադառնալ և ուղղել մեզ վրա իւր թնդանօթները։

Եւ նա հրաման տուեց նահանջ գործելու։ Դղեակի պատի մօտ կարգով շարուեց զօրախումբը և առաջ ընթացաւ ամեն կողմից շրջապատելով կապկպոտած Վալտեր Շնաֆսին, որին տանում էին վեց սղդատներ ձեռներին ատրճանակներ պահած։

Առաջ ուղարկուեցան ճանապարհը հետախուզողները։ Իսկ զօրքը ընթանում էր հանդարտ քայլերով և ժամանակ առ ժամանակ կանգ առնում։ Կէս օրին հասան Լարոշ Ուազել քաղաքը, որի ազգային գւարդիան կատարեց յիշեալ հերոսական քաջագործութիւնը։

Յուզուած բնակիչները անհամբեր սպասում էին զօրքի դալուն և աննկարագրելի էր նրանց հրճուանքը, երբ նկատեցին կալանաւոր Պրուսացու կասկան։ Կանայք դէպի վեր էին բարձրացնում իրանց ձեռքերը, պառաւները լալիս էին։ Ամբոխի միջից մէկը քար գցեց պրուսացու վրա և դրանով վիրաւորեց նրա պահապաններից մինի քիթը։

— Հոգս տարէք կալանաւորի ապահովութեան մասին, խիստ կերպով նկատեց գնդապետը։

Վալտեր Շնաֆսին առաջ տարին բաւուշան, յետոյ կապանքներից ազատեցին և նստացրին բանա, որը շրջապատեցին 40 զինուորուած սղզատներ։

Ձնայելով թեթև ստամոքսային ցաւերի, որոնք երևի առաջ էին եկել դրա խանգարումից, Վալտեր Շնաֆսը դրեթէ ուրախութիւնից խելքը կորցրած՝ սկսեց ոստոստալ, ոստոստալ մինչև կատաղութիւն, ձեռքերը թափ տալով և բղաւելով բոլոր ուժով։

Նա գերի է, նա ազատուած է։

Այսպէս ահա, դը Շամպինյէ գզեակը, որը միայն վեց ժամ էր մնացել թշնամու ձեռքին, էս առնուեց։

Մահուդի վաճառական Ռանյէ գնդապետը, ազգային գւարդիայի հետ այս քաջագործութիւնը կատարելուն համար՝ մի շքանշան ստացաւ։

---

*
* *

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Օ՛ լուռ կաց, ընկեր. այդ ինչ ես երգում.
Ինչու՞ ես խաղաղ հոգիս փոթորկում
Ուրախ օրերի սիրելի երգով
Եւ սիրոս վառում անցեալի կրակով...
Քո ձայնների հետ վաղուց հեռացած
Մի ուրիշ պատկեր մտքումս երևաց.
Ահա, կենդանի կանգնեց առաջիս,
Եւ, ահա, դարձեալ կարօտ ականջիս
Հնչում է նորա ձայնը սրտալի,
Որպէս երբեմն, երբ սիրուած էի։
Եւ մտքումս ահա լուսաւորուեցան
Հին ցնորքներս, անցքեր զանազան,
Գծերը հոգուս ծանօթ դէմքերի,
Տեսարանները հայրենի երկրի,
Այն օրհնեալ երկրի, ուր մի ժամանակ
Վայելում էի լիուլի հրճուանք...
Բայց զրկուած եմ ես այժմ բոլորից.
Դու չիշեցնում ես կորուստս նորից—
Երջանկութիւնս մռայլ վիճակում
Եւ այդպէս անդութ սիրոս կարատում...
Ո՛հ, ներում եմ քեզ, չեմ յանդիմանում.
Զը գիտես, հոգիս, թէ ինչ ես անում.
Սակայն մի՛ երգիր այդ երգը ինձ մօտ,
Թող, երգիր ուրիշ մի երգ անծանօթ։

1892 թ., օգոստոսի 14։

*
* *

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Ամ՛ս օրքան փարթամ կեանքը ծաղկում է
Մատաղ կրծքի տակ.
Աչքերի մթնում փայլատակում է
Կենդանի կրակ.
Հեշտախտի տապից այրուող շրթունքը
Խօսում են անբան,
Եւ արբեցնում է անոյշ բուրմունքը
Նորա թարմութեան.
Եւ այս բոլորը քեզ պատմում են ճոխ
Սիրոյ զաղտնիքը,
Բայց, ափսոս, չը կայ նաև մի պատմող,
Թէ այս աղջիկը
Տէրն է պօէտի
Հոգու և սրտի։

1892 թ., մայիսի 3։

ՆԱԻԹԱՇՐՋԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

I

Կովկասի արդիւնաբերութիւնների մէջ այժմ ամենաաչքի ընկնող տեղը բռնում է նաւթային նիւթերի մշակումը։ Այդ արդիւնաբերական գործունէութեան տեղերն են Բագուի շրջանները. ա. Բալախանի, Սաբունչիի և Ռամանի թրքաբնակ գիւղերի հողերը, որոնք գտնւում են քաղաքից 12—16 վերստ հեռաւորութեան վրայ—դէպի արևելա-հիւսիս, բ. Բիբի-Էյբաթ կոչւած հողերը, որոնք գտնւում են քաղաքի արևմտա-հարաւային կողմերում 3—4 վերստ հեռաւորութեան վրայ, փոքր ինչ արևմուտք Բայիլեան հրւանդանից և գ. քաղաքի արևելեան մասից համարեա կպած ծովափնեայ գործարանները, ուր վերևում յիշւած տեղերից ստացւած հում նաւթը ենթարկւում է զանազան փոփոխութիւնների՝ կերոսին, բենզին, մեքենաների իւղ և այլն ստանալու համար։ Այդ 150-աչափ գործարանները, որոնք երկար շարքերով ձգւում են Կասպեան ծովի ափին զուգահեռաբար, միանալով կազմում են Սև-Քաղաքը, որ, ուրեմն, ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մի խումբ գործարաններ։

Բալախանի, Սաբունչիի և Ռամանի գիւղերն այժմ այն չեն, ինչ եղել են առաջ, մինչև նաւթի կանոնաւոր մշակութիւնը. գիւղական առհասարակ ողորմելի խրճիթները տեղի են տուել միապաղաղ սպիտակ կիսաեւրոպական-կիսապարսկական ճաշակով շինւած արտաքուստ շատ մաքուր տների։ Մարդ սրտանց ուրախանում է,

որ հարուստ գիւղ է տեսնում, քանի դեռ չի մոռանում այդ հարստութեան աղբիւրների և նրանից առաջացած հետևանքների մասին... Օրական 20—25 կոպեկով իրանց տները կառավարող թուրքերն այժմ հարստացել, աղաներ, դրամատէրեր են դառել և մի առանձին ախորժակով կեղեքում են շրջապատողներին... այն մարդը, որ առաջ դժուարութիւնով կը կարողանար փայտ գտնել իւր տունը շինելու, երթկին ծածկոց ամրացնելու, այժմ հեշտ կերպով շինում է կանոնաւոր տներ, ձեռք է բերում կանոնաւոր կահ-կարասիքներ։

Համարձակ կարելի է ասել, որ Բալխանի և Սաբունչի գիւղերի բնակիչների մեծ մասը հարստացել են արդէն, մասամբ իրանց հողերի, մասամբ նաւթային շահաւէտ գործերի և մասամբ էլ բազմաթիւ ուրիշ գործերի շնորհով։ Դրանց ճանապարհով է գնում այժմ և Ռամանի գիւղը, որի հողերը համեմատաբար նոր են սկսել մշակութեան ենթարկուել։ Ի հարկէ այս գիւղն աւելի վարժ կը տանի իւր գործը, խրատուելով առաջին երկուսի փորձերից։

Այդ գիւղերից Բալխանէն արդէն կարող է մրցել քաղաքի հետ. հարստութիւն քաղաքի նման (մինչև անգամ աւելի շատերի մօտ ցրուած), տներ—նոյնպէս, դեռ այն առաւելութեամբ, որ հարստի և քիչ հարստի տների մէջ չը կայ այն աչքի ընկնող արտաքին զանազանութիւնը, ինչ որ քաղաքումն է. օդը, ջուրը, բուսականութիւնը քաղաքից լաւ։ Իսկ բէգերն արդէն մրցում են քաղաքի ամենահարուստների հետ անգամ։

Դիտելու արժանի երևոյթ է այն, որ այս գիւղերի տնտեսական բարձր մակերևոյթը շատ քիչ է օգնում մտաւոր զարգացմանը, բարոյական և կուլտուրական առաջադիմութեանը։

Թէև նաւթային իսկական գործերն ամփոփուած են Բալխանի-Սաբունչի-Ռամանեան դաշտավայրում, Բիբի-Էյբաթում և Սև-քաղաքում, բայց այդ բոլորի շարժիչ ոյժը, հրամայող տէրերը կենդրոնացած են քաղաքում (Բաքուում), այնպէս որ այդ բոլոր տեղերը դրուած են այնպիսի պայմաններում, որոնք անհրաժեշտ են դարձնում դրանց ամենայարմար կապակցութիւնը, ամենայարմար երթևեկութեան միջոցները Բաքու քաղաքի հետ։

Գլխաւոր նաւթահանքերի (Բալխանի-Սաբունչեան մաս) և

քաղաքի մէջ կայ անմիջական երկաթուղային յարաբերութիւն, Սև-Քաղաքի և քաղաքի մէջ—ձիաքարշի և շոգեկառքի հաղորդակցութիւն, իսկ Բիբի-Էյբաթի ճանապարհի մի մասում կայ ձիաքարշ, միւս մասը դեռ ևս բաց է մնացել։ Բացի այդ, Սև-Քաղաքի և քաղաքի, Բիբի-Էյբաթի և քաղաքի մէջ կայ նաև ջրային հաղորդակցութեան ճանապարհ։ Քաղաքից Սաբունչի և յետ երթևեկում է օրական 4 գնացք մի քանի վագոններով, իսկ Սև-Քաղաքից քաղաք և յետ իւրաքանչիւր $^1/_2$ ժամում կամ 25 րոպէում մի գնացք է անում այդ տեղում եղած երկու շոգեկառքերից ամեն մէկը։ Այդ ճանապարհների կայարանները գնացողներն ամեն օր անշուշտ կը տեսնեն լիք-լիք վագոններով բազմաթիւ ճանապարհորդներ, որոնք երթևեկում են Սաբունչուց քաղաք Սև-քաղաքից քաղաքից և ընդհակառակը։ Մարդ զարմանում է այդ եկող-գնացողների բազմատեսակութեան վրայ. տեսակ-տեսակ հագուստներ, տեսակ-տեսակ դէմքեր ու լեզուներ... Բայց այդ բոլորի մէջ իւր թուի շատութիւնով աչքի է ընկնում մի դասակարգ, որը բոլոր երկրներումն էլ համարեա միատեսակ յարաբերութեան մէջ է միւս դասակարգերի հետ, որին ամենքն էլ ճանաչում են, որի վրայ շատ շատերը ցաւում են, բայց որին անկեղծ սրտով ու խոր համոզմունքով ձեռք կարկառող, օգնող դեռ շատ քչերն են աշխարհի մէջ—դա բանւոր դասակարգն է։

Այդ բանւորների գլխաւոր կոնտինգէնտը կազմում են հայ, լեզգի, ռուս, գերմանացի, պարսիկ և ատրբէջան շիա թուրք պանդուխտները։ Բուն տեղացիներ կամ մօտ շրջակայքից նաւթային գործում շատ քիչ են, ինչպէս և շատ քիչ են ֆրանսիացի, հրէա, թաթար, ասորի և ուրիշ ազգերից բանւորներ։

Նաւթաշրջանի բոլոր աշխատաւորներին պէտք է բաժանել երկու գլխաւոր մասերի. I ինտելիգէնտ աշխատաւորներ, որ կազմում են «մասնաւոր ծառայողների» դասակարգը, ինչպէս. կառավարիչներ, հաշուապահներ, օգնականներ, գործակատարներ, մեքենապետներ, փորող վարպետներ և այլն և II բանւոր կամ մշակ աշխատաւորներ։ Առաջին դասակարգի գործի մէջ պահանջւում է որոշ կրթութիւն և գիտութիւն, ձեռք բերուած կամ ուսումնարանների միջոցով, երկար ժամանակւայ փորձառութեան միջոցով,

իսկ երկրորդ դասակարգի համար պահանջում է ամենագլխաւորը՝ ֆիզիկական աշխատանք և մասամբ էս փորձառութիւն։ Այդ երկու դասակարգերն էլ, չը նայելով իրանց վիճակների խիստ զանազանութեանը, մի կէտում հաւասարւում են իրար։ Եւ այդ կէտն է, այն, որ երկուսն էլ աշխատում են ոչ իրանց, այլ ուրիշի համար և դրա փոխարէն էլ ստանում են որոշ, պայմանաւորւած վարձատրութիւն, առանց ուշադրութիւն դարձնելու ստացած վարձատրութեան և տւած աշխատանքի համաչափութեան վրայ։ Այդ միացնող կէտը իրաւունք է տալիս մեզ բոլորովին էլ հաւասարապէս «աշխատաւորներ» անւանել նաւթային գործերի մէջ։

Մեր այս յօդւածի նպատակն է այս դասակարգերից վերջինիս մասին մի ամփոփ և կարճ տեղեկութիւն տալ ընթերցող հասարակութեանը, թողնելով առ այժմ առանց ուշադրութեան առաջին դասակարգին, որ, փակագծի մէջ ասենք, կազմում է բաւականին պատկառելի թիւ ունեցող մի խումբ։

*
* *

Զը հաշւելով բոլոր ինտելիգենտ աշխատաւորներին, նաւթաշրջանի միւս բանւորներին կարելի է կրկին երկու իրարից բաւականին տարբեր մասերի բաժանել. I. վարձկան արհեստաւորներ և II. իսկական բանւորներ։ Այս երկու տեսակի բանւորներն էլ հաւասարապէս ուսումնասիրութեան արժանի են, երկուսի դրութիւնն էլ որոշ պայմաններում հաւասար են իրար. գործ չը ունեց հանքատէրը կամ գործարանատէրը, երկուսն էլ հաւասարապէս մնալու են քաղցած, չը նայելով, որ արհեստաւորը գիտէ հասարակական գործածութեան համար արժէք ունեցող առարկաներ պատրաստել։ Ի՞նչ կարելի է անել առանց գործիքների... Աշխատող ձեռքերի առաջարկութիւնը աւելացաւ պահանջից՝ այդ երկու դասակարգերից էլ որոշ թիւ անհատներ մնալու են անգործ, ուրեմն և քաղցած, մինչև որ նորից պահանջը շատանայ զանազան պայմանների պատճառով։ Ակներև է, որ վիճակների նմանութիւն կայ։

Ասացինք, որ արհեստաւորը գիտէ հասարակական գործածութեան համար պիտանի առարկաներ պատրաստել և, չը նայելով

դրան, եզրակացրինք, որ եթէ գործ չը տայ դրամատէրը, քաղցած կը մնայ։ Ի՞նչ է ծնեցնում այս ակներև հակասութիւնը։ Այդ հարցին վաղուց պատասխանել է անտեսական գիտութիւնը։ «Փոքր արդիւնագործողը տեղի է տալիս, ոչնչանում է մեծ արդիւնագործութեան առաջ»։ Ահա բոլոր պատասխանը։

Ազատ մրցումը, որի մէջ ամենալաւ զէնքերը դրամատիրոջ ձեռքին են, ստիպում է արհեստաւորին թողնել իւր անկախ աշխատանքը և վարձկան դառնալ, ծախել իւր ձեռքերի ոյժը և շնորհքը դրամատիրոջը։

Իսկական բանւոր դասակարգին և արհեստաւորների իրար հաւասարեցնելու մեզ տեղիք տուեց վիճակների այս նմանութիւնը։ Նմանութիւնն աւելի մեծանում է, երբ մտածում և տեսնում ենք, որ մեքենաների գործածութիւնը աշխատանքների բոլոր ճիւղերի մէջ, այդ մեքենաների ահագին քայլերով կատարուող առաջադիմութիւնը, որ միշտ աւելի մատչելի է դարձնում աշխատութեան բոլոր ճիւղերն էլ, կամաց-կամաց մօտեցնում է իրար այդ երկու դասակարգերին։ Եւ շատ խելքի մօտ է այն միտքը, թէ կը դայ օր, որ շնորհիւ մեքենաների հեշտ գործածութեան մէկը միւսի տեղը կը բռնէ առանց դժուարութեան [1])։

Բազուի բոլոր գործերի շարժիչը, այսպէս ասենք, ծանրութեան կենդրոնը կազմում է բուն նաւթային գործը, դրա համար էլ առաջին տեղը բռնում է այն դասակարգը, որ գործում է անմիջապէս նաւթային գործում, իսկ երկրորդ տեղը—օժանդակող արհեստներում գործողները։ Գործարանական կեանքը միշտ առաջացնում է մարդկանց կենտրոնացում մի որոշ տեղում, այսինքն գործունէութեան կենտրոնատեղի շուրջը հաւաքւում է մի բազմութիւն, որը անհրաժեշտ հարկաւոր է այդ գործի կատարման հա-

---

[1]) Ամեն մի արդիւնաբերութեան մէջ՝ որքան էլ մեքենան նորա արտադրութեան մէջ մեծ դեր խաղայ՝ միշտ մի բան մնում է ձեռքով շինելու հետևապէս և արհեստաւորի համար։ Եւ նոյն իսկ մեքենան գործածելու համար շատ դէպքերում պահանջւում է մի լայնի տեխնիկական հմտութիւն, որի տէրը աւելի արհեստաւոր է քան բանւոր։ Արհեստաւոր դասակարգը նոյն իսկ այժմեայ Եւրոպայում մեծ դասակարգ է։

Խմբ.

մար. իսկ բազմութեան համար անհրաժեշտ գործածութեան առարկաներ կամ նիւթեր արտադրելու համար նորից խմբւում են ուրիշ անհատներ։ Ուրեմն բնական է, որ բացի վերևում յիշած նաւթային գործերից և օժանդակ արհեստներից, կան և ուրիշ բազմատեսակ արհեստներ և զբաղմունքներ ևս, ինչպէս ամեն մի քչից շատից կուլտուրական քաղաքում և գիւղում անգամ, ինչպէս օրինակ, դերձակութիւն, կօշկակարութիւն, հացադործութիւն և այլն և այլն։ Մեզ այդ արհեստները չեն հետաքրքրում, չը նայելով, որ դրանք ևս անմիջական արդիւնք, հետևանք են նաւթային գործի առաջացրած կենտրոնացման։ Հետաքրքրութեան առարկան է միայն նաւթային գործը իւր ամենամօտ, սերտ արհեստներով։

*
* *

Բանւոր դասակարգի դրութիւնը աւելի պարզ, աւելի հասկանալի դարձնելու համար՝ անհրաժեշտ է մի թեթև ծանօթութիւն ունենալ նաւթային գործերի մասին։ Այդ նպատակով էլ մենք այստեղ առաջ կը բերենք մի համառօտ նկարագիր այդ գործերի, փոխանակ անմիջական նիւթին դիմելու։ Առանց այդ նկարագրութեան բանւորների մասին խօսելը կը նմանէր մի առարկայի, որի ամենագլխաւոր պայմանը—նրա դրութիւնը, անյայտ կը լինէր ընթերցողին։

Իսկական նաւթային գործը կազմւած է երկու բաժիններից, ինչպէս բոլոր հում նիւթերը, որոնք ենթարկւում են մշակութեան. ա. արտադրող արդիւնագործութիւն (добывающая промышленность) և բ. գործարանական կամ մշակող արդիւնագործութիւն։ (Обрабатывающая промышленность)։

Արտադրութեան գլխաւոր տեղն է Բալախանի-Սաբունչեան-Ռամանեան հրապարակը (դաշտավայրը), որի երեք ծայրերին եռանկիւնաձև դասաւորւած են համանուն երեք գիւղերը, և մասամբ էլ Բիբի-Էյբաթի հողերը, որի մօտ գտնւում են և մշակելու համար յարմարեցրած մի-երկու գործարաններ. իսկ գործարանների գլխաւոր տեղն է Սև-Քաղաքը, իւր մօտ 155—165 նաւթային գործարաններով։

Բալախանի-Սաբունչեան-Ռամանեան դաշտավայրի բոլոր տե-

ղերն էլ ճանաչուած են իբրև լաւ նաւթահողեր, որոնց մի մասն արդէն ենթարկուած է մշակութեան, իսկ միւս մասը դեռ մշակուած չէ, որովհետև տերունական հողեր են. կառավարութիւնը, երևի իւր սեպհական նաւթահոտերն ունենալու նպատակով կամ այդ հողերից աւելի մեծ կապալագրամ վերցնելու համար, մինչև օրս չի թոյլ տալիս այդ հողերն էլ մշակութեան ենթարկելու, որին, ի միջի այլոց ասենք, սաստիկ անհամբեր սրտով սպասում են հանքատէրերը և ուրիշ դրամատէրեր։

Ինչպէս վաճառականական բոլոր գործերում, նոյնպէս և այս գործում պահանջւում է վստահութիւն (рискъ). ամեն դրամատէր չի համարձակւում փորել այնպիսի տեղ, որտեղ դեռ ևս «ուրիշները» չեն փորձել։ Այդ փորձը կարող է տանել շատ վատ հետևանքների, բայց դորա փոխարէն, կարող է և շատ փայլուն արդիւնք ունենալ։

Նոր նաւթահոր պատրաստելու համար առաջ փորում են 1—3 սաժէն խորութիւնով փոս (երկու լարկի են բաժանում տախտակներով) կամ չախտա և ապա այդ փոսի լատակից սկսում են անցկացնել երկաթէ խողովակներ, որոնց տրամագիծը, նայելով հողի լատակութեան և տեղին, կարող է լինել 20—24 դիւմ։ Խողովակները հողի մէջ մի քիչ տեղ մտցնելուց յետոյ սկսում են փորել խողովակի մէջ եղած հողը և դուրս տալ։ Եթէ հողը փափուկ չէ և դժուարութիւնով է փորւում, ջուր են ածում խողովակների միջով, որ փափկացնէ։ Երբ խողովակների առաջին կտորը մտնում է հողի մէջ, վերի ծայրից ամրացնում են (заклепать) կարճ և հաստ մեխի տեղ ծառայող երկաթներով (заклёпка) մի ուրիշ կտոր խողովակ, որի տրամագիծը հաւասար է առաջինին։ Այդպէս կարող ես քաց թողնել դէպի ներս մինչև 40—50—60 սաժէն խորութիւն միայն առաջին կարգի խողովակներ (ամենալայնը)։ Առհասարակ առաջին կարգի խողովակները դնում մի երկու երեք տասնեակ սաժէն ներս և կանգնում, այլ ևս հնար չի լինում ներս իջեցնելու, այն ժամանակ առաջին կարգի խողովակների միջով իջեցնում են երկրորդ կարգի խողովակներ, որոնց տրամագիծն աւելի նեղ է լինում առաջինից։ Եթէ երկրորդ շարքն էլ դէմ առաւ, բայց են թողնում երրորդ շարքը, աւելի նեղ և այլն, մինչև որ նաւթ երևայ։ Փորած հողի իւրաքանչիւր սաժէնի հողից մի քիչ վերցնում պահում են նմուշի համար, ածելով սպարանական արկղների ձևով չինած ամաններում։ Հմուտ վարպետները կարող են ճանաչել հողից, թէ երբ է նաւթ ստացվելու. հասնում են այդ տեղը, դուրս են հանում նաւթաշաղախ եղած փորելու գործիքները և սկսում քաշել։ Նաւթահորերի խողովակների ուղ-

ղութիւնը պէտք է լինի բոլորովին ուղղաձիգ (вертикально)։ Իրաքանչիւր նոր շարք խողովակներ դաց թողնելու ժամանակ ներքին ծայրի խողովակի վարի կողմից ամրացնում են նոյն տրամագծով մի երկաթէ շրջանակ սրած բերանով, որ կարողանալ պատռել հողը։ Այդ երկաթէ շրջանակի անունն է բաշմակ (башмакъ)։

Առհասարակ մի քանի սաժէն վերելուց վերջ սկսում է հողը փափկանալ, ցեխ դառնալ և մինչև անդամ բոլորովին ջրախառն լինել։

Փորելու գործիքներից առաջինն է «դուրը» (долото)։ Սա կացնաձև մի երկաթէ, որի նեղ ծայրը կլորանում և վերջանում է պտուտակաձև փորուածքով (рѣзьба)։ Այդ փորուածքով նա մտնում է լապտերաւոր շտանգի ներքին ծայրի մէջ և պինդ ամրանում։ Դուրը լինում է զանազան մեծութիւնների, նայելով, թէ ինչ տրագիծ ունեցող խողովակների միջով պէտք է անցնի։ Դուրի վերի ծայրից ամրանում է լապտերաւոր շտանգը (фонарная штанга)։ Սա մի երկաթէ ձող է, որի վրայ, իրարից փոքր ինչ հեռու, շինուած են երկու հատ լապտերաձև մարմիններ չոր գոգաւոր երկաթներից։ Լապտերները լինում են խողովակների տրամագծի լայնութիւնով և ծառայում են մէկ իբրև ծանրութիւն, մէկ էլ իբրև ուղղութիւն պահպանող։ Լապտերների և դուրի մէջ դնում է «լայնացնողը» (расширитель), որ նման է ձկան թեւերի։ Երկու թեւերի ծայրերն էլ սուր-սուսմնաձև են և շարժւում են պինդ ու հաչտ զսպանակի միջոցով։ Այդ թեւերը լինում են աւելի լայն, քան խողովակները, այնպէս որ ներս իջեցնելու ժամանակ երկու թեւերը սեղմում են դէպի ներքև, բռնած տարածութիւնը փոքրացնում և այնպէս մտցնում խողովակների մէջ։ Երբ դուրը մտնում է հողի մէջ, այդ լայնացնողը դուրս է գալիս բաշմակից և լրացնում է դուրի գործը. դուրը փորում, փափկացնում է հողը դէպի ներքև, իսկ լայնացնողը այդ փոսը աւելի մեծացնում-լայնացնում է։ Այդ գործիքները հոն են իջեցնում երկաթէ քառանկիւնի երկար ձողերով, որոնք կոչւում են շտանգներ։ Շտանգների մի ծայրը լինում է դրսի կողմից կտրած, իսկ միւս ծայրը ներսի կողմից, որ կարողանան մէկ շտանգ միւսի մէջ պինդ կերպով հագցնել։ Իրաքանչիւր անդամ գործիքները հորի մէջ մտցնելիս կամ հանելիս միշտ պէտք է շտանգները իրար մէջ հագցնել և քանդել։ Դուրը բարձրացնելու և $^1/_2$—$^3/_4$ արշին բարձրութիւնից վայր գցելու համար շտանգների և լապտերաւոր շտանգի մէջ տեղ երկու ծայրերից ամրացրած է «ֆրէյֆալ» կոչած գործիքը, որ ներկայացնում է մի խողովակ մէջն անցկացրած երկաթէ մխոց (поршень) Այդ մխոցը շարժելով վեր ու վայր կարող է շարժել և դուրին ու լայնացնողին, որոնք 1—2 արշին բարձրութիւնից իրանց ու լապտերների ահագին ծանրութիւնով ընկնում են հողի վրայ, թաղւում նորա մէջ և փափկացնում։ Երբ հողը փափկանում է բաւական, դուրս են հանում դուրն ու միւս փորիչները և կախում են հող, ցեխ ու ջուր դուրս հանող գործիքները։ Քանի դեռ խո-

րութիւնը չատ չէ իջեցնում են «Բուր» (буръ) կոչած գործիքը, որ նման է հասարակ ջուր քաշելու ամանների, միայն ներքևի ծայրի մի կողմը ծնոտաձև բաց, սուր եղերքներով, իսկ ծնոտի արմատում դէպի ներս բացող մի գոնակ։ Իջեցնում են բուրը, մի քիչ պտոյտ ածում հորի մէջ, որ հողը ծնոտի միջոցով բաց անի գոնակ և ներս լցի։ Հողը ներս է լցւում և իւր ծանրութիւնով փակում է գոնակը ներսից։ Մի քանի անգամ շարժելուց յետոյ հանում են բուրը, միջից ցեխը դատարկում և կրկին իջեցնում և այն Եթէ հորը բաւական խոր է և հողն աւելի ջրախառը, իջեցնում են առաջնից փոքր ինչ տարբեր մի գործիք, որ կոչւում է ամերիկական դոյլ (котелъ—Американская мелонка)։ Բարի ծնոտաձև մասը չկայ և ուղիղ տակից գոնակն է, որը բացւում, ներս է ընդունում ցեխը և փակւում է։ Մի 10—15 անգամ հորի մէջ վեր ու վայր անելուց յետոյ հանում են դոյլը, որի բերանից մի քիչ հեռու բաց են անում գոնակը և թափում միջից ցեխը, նորից կախում։

Փորելու հիմնական գործիքները սրանք են. կան և ուրիշները, որոնք բռնում են երկրորդական տեղ։ Առհասարակ փորելու գործը և գործիքները մի քիչ հասկանալի ձևով նկարագրելու համար անհրաժեշտ են նկարներ. առանց դրանց անհասկանալի կը լինեն մանրամասնութիւնները, միայն մի փոքր հասկացողութիւն կարող կը լինեն տալ, այն էլ ընդհանուր ձևով։

Երբ այնքան արդէն նաւթ է երևում նոր փորած հորի մէջ, որ կարելի կը լինի քաշել, հեռացնում են փորելու դազդահը (бурильный станокъ) և պատրաստում քաշելու գործիքները։

Դեռ փորելուց առաջ այն տեղի վրայ, ուր հոր են սարքելու, չինում են մի փայտէ տնակ, որի մի կողմը բրգաձև բարձրանում է վեր մինչև 10 սաժէն բարձրութեան։ Այդ բարձր մասը լինում է հիմքում լայն քառակուսի, իսկ վերևում բաւական են փոքր։ Դա կոչւում է բուրդ կամ աշտարակ (вышка)։ Տնակի ցածր և լայն մասը լատկացւում է մեքենաներին, նրանց կաշիների (ремень) համար, իսկ անմիջապէս հորի չորս կողմերից բարձրացածը ծառայում է իբրև պատանդան, որի վերին ծայրին ամրացնում են կառքի անիւի մեծութիւնով մի ճախարակ։ Այդ ճախարակի փոս ընկած ափերի միջով քարշ են ածում երկաթէ թելերից հիւսած պարանը, որի մի ծայրն ամրացրած է շոգեշարժ մեքենայի հետ հաղորդակցութիւն ունեցող հաստ գլանին (барабанъ) իսկ միւս ծայրը ուղղած է դէպի հորը։ Այս վերջին ծայրից կապում են նաւթհան դոյլ (желонка), երկու ուղղաձիգ կոնգնեցրած փայտերի միջով իջեցնում են խողովակների մէջ։ Խողովակների կողքերից երկու փայտերը դրւում են, որ դոյլն առանց խողովակի բերանին դէմ առնելու ներս մտնի։ Դոյլերն էլ լինում են խողովակների արամագծին համեմատ—5—14 դիւմ արամագծով և 2—5 սաժէն երկարութիւնով։ Նաւթհան դոյլերն էլ նման են

ամերիկական դուլերին, միայն աւելի երկար։ Սրանց ներքևի դռնակն ունի մ՝ նիզակաձև կարճ կոթ, որ դէպի դուրս է ցցած։ Դուլն իջնում է հորի ներսը, թաղւում նաւթի մէջ, թէ ներքևի դռնակից և թէ բերանից նաւթը լցւում է նրա մէջ, ճնշում ու փակում դռնակը և, երբ մեքենային հակառակ ընթացք տալով հաստ գլանը հակառակը կողմ պտտւում է, պարանը փաթաթւում է գլանին, պատցնում բրգի ծայրի ճախարակը և դուրս հանում նաւթով լի դուլը։ Դուլը կարող է պարունակել իւր մէջ 8—50 փութ հում նաւթ։ Երբ դուլը հորի բերանից մի քիչ վեր է բարձրանում, խոզն «սողնակով» ծածկում են հորի բերանը։ Սողնակը մի հաստ տախտակ է, երեսները պատած երկաթով։ Այդ տախտակի մի կողմից ամրացրած է մի երկար պոչ, որ դուրս է գալիս խողովակի բերանի մօտ ամրացրած արկղի պատից և հասնում է մինչև պատանի փաթաթելու գլանը (барабанъ)։ Սողնակի շարժելը կախւած է այդ պոչից. եթէ բանւորը կը շարժի առաջ, հորի բերանը կը փակւի, իսկ եթէ կը քաշի վեր, կը բացւի. Հորի բերանը սողնակով ծածկելուց յետոյ, ազատ կախւած դուլն իջեցնում են այնքան, որ ներքևի դռնակի նիզակաձև ծայրը կպչի սողնակի մակերևոյթին։ Դուլի ամբողջ ծանրութիւն է ճնշում է դռնակը բացւում և միջի նաւթը թափւում։ Սողնակի չորս կողմից լարմարեցրած է մի մեծ արկղ, որը չի թողնում մեծ ուժով դուլից դուրս շպրտւող նաւթին ցրւելու այս ու այն կողմ. հաւաքում է նաւթը և իւր մի կողքից բացւած անցքով դուրս թողնում։ Նաւթը գնում է փայտէ կիսախողովակների (желобъ) միջով, դուրս է գալիս փայտէ չինութիւն միջից և լցւում տակառի մէջ։ Առաջին տակառի մէջ թողնում է նա իւր հետ բերած ծանր մասերը և գնում մի ուրիշ տակառ, այն տեղ էլ թողնում է իւր մէջ եղած ջուրը (ջուրը ծանր է նաւթից, դրա համար էլ տակնէ իջնում) և այնտեղից էլ գնում թափւում նաւթի փոսերի մէջ, որ կոչւում են նաւթալին ամբարներ։ Ամբարները չինւում են գետնի մէջ. տանիքը հաւասար գետնին։ Երբ դուլը մի անգամ դատարկւում է, մեքենայի միջոցով քիչ բարձրացնում են վեր, սողնակը վեր քաշում և էլի թողնում հորի մէջ։ Այս գործողութիւնը կատարւում է անընդհատ—ցերեկ և գիշեր, եթէ մի որ և է վնաս չի պատահում։ Շատ անգամ հորի նաւթը պակասում է, ցեխ է սկսում տալ, այն ժամանակ ցեխ հանելու վերևում լիշած գործիքներից մէկն ու մէկը կախում ու մաքրում են։

Մենք աշխատեցինք որքան կարելի է համառօտ նկարագրել փորելու և քաշելու գործը. բայց թողնենք փորելու ամբողջ «ամերիկական ձևը» (канатная система), մեր յիշած «գերմանական ձևի» մէջ գործածւող գործիքներից էլ նկարագրեցինք միայն մի քանիսը։ Այժմ մեզ մնում է տեղեկութիւն տալ նաւթը Բալախանայ Սև-Քաղաք խիելու և մաքրելու մասին։

Անմիջական նաւթի հետ խաղացող հիմնարկութիւններն են, բացի նաւթհանքերից, և «նաւթանցքային կայարանները» (нефтепроводныя станціи)։ Դրանց թիւը հասնում է այժմ Բաքուում մինչև 20-ի։ Դրանց պաշտօնն է միայն հում նաւթը Բաքուից Սև-Քաղաք մղել։ Կայարանից մինչև Սև-Քաղաք և կայարանից մինչև նաւթային ամբարները տարուած են նաւթատար խողովակներ, որ կոչւում են «անցքեր» (проводы)։ Ամեն մի կայարան ունի իւր բաժանորդները, որոնցից հերթով նաւթ է ընդունում, թէ ցերեկը և թէ գիշերը։ Կան կայարաններ էլ, որ միայն իրանց ֆիրմայի հանքերի համար են աշխատում, ինչպէս Նոբել եղբայրներինը։ Նաւթը բաժանորդ ֆիրմայից ընդունում, չափով լցնում են մեծ պահեստատեղի (резервуаръ) մէջ, այնտեղից էլ խողովակով տանում «մղիչ»-ների (насосъ) մէջ և մղում Սև-Քաղաք։ Իւրաքանչիւր կայարան պէտք է ունենայ իւր «կաթսայարանը», ուր պատրաստւում է մղիչները շարժող շոգին, պէտք է ունենայ իւր «մղիչների բաժինը» (насосное отдѣленіе) և ծառայողների բնակարանների բաժինը։ Չափով ընդունում են նաւթհանքերից նաւթը, ստացական տալիս և խփում Սև-Քաղաք իրանց պատկանող կայարանը, որտեղից և մղւում է այն գործարանը, որի հասցէով ընդունուած է եղել։ Նաւթամուղ կայարաններն իրանց աշխատանքի համար ամեն մի փթից ստանում են $^1/_2$—$^3/_4$ կոպէկ վարձատրութիւն, հաղարից 8 փութ վառելիք և նաւթի մէջ եղած ջրի, փոքուածքի (утечка) փոխանակ հաշուից դուրս են գալիս 3% (հարիւրից 3 փութ)։

Նաւթաքաշի շարժող, կենդանութիւն տուող ոյժն այսօր շոգին է. այդ բոլոր գործողութիւնները կատարողը, բոլոր մեքենաները շարժողը նա է։ Հարց է առաջանում այժմ, թէ ո՞րտեղից է այնքան ջուր նաւթաքաշի նման տեղում, որ կարողանայ բաւականութիւն տալ շոգու այդ հրէշաւոր պահանջին։

Այդ պահանջի արդիւնք են այն բազմաթիւ ջրհորները, որ պատահում են նաւթաքաշի ամեն անկիւններում։ Հորերից ջուրը հանում են շոգու միջոցով կամ նահապետական ձևով. ձեռքով՝ անագին լծակի միջոցով և կամ մի ճախարակի և ձիու օգնութեամբ՝ կաշէ տակով։ Ի հարկէ ամենից լաւը և լարմարը շոգին է։ Պղնձէ կամ չուգունէ փոքրիկ մի գործիք (անունը водогонъ) իջեցնում են հորի ջրի մէջ, մի խո

զովակով էլ չոգի հասցնում գործիքի ներքին մասը։ Շոգին սեղմում է գործիքի մէջ եղած ջուրը և մի ուրիշ խողովակով բարձրացնում վերև։ Մի կողմից միշտ գործիքի մէջ ջուր է լցւում չորս կողմի ծակերի միջով, միւս կողմից չոգին ճնշում ու անդադար վեր ուղարկում։ Այդ տնտակ մի քանի հորերից ջուրը հաւաքւում է մի երկու ջրամբարներում և այնտեղից ջրամուղ (насосъ) մեքենաների միջոցով խփւում, ուր հարկն է։ Այդ մի խումբ հորերը, իւր մեքենաներով միասին կրում է «водокачка» անունը։ Ամեն մի վ ա դ ա կ ա չ կ ա ունի իւր բաժանորդները, որոնց միշտ ջուր է տալիս։

Կ ե ր ո ս ի ն ի պ ա տ ր ա ստ ո ւ թ ի ւ ն ը։ Հում նաւթը մենք խփեցինք և հասցրինք Սև-Քաղաքի գործարանները։ Նա մի քանի օր կը մնայ գործարանի ահագին պահեստատեղի մէջ (резервуаръ), որ վերջնականապէս բաժանւի ջրից. ջուրը, ծանր լինելով նաւթից, նստում է տակը։ Պահեստատեղի վարի մասերում շինւած ծորակը բաց են անում և ջուրը դուրս թափում, թողնելով միայն մաքուր հում նաւթը։ Այդ տեղից հում նաւթը լցնում են կաթսաների մէջ և ենթարկում տաքութեան։

Թէ նաւթային կաթսաները, թէ չոգեկաթսաները բոլորովին մենոյն ձևն ունեն. մօտ $2^1/_2$ արշին տրամագիծ և 2—3 սաժէն երկարութիւն ունեցող մի գլան, որի բոլոր կողմերը փակ են, բացի միջին մասից։ Այդ մասը խողովակաձև բաց է, այնպէս որ գլանի մէջ, կարծես, մտել է մի նոր գլան։ Կաթսայի այդ մասն անւանում է վառելատեղ (топка)։ Վառելատեղի երկու ծայրն էլ ազատ բաց է։ Երբ նաւթը լցնում են կաթսայի մէջ, շրջապատում է վառելատեղը ամեն կողմից, միայն վերևից և կողքերից հաստ չերտով, տակից աւելի բարակ, որովհետև վառելատեղը կաթսայի ուղիղ կենտրոնում չի շինած։

Ամեն մի գործարան ունենում է մի քանի կաթսաներ (երբեմն էլ մի քանի տասնեակ)։ Բոլոր կաթսաները դրած են լինում աղիւսից շինւած պատանդանների վրայ բոլորովին հորիզոնական դիրքով և առնուազն մի քանիսն իրար մօտ։ Վառելատեղերի առաջին մասերի համար շինում են երկաթէ դռներ 2—3 ծակերով կամ ուղիղ ծածկում են աղիւսներով, թողնելով 3 ծակ միայն։ Փոքրիկ խողովակներով դալիս են նաւթը և չոգին, մտնում վառելատեղի բերանից ներս և այնպէս մտնում ծակերով իրար, որ, երբ չոգին սկսի փչել և նաւթը բարակ վազել, կը ստացւի նաւթային մանր անձրև, որ շուտով կարելի է բռնկեցնել ու վառել։ Մի շարք կաթսաների ետևի մասից բարձրանում է մի ահագին աղիւսէ խողովակ, որ բոլորի ծխնելուղն է կազմում. դրա հետ միացած են բոլոր կաթսաների վառելատեղերը։

Կաթսաներից ամեն մէկն ունենում է անցքեր. մէկը նաւթ ընդու-

նելու, միւսը նաւթային չոգիները դուրս ուղարկելու, երրորդը մազութը բաց թողնելու և այլն։

Նաւթային գոլորշիներ տանող խողովակը գնում և մտնում է սառնարան տակառների մէջ, որոնց ջուրը միշտ փոխւում է ծովի ջրի հետ մեքենաների միջոցով։ Սառնարանի մէջ այդ խողովակն ստանում է պատուտակի ձև (змѣиный) (ինչպէս արաղ քաշելու գործարաններում)։ Դուրս է գալիս սառնարանից և գնում, ճանապարհին միանալով միւս սառնարանների խողովակների հետ, բացւում մի տնակի մէջ, որ կոչւում է ընդունարան (пріемное отдѣленіе)։ Ընդունարանում դրած է լինում մի մեծ արկղ 3 բաժանմունքով. մէկի մէջ ընդունում են անմաքուր կերոսինը կամ դիստիլատը, միւսի մէջ նաւթային ծանր մասերը, իսկ երրորդի մէջ թեթև մասերը կամ գազոլինը։

Հում նաւթը բաղկացած է մի քանի տեսակ ածխաջրածնային հեղուկ լուղերից, որոնցից մի քանիսը շատ են գոլորշիանում, միւսներն—ուշ։ Դրա համար էլ կաթսայի տաքութիւնը պէտք է լինի 80°—300° C.-ի չերմաչափով։ Շոգիները գնում են շոգեսար խողովակով, անցնում սառնարանի միջով, թանձրանում և նորից հեղուկ դառնում։ Հասկանալի է, որ շոգիների տաքութիւնն անցնում է երկաթէ պատերի միջով ջրին։ Այդ նոր ստացած հեղուկը կոչւում է անմաքուր դիստիլատ։ Ընդունարանում սկզբներում եկած թեթև մասերն ընդունւում են իրանց յատկացուած բաժնում։ Թեթև մասերի յատկութիւնն է շատ բռնկել, որի համար և արգելւած է այդ մասերը թափել, կամ առանձին ծախել. Պէտք է խառնել աւելի ծանր, ուշ բռնկող լուղերի հետ, մեղմացնել և յետոյ ծախել։ Եթէ կաթսայի մէջ տաքութիւնը յանկարծ աւելանայ իւր չափից, իսկոյն կը վազէ ծանր հեղուկ, որ կարելի է դուրից ու հոտից ճանաչել։ Կաթսայի միջի հում նաւթը գոլորշիանալուց յետոյ, բաց են թողնում տակը մնացած մազութը, որ նաւթի ամենաղժւար չոգիացող մասն է կազմում։ Մազութը մի առանձին խողովակով գնում, թափւում է գործարանի խուլ մասում շինած մի փոսի մէջ, որ կոչւում է մազութի ամբար։ Մազութի ամբարի չորս կողմը պատ են քաշում առհասարակ, որ փորձանքներ չը պատահեն։ Նոր, կաթսայից դուրս եկող մազութն ունենում է 300°-ից աւելի տաքութիւն։ Այդ տաքութիւնը տնտեսելու, նրանից օգտւելու համար, առաջ խողովակը տանում են նաւթի պահեստատեղի մէջ մտցնում, օձաձև պտոյտներ կազմում և միւս կողմից դուրս հանում, տանում մազութի ամբարը։ Դրա նպատակն է մազութի տաքութեան մի մասը հաղորդել հում նաւթին, որ բոլորովին սառը չը լինի։ Եթէ բոլորովին սառն եղաւ, չի կարելի լցնել տաք կաթսայի մէջ, որովհետև կարող է ճաքել։ Պէտք է սպասել, որ կաթսան սառի, յետոյ լցնել։

Անմաքուր դիստիլատն ընդունարանից ուղարկում են փոքրիկ ընդերուարների մէջ, այդտեղերից էլ բարձր տեղում դրուածի մէջ և այնտեղ

սկսում քիմիական գործողությունը։ Այդ գործողության նպատակն է դիստիլատի մէջ մնացած օրգանական մասնիկներն այրել, ածուխ դարձնել և տակը նստեցնել, իսկ մաքրված դիստիլատը ուղարկել ծախելու կամ արտահանել։ Մաքրելու միջոցներն են ծծմբաթթուն և պտալը (կալաքարը)։ Դրանցից վերցնում են որոշ քանակություն, խառնում անմաքուր դիստիլատի հետ, մաքրում և ստացածը խողովանկներով անցնում կերոսինի դլխաւոր պահեստատեղը։ Մաքրված դիստիլատն է մեր սովորական կերոսինը կամ վառելանութը։ Նաւթի միւս թեթև և ծանր մասերից էլ պատրաստում են ուրիշ տեսակ իւղեր, ինչպէս բենզին, մեքենաների իւղ և այլն։

Թեթև նաւթն այրելու համար հարկաւոր է օդի թոյլ հոսանք, օրինակ, որքան առաջանում է լամպի այրելու ժամանակ, իսկ ծանր մասերն այրելու համար հարկաւոր է աւելի զօրեղ հոսանք։

(Կը շարունակուի)

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԱԹԷՆՔ

ԿԱՄ

ԱՒԵՐԱԿՆԵՐԻՑ ՈԳԻ ԱՌԱԾ ՄԻ ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ)

Թող հիմա մեզ հետ քաղաք մտնի հարցասէր ընթերցողը։ Ահա Բէ-դէկեր դերմանացու ընտիր ուղեցոյցը, որի ժողովածուներով մենք կարող ենք ամբողջ աշխարհ շրջել՝ առանց մինի պէտքն զգալու։ Մենք ինչանում ենք մի հիւրանոց, բաւականին մաքուր սենեակներով ու աննշան վարձով։ Մենք տեղեկանում ենք ի միջի այլոց, որ այսպիսիներ շատ կան և Աթէնքի պանդոկապետների մասին պատմուած առասպելներն այսպիսով անհետանալ են սկսում իմ լիշողութեան մէջ։ Այժմ դուրս գանք և այցելութեան երթանք մի բժշկի, որին մի լանձնարարական ենք բերել։ Մի քանի լունարէն նախադասութիւններ Բէդէկերից պատրաստած՝ քաղում ենք գանգը, սպասուհին գալիս է և մենք հաղիւ հաղ միմեանց հասկանում ենք։ Լնձ ներս են հրաւիրում, ի հարկէ, իբրև մի օտարական հիւանդի։ Իմ անծանօթ բժիշկը ժպտերես լնձ ընդունում է, իսկ ես մի վայրկեան ոսի վրայ մնացած՝ նրա հարցական նայուածքին պատասխանում եմ դերմանական քաղաքավարութեամբ և այդ լեզուով այսպէս. «տարաբաղդաբար ես հիւանդ չեմ, այլ ճանապարհորդ» և ներկայացնում եմ լարձնարարականս։ Մինչդեռ նա կարդում էր, ես մտածում էի, թէ արդեօք դերմ. լեզուն աղդեց լնձ այդ դարձուածը, թէ մի պատահական բան էր այն։ Պ.

---

[1]) Տես «Մուրճ» № 9.

բժիշկը իւր զմիւռնիացի հայրենակցի և ընկերակցի նամակը կարդալով՝ աւելի սիրալիր ընդունելութիւն արեց ինձ, իւր լիակատար պատրաստականութիւնն ինձ յայտնելով և միայն պաշտօնապէս զբաղւած ժամերի համար ներողութիւն խնդրելով։ Այս անդամ չը կամենալով խանդարել՝ ես գեղեցիկ ապաւորութիւնով ցտեսութիւն ասելով հեռանում եմ այս համակրելի երիտասարդից։ Փողոց ելնելով՝ Բէգէկէրի նախագիծը բացած՝ ես որոնում եմ հիմա մի ճարտարապետի նախարարութեան պաշտօնատեղում, սակայն երբ այս վերջինի ուր լինելու մասին հարցնում եմ մի ուսուցչապետի, նա պատասխանելով որ այսօր Աւագ հինգշաբթի լինելով մարդ չի լինիլ այնտեղ՝ հեռաքրքրւում է իմ դրութիւնով և հարցնելով թէ արդեօք գերմաներէն խօսում եմ, իսկոյն մոերմանում է ինձ հետ։ Այդ բարի ծեր գիտնականը, որ շատ շատ շնչասպառ էր լինում, իմանալով որ ես գլխաւորապէս իմ ուսանող կեանքի ընկերներից մէկն եմ նախ դանել ցանկանում, մոռացաւ իւր ցաւը և առաջ ընկաւ։ Նա բարձրացաւ, ես բարձրացայ, քանիցս ներողութիւն խնդրելով, բայց բարի մարդը մինչև անդամ վայր ի վերոյ տեղեկութիւններ ունենալով իմ ընկերի և նրա բնակարանի մասին՝ երկար հարցուփորձերով զբաւ։ Այս մարդուն իմ ալցետումը ներկայացնելով և սրտագին շնորհակալութիւններ յայտնելով՝ մօտեցայ իմ բարեկամի դրանը։ Մեր ուրախութիւնը մեծ էր, երբ առիթ էր ներկայանում մեզ ուսանողական այն գաղտարական կեանքից եօթը տարիներ չետոյ իրական հողի վերայ միմեանց անոպասելի կերպով տեսնելու և անցեալը ներկայի հետ բաղդատելու։ Եւ ահա այս մտածմունքների և զգացմունքների բնական ընթացքը մեզ անմիջապէս մանկավարժական հողի վերայ է դնում. իսկապէս այլ կերպ էլ չէր կարելի. մենք միմեանց մանկավարժ էինք տեսել ու այդպէս էլ տեսնում էինք։ Ես նախ բաւականանալով մի երկու ակնարկներով իմ գործունէութեան ասպարիզի մասին խօսակցութեան թելն իմ ընկերների ձեռքը տւի։ Նրա պատմածից ցաւոք սրտի տեղեկացայ, որ շնորհով վերջին քաղաքական փոփոխութիւնների՝ ինքն էլ զրկւել էր պետական պաշտօնից և հիմա գործում էր մի համեստ մասնաւոր դպրոցում։ Եւ նա տխուր խօսքերով ասելացրեց, որ առաջ այսպէս չէր, գոնէ ուսումնարանները զերծ էին մնում այս անվերջ փոփոխութիւններից։ Այսպիսով իրականացած տեսայ նաև իմ ընկերի վերայ, որ նոյն իսկ պետական ծախսերով էր ուսում առել, այն տխուր իրողութիւնը, որ ես նկարագրել էի զէպի կղզիներն արածս ուղևորութեանս մէջ։ Թէ Սամոսում և թէ Ցոնասատանում մի օրւայ մէջ կարող է կրթական գործին նւիրւած մարդը մինիստրից սկսած մինչև ամենախղճուկ ուսուցիչը պաշտօնից զրկւել և հազարաւոր ընտանիքներ թշւառութեան մատնելով՝ անհրաժեշտելի դառնութիւն ու դժտութիւններ առաջացնել։ Նոյնն է նաև օտարազգաստակ լոյների մէջ, ուր կոտակցական կրքերը հոգաբարձունների և առաջնորդների ձեռքով թէ քանդում են գործը և թէ

մինչև անգամ վատութիւններին տեղիք տալիս։ Այս տեսայ ու լսեցի ինչպէս կղզիներում, նոյնպէս էլ փոքր Ասիայում։ Այնպէս չէ, սիրելի ընթերցող, այս շատ ընտանի է թւում քեզ, կարծես մեր հայկական գործերն եմ նկարագրում։ Եւ երբ մենք դառնանք այս երկու ժողովուրդների անցեալին, երբ նրանք մանրիկ տէրութիւնների բաժանուած մինչև այն աստիճան էին հասցնում իրանց նախանձի կիրքը, որ թշնամիների հետ միանալով միմեանց կործանման պատճառ էին լինում որքան նմանութիւն ենք տեսնում։ Բայց սակայն երկուսն, չնորհով իրանց արտաքոյ կարգի ձիրքերի՝ միշտ նորից ու նորից ամփոփւում ու կազդուրւում էին։

Այս տխուր ներածութիւնից լետոյ նա աւետեց, որ այնուամենայնիւ իւր հայրենիքում արդէն շատ գործ է առաջացել, որ ես առիթ պիտի ունենամ տեսնել բոլորովին եւրոպական և աւելի գերմանական կազմակերպութիւններով և այնպիսի յարմարութիւններով բազմաթիւ դպրոցներ, որոնք Գերմանիայում էլ շատ չենք տեսնում։ Ապա անցնելով դպրոցները ղեկավարող բուն մանկավարժական խնդիրներին՝ մենք բաւականին տաք վիճաբանութեան մէջ ընկանք։ Բանն այն է, որ թէև երկուսս էլ Հերբարտեան ուղղութեան էինք պատկանում և աշակերտել էինք սկզբում նրա անմիջական երեւելի աշակերտ Շտոյին, սակայն վերջին երեք տարիներում ես մտել էի Ցիլլերեան կուսակցութեան մէջ, իսկ իմ ընկերը՝ ոչ, և այս պատճառով նա զուտ շտոյականների տեսակէտներից քննադատում էր Հերբարտ-Ցիլլերեան մանկավարժութեան ինչ-ինչ կէտերը և Ռայնու ընկերութեան գործերից մասամբ անլաչող օրինակներ բերելով՝ ձգտում էր ջրել գլխաւոր սկզբունքները կամ նսեմացնել։ Նա միեւնոյն ժամանակ հպարտութիւնով և աւանձին շեշտով ինձ լիշեցնում էր, որ արդի մանկավարժական սկզբունքների արմատներն արդէն իւր նախահայրերից են ծագում։ Ես այս մասին խոստովանելով՝ մնացի նոյնքան ջերմ Հերբարտ-Ցիլլերեան՝ որքան իմ բարեկամը Հերբարտ-Շտոյեան։ Այս ասելով ես երբէք չեմ կարող մոռանալ իմ սիրելի ուսուցչին, այն ծերունազարդ ազնիւ Շտոյին, որ մարմնացեալ մանկավարժական զգացմունք ու խորհուրդ էր։ Եւ ինչպէս կարող էի նրան մոռանալ, երբ այս բոպէիս էլ ինչպէս միշտ, նրա պատկերը սեղանիս վրայ, նրա հոգին հոգուս հետ՝ թէ նայում է իմ գրչին և թէ չարժում նրան։ Երբ ես կամենում եմ Պեստալոցցին աւելի կենդանի ներկայացնել ինձ, ես միշտ մտաբերում եմ իմ այն սիրելի ուսուցչապետին, որ վերջին չունչն էլ, բառիս բուն նշանակութիւնով, փչեց մանուկների համար։ Պէտք էր նրան տեսնել հուր ու բոց դառած՝ ամբիոնի վրայ, պէտք էր նրան տեսնել մալիսեան շրջագայութեանը պայուսակը կախած, դաւազանը ձեռին և արքայական վեհութեամբ երդեցիկ և փողահար մանուկների առջեւից քայլելիս, երբ նա իւրաքանչիւր քայլափոխի երկու երեք ցաւագին չունչ էր քաշում, պէտք էր վերջապէս նրան տեսնել մեծ ճանապարհորդութիւններին աշակերտների հետ պանիր հաց կամ

մի կտոր երշիկով օրեր անցնելով, գիշերները մի բուռն խոտի վերայ պառկելով և այն ժամանակ հասկանալ, թէ ինչ է մանկավարժութեան ոգին։ Ուստի, երբ խօսք բացուեց մեր մէջ այս աղնիւ սրտի մասին, մենք երախտագիտական սրտով վիշեցինք այն գեղեցիկ օրերը և այն խաղաղարար ոգին, որ իւր հոգեբանական խոր տեսութիւններով այնպէս հմտութիւնով համոզում էր մեզ ու հանդարտացնում մանկավարժական զգացմունքներով լուզուած մեր երիտասարդական սրտերը մանկավժական վիճաբանութիւնների ժամանակ՝ criticum (քննադատութիւն) անուանեալ ժողովներում։ Եւ ահա այս ժամուս էլ նրա վիշատակը մեզ հաշտեցրեց, և մենք գիմեցինք դէպի վեհապանծ հնութիւնները։

Մենք Լիկաբէտ լերան ստորոտից, որ քաղաքի հիւսիս-արևելեան կողմն է գտնուում, ուղիղ և գեղեցիկ փողոցներով իջնում էինք դէպի «Սահմանադրութեան հրապարակն», երբ մեզ պատահեցին թագաւորն իւր դստեր և հսկայ ժառանգի հետ, որ վերջերս անուն հանեց ռուս կայսերական թագաժառանգին մահուան վտանգից ազատելով։ Սրանք բոլորովին առանձին վերաբերում էին ասպատանից և պարզ մարդերի տպաւորութիւն գործեցին իմ վրայ։ Այլ առիթներով մի երկու անգամ ես տեսայ թագաւորական տան անդամներին, նաև համակրելի թագուհուն, որ հանգուցեալ իշխ. Կոնստանտին Նիկոլայևիչի դուստրն է։ Երբ ես Պիրէայում կանգնող ռուսական մարտանաւերի զինուորների հետ մի անգամ խօսակցութիւն ունեցայ, նրանք հրճանքով պատմում էին, թէ ինչպէս թագուհին շատ-շատ իրանց այցելութեան էր գալիս և իւր պարզ վարմունքով իրանց սիրտում օտարութեան մէջ։ Թագաւորական ապարանը, որ նոյն հրապարակի վրայ է գտնուում, արդէն հնացած մի հասարակ շինութիւն է, միայն եռեի կողմն ունի մի շատ ընդարձակ ու հովասուն պարտէզ հարուստ ու բազմապիսի բուսականութիւնով։ Այս ապարանի առաջ միշտ նստած են լինում, մի պահակի կանգնած զինուորից զատ, 10—15 ուրիշներ, որոնք անմիջապէս կարգի են գալիս, երբ թագաւորական տան անդամներից մէկը գալիս կամ գնում է և փողերն հնչեցնելով՝ ժողովրդի ուշադրութիւնը այն կողմն են հրաւիրում։ Ես այս զինուորներին գիտելով տեսայ, որ սրանք նոյն իսկ թագաւորական ապարանի առաջ իրանց շատ ազատ էին պահում և իրանց մեծաւորի հետ խօսելիս կարող են «քէֆով» ձեռքերն էլ եռեները ծալած կանգնել... ընդհանրապէս չը գիտեմ արհամարհական, թէ մտերմական պէտք է անուանել այս յարաբերութիւնները նախնի դեմոկրատ աթէնացիների ներկայ սահմանադրական թագների կեանքում։

Մենք դուրս եկանք այս վերին ատիճանի ընդարձակ ծառաղարդ հրապարակից, որ ժողովրդի երեկոյեան զլխաւոր զբօսավայրն է և շատ կողմերից գիշերները ելեկտրական պայծառ լուսովն է շողշողում իւր մարմարոնեայ ապարաններով։ Այս հրապարակի համարեա արևմտեան կողմը գտնուում է Ակրոպոլիսը՝ հին Աթէնքի փառք ու պարծանքը։ Այս միջնա-

քերդի տորոտը հիմա շրջապատած է գեղեցիկ ծառուղիով, որ սակայն ջրի սակաւութեան պատճառով շատ սուղ է նստում։ Այստեղ՝ միջնաբերդի հարաւային տորոտում մեր առաջ նախ բացւում է Դիոնեսեան կամ Բաքոսի թէատրոնի չքեղ տեսարանը, որ համակենտրոնական մարմարիոնեայ աստիճաններով բարձրանում է դէպի Ակրոպոլիսը։ Այս չքեղ աստիճանների թէ լենարանները և թէ նստարանները բաւականին լաւ պահպանւած են և վերջինների վրայ առաջին կարգում կարդացւում են նշանաւոր պետական անձնաւորութիւնների, քրմապետների անունները, որոնց յատկացրած էին նրանք։ Այս թէատրոնը կարող էր մինչև 30,000 հանդիսական ընդունել։ Վարը կենտրոնում գտնւում է հելլենական թէատրոնի երկրորդ մասը՝ բեմը, որ իւր նեղ ու երկար ուղղանկիւն քառանկիւնի ձեւով տարբեր էր ներկայ կազմակերպութիւնից։ Այս երկու մասերից զատ բեմի մօտ գտնւում էր նաև երաժշտարանը (օրքէստրա)։ Սրա մէջ տեղում գտնւում էր Թիմելէ կամ Դիոնիսոսի տաճարը, որի նւագահանդէսներից ծագում առաջ թատերական խաղերը։ Այս թէատրոնը ներփակւած էր գինու աստծու, Բաքոսի տաճարի շրջապատի մէջ։ Նրա պաշտամունքը Բէօտիայից ներածւելով անմիջապէս միացաւ մնջկատակութեան ներկայացումների հետ։

Այս թէատրոնից քիչ հեռու՝ նոյն Ակրոպոլիսի տորոտում՝ երևում են հեռուից Հէրովդէս Ատտիկեանի Օդէոնի բարձր կամարները հռոմէական ճաշակով, որոնք ճշգիւ լայնին չէ ինչ նպատակով բարձրանում էին այս թատրոնի առաջ։ Այս նշանաւոր հնութիւնը իւր զոյութիւնով պարտէ Հէրովդէս Ատտիկուսին, հռոմէական մի երևելի ընտանիքի անդամին, որ իւր հօրից անհամար հարստութիւններ ժառանգելով՝ ի յիշատակ իւր կնոջ որ նոյնպէս մի հռովմ. ազնւական ու անուանի ընտանիքից էր՝ նրանց չինեց։ Թէ մէկը և թէ միւսն այս թէատրոններից իրանց չքեղութեան հետ ունէին նաև մի մեծ ճարտարապետական առաւելութիւն, որ բեմի վրայ արտասանւած մի անուշան չշուկ անմիջապէս լսւում է որոշակի հաղարաւոր ունկնդիրներին բոլոր կէտերում։

Օդէոնի մօտից մի նրբուղիով բարձրանում ենք Ակրոպոլիսի բլրի ծառազարդ լանջը և մեր առաջ հետզհետէ պարզւում են Ատտիկեան չքնաղ ծովը, նրա գեղեցիկ լեռնաշղթաներն ու պատմական կղզիները, իսկ մեր ոտի տակ՝ նոր Աթէնքն իւր ամբողջ ճոխութիւնով։ Մի քանի քայլ ևս և ահա մենք կանգնած ենք ծովից համարեա 200 ոտք բարձր՝ հսկայական և միևնոյն ժամանակ հոյակապ Պրոպիլէի (Դուռի) առջև։ Նրա մուտքի աջ կողմում ժայռի վրայ Նիկէ Ապտերոսի փոքրիկ ու սիրուն տաճարը, որի աչքերը կարծես ուղղակի դէպի Սալամին են դարձուած։ Մենք յամր քայլերով բարձրանում ենք աստիճաններից և մեր երևակայութեան մէջ սկսում են կեանք առնել ու մեր աչքերի առջև մարմնանալ այն հրաշալի աստուածները, որոնք իրանց սիրելի մահկանա-

ցումներին ներշնչել էին այդ աստուածային իդէաներն ու որոնց կերպարանաւորութեան այս հիւսաքաղ հմտութիւնը։ Իմ ընկերը այս օր էլ ողորմելով իւր մեծ նախնիքների փիշատակներով սիրադորով սրտով մօտենում է այս փիշատակներին ու ինձ բացատրում։ Տեսնում էք, ասում է նա, դեռ Պանթէոնը (համաստուածեան տաճարը) ամենևին չի երևում, մեր նախնի ճարտարապետները դիտմամբ նրան այն դիրքն են տուել, որ այցելուի ուշքն ու միտքը նախ այս հրաշալիքների վրայ կենտրոնանայ և նա հետզհետէ վայելելով այս հիանալի տեսարանները՝ չարունակ լարուած դրութեան մէջ մնայ նա։ Ահա ձեզ և այստեղ մի կտոր մանկավարժութիւն... Աւելորդ է ասել որ թէ որմերը, թէ սանդուղները և թէ Դօրեան ոճի գեղեցիկ ու ահագին սիւները, այսինքն՝ ամբողջ շէնքը ձիւնափայլ մարմարինից էր որ հիմա կարմրել է։ Այստեղ մի բան աւելի է մարդուս ապշեցնում. բաւականին բարձր սիւների իրակները միացրած են քառակուսի հատատարմին մարմարիոններով, որոնց երկայնութիւնը 7—8 ոտնաչափ և հաստութիւնը համարեա մէկ ու կէս, այնպիսի ծանրութիւն ունեն, որ դեռ չեն կարող հասկանալ, թէ ինչ մեքենաներով կարող էին այն ճարտարապետները այդ ահագին ծանրութիւնները բարձրացրած լինել։

Երբ մենք այս ընդարձակ գաւթից դուրս ենք գալիս, այն ժամանակ մեր առաջ լանկարծ բարձրանում է հսկայական սքանչելի Պանթէոնը, որի վրայ թափել էր հելլենական գեղարուեստը իւր բազմապիսի շնորհները։ Պանթէոնը հին գեղարուեստի ամենակատարեալ արտադրութիւնն է և բարձրակէտը Ակրոպոլիսի բոլոր շէնքերի մէջ, նա թէ արտաքին և թէ գաղափարական տեսակէտից այդ ամենի կենտրոնն է ներկայացնում։ Նրա հիմքը 250 ոտք երկար և 105 ու լայնութիւն ունի և դրած է Պէրեկլէսից առաջ, շինուած է Իկտինոս և Կալլեկրատէս ճարտարապետների ձեռքով և աւարտուած Պէրեկլէսի ժամանակ, որին վերաբերում է այս պատիւը։ Արտաքին զարդարանքները (օրնամէնտ) ընդհանրապէս Ֆիդիասին են վերագրում, որ ոչ միայն նախագծում և ընդհանուր հսկողութիւն էր անում, այլ և մի մասն իւր իսկական ձեռքով է քանդակել։ Նա Պէրեկլէսի մտերիմ բարեկամն էր և նրա աջ ձեռքը բոլոր հոլակապ շինութիւնների գործում։ Տաճարը շինուած է դիտմամբ մի կոր լատակի վրայ, որ աւելի գեղեցիկ ցոյց տայ չորսափակի 46 դօրեան բարձր սիւները։ Ամբողջ տաճարն ունի 62 մեծ և 36 փոքր սիւներ։ Մանաւանդ հիանալի է եղել տաճարի եռանկիւնաձև ճակատն իւր զարմանահրաշ արձաններով, որոնց միայն ողորմելի հետքերն են մնացել՝ շնորհով անգլիական ազահութեան և սրբապղծութեան, ինչպէս վերևը պատմեց։

Սարահարթի հիւսիսային սահմանին մօտ գտնւում է Էրէխթէոն տաճարը, հին Էրէխթէոս տաճարի կողքին, որի մէջ պահւում էին Աթէնաս Պալլասի կամ քաղաքի Աթէնա պաշտպանի և այլ շատ աստուածների մասունքների տուփերը։ Նա ներկայացնում է այն սուրբ վայրն, ուր Աթէ-

նասն ու Պոսիդոնը վճռ բացին Աթէնքին տիրելու համար։ Այս տաճարի հետ կապված են Պոսիդոնի եռաժանիքով աղի աղբիւրի ըղխեցնելու և ձիթենու պաշտամունքների հին լիշատակները։ Նա 480 թ. Ք. առաջ ապրելէ իւր նախորդ ձիթենու հետ, որ 413—411 սկսել է նորա վերաշինութիւնը և ապա ընդհատելով 407 է աւարտուել։ Կան ենթադրութիւններ, որ այս տաճարը ծառայել է իբրև եկեղեցի և երբեմն՝ իբրև հարէմ մի տաճկական փաշայի։ Այս տաճարը միջակ մեծութիւն ունի և այժմ աչքի է ընկնում իւր վեց կանացի արձաններով, որոնք իբրև հիանալի սիւներ զարդարում են նախագաւիթը։

Ակրոպոլիսի հարաւային կողմում պարսպին կից 1878 թուականից հիմնուած է Միջնաբերդի բաւականին ընդարձակ թանգարանը, որի մէջ զետեղուած են միայն այս բլրի վրայ գտնուած հնութիւնները։ Ի հարկէ, Պանթէոնից և այլ տեղերից անդրիայցիների լափշտակած արձանների միայն գաճեայ ընդօրինակութիւններն են ցուցահանուած, սակայն հետզհետէ հարստացած է այս հիմնարկութիւնը շնորհով նորանոր գիւտերի, որոնք ցոյց են տալիս թէ անսպառ են որոնց աղբիւրները։ Այս առթիւ ասենք, որ վերջին 15—20 տարիների հետախուզութիւններն այնքան բաներ լոյս աշխարհ հանեցին, որ լուսական թանգարանն հետզհետէ պատկառելի կերպարանք են ընդունում՝ շնորհիւ գերմանական և ֆրանսական հնագիտական ինստիտուտներին և լուսական նոյնանուն ընկերութեան։ Նոյն իսկ մեր այնտեղ եղած օրերը Միջնաբերդի ստորոտում նոր ընակարաններ ու ջրուղիներ էին բացել։ Այս կաւեայ քառակուսի և գլանաձև խողովակների մասին կարծիքները տարբեր են, որովհետև մի մասն էլ կոլուզի է ենթադրում և ինչպէս երևում է՝ հռոմէական ժամանակներից, որովհետև այս աղբը ճանապարհներ ու զանազան ներքնուղիներ չինելում լայնքի է որ վարպետ էր։ Այս թանգարանի գաւթում աւելի աչքի են ընկնում մի մարմարոնեայ դահաւորակ, Աթէնասի արձանը, ձախ կողմը մի քառանկիւնի պատուանդան Աթէնասի, Զիւսի կամ Արամազդի, Հերմէսի և Հէպէստոսի հին բարձրաքանդակներով և մի կանացի արձան, որի ծնկան փարած է մի մանուկ։ Առաջին սրահում տախտակեայ մեծ դարակների վրայ շարած են մեծ-մեծ բարձրաքանդակներ, որոնց մէջ Հերկուլէսինը և մի վայելչակազմ կնոջը աւելի ուշադրութեան արժանի են։ Երկրորդ սրահում Նիկէյի տաճարի վանդակապատի մնացորդներ, Երէխթէոնի ծոփորներ (Քրիզեան մասեր), երրորդում քանդակներ Պարթէնոնից աւելի նշանաւոր Սիլէնինը և Հեփեստոսինը, գետի աստուած Իլիսոսինը և Պոսէդոնի արձանի մնացորդը և բազմաթիւ մանր արձանների խմբեր։ Ապա վեցերորդ սրահում աւելի աչքի է ընկնում Հերմէսի արձանը, որ հորթ է տանում կամ Թերևս Թէզէոսինն է այս՝ վայրի ցուլը վզին։

Եօթերորդում ապակեայ պահարանները պարունակում են անագապղնձեայ բեկորներ, նկարուած անօթներ և մի մարմարոնեայ տախտակ

նուրբ բարձրաքանդակներով։ Սրանցից զատ այս սրահում կան բազմաթիւ կաւեայ և մարմարոնեայ արձանիկներ։ Եւ ութերորդում և ինններորդում վերոյիշեալները մասամբ կրկնւում են և մասամբ այլ հնութիւններ են շարած, իսկ տասներորդում ուշադրաւ է Հերկուլէսի մարտը Հիդրայի հետ։

Մենք դուրս գալով Թանգարանից՝ բարձրանում ենք դեռ բաւականին լաւ պահպանւած պարսպի բարձրակէտը՝ Ակրոպոլիսի և քաղաքի վրայ մի ընդհանուր հայեացք ձգելու համար։ Եւ ահա այստեղ մեզ ներկայանում են հնութեան ոգիներն այլ և այլ կերպարանքներով՝ նոր ու լայնածաւալ Աթէնքին իշխելիս ու ոգեորելիս։ Այս մայրաքաղաքը սփռւած լայն հովիտների ու դաշտավայրերի մէջ, բլրների շուրջը պատկառելի է, կարծես հեռուն շատ հեռուն դեռ այդքան էլ կայ։ Նա մինչդեռ 1876 թ. միայն 30 հազար բնակիչ ունէր, հիմա աւելի քան քառապատկւել է, որ ցոյց է տալիս որ լաւ ապագայ ունի։

Միջնաբերդից իջնելով՝ մենք քայլերս ուղղում ենք դէպի հարաւ արեւելք, նախ տեսնում ենք վերոյիշեալ «Դիոգենեան Լապտերը» պատանդանով 34½ ոտք բարձր, որ մի գլանաձև քանդակաւոր չէնք է։ Ապա մեր առաջ բարձրանում է Ադրիանոսի կամարը 59 ոտք բարձրութիւնով ու քանդակներով։ Ահա այս կամարի առջևի քաղաքամասն էր որ Ադրիանուպոլիս էր անւանւում։ Սրա տակից անցնելով մենք մօտենում ենք Ոլիմպեան Իւպիտերի հսկայական տաճարի աւերակներին, որ Արիստոտէլիս նկարագրելով անւանում է «բռնակալական մեծութեան գործ»։ Տաճարն ունէր 100 սիւներ Կորինթեան ոճի, որոնցից մի քանիսն են այժմ կանգուն և հիանալի են թէ իրանց քանդակներով և թէ 56½ ոտք բարձրութեամբ ու 5—5½ ոտք տրամագծով։ Սա իւր մեծութիւնով Յունաստանի տաճարների մէջ երկրորդ տեղնէ բռնում (353½ ոտք երկար և 134 ոտք լայն) և միայն Եփեսոսի Դիանայի տաճարից է գերազանցւում։

Նոյն ուղղութիւնով յառաջ դիմելով՝ մենք հասնում ենք Իլիսոս առւակին որ թէև նոյն իսկ ապրիլին ցամաքում է, ունի պատմական անցեալ։ Մենք անցնում ենք կամրջից և հասնում Ստադէոնը, ընթացարանը, ուր հելլենական քաջակորով երիտասարդութիւնը մրցում էր Պանաթէնեան խաղերի մէջ։ Այս խորհրդաւոր հանդիսավայրը շինւել է ճարտասան Լիկուրգոսի առաջնորդութիւնով Քրիստոսից մօտաւորապէս 330 տարի առաջ. նա մի պայտաձև հարթ տարածութիւն է բլուրների ծոցում կտրւած և ունի 670 ոտք երկայնութիւն և 109 ոտք լայնութիւն։ Բլրների լանջերում երեք կողմերից դեռ երևում են աստիճանների հետքեր, ուր նստում էին լարւած ուշադրութիւնով տասնեակ հազարաւոր աթէնացիները։ Պայտի ներսում՝ բլրի տակ բացւած էր մի ներքնուղի, որտեղից անցնում ու ժողովրդի աչքերից անհետանում էր ամօթանար պարտւածը։

Այսպէս՝ այս առաջին օրն այսքան հարուստ տպաւորութիւններով մենք հիւրանոց ենք վերադառնում մի քիչ հանգստանալու և դիշերը նորից փողոց ելնելու, ուր մեզ սպասում են նոր կեանքի երևոյթները։ Այսօր Աւագ Հինդշաբթի է և ամբողջ քաղաքում առանձին շարժում է տիրում։ Աթէնական նոր կեանքը հնի հետ բաղդատելու համար ամենաբարեպաշտ օրերն են զատկականները, երբ մարդուս ամենագեղեցիկ առիթներ են ներկայանում՝ յոյների աւանդական «կրոնամոլութիւնը» բացատրելու։ Արդէն այսօրուանից իւրաքանչիւր քայլափոխում լսում ես, չնայելով ոստիկանութեան արգելման՝ ատրճանակների և պայթուցիկների ձայները, փողոցների մանրավաճառների մոմերը, ծաղիկներ, պատկերներ, գոչեղոյն ձուկ և այլն։ Դիշերն ոչ մի եկեղեցում ասեղ ձգելու տեղ կայ, մինչև առաւօտ ոտքի վրայ են։ Բայց աւելի շքեղ է վաղն՝ ուրբաթ դիշեր, երբ բազմաթիւ եկեղեցիներից երաժշտական ու երգեցիկ խմբեր հաղարաւոր ծխականներով մոմերը ձեռներին անցնում են գեղեցիկ փողոցներից, որոնք լուսաւորուած են մասամբ ելեկտրականութիւնով, և դէպի հրապարակն են դիմում։ Շաբաթ դիշեր հանդիսի սիրտը մայր եկեղեցու ընդարձակ հրապարակի վրայ է, ուր բարձրացած է մի ընդարձակ փայտեայ բեմ։ Հետևակ ու հեծելազօրը կազմ ու պատրաստ սպասում է թագաւորին ու նրա ընտանիքին, քաջահմուտ ձիաւորները ամբոխը ճեղքելով այս ու այն կողմն են արշաւում՝ կարգ պահպանելու։ Վերջապէս ժամը 12 հնչում է, նուագաւորներն սկսում են. թագաւորը գալիս է. իրարանցում։ Մինչ այս արտաքոյ կարգի ծիսակատարութիւնները, որոնք այնպէս ոգեորում էին այս ժողովրդին, զուտ քրիստոնէական էին. արդեօք նրանք կերպարանափոխութիւններ չէին այն կրօնական տօնախմբութիւնների (միստէրիաների), որոնց մէջ կրակը նշանաւոր տեղ էր բռնում։

Այն ուրբաթ օրը թանդարանները, համալսարանն ու ճեմարանը փակ էին, ուստի և ես դուրս ելնելով առաւօտեան՝ ուղեցի նոր քաղաքին ծանօթանալ, նրա շէնքերին ու բնակիչներին։ Ես առժամանակ զանց եմ առնում վերոյիշեալ հասարակական հիմնարկութիւնների արտաքինի մասին խօսելը։ Այստեղ ցանկանում եմ նկատել, որ այս մայրաքաղաքի լայն փողոցները, գեղեցիկ հրապարակները և հոյակապ տները կարող են իւրաքանչիւր եւրոպական քաղաքի պարծանքը լինել։ Աթէնքի առաւելութիւնը կազմում է ձիւնափայլ ակնախտետ մարմարիոնը, այն աղնիւ նիւթը, որ պատճառ եղաւ հելլենական սքանչելի քանդակագործութեան այն աստիճանի զարգացման։ Երբ ես այսօր մտնում էի գալիս Աթէնքի փողոցներում, երևոյթների նմանողութեամբ լիչողութեանս մէջ արթնացաւ Բուդա-պէշտի իւր նորաշէն հոյակապ ապարանքներով։ Այս երկու քաղաքների ունեւոր դասը ճիգ են թափել վերջին քսան տարիներս, հայրենասիրական խնդիր են չինել՝ իրանց սիրելի մայրաքաղաքները շլացնելու օտարներին։ Եւ լիրաւի բաւական չէ գեղեցիկ ու մեծ տներ ասել, այլ մա-

նաւանդ Աթէնքի բազմաթիւ փողոցները զարդարուած են մարմարեայ հոյակապ ապարանքներով։ Բայց դրամագլուխը մատնաւոր շինութիւնների վրայ ծախսելով, ուրեմն հին հելլենական բարեգործական ոգին, որի մասին վերը խօսեցինք, այլ ևս գոյութիւն չունի այս ժողովրդի մէջ։ Ես դէպի լուսնական կղզիներն արածս ճանապարհ. նկարագրութեանս մէջ մեծ հիացումով խօսել եմ արդէն այս մասին։ Յունաստանի կառավարութիւնը հետևեալ ասնպէս խրում է սարսափելի պարտքերի մէջ, որ եթէ այսպէս երթայ, նրան դեռ երկար տարիներ անհնարին պիտի լինի մեծածախս շինութիւնների ձեռնարկելը [1]։ Եւ տեսա այս ժողովրդի հին աւանդական բարեգործութիւնը լուսաւորած ժամանակակից գաղափարներով, մղած նորագոյն ձգտումներով օգնութիւն է հատնում պետութեանը։ Առաջին 2—3 օրերն, երբ ես այս կամ այն հիմնարկութիւնն էի տեսնում, հարցնում էի, թէ նրանք ինչ աղբիւրներից էին կառուցել և համարեա առանց բացառութեան բարեգործների անունները էի լսում, այնպէս որ ես հետևեալ օրերն այլ ևս պէտք չզգացի այսպիսի հարցեր առաջարկելու։ Այսպէս՝ ես պէտք է գալի այն եզրակացութեանը, որ աթէնացին ասելը բարեգործ ասել է, որ աթէնացու դրամը հասարակութեան դրամն է։

Կէսօրից յետոյ այցելեցի իմ բարեկամ բժշկին, որի մօտ ինձ սպասում էր նշանակուած ժամին նաև մի այլ համակրելի երիտասարդ, Աթէնքի ատաղձիտարանի տնօրէնը, մի ազնիւ և լուսաւոր հոգի։ Այս երկուսի առաջնորդութիւնով հիմայ ես քայլերս ուղղեցի դէպի լաւերժանարանների բլուրն, ուր այս նոր կեանքում փոխանակ այն չքնաղ էակների հրապուրիչ խրախճանքներին՝ սիրում է այսօր ատաղձիտարանն իւր լաւերժական ճչմարտութիւններով։

Դեռ տեղ չը հասած՝ «Հելլենասիրական ծառուղիից» անցնելով մեր առաջ բարձրանում է Թեզէոն կամ Թեզէոսի միջակ մեծութեան տաճարը,

---

[1]) Յունաստանի արդի դրութիւնով աւելի հետաքրքրուողին տանք նաև հետևեալ տեղեկութիւնները. այս փոքրիկ տէրութիւնը դիրք պահպանելու համար հարկադրուած է իւր ոյժից վեր ծախսեր անել և նոյն իսկ իւր սահմաններից դուրս ուսումնարաններ պահպանել։ Նա իւր գոյութեան վիճակի մէջ փոխ առաւ 23½ միլ. անգլիական ոսկի (ոսկին մօտ 10 ռուբլի), 1886-ին իջաւ այս պարտքը 15 միլիոնի, որի համար տոկոս և գլխատաս էր վճարում մէկ միլ. ոսկուց աւելի, այսինքն՝ պետական եկամտի մի երրորդ մասը։ 25 հազար քառակ. մղոն տարածութիւն և 2,187,000 բնակիչ ունեցող երկրի համար սա մեծ բան չէր համարուում, բայց ծախքերը հետզհետէ աւելացան, իսկ եկամուտները միայն անչան լաւերում ունեցան։ Արանից զատ՝ 123 միլ. թղթադրամը 1886-ին 200 միլիոն ոսկու փոխառութիւն չը կարողացաւ անել կառավարութիւնը։ Վերջերս հասաւ 600 միլիոնի։ Հիմա նոր մինիստրութեան վրայ է երկրի լուսը։

որ ոչ միայն Աթէնքի, այլ և ամբողջ Յունաստանի հնութիւններից ամենալաւ մնացածն է։ Այս տաճարն էլ իւր ամբողջութիւնով անսասան մնալով՝ առանձին խոր տպաւորութիւն է գործում մարդուս վերայ։ Երկայնութիւնը 104, իսկ լայնութիւնը $45^1/_2$ ոտք է և շրջապատած է երկու կողմերից 13-ական, իսկ առջևից ու ետևից 6-ական գորեան սիւներով։ Ամբողջ շէնքի երբեմն ոսկեայ մարմարիոնը ժամանակի ընթացքում ոսկեփայլ է դառել և աւելի ճոխ ու զմայլելի կերպարանք ընդունել։ Տաճարի մարմարոնեայ ձեղունն էլ բոլորովին դուցէ մնացել, և այս ծածկոյթի տակ պահպանուում են իրան վերաբերեալ զանազան արձաններ ու այլ քանդակներ։

Հաղիւ կէս ժամ հեռանալով Թեզէոնից մենք մօտենում ենք Յաւէրժահարսների կամ զարձութեան բլրի կռմանին, որ մեզ տանում է դէպի գագաթը, ուր ապառաժի վրայ կառուցած է զեղեցկաշէն աստղադիտարանը նոյնպէս մի լոյն հայրենասէրի, բարեն Սենա Վէննացի հարուստ վաճառականի ծախքով 1842 թ.։ Այս աստղադիտարանը թէև ոչ այնքան մեծ, սակայն ժամանակակից պահանջներին համեմատ լրմարութիւններով օժտած մի հիմնարկութիւն է։ Նրա վերի ամենակարևոր մասը՝ աշտարակը՝ ուր զետեղած է հեռադէտը, ոչ միայն ամեն կողմից բացւում է, այլ և ամենափոքրիկ ոյժ գործ դնելով շնորհով միմեանց հագցրած անիւների ոտիտ տակն այս ու այն կողմն է շրջում՝ իբրև մի թեթև առարկայ։ Այս օրերն աստղադիտարանը մի նոր աւելի մեծ հեռադէտ էր նէր ստացել նոյն սնապատ աղբիւրից։ Վայրը կան մի երկու սենեակներ, որոնց մէջ իմ ուշադրութիւնը գրաւեց աստղաբաշխութեան վերաբերեալ ճոխ մասենադարանն, գիտէ որ նէլիրաստուից հարուստ ընթերցարանն և մի երկնացոյց քարտէզ որի վրայ Իւլիուս Շմիդը գերմանական սոկոմնութիւնով քրտինք էր թափել 1840—1874 թ., այսինքն՝ մարդուս կէս կեանքը... Ես շնորհակալութիւն յայտնելով ազնիւ լոյն աստղաբաշխ երիտասարդին՝ իմ բարեկամի հետ վայր իջայ և հիմայ առանձին դէպի Պնիքսը, հելլենների ժողովատեղին չտապեցի՝ այսօր այլ ևս չը կամենալով իմ բժշկին արգելք լինել։

Աստղադիտարանից դէպի հարաւ արևելք՝ աւելի հեռուն երևում է Ակրոպոլիսը, իսկ այս երկուսի ճանապարհի աջ կողմը Պնիքսը, ձախ կողմը Արէօպագն է։ Պնիքս բլուրն Ակրոպոլիսից ցած, բայց աւելի ընդարձակ է։ Նրա ստորոտում մեծ ծերուկ լինալիդ պահապանը նստած Սոկրատէսի բանտի դրան՝ լաճախորդների է սպասում։ Ներթադրում են, իսկ մեր ծերուկն, ի հարկէ, հաւատում է, որ իսկ այստեղ էր ապատութիւնից զրկուել ամենաազատ ոգիներից մէկը, որ ով գիտէ ինչպիսի կծու հեղնութիւնով ծաղրում էր իւր ձեռապաշտ հակառակորդներին, մինչև իւր կեանքի վերջին վայրկեանն ամենաազատ մնալով նոյն իսկ բանտարկելութեան մէջ։ Համարեա 2400 տարի առաջ էր, որ այս մեծ և համեստ փիլիսոփան,

այս պարտաճանաչ համեստ քաղաքացին մի այսպիսի բանում կնքեց իւր աղնիւ կեանքը գաղափարական ազատութիւնը մարմնաւորից զերադասելով։ Ահա այս ժայռի մէջ փորուած ներքնատնում՝ խոր վիրապումն էր, որ նրան արգելեցին ժամանակակից խաւարամիտները։ Վերևից այս բանտն ունի մի ծակ, որտեղից լոյս է թափանցում, իսկ ներքևից՝ գետնի վրայ մի քառակուսի դռնակ։ Ամբողջը կոնաձև է։

Վերոյիշեալ բացօդեայ քաղաքական ժողովատեղին սարահարթի վրայ մի բաւականին ընդարձակ տեղ է բռնում—395 ոտք երկարութիւն և 212 ոտք լայնութիւն։ Բարձրագոյն սահմանի վրայ բարձրանում է ուղղահայեաց կտրուած ապառաժը, որին պէյազդեան ծաղումն են վերագրում։ Այս պատի վրայ եղել են նուիրական տախտակներ «բարձրագոյն Արամազդին» ընծայաբերուած, որոնք գտնւում են բրիտանական թանգարանում։ Այս ապառաժի վրայ ելնում էին հելլենական ճարտասանները և վարը՝ սարահարթի վրայ կանգնած ժողովրդին ատենաբանութիւններ էին անում։

Ակրոպոլիսի արևմտա-հիւսիսային ստորոտից բարձրանում են խառնի խուռն ապառաժներ, որոնց վրայ տեսնում ենք արհեստական 15 աստիճաններ ու սանդուղքներ. սա Արէոս Պագոսն է կամ Մարսի բլուրը։ Այս էին Արէոպագը, հելլենական բարձրագոյն դատական ատեանն, ուր դատի էին ենթարկւում մահւան ու կեանքի վերաբերեալ ծանր խնդիրները։ Նա գոյութիւն ունէր աթէնական պատկառելի քաղաքացիների ժամանակներից։ Այս բլուրը նաև Մարսի անունն է կրում, որովհետև սա է եղել առաջինը, որ Հալիրթոթիոսի սպանման պատճառով այստեղ դատի է ենթարկւել, նոյնպէս և Օրէստ այստեղ դատավճիռ լսեց իւր մօր Կլիտէմնէստրայի կեանքից զրկելու համար։

Արդ իշնենք այն չքնաղ հելլենական ժողովրդի մահկանացուների և անմահների ընակավայրերից, ուր նրանք իշխում, զատում, զարձանում, սիրում ու սիրւում, ոգեորում ու ոգեւորում էին... ուր այն ժողովրդի հարուստ երևակայութեան իւրաքանչիւր սիրելի իդէալը այնպէս բարձր, այնպէս վեհ ներկայացուցիչներ էր ունեցել։ Եւ մինչդեռ մենք մեր քայլերն ուղղում ենք դէպի այս հնութիւնների ժողովածուները (թանգարանները) և նորագոյն իդէալների ներկայացուցիչ հիմնարկութիւնները, մեր իշողութեան մէջ բնականաբար արթնանում են հայ նախնական կեանքի իդէալները. մեզ ներկայանում են մեր ժողովրդական կեանքի համաստաւածեան շրջանից չեռոյ եկող բազմաստուածեանը և այս կրօնի իդէալները իրանց ընորոշ գոյներով՝ մեծ մասը համաձայն հելլենականներին։ Ո՞ւր են մեր այն իդէալները, մեր նախնիքների այն սիրելի աստուածների հետքերը, մտածում ենք մենք վշտահար սրտով։ Ո՞ւր մեր հայր Արամազդը (Օրմուզդ, Յօյս, Բահաղ (?), Բէլ), որ իշխում էր Անիում, Մծբինում, որտեղից Աբգարի ձեռքով Եդեսիա տեղափոխւեց և որ Բագաւանում, ար-

ձաններին այն աւանում (Բագաւում), յաւերժական հրի հետ միութիւն կազմեց։ Ո՞ւր Միհր (Մեհրա=Հելիոսորս) արձանը երբեմն Դերջանում. ուր Վահագնինը, որ ապա Հերկիւլէսի հետ շփոթում էին հայերն և որ Աշիշատում էր եղել. ո՞ւր է Անահտի [1]) (Աֆրոդիտի) արձանը, որ Տիգրան Բ. Հերկուլէսի մօտ բազմեցրեց. ուր Աստղիկը Տարոնեան, որին Նաւասարդին վարդ ու աղաւնի էին նուիրաբերում, սրբութեան, քնքշութեան, գեղեցկութեան, անուշահոտութեան այս չքնաղ ներկայացուցիչներին. ուր Բարշամ հերոսինը վիշապերից, բիւրեղից և արծաթից, ո՞ւր են վերջապէս Ոլիմպեան Արամազդի և Ապողոնի տաճարներն ու արձանները։ Յիշենք այստեղ նաև այն բազմաթիւ աստուածների անունները որոնք կազմում էին հին հայերի հարուստ երևակայութեան հիանալի արգիւնքները [2]). Յաւալի է որ մի կողմից քրիստոնէական բուռն հոսանքը և միւս կողմից ընութիւնն այնքան անհետացրել են այն աստուածների հետքերը, որ մենք գոնէ մինչև հիմա տակաւին ոչինչ չենք գտել։ Պէտք է ենթադրել, որ այդ արձանների նիւթը մարմարիոն չը լինելով կարող էր աւելի շուտ քայքայուել, որովհետև մեր հայրենիքը համարեա թէ զուրկ էր այդ կարևոր հարստութիւնից, իսկ Յունաստանից բերած մարմարոնեայ արձանները հաղորդակցութեան անհնարին դժուարութիւնների պատճառով բազմաթիւ չէին կարող լինել։ Բայց և այնպէս՝ ինչու չի կարելի յուսալ, որ մի օր մեր երկիրն էլ շնորհով հետազօտութիւնների՝ լոյս աշխարհ հանէր այն թանկագին նշխարները քանի որ նոյն իսկ Յունաստանում դեռ այնքան հնութիւններ անպատութեան մէջ էին մնացել մինչև վերջին տարիներն ու օրերը։

Հիմա դառնալով նորագոյն հնութիւններին՝ մենք նախ և առաջ գնանք տեսնելու ցուցահանդէսի գեղեցիկ ու յարմարաւոր, կիսաշրջանաձև շէնքը, որ գտնւում է Ստադիոնի (ընթացարանի) հանդէպ՝ Իլիսոս առուի միւս կողմը։ Այս ընդարձակ հիմնարկութիւնը ծառայում է տեղական ար-

---

[1]) Նորագոյն հետազօտութիւնները մեր Անահիտը ենթադրում են համանիշ Արտէմիդին=Դիանա=Աստարտ (քաղդէական), դուստր Արամազդի կամ Իպպետէրի։ Անահտի ներկայացուցիչ Աստղիկն, ըստ Ասորեստանի սեպաձև արձանագրութիւնների, ներմուծած է Հայաստան Ժ. դարից, երբ նա նստեցաց Թագրաթ-փաղասար Գ. ձեռքով։ Ինչպէս յայտնի է, մեր նախնիքը Երիզայում չունել էին Աստղիկի ոսկեայ արձանը (Ոսկեայ մայր, Ոսկեածին կամ Ոսկեհատ) Սբէրի ոսկէ հանքերին մօտ։ Դուցէ եգիպտական Նուբիայից առած, ուր նա նոյն ոսկի անունն ունէր։ Հները նաև վէնուսն էին Անահիտ թարգմանում։ Նոյն գաղափարի ներկայացուցիչն էր հնդկական, բակտրիական և պարսկական Նանա՝ն։

[2]) Խնամակալ 7 աստուածներ, մանաւոր աստուածներ՝ գրող, ճիւաղ, յաւերժահարներ, պայք (արու), պարիկ, յուշկապարիկ, Նամբարու, Շահապետ, Նհանդ, բաջերի աստուածներ՝ Տիկ, Յարալէզ։

տաղրութիւնների պարբերական ցուցահանդէսներին, որոնց տեսնելու դէպքը մենք չունեցանք. սա մի հիմնարկութիւն է որ մի եւրոպական մեծ քաղաքի պարծանքներից մէկը կարող էր համարուել։ Առջեւը գտնւում է ծառաստան ու ծաղկոց, կարծեօք հիմնադիրների երկու գեղեցիկ արձաններով։

Մենք, այս հրապարակից մի քիչ դէպի արեւմուտք գնալով՝ նորից հանդիպում ենք «հէլէնասիրական» ճոխ ծառուղիին, որ պալատի և Սամանադրութեան հրապարակի միջավայրից անցնելով միանում է Ամէնքի չքեղագոյն փողոցներից մինի, համալսարանականի հետ։ Այս վերին աստիճանի ընդարձակ ու ծառազարդ փողոցը ծայրէ ի ծայր ապարանքներից է բաղկանում, որոնց մէջ հասարակական շէնքերն առանձին ուշադրութիւն են դրաւում։ Նախ մեր աչ կողմում մի հրապարակի վրայ բարձրանում է գիտութիւնների ճեմարանը, մի հաղւագիւտ հոյաշէն հիմնարկութիւն, որ ներսից ու դրսից իւր արձաններով ամբողջովին անբիծ ճիւնափայլ մարմարիոնից է։ Այս էլ Վիեննայի բարոն Սենայի ընտանիքի շառաւիղներից վերջինն է չինել շատ միլիոններ ծախսելով։ Ամէնական ճեմարանը Ֆրանսական Ինստիտուտի և Բերլինի Ակադէմիայի ձեւին է չինուած։ Դրան առջեւը՝ մուտքից մօտ 36—40 ոտք հեռու՝ բազմած են աջ ու ձախ կողմից Սոկրատէսի և Պլատոնի պատկառելի արձանները, որոնք վեհութիւն ու խմաստութիւն են արտայայտում։ Աւելի ներսում՝ շինութեան միջնամասի երկու կողմերը բարձրանում են Իոնեան բարձր հրաշակերտ սիւների վրայ Ապոլոնը քնարը ձեռին և Ամէնասը [1]) նիզակն ու վահանը, երկու վեհաշուք կերպարանքներ, որոնք բարձրանալով այս գիտութեան տաճարի վրայ հրէշտակների պէս հովանաւորում են նրան։ Ամբողջ շէնքը իոնական ոճով է, բազմաթիւ բարձրաքանդակներով ու ոսկեայ, կապոյտ ու կարմիր նկարներով զարդարուած։ Գոյնզգոյն մարմարոնեայ նրբանցքը մտնելով՝ մեր առաջ տեսնում ենք ժողովարանը, ուր դրած է մինչև անգամ կանաչ սեղանը, բայց աւաղ որ դեռ այն գիտնականները չկան։ Այս սեղանի շուրջը ձւաձև մարմարոնեայ գեղաքանդակ աստիճաններ, իսկ նրա գլխին հիմնադրի գեղեցիկ արձանը։ Չորս պատերի վրայ Պրոմէթէոսի կեանքի ութը հիանալի տեսարանները ձիթանկարներով ներկայացրած Վիեննայի նկարիչ Դրեպնկէրլի վրձինով։ Տարաբաղդաբար այս հոյակապ հիմնարկութիւնը, որ պէտք է ամէնական հողի վրայ միացնէր լոնական գիտնականներին օտարազգիների հետ և մի միջազգային բարձրագոյն կաճառ կազմէր, չէ հասած այդ ըղձալի օրեան, մի

---

[1]) Յիշեցնում է Ակրոպոլիսի անաւոր ու չքնաղ Ամէնաս Պալլասը, որ ծովից երեւում էր։ Նորը քանդակել է Ֆիդիասի արժանաւոր ժառանգ յոյն Դրոզոսը։

նպատակի որ դեռ շատ դժուար է իրագործել։ Ճեմարանիս աշակերտներն ընդարձակ սրահում այժմ դեռեղուած է դրամագիտական ժողովածուն, որի հարստութիւնը չունի և ոչ մի եւրոպականը։ Մինչև հիմա հաւաքուած է 100 հազար կտոր, որ մի մասը մէկ միլիոն ֆր. արժողութիւնով թանգարանին նուիրել է Եգիպտոսում բնակող մի ազգ հայրենասէր։ Ամենահին դրամը Քրիստոսից 700 տարի առաջ է շինուած և իսկ ձ ա ա ձ և է։ Հայկական դրամների բաժանմունքը դեռ աղքատ է, կան 22 հատ միջնադարեան, բոլոր բարակ։

ա. Մի դրախմնոց՝ «Լեոն Բ. Թագաւոր Հայոց»։

բ. Նոյնի կիսնոցը։

գ. «Հեթում Թագաւոր Հայոց» իսկ միւս երեսում՝ «շինեալ ի քաղաքն ի Սիս», մի երեսում թագաւորի պատկերը, միւսում խաչ՝ չորս մահիկներով։ Այս դրամը պուլ էր անուանւում և պղնձեայ էր։

դ. Սմբատ ձիաւոր մի երեսում, միւսում խաչ, դրամ անագապղնձեայ (բրոնզ)։

ե. Կոստանդին Բ.

զ. Լեոն Ե. մի երեսում ձիաւոր, միւսում առիւծ։

Մենք մի քանի տարի առաջ տեսել ենք հայկական հազարաւոր դրամների ամենահարուստ ժողովածուն Վիեննայի Մխիթարեան ուխտի թանգարանում, որ մեծ հարստութիւն է [1]։ Ճեմարանի շարքում գտնւում է նաև համալսարանը, որ մի փոդոցով է զատուած առաջինից։ Աթէնական այս գիտութիւնների տաճարը հիմնուեց 1837 թ. կոպէնհագէնցի Հանսենի ձեռքով և իւր սիւնազարդ նախասրահը զարդարուեց ձիթանկար պատկերներով։ Գրան աջ ու ձախ կողմերը կանգնած են Գրիգոր պատրիարքի և Բիգոս բանաստեղծի արձանները, իսկ աւելի առաջ երևելի լոյն լեզուագէտ Կերալիսինը, որի մասին ես խօսել եմ Գիտոյի առիթով։ Համալսարանի կազմակերպութիւնը գերմանական է, ունի՝ չորս ֆակուլտէտներ՝ աստուածաբանական, իրաւաբանական, բժշկական և լեզուաբանական, ուսանողներ՝ 1500, իսկ ուսուցչապետներ՝ 60 հոգի՝ բայի մասնաւոր դասախօսներից։ Համալսարանի լրացուցիչ մասերն են՝ գեղագործական դպրոց, քիմիական և անդամահատական լաբորատուարներ, աստղագիտարան, գրադարան 100 հազար գրքերով, ազգային պատմութեան թանգարան և բաղմաբնակեան սրահ։ Մատենադարանի համար հիմա համալսարանի կողքին մի մեծ մարմարոնեայ ապարան են շինում։

Այս բարձրագոյն հիմնարկութիւններից զատ ես ժամանակ ունեցայ նաև երկու ուսումնարաններ տեսնելու, նոյն փոդոցի վրայ։ Մինն իմ վերոյիշեալ ընկերի պաշտօնատեղին էր, տղայոց մի մասնաւոր ուսումնարան,

---

[1]) Տես այս մասին վերջին օրերիս հրատարակութիւնը նոյն ուխտից։

կոկիկ, ամեն ժամանակակից պահանջներին համապատասխան։ Երկրորդը Արսակէոնն էր 30 տարի անհատական բարեգործութիւնով հիմնուած, ունի 1500 աշակերտուհիներ, մի մասը դիշերօթիկ և զատուած, մի գերմանուհի տեսչուհու հսկողութիւն տակ։

Ես նախ երթևեկների բաժանմունքը մտայ։ Բարեբաղդաբար ասեմ թէ տարաբաղդաբար՝ այդ օրերն ամսագլուխ լինելով տեսուչը ծնողներին հրաւիրում էր և ծոյլ աշակերտուհիներին նրանց ներկայութիւնով յանդիմանում և որին էլ աղղարարում, որ եթէ այդպէս չարունակէ, պէտք է արտաքսի։ Ես պատահեցի մի հասակաւոր խեղճ աշակերտուհու ահաւոր դատաստանին. և թէև լուսարին շատ քիչ էի հասկանում, սակայն այդ տաղտկալի տեսարանն ինձ վրայ շատ ծանր ազդեց։ Մթթէ չէր կարող խեղճն անընդունակութիւնից ետ մնացած լինել և ինչպէս կարելի էր այդպէս նոյն իսկ օտարների ներկայութիւնով յանդիմանել։ Միւս բաժանմունքից ընդհակառակը շատ ուրախ տպաւորութիւնով հեռացայ։ Այստեղ իմ մասնաւոր ուշադրութիւնը դրաւեցին ուսուցչացուհիները, որոնք վարժուհիների ներկայութիւնով դաս էին ասանդում վարժոցի փոքրիկներին, դատատուի ընկերուհիներն իրանց միշատակարաններում նկատողութիւններ էին գրում ժողովին քննադատելու համար։ Կարծես Գերմանիայումն էի։

Մի օր էլ իմ բարեկամ բժիշկն ինձ առաջնորդեց դէպի Պարնասոս ակումբը, որ իւր բարձր ձգտումներով միրաւի արժանի է այդ կոչմանը։ Սա. մի շքեղ եռայարկ հաստատութիւն է, եկեղբարական լուսաւորութիւնով, ճաշակաւոր կահ կարասիքով, բայց դիտմամբ բոլոր տեղական արտադրութիւններից։ Պարնասոսի գլխաւոր գործունէութիւններից մէկն է աչքաւոր ու անտէր մանուկներին և պատանիներին, որոնք հիմա 560 են, երեկոյեան ժամերին ուսում տալը։ Նրանց վրայ ծախսում է 35 հազար ֆր.։ Այստեղ մի վերին աստիճանի հանակրական հաստատութիւն ևս կայ, այն է՝ այդ լանուոր, արհեստաւոր և այլ աշակերտների խնայողական դանձարանը, որ չորս տարուայ մէջ դանձել է 60 հազար ֆրանկ (աւելի ճիշտ դրախմ=ռուբլու քառորդին մօտաւորապէս)։ Վերն ակումբն ունի մի հարուստ մատենադարան և ընթերցարան, որոնք ծառայում են զանազան մասնագիտութիւնների վերաբերեալ մասնաժողովներին, որոնք այլ և այլ սէկցիոնների անունով գործում են այս պատկառելի լարկի տակ։

Համալսարանական ծառազարդ փողոցով մենք չարունակում ենք դէպի հիւսիս արևմուտք երթալ և հասնում ենք Պատեսսա նոյնպէս ընդարձակ ու երկար փողոցը, որի վրայ դտնուում են Աթէնքի երկու պատկառելի թանգարանները՝ մինը բազմաբնեստան Ինստիտուտի մէջ, միւսը սրան կից մի աւելի ընդարձակ քառակուսի շինութեան մէջ, որ ազգային կամ կենտրոնական թանգարան է անուանուում, նոյնպէս բարեգործութիւններով գլուխ բերած։

Պոլիտեխնիկ ինստիտուտ անուանած հիմնարկութեան մէջ, այդ բարձրագոյն մասնագիտական հաստատութիւնների սրահներից ու լաբոռներից զատ, գտնւում են վարի յարկում նորաղոյն աղգային պատմական եղելութիւնների վիշատակները՝ զանազան պատկերներ, զէնքեր, արձանագրութիւններ, նաւերի խելք և այլն, իսկ վերևում Միկէնեան հնութիւնների ժողովածու, հնախօսական ընկերութեան թանգարանը, թրծուն կաւեղէնների (տէրրակոտա) և անապատշնձեայ ժողովածուն և վերջապէս երևելի գերմանացի հնախօս Շլիմանի ոսկեայ անդին ժողովածուն։ Մեր այս նկարագիրը շատ երկարեց, ուստի և մենք չը կարողանալով այս շահաղրգիռ հիմնարկութիւնների վերաբերմամբ մանրամասնօրէն խօսելու, վեր առնենք այս բոլոր ժողովածուներից մին, օրինակ՝ թրծուն կաւեղէնները նրանց ծագման նախնական աստիճաններից, երբ մարդկութիւնը տակաւին զարգացման մանկական աստիճանի վերայ էր գտնւում և հետզհետէ հետեւելով այս արհեստ գեղարուեստի արտադրութիւնների յառաջադիմական ընթացքին՝ մենք այստեղ մի քանի րոպէում կը համոզւենք, թէ որքան ուղիղ է այն սկզբունքը, որ մի անհատի մտաւոր ու ֆիզիկական զարգացումը մի համառօտութիւն է մարդկութեան քաղաքակրթութեան պատմութեան։ Պարզենք աւելի. մենք օրինակ Աթէնքում այսօր թանգարանում տեսնում ենք կաւեայ մարդկային մարմինների նմանութիւններ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ մի-մի քառակուսի տափարակ կտուրներ իրանի փոխարէն, մի չրջան՝ գլխի և չորս կտորներ ձեռք ու ոտքերի տեղ, ճիշտ այնպիսի բաներ, ինչ որ նկարում է ամեն ժողովուրդների ժամանակակից մանուկը, երբ առաջին անդամ մատիտ է ընկնում նորա ձեռքը, ու չիմում, երբ՝ կաւ է ընկնում ձեռքը։ Եւ մինչդեռ մարդկութիւնը, ով գիտէ քանի հազարաւոր տարիներ այդ «գեղարուեստական» աստիճանի վրայ կանգնած էր մնացել, այստեղ մեր աչքի առաջ մի քանի տարում մի անհատ արագութիւնով անցնում է այն բոլոր աստիճանները և այնպիսի հրաշակերտ արձաններ է քանդակում, որոնք մարդկութեան այն պատկառելի ամբողջ կեանքի արտադրութիւնն էին եղել, այսինքն ինչ որ մարդկութիւնը շատ հազարաւոր տարիների չրջանում արեց, այդ նոյնը ժամանակակից անհատը կատարում է մի քանի տարում։ Ահա թէ ինչ է նշանակում աւանդութիւն և ուսում։ Այս առիթով լիշենք, որ մենք աշխատեցինք նաև մի քանի արհեստանոցներ քանդակագործների, ատաղձագործների և այլն լաճախել, որոնց արտադրութիւնները մեզ մեծ զարմանք պատճառեցին. մենք այստեղ ականատես եղանք, թէ ինչպէս մի նիրհող տաղանդաւոր ժողովուրդ նման մի անհատի լանկարծ սթափելով կարող է կարճ ժամանակում իւր բնատուր ճոխ և հարուստ ձիրքերով հրաշքներ գործել։ Այսօրեայ Աթէնքի ամենաչքնաղ արձաններն, ինչպէս այս կամ այն առիթով լիշեցի, լուսական ձեռքի արդիւնքներն են։

Այսօր չորեքշաբթի է, տակաւին 7—8 ժամ էլ ունենք մինչև չորեքշաբի մեկնելն, ուստի շտապենք դէպի Դիպլոնը, նախնի աթէնացիների մեծ հայրենասէրների դերեզմանատունը, ուր տեսնում ենք շատ մահարձաններ դեռ զարմանալի դեղեցկութիւնով այս բացօդեայ վայրում։ Ահա այս Դիպլոնը սկզբնատեղին էր այն «նուիրական ճանապարհի», որ դէպի Էլէուզիս էր տանում, դէպի միստերիաների այն տաճարը, որ Պարթենոնից էլ մեծ էր եղել։ Մենք այս ճանապարհը բռնելով գնում ենք դէպի հիւսիս՝ Պէլոպոնէսեան երկաթուղու կայարանն, ուր մենք սպասում էինք Մեգարայի «փանտէրի» առիթով մեծ բազմութիւն տեսնել։ Թէև այսօր իւրաքանչիւր ժամ կառախումբ է գնալ գալու, նոյն իսկ այս առաջին անգամին տեղ ճղելու տեղ չը կայ։ Այսօր տոմսակն երեք ժամեայ ճանապարհի համար դիտմամբ ամենաէժնին գին ունի, այսօր Յունաստանի անհատնում փանտէրներից (պանագերիա) մէկն է, իբրև միացորդ անցեալ կեանքի և նոյն օրը Ակրոպոլիսն էլ իւր Պանաթէնեան տօների լիշատակին զուտ փանտէր ունէր։ Մի քիչ լեռով զանգակը հնչում է և մենք սլանում ենք «նուիրական ճանապարհով»։ Մեր ձախ կողմից համարեա միշտ երևում է ծովը, իսկ աջ կողմից այգիներ, արտեր և բլուրներ։ Հոգն այստեղ այնքան մշակած ու արդաւանդ չի երևում, որքան Զմիւռնիայի և նրա շրջակայքինը։ Երկու ժամ լեռով մենք թէև էլէուզիս ենք հասնում, սակայն ես այս կողմից ուղղակի շարունակում եմ միւսների հետ դէպի Մեգարա, մի գիւղաքաղաք (գլխաւոր քաղաք Մեգարայի) 5300 բնակիչներով։ Տները գիւղական են, սակայն ի հարկէ ոչ գեղանախոր, այլ կանոնաւոր, սակայն մենք ժամանակ չունենալով շտապում ենք դէպի հանդիսավայրը գիւղից դուրս, ուր վրաններ են զարկած։ Մի քիչ պանիր հաց, մի հաւկիթ ուտելու ու մի բաժակ անպիտան գինի խմելու վճարում ենք աւելի սուղ՝ քան Աթէնքի լաւագոյն ճաշարանում և անհամբերութիւնով սպասում պարերին, որոնք ամբողջ Յունաստանում եղական ձև ու եղանակ ունին։ Հետզհետէ բաց ճանապարհի վրայ հաւաքւում են խումբ խումբ հարս ու աղջիկները, որոնց ճաշակաւոր զուգոն և արդ ու զարդը գրաւում են մեր ուշադրութիւնը։ Նրանք հագած են մի սպիտակ և մաքուր ներքնոց, սրա վրայից սև՝ վերևից ի վայր զուգահեռական նեղլիկ ծալքերով «էնթէրիի» պէս մի բան, քղանցքներն եռանկիւնի վերկարած, սպիտակ կրծկալ, կրծքի վրայ բուսած և զանազանագոյն լուսնքների շատ շարքեր, գեղին ու սպիտակ մանեակներ. ճակատից սկսած մինչև ծոծրակը արծաթեայ դրամների բազմաչար «վուսյներ», երկար սեաթոյր մազերը ոսկեթել վինջով վերջաւորուած, որից կախուած են մեսաքսեղէն գունագոյն ժապաւէնները, գլխի վրայից կամ տաճկական «մազմալի» նման շղարշ և կամ, եթէ հարսոտի է, Աթէնքի նուրբ ոսկենկար սպիտակ շղարշատեա։ Համարեա բոլորը բարձրահասակ ու բարեկազմ են, երեսներիս

գծագրութիւնը նուրբ ու կանոնաւոր, կան նաև գեղեցկուհիներ։ Ահա, երբ բաւական հաւաքեցին, մի ոտի վրայ չարուելով ձեռք ձեռքի տուին ու սկսեցին իրանց քնքոյշ ու մեղմիկ պարերգը։ Ես բաւականին երկիրներ պտտել եմ ու ժողովուրդների կեանքի նաև այս ուրախական երեւոյթներով հետաքրքրուել, սակայն և ոչ մի տեղ չեմ տեսել այս ակնապարար տեսարանը, որ նման էր կառնկների երամին, խորդապարին, որ գարնան բացվելիս հեռու երկնքում մեղմիկ-մեղմիկ ընթանում է մի քաղցր, մի ուրախաւէտ երգ նուագելով։ Այս հարս ու աղջիկների պարն էլ մի տեղ չէր մնում, այլ ճանապարհի ուղղութեամբ լառաջ խաղում և ապա պարավայրից բաւական հեռանալով՝ պարագլուխը նրա ծայրը կոբացնում ու վեր էր դարձնում։ Բայց ափսոս որ միայն մի քանի բոպէ ունկնդիր մենք մի ակնարկ ևս ենք ձգում այս գեղանի և սիրուն տեսարանի վրայ ու կայարանն շտապում։ Ճանապարհին լիշում ենք Աթէնքում՝ Արէօպագ լերան ստորոտի մի տան մէջ մեր տեսած գեղջկական պարը, որ շատ նման էր կարնեցկների «ետ ու առաջին» կլորի պարի մի տեսակին։

Էլեւզէս, որ հիմայ Լէվեղինա է անուանւում, մի հասարակ գիւղ է, սակայն երեւելի իւր հնութիւններով, որոնց մէջ վերեւում մեր քանիցս լիշուած տաճարն է գտնւում, ուր կատարւում էին միստերիանները, կրօնական տօնախմբութիւնները։ Այս աւերակների պատմական անցեալը շատ նման է աթէնականին, և ինչպէս Ակրոպոլիսն ունի իւր զուտ թանգարանը, լունական հնախօսական ընկերութիւնն այստեղ էլ հիմնել է մի ուրիշը, ուր շարունակ գործում է մի հմուտ հնախօս, որին մենք լանձնարարութիւնով ներկայացանք։ Աղնիւ լոյն գիտնականը սիրով ցոյց տուեց մեզ բոլոր աւերակները, որոնց մէջ հռովմէական չէնքերը և մանաւանդ հեռաւոր ջրուղների հետքերը նշանաւոր տեղ են բռնում։ Թանգարանում մենք տեսանք և լունական հռովմէական ժամանակների բազմաթիւ արձաններ, թրծուն կաւեայ արձանիկներ, անօթեղէններ և այլն, որոնք մասամբ կարգաւորած, ամբողջացած էին։

Կայարան վերադառնալով տեղեկացայ, որ լզուր եմ Մեգարայից չտապել, որ այս անգամ կառախումբը երկու ժամից լետոյ է գալու, ուստի շուրջս նայեցի մի քանի գեղջուկ մանուկներ տեսայ և նրանց գրաւելու համար՝ ցոյց տուինք իմ հեռադիտակը։ Թէև ես նրանց հետ շատ բան չէի կարող խօսել, սակայն վրայ հասան երկու աթէնացի. ինչպէս երեւում էր, վաճառականներ, որոնցից մէկը բաւականին ֆրանսերէն գիտէր։ Մենք հարցուփորձեցինք այս աշակերտներին, թէ նրանք լինչ գիտեն և վաճառականներից մէկը հարցրեց, թէ արդեօք նրանք Հերոդոտին սիրում են։ Ինչպէս չէ, պատասխանեց մանուկը, կարծես զարմանալով, չէ որ նա մեզ պատմում է մեր քաջերի պատերազմները պարսիկների հետ, մեր Միլթի-

ադէսի, մեր Թէմեստոկլէսի մասին։ Ձեր անուններն ինչ է, հարցրի ես, մին թէ՝ Արիստիդէս, միւսը Միլթիադէս, երրորդը՝ Սոկրատէս, չորրորդը Պլատոն, նոյն անուններն, ինչ որ աթէնական ուսումնարաններում ես չարունակ լսում էի, անմահ անուններ, որոնք թունդ են հանում նոյն իսկ ռասարականներիս սրտերը։ Դէհ, եկ ու մի արթնանար, ով դու երջանիկ սերունդ հելլենացիների։

Այսպէս՝ սիրելի հայրենակից, բիւրաւոր քաղցր տպաւորութիւններով, նորանոր մտածմունքներով ու բուռն զգայմունքներով զեղուն սրտով հեռացայ այս հին քաղաքակրթութեան կենդրոնից։ Եւ դու, ով հայ մարդ, երբ մի օր բաղդ ունենաս հելլենական զարթագին ծովեզրին մօտենալու, իբրև քաղցր պարտականութիւն խորհուրդ եմ տալիս քեզ, չը խնայել մի քանի օր պանծալի Աթէնքին նուիրելու։ Ես շատ երկիր չըջել, շատ մայրաքաղաքներ եմ տեսել, սակայն և ոչ մինն ինձ վրայ այն խոր տպաւորութիւնն է գործել, ինչ որ ես հայրենիք եմ բերում Աթէնքից։

Հին Աթէնքի աւերակներն իրանց վեհութիւնով, նոր Աթէնքը իւր մեծ յառաջադիմութիւնով, մինը հիացնում, միւսը ցնծութիւնով լցնում է քո սիրտը, որ պատմական անցեալ ունեցող մի ժողովուրդ, իբրև մի ռասկական անհատ՝ երբ առիթը հնարաւորութիւն ունի ներկայանալ, վերարտադրում է իւր մտաւոր պաշարի հարստութիւնները և դիւրաւ իւրացնում նոր քաղաքակրթութիւնը։ Ի՜նչ մեծ մխիթարութիւն, ինչ սիրելի տիսանք ժողովուրդների ե մարդկութեան սրտին, որ այնքան յուսահատական երևոյթներով չըջապատած է եղել և է տակաւին։

Զմիւռնիա։

ԱԶԳԻ ԵՐԳԻՉԸ

ԵՂԻՇԷ ՄԱԴԱԹԵԱՆԻ

Le peuple - c'est ma muse.
Béranger.

I

Մարդիկ այնքան սերտ են կապված իրար հետ ձգտումներով և շահերով որ միայն փոխադարձ օգնութեամբ կարող են ապահովել իրանց ոյժերի և ընդունակութիւնների զարգացումը։ Ահա ինչու թէ անհատի և թէ հասարակութիւնների զարգացման պայմաններում նշանաւոր դեր են կատարում փոխառութիւնն ունմանողութիւնը։ Որքան էլ ըստ երևոյթին ինքնակայ լինի մի մարդու կամ մի ազգի հանճարը, նա էլի շատ բան է պարտական իւր նախորդներին և իւր ժամանակակիցներին, թէկուզ ինքը այդ հանճարը չը խոստովանէր էլ այդ։ Վերցրէք մարդկային ազգի յառաջադիմութեան ամենանշանաւոր հերոսներից որին կամենաք. լինի նա մեծ մտածող՝ ինչպէս Արիստոտէլը, մեծ աշխարհակալ՝ ինչպէս Մակեդոնացին, մեծ թատերագիր՝ ինչպէս Շէքսպիր կամ մեծ կոմպոզիտոր՝ ինչպէս Մոցարտ... ամենքն էլ ունեցել են իրանց նախորդները և ուսուցիչները։ Մենք հիանում ենք եւրոպական ազգերի վսեմ քաղաքակրթութեան վրայ, բայց ի՞նչ կը լիներ նա, եթէ եղած չը լիներ հեթանոսական կլասիկական կուլտուրան, որ մասամբ՝ քրիստոնէականին իբր հիմք ծառայեց։ Այսպիսով թէ մեծ մարդկանց և թէ մեծ ազգերի կեանքի մէջ զուր կը լինի անպայման ինքնուրոյնութիւն որոնելը, որովհետև իրօք միայն պայ-

մանական, յարաբերական ինքնուրոյնութիւն կայ։ Այդ ինքնուրոյնութիւնը նրանով չի չափւում, թէ ինչ ենք մենք ստացել ժառանգաբար, աւանդաբար կամ մեր շրջանից ու ժամանակից, այլ նրանով, թէ ինչպէս և որքան ենք շահեցրել այդ անխուսափելի միջոցներով ձեռք բերածներս, ինչ նոր կոմբինացիա ենք արել դրանցից կամ ինչ նոր բան ենք աւելացրել նախորդ սերունդների աշխատանքի վրայ։ Մեծ մարդիկ նրանով չեն մեծ, որ իրանց դարու զաւակներն են, այլ նրանով, որ իրանց դարից բարձր են, դարի ուղեցոյցներն ու պարագլուխներն են։ Այդպէս էլ մեծ ազգերը իրանց փոխառութիւններով չէ՝ որ պարծենում են, այլ իրանց ստեղծագործութիւններով։ Փոխ առնելու ընդունակութիւնը առաջադիմութեան գրաւականներից մէկն է, սակայն փոխ առնելը նպատակ չէ, այլ մի ասոիճան, որով անհրաժեշտաբար անցնում է իւրաքանչիւր անհատ և իւրաքանչիւր հասարակութիւն մինչև ինքնուրոյնութեան հասնելը։ Ոչոք վատ նշան չի նշմարում այն բանի մէջ, որ մի տարեկան մանուկը մօր փէշից բռնած է ման գալիս։ Բայց ամենքը վատ նշան կը նշմարեն, եթէ նոյն մանուկը չափահաս դառնալուց յետոյ էլ՝ ման գալիս մօր փէշը բաց չը թողնի։ Եթէ քաղաքակրթութեամբ մանուկ ազգը հետևում է կուլտուրական ազգերի ընթացքին, փոխ առնելով նրանց մշակած աւելի բարձր քաղաքակրթութեան արդիւնքները, դա ուրախալի է ընդհանրապէս. բայց եթէ այդ ազգի ամբողջ գործը միայն փոխ առնելը պիտի լինի, առանց որ նա փոխ առածը իւր ազգային բնաւորութեանն ու կեանքին յարմարեցնել կարողանայ, առանց որ նա օտարինը իւրացնել, ազգայնացնել կարողանայ,—այն ժամանակ զուր է այդ ազգի ստեղծագործական ընդունակութիւնների մասին խօսելը, զուր է նրա ինքնուրոյնութեան և ապագայի վրայ յոյս պահելը...

Յիսուն տարի է որ հայ ազգը հաստատ ոտք է դրել եւրոպական քաղաքակրթութեան ճանապարհի վրայ։ Այդ քաղաքակրթութեան գանձարանը այնքան հարուստ և յիսուն տարին այնքան կարճ ժամանակամիջոց է մի ազգի պատմական կեանքի համար, որ դեռ խօսք չի կարող լինել մեր արած փոխառութիւնների բաւարարութեան մասին, ուր մնաց որ մենք պատրաստ լինէինք ինքնու-

բոյն ճանապարհ հարթելու ընդհանուր առաջադիմութեան ասպարիզում։ Մեր կեանքի ձևերը, մեր նիստ ու կացը, մեր աշխարհայեցողութիւնը վերջին յիսուն տարիների ընթացքում, արդարև, փորձեցին և շարունակում են փորձել իրանց վրայ եւրոպական կեանքի որոշ ազդեցութիւնը, սակայն անաչառ մտքից ծածուկ չէ, որ այդ ազդեցութիւնը դեռ չի հասել ցանկալի խորութեան ու բազմութեան։ Դեռ վերջացած չի կարելի համարել մեր հին և նոր սերունդների կռիւը, որ մօտ կէս դար առաջ սկսելով կեանքի մէջ, շուտով անցաւ և գրականութեան մէջ և տարիների ընթացքում զբաղեցրեց մեր աղքատիկ պարբերական մամուլը։ Թղթի վրայ նոր գաղափարներն՝ արդարև, տարան յաղթանակը, բայց նրանք՝ այդ գաղափարները թոյլ գործադրութիւն ունեցան իրականութեան մէջ, ուր հին աւանդութիւնները դեռ բաւական ամուր են, թէև այդ աւանդութիւնների ջատագովները իրանց առաջուայ յարձակողական դիրքը փոխարկել են պաշտպանողականի։ Մի հայեացք ձգեցէք մեր ընտանեկան և հասարակական կեանքի վրայ և դուք կը համոզուէք, որ մենք եւրոպական քաղաքակրթութեան արտաքին կողմերն ենք աւելի իւրացրել, քան ոգին ու բովանդակութիւնը։ Մեր հասարակութեան նոյն իսկ ինտելիգենտ կոչուած դասակարգերում, այսինքն ազգի այն մասի մէջ, որ ամենից աւելի է ազդուել եւրոպական քաղաքակրթութիւնից, դուք կ'ընդհարուէք շատ անգամ այնպիսի գաղափարների ու սովորութիւնների հետ, որոնք ոչ միայն ոչինչ կապ չունեն, այլ ուղղակի հակասում են այն լուսաւոր և մարդասիրական սկզբունքներին, որոնց ներկայացուցիչն են համարւում այդ եւրոպականացած ասիացիք։ Էլ չենք խօսում ստորին դասակարգերի մասին, որոնք դեռ նոր են զարթնում դարաւոր քնից և եւրոպական քաղաքակրթութեան տականքն են իւրացնում։

Մեր բարոյական, մտաւոր և հասարակական կեանքի արտայայտութիւնները՝ մեր եկեղեցին, մեր դպրոցը, մեր մամուլը, մեր թատրոնը, մեր այլ և այլ ընկերութիւնները դեռ այնքան թոյլ են իրանց գործունէութեամբ, արդիւնաբերութեամբ ու ազդեցութեամբ, որ անդադար չարագուշակ նկատողութիւնների առիթ են տալիս մեր ազգային և օտարազգի զոյլերին։ Բայց և այնպէս, ապագայի վրայ մտայլ աչքով նայելու շատ էլ տեղիք չը կայ։ Մեր

ժամանակը մի անցողական ժամանակ է։ Նորամուտ եւրոպականութիւնը քանդեց մեր հնադարեան խարխուլ տան պատերը, որ սպառնում էին իրանց աւերակների տակ ծածկել մեր դիակները. մենք մեր առաջին փորձերն ենք անում հին տան տեղը նորը կանգնեցնելու և ինչպէս բոլոր այդ օրինակ դիպուածներում, քիչ չէ պատահում, որ սխալւում ենք. սակայն խօսքը հէնց մեր մասնաւոր սխալների մասին կարող է լինել և ոչ թէ մեր ամբողջ ճարտարապետական գործունէութեան, որի հիմքը անխախտ է և ապահով։ Ամեն մի յեղափոխութիւն բերում է իւր հետ որոշ չափով և կործանումներ։ Բայց այդ կործանումից միայն անմիտն է վհատւում։ Դարնանը, երբ գետերը փշրում են իրանց սառուցի կապանքները և դուրս գալով ափերից իրանց սրընթաց պղտոր ալիքների հետ քշում տանում են դարաւոր ժայռեր ու ծառեր, երբ դաշտերում և անտառներում նոր հալած ձիւնը անանցնելի ցեխ է գոյացնում, ոչ մի խելքը գլխին մարդ չի տրտնջում արևի վրայ և չի ցանկանում որ ձմեռը վերադառնայ. ամեն մէկին յայտնի են տարաւոյ այդ գեղեցիկ եղանակի հետ կապւած մի քանի անախորժութիւնները և ահա իւրաքանչիւրը իւր հասկացողութեան համեմատ նախազգուշութիւններ է ձեռք առնում այդ անախորժութիւններից ըստ կարի ազատ մնալու համար։ Ամեն մէկը գիտէ որ մի քանի օր էլ—և գետը կը ստանայ իւր սովորական խաղաղ ընթացքը, դաշտն ու անտառը կը չորանան և կը զարդարւեն թարմ կանաչով, տերևներով ու ծաղիկներով, և բնութեան հետ նոր ոգի առած մարդը փառք կը տայ Արարչին։ Մեր ազգային կեանքի արդի մոմէնտը կարելի է նմանեցնել գարնանամուտին։ Եւրոպական լուսաւորութեան արևը դեռ նոր է ծագել. նոր հալւած ձիւնը շատ տեղերում անանցնելի ցեխ է գոյացրել. գետերը շատ տեղերում դուրս են եկել ափերից և մինչև անգամ քշել տարել են իրանց զօրեղ հոսանքի հետ մեր սրտին մօտիկ մի քանի թանգագին յիշատակներ, բայց և այնպէս վերածնութեան այս վեհ տեսարանի հանդէպ միայն անմիտներն ու փոքրոգիներն են որ գոռում են «կործանումն» և տրտնջում են արևի վրայ, իսկ նրանք, որոնք ծանօթ են ընդհանուր զարգացման օրէնքներին, նրանք գիտեն որ կարծեցեալ «կործանումը» մի ժամանակաւոր և անխուսափելի չարիք է, որի դէմ, այո, պէտք է կռւել, բայց յամենայն

դէպս պէտք չէ մոռանալ ողջունել գարնան գալուստը և պատրաստուել նոր կեանքի համար։ Իսկ ողջունել գարնան գալուստը և պատրաստուել նոր կեանքի համար՝ չի նշանակում նստել ձեռները ծալած ու նայել արևին, այլ նշանակում է մի կողմից մեր կեանքի մէջ մուտք գործած թարմ և առողջ հոսանքներին տալ ազգային ուղղութիւն, միւս կողմից՝ շարունակել նորանոր ճանապարհներ բանալ եւրոպական լուսաւորութեան կենսատու և յորդառատ աղբիւրներից դէպի չորացած և անապատ հայրենի անդաստանները։

Նատ նշաններ ցոյց են տալիս որ մեզանում արդէն սկիզբն է առել թէ այդ ազգային ուղղութիւնը և թէ նորանոր ճանապարհներ բանալու ձգտումը։ Մենք մեր ժամանակի հայոց պատմութիւնը չենք գրում. բայց եթէ ճշմարիտ է, որ գրականութիւնը կեանքի հայելին է, մեզ թւում է թէ մի ընդհանուր հարևանցի ակնարկ ձգելով մեր նոր գրականութեան վրայ և մասնաւորապէս կանգ առնելով մեր այն մատենագրի պօէզիայի վրայ, որ մեր ազգային երգիչն է համարւում, մենք կարող կը լինենք մեր յառաջադիմութեան այդ տենդենցիան ակնյայտնի դարձնել մեր ընթերցողներին։

II

Գրականութեան զարգացման օրէնքները ջոկ չեն կեանքի զարգացման օրէնքներից։ Ինչպէս մի նոր սթափւած ազգի կեանքը՝ նախ քան զարգացման ինքնուրոյն ճանապարհով ընթանալը, ենթարկւում է ուրիշ՝ աւելի քաղաքակիրթ ազգերի կեանքի ազդեցութեան, այդպէս էլ մի նորածին գրականութիւն՝ նախ քան ինքնուրոյն գոյն և ուղղութիւն ստանալը, ենթարկւում է օտար՝ աւելի հարուստ և մշակւած գրականութեան ազդեցութեան։ Պունիկեան պատերազմների շրջանում հռովմայեցիք մօտ ծանօթացան յոյների հետ և սկսեցին փոխ առնել նրանց քաղաքակրթութեան արդիւնքները. այդ ծանօթութեան հետևանքներից մէկն էլ այն եղաւ, որ հռովմէական գրականութիւնը այդ շրջանում ի դէմս իւր լաւագոյն ներկայացուցիչների, ինչպէս օրինակ՝ Տերենցիոսի, Էննիոսի, Կատոնի և ուրիշների, ենթարկւեց հելլենական գրականութեան հզօր ազդեցութեան։ Միայն Օգոստոսի դարում հռովմէական գրականութիւնը աւելի ինքնուրոյն ուղղութիւն ստացաւ, թէև յունական

ազդեցութիւնից կատարելապէս ազատուել կրկին չը կարողացաւ։ XVII դարու վերջերում և XVIII դարու առաջին կիսում գերմանական գրականութիւնը ենթարկուած էր ֆրանսիական կեղծ-կլասիցիզմի ազդեցութեան, որից ազատուեց միայն անցեալ դարում շնորհիւ Լեսսինգի, Գեօթէի, Շիլլերի և սրանց ընկերակիցների, որոնք հիմք դրին ազգային գերմանական գրականութեան։ Ռուսաց նոր գրականութիւնը մինչև ներկայ դարուս սկիզբը գտնւում էր գլխաւորապէս գերմանական և ֆրանսիական ազդեցութեան տակ։ Պուշկինի, Գրիբոյէդովի, Գոգոլի ժամանակից միայն նա սկսեց բռնել ինքնուրոյն ուղղութիւն։ Հայոց նոր գրականութիւնը ի հարկէ ընդհանուր օրէնքից բացառութիւն կազմել չէր կարող. ինչպէս մեր բարքերը, գաղափարներն ու սովորութիւնները ենթարկուեցին եւրոպական ազդեցութեան, այդպէս էլ գրականութիւնը նախ քան ինքնուրոյն գոյն և ուղղութիւն ստանալը անհրաժեշտաբար պիտի ենթարկուէր նոյն օտար գրականութիւնների ազդեցութեան։ Յայտնի է որ այդ ազդեցութիւնը դեռ մինչև օրս էլ շարունակւում է մեզանում և մենք դեռ չենք կարող պարծենալ մեր գրականութեան ինքնուրոյնութիւնով, բայց և այնպէս որոշ առաջադիմութիւն ցանկալի ուղղութեամբ անկասկած արել է նաև մեր գրականութիւնը, և յամենայն դէպս խրատական է դիտել այդ գրականութեան մէջ տիրող ընդհանուր հոսանքները՝ թէ գրական ձևերի և թէ բովանդակութեան մշակման կողմից։ Մեզ հարկաւոր է սկսել քիչ հեռից։

Յայտնի աշխարհագրական և քաղաքական պայմանների տարբերութեան պատճառով հայ ազգի երկու գլխաւոր տարրերը՝ ռուսահայերը և տաճկահայերը տակաւ են շփուել իրար հետ։ Դրանից է առաջացել մի ընդհանուր լեզուի բացակայութիւնը մեզանում և մեր նոր գրականութեան բաժանումը։

Թանի որ աշխարհիկ լեզուն չէր ստացել քաղաքացիութեան իրաւունք մեր դպրոցի և գրականութեան մէջ, գրաբարը որ դասաւորութեան արժանի մեր միակ մայրենի լեզուն էր համարւում և գրականութեան միակ հնարաւոր գործին, շաղկապում էր աշխարհիս երեսին ցրուած սակաւաթիւ հայ գրագէտներին։ Գրաբառ դասագրքերն ու մատեանները, հրատարակուած լինէին նրանք Տաճկաստանում, Ռուսաստանում թէ մի ուրիշ երկրում, հաւասար ըն-

գունելութիւն էին գտնում ամեն տեղ։ Միւնոյն գրքերի վրայ էին սովորում տաճկահայ և ռուսահայ պատանիները, միևնոյն գրքերն էին կարդում չափահաս տաճկահայը և ռուսահայը։ Այբբենարանը, Սաղմոսը, Աւետարանը, Նարեկը, Զամչեանի և Սալլանթեանի քերականութիւնները և Ագոնցի ճարտասանութիւնը իմաստութեան անխուսափելի աղբիւրներ էին ամբողջ հայ ուսանող սերնդի համար։ Յովհան Վանանդեցու «Ոսկի Դարն» ու «Արփիականը», Լազարեանց ճեմարանի աշակերտների «Մուսայք Արարատեան»-ը, Կարինեանցի «Ի մահն Աբէլին», Բագրատունու «Հայկ Դիւցազնը», Թոմաճանի և Հիւրմիզի թարգմանած «Եղիականն» ու «Ենէականը» և այլ այս տեսակ գրքեր, որտեղ էլ լոյս տեսնէին, հայ ընթերցողի գրադարանի անհրաժեշտ զարդերն էին դառնում։ Ըստ երևոյթին ամեն բան լաւ էր գնում. պէտք էր միայն ուրախանալ որ շատ կողմերից իրարից բաժանուած եղբայրների մտաւոր կեանքի մէջ կար մի ընդհանուր կապ, որ արտայայտւում էր դպրոցական և գրական լեզուի միութիւնով։ Ըստ երևոյթին ոչ թէ միայն հարկաւոր չէր այդ կապը խախտել, այլ անհրաժեշտ էր ամրապնդել, աւելի և աւելի մշակելով գրական լեզուն և աւելի և աւելի բազմացնելով գրական գրքերի և դասական ձեռնարկների քանակութիւնը։ Բայց այդպէս է լոկ ըստ երևոյթին։ Ազգի պիտոյքներին ուշադիր և նրա շահերին նախանձախնդիր՝ առաջաւոր հայերի համար վաղուց էր արդէն պարզ, որ այդ կապը արուեստական է, որ գրականը, կտրուած լինելով ժողովրդի լեզուի արմատից, կորցրել է իւր կենսական հիւթերը և էլ չի կարող դիմանալ կեանքի հոսանքի առաջ, ինչպէս ջերմոցի ծաղիկը դրսի օդի տեմպերատուրի տատանումներին ենթարկուած՝ թոշնում է ու թառամում։ Առաջաւոր հայերի այդ դիտակցութիւնն էր հէնց որ ներկայ դարում բերաւ մեր նոր գրականութեան սկզբնաւորութեանը։ Խօսել ժողովրդի հետ իրան հասկանալի լեզուով, զարթեցնել նրա թմրած միտքը, արտայայտել նրա հասարակական պէտքերը, ցաւերը և ուրախութիւնները, ձգտումները և իդէալները, առաջնորդել նրան դէպի եւրոպական լուսաւորութիւնը, մտցնել նրան քաղաքակիրթ ազգերի գերդասանը և մասնակից անել նրան ընդհանուր մարդկութեան առաջադիմութեան—ահա այն բարձր նպատակը, որին պիտի ծառայէին մեր նորածին գրա-

կանութեան հիմնադիրները, մի նպատակ, որ անյայտ էր հներին և որին մեր հին գրականութեան մշակները հասնել երբէք չէին կարող։ Այդ նոր նպատակի համեմատ պէտք էր ստեղծել և նոր գրական ձևեր և նոր բովանդակութիւն։ Դա մի քանի մարդկանց գործ չէր, այլ մի քանի սերունդների։

Երբ սկիզբն առաւ աշխարհիկ գրականութիւնը թէ մեզանում և թէ տաճկահայոց մէջ սկսեցին վէճեր նոր գրական լեզուն մշակելու միջոցների մասին։ Գրաբարը իր հարուստ և քարացած ձևերով ու ոճերով այնքան հրապուրիչ էր դեռ շատերի աչքում, որ ծանր էր թւում միանգամից հրաժարուել նրան վերակենդանացնելու մտքից։ Այդ է պատճառը որ բանասէրներից ոմանք առաջարկում էին իստակել աշխարհիկ լեզուն դարաւոր աղաւաղութիւններից և «ռամկաբանութիւններից» և անզգալի կերպով մօտենալ գրոց լեզուին, այնպէս որ վերջ ի վերջոյ մեր գրական լեզուն էլի գրաբարը լինի։ Միւսները, չը հերքելով գրոց լեզուի ահագին նշանակութիւնը աշխարհիկ գրական լեզուի մշակման համար, միանգամայն ցնորք էին համարում գրաբարը վերակենդանացնելու գաղափարը և պինդ էին բռնում ժողովրդի լեզուից։ Վերջապէս հեղինակներից մի քանին էլ կանգնած մնալով այն տեսակէտի վրայ, որ նոր գրական լեզուի հիմքը ժողովրդի լեզուն պիտի լինի, այդ լեզուն մշակելու համար նախապատուութիւն էին տալիս եւրոպական լեզուներին։ Հետաքրքրական է սակայն, որ չը նայելով տեսական հայեացքների տարբերութեան, de facto գրողներից իւրաքանչիւրը որոշ զիջումներ էր անում հակառակորդին. աշխարհաբարը գրաբարին մօտեցնել ձգտող հեղինակը յաճախ գործ էր ածում «ռամկաբանութիւններ». ժողովրդի լեզուի ջերմ կողմնակիցը մտցնում էր կոնսիստորիայի ձևեր ու ոճեր. իսկ եւրոպական լեզուների կաղապարով հայոց լեզուն ձևել ցանկացողը զուգախառնում էր թէ կենդանի բարբառը, թէ գրաբարը և թէ օտարաբանութիւնները։ Դա մի ապացոյց էր գրական լեզուի մշակման միջոցների մասին տիրող կարծիքների միակողմանիութեան, մի ապացոյց որ այդ կարծիքներից իւրաքանչիւրը յայտնի չափով էր միայն մօտենում ճշմարտութեան, իսկ ճշմարտութիւնն այն էր, որ գրական լեզուի մշակման գործը պէտք էր դնել ամենալայն հիմունքների վրայ։ Նախ և

առաջ, զուր էր գրավառի վերակենդանութեան մասին երազելը. երկրորդ՝ անհիմն էր այս կամ այն թէկուզ՝ համեմատաբար մաքուր պահպանած ժողովրդական բարբառը գրական գործի շինելը և երրորդ՝ առողջ մտքի հակառակ էր աշխարհիկ գրական լեզուն գրաբառից կարելը՝ եւրոպական լեզուներին մօտեցնելու համար. պէտք էր մշակել և հարստացնել նոր գրական լեզուն բոլոր հնարաւոր կենսունակ տարրերով, բայց միշտ հաւատարիմ մնալով հայոց լեզուի ոգուն, այն ոգուն, որ արտայայտւում է մեր ընդհանուր ժողովրդական բարբառներում և մեր դասական մատենագրութեան լաւագոյն արտադրութիւնների մէջ։ Պէտք չէր ստրկանալ ոչ գրաբառին, ոչ որ և է տեղական կամ գաւառական բարբառի, ոչ էլ եւրոպական լեզուներին, այլ քաղելով ամեն տեղից պիտանի նիւթեր, ստեղծագործել մի նոր, կենդանի, ճկուն լեզու, որ հզօր յայտարար լինէր ազգային ոգու և ճշգրիտ հաղորդիչ եւրոպական լուսաւորութեան և գիտութեան հայերիս մէջ։ Այս ճշմարտութիւնը, որ չի կարելի ասել՝ թէ բոլորովին անտեսած լինէր մեր առաջին բանասէրներին ու մատենագիրներին, չ՚ունեցաւ սակայն իր գործնական ջատագովը։ Մեր գրականութեան գլուխն անցած էին կամ բուն ժողովրդից զուրս եկած և նրա կեանքով ապրող, բայց քիչ զարգացած մարդիկ կամ մանուկ հասակից՝ հայրենիքից հեռացած համապարանականներ. ոչ նրանք, ոչ էլ սրանք ծանօթ չէին Հայաստանի բազմաթիւ բարբառներին և չէին կարող սրանցից մի այնպիսի մ ի ջ ի ն լեզու ստեղծել, որ մշակման բովից անցնելուց յետոյ ժամանակի ընթացքում ընդունելի լինէր ամեն տեղ, ուր կենդանի էր հայ լեզուն։ Դրանից առաջացաւ մի ցաւալի հակասութիւն մեր նոր գրականութեան պարագլուխների խօսքի և գործի մէջ. մի կողմից բողոքում էին գրաբառի իշխանութեան դէմ և պնդում էին որ ժողովրդի հետ պէտք է խօսել իրան հասկանալի լեզուով, միւս կողմից իրանք այնպիսի լեզուով էին գրում, որ մատչելի էր որոշ գաւառի, որոշ քաղաքի կամ որոշ դասակարգի և քիչ ընդհանուր ազգային տարրեր էր բովանդակում։ Աբովեանը հասկանալի էր Այրարատեան գաւառում, բայց Ջաւախքում՝ ոչ, Նազարեանցը հասկանալի էր ռուսահայոց ինտելիգենցիային, բայց ժողովրդին ոչ, Օտեանը հասկանալի էր պոլսեցուն, բայց վանեցուն ու մշեցուն

ոչ։ Ապա ինչ պէտք էր անել ամենքին հասկանալի լինելու համար, կը հարցնէք դուք։ Այդ հարցին մասամբ պատասխանում է թէ մեր և թէ տաճկահայոց այժմեան գրական լեզուի վիճակը. թէ այստեղ և թէ այնտեղ օրէցօր զօրանում են ժողովրդական կենսունակ տարրերը. թէ մեր և թէ նրանց գրական լեզուից օրէցօր վեր է գալիս արևելականութեան կնիքը։ Բայց մենք աւելի հեռու կը գնանք։ Մենք պնդում ենք որ արևելեան և արևմտեան բարբառները իրօք այնքան էական տարբերութիւն չեն ներկայացնում, որ անհրաժեշտ լիներ այժմեան երկու գրական լեզուների գոյութիւնը։ Մենք հասկանում ենք մեր գրականութեան այդ երկուութեան պատմական պատճառը, բայց հնարաւոր ենք համարում և նրա միանալը։ Եթէ դուրս չը գայ մի հզօր տաղանդ որ մի նոր՝ մ ի ջ ի ն լեզուի օրինակներ տայ մեզ, վաղ թէ ուշ մեր երկու գրական լեզուներից մէկը տեղի պիտի տայ միւսին։ Թէ որը տեղի կը տայ, այդ կախւած է նրանից, թէ ինչպէս կ'երթայ այսուհետև մեր և տաճկահայոց մտաւոր զարգացման գործը։ Բայց դիտելու արժանի է, որ հէնց սկզբից մի քանի հեղինակների գրուածներում՝ տաճկահայոց և ռուսահայոց գրական լեզուները միացնելու փորձեր են երևում. ուղիղ է՝ այդ փորձերը հէնց այնպէս էլ մնացին և չ'ունեցան իրանց հետևողները, սակայն նրանք մասնացոյց են անում մի անհրաժեշտ կարիքի վրայ, որ վաղ թէ ուշ պիտի լցուցանել։ Լեզուն մասնագէտ լեզուաբանները չեն ստեղծում, այլ սովորաբար՝ բանաստեղծները, որոնք իրանց գեղարուեստական շինուածի համար հարկաւոր մատերիալները քաղում են ժողովրդական բարբառների, ժողովրդական անարուեստ բանահիւսութեան անսպառելի դանձարանից։ Մեր բաժանուած գրականութիւնը մի այդ տեսակ հանճարեղ բանաստեղծի է սպասում, որ միանայ։ Այդ ապագայ բանաստեղծը ունի արդէն իր նախորդները, և ամենից նշանաւորը նրանցից Խամառ-Քաթիպան է։

III.

Այն ինչ որ ասացինք մեր նոր գրականութեան առաջին ներկայացուցիչների գործածած գրական լեզուի և գրական ձևերի մասին՝ պէտք է ասել նաև նրանց ստեղծած գրականութեան բովանդակութեան մասին։ Այստեղ էլ, ինչպէս և լեզուի մշակման խնդրում

մենք նկատում ենք երեք գլխաւոր ուղղութիւն։ Հեղինակներից ոմանք, գլխաւորապէս գրախառասէրներ՝ արծարծում են այն տեսակ մտքեր, որոնց նպատակն է կազմակերպել հայոց կեանքը միջնադարեան կրօնական իդէալների համեմատ։ Սրանց համար չը կայ ժողովրդի կենսական նիւթական և բարոյական պահանջների ուսումնասիրութիւն. թող սիրով ու միաբան ապրեն հայերը, թող սերտ կապուեն ազգային սրբութիւնների և աւանդութիւնների հետ, և հայ հայրենիքը դրախտ կը դառնայ,—այդպէս են մտածում գլխաւորապէս մեր կրօնաւոր հեղինակները։ Սրանցից մի փոքր աւելի ազատամիտ են երկրորդ ուղղութեան հետևողները. իրանց քարոզութիւններով նրանք վերացական հողի վրայ չեն կանգնած, այլ իրական. սրանց իդէալները շատ էլ հեռու չեն գնում առաջինների իդէալներից, բայց սրանք այդ իդէալները իրագործելու համար գործնական ճանապարհներ են որոնում, ճանապարհներ, որոնց ծրագիրը հիմնում են ազգի ժամանակակից և պատմական կեանքի ուսումնասիրութեան վրայ. սակայն այդ ուսումնասիրութեան, ինչպէս և ճանապարհ որոնելու մէջ նրանք երևան են հանում նեղ ազգային տենդենցիաներ, արդիւնք նրանց՝ մարդկային առաջադիմութեան ընդհանուր օրէնքներն ըմբռնելու անկարողութեան։ Վերջապէս, երրորդ կարգի հեղինակները՝ գլխաւորապէս եւրոպասէրներ՝ ուսումնասիրելով հայ ժողովուրդը որպէս անդամ մարդկութեան, աւելի լայն նպատակ են դնում նրա առաջ, թէև բաւականաչափ խորը չեն ըմբռնում և ճիշդ չեն գնահատում այն առանձնայատկութիւնները, որ որոշում են մեր ազգը միւսներից։ Ի նկատի ունենցէք որ մենք նշանակում ենք գրականութեան ընդհանուր հոսանքները, առանց բացարձակապէս կապելու այս կամ այն ուղղութիւնը այս կամ այն հեղինակի անուան հետ, բայց որ մեր հեղինակներից իւրաքանչիւրը իւր իդէալներով մտնում է մեր որոշած այս կամ այն կատեգորիային,—այդ կասկածից դուրս է։ Մենք հասկանում ենք որ գեղարուեստական գրականութեան մէջ՝ ընդհանուր առմամբ, այդպէս հեշտ չէ մատենագիրներին ուղղութիւնների համեմատ բաժանելը. գեղարուեստագէտը հրապարակախօսի կամ գիտնականի պէս վերացական դատողութիւններով չէ, որ ազդում է ընթերցողի հոգու ու մտքի վրայ, այլ կոնկրէտ պատկերներով. կա-

րող է պատահել որ բանաստեղծին յայտնի չը լինի իւր՝ այսպէս ասած գեղարուեստագիտական profession de foi ն կամ որ նրա բանաստեղծական պատկերները մինչև անգամ հակասեն իւր վերացական դատողութիւններին [1]. որոշել այդ տեսակ մտաւորականների բանաստեղծական գրուածների տենդենցիաները այնպէս հեշտ չէ, ինչպէս հրապարակախօսի կամ մտածողի ուղղութիւնը որոշելը. առաջին գործը՝ աւելի երկար և զգուշաւոր հետազօտութիւն է պահանջում: Մեր գործը սակայն այստեղ հեշտանում է շնորհիւ այն հանգամանքի՝ որ մեր սակաւաթիւ բանաստեղծ հեղինակները՝ զուցէ մէկի բացառութեամբ, ունեն որոշ հրապարակախօսական տենդենցիաներ: Այսպէս օրինակ՝ տաճկահայոց բանաստեղծներից Ալիշան և Դալվիզեան պատկանում են կրօնական-ազգային ուղղութեան. սրանց ռոմանտիկական հայրենասիրական բանաստեղծութիւնների մէջ հնչում է հրաւէր դէպի նախնեաց երանելի ժամանակները: Ոչինչ նշմար կենդանի կեանքից, ոչինչ ցանկութիւն ազգի հետ և ազգի համար ապրելու. լաց, կոծ, աղօթք, անէծք, յորդոր, սպառնալիք—ամեն ինչ միախառնուած՝ յանուն չ'ուսումնասիրուած ներկայի անբաւարարութեան և յանուն սիրալ հասկացած, երևակայական անցեալի: Մի փոքր աւելի լայնհայեաց են Պէշիքթաշլեան ու Դուրեան, որոնք մի քանի բանաստեղծութիւնների մէջ արձագանք են տալիս իրական կեանքի երևոյթներին:

Բայց տաճկահայոց գրողներն առհասարակ այնպէս սերտ չեն կապուում հրապարակախօսական ուղղութիւնների հետ, ինչպէս ռուսահայ վիպասաններն ու բանաստեղծները: Մեր գրականութեան սկզբից մինչև օրս մենք չենք ունեցել գրեթէ ոչ մի վիպագիր կամ բանաստեղծ, որ իւր գրուածներում գիտակցաբար թէ անգիտակ-

---

[1]) Այդպէս պատահեց՝ օրինակ, ռուսաց գեղարուեստական գրականութեան ներկայացուցիչներից մի քանիսին. օր. Գոգոլին և Լ. Տոլստոյին, որոնց բանաստեղծական գրուածները այլ բան էին ապացուցանում, քան ինչ իրանք էին քարոզում իրանց նամակներում և փիլիսոփայական-հրապարակախօսական յօդուածներում: Այլ մարդ է Գոգոլը՝ որպէս Ռէվիզորի հեղինակ և այլ մարդ՝ որպէս «Переписка»-ի հեղինակ: Այդպէս և Տոլստոյը ուրիշ մարդ է որպէս գեղարուեստագէտ-վիպասան և ուրիշ մարդ որպէս պուբլիցիստ և փիլիսոփայ:

ցաբար առատ հարկ չը լիներ տուած մեր մէջ իշխող հրապարակախօսական այս կամ այն տենդենցիաներին։ Այսպէս՝ օրինակ, Պռոշեանի իբր վիպասանի գործունէութիւնը կապւում է «Կռունկի» ուղղութեան հետ. մի և նոյն նեղ-ազգային բացառականութեան ոգին, որ քարոզում էր Աղաբէգեան, իշխում է նաև Պռոշեանի «ազգային» վիպասանութիւնների մէջ։ Նալբանդեանն ու Շահազիզեանը աւելի լաւ տեղ չէին կարող գտնել իրանց համարձակ ազատամիտ հայրենասիրական երգերի համար՝ քան «Հիւսիսափայլի» էջերը։ Բաֆֆիի վէպերի միջոցով անցնող հասարակական տենդենցիաները ամենից աւելի սազ են գալիս «Մշակի» ուղղութեան, և եթէ կայ մի բանաստեղծ-մատենագիր, որի գործունէութիւնը դժւար լինի այս կամ այն օրգանի ուղղութեան հետ կապելը, դա Գամառ-Քաթիպան է։

(Կը շարունակւի)

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ». Հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ։ Լոյս է տեսնում տարին երկու գրքով. բաժանորդագինն է 2 ռուբլի։ Գիրք առաջին։ Մոսկվա, տպ. Մկրտիչ Բարխուդարեանի, 1892 թ. 8-ածալ, 324 էջ, գինն է 1 ռ. 50 կոպէկ։

Հայոց ուսումնարանների ալժմեայ թիւը, որքան էլ ըստ մեզ անբաւարար է թէ ռուսահայերի և թէ տաճկահայերի մէջ, բայց և այնպէս եղած էլ բաւական է որ մեզանում պահանջ զգացվի ոչ միայն մանկավարժական գրականութեան, առհասարակ այլ և մի մանկավարժական յատուկ օրգանի։

Այդ պահանջին են ուզեցել բաւարարութիւն տալ վաղեմեայ «Դրպրոց» հրատ. հայր Վահան Բաստամեանի, Մանկավարժանոց, հրատ. Խորէն ծ. վարդ. Ստեփանէի. «Մանկավարժական թերթը», հրատարակութիւն պ. Յակոբ Տէր-Յովհաննիսեանի և «Վարժարան» ամսաթերթը, հրատարակութիւն պ. Նիկ. Խոսրովեանի։ Կարճ տարիներ հրատարակելուց յետոյ նոքա դադարեցին, առանց սակայն զգալի հետք թողնելու ոչ ընդհանրապէս և ոչ մասնաւորապէս մանկավարժական գրականութեան մէջ, թէև «Վարժարանի» նշանակութիւնը միւսներից աւելի մեծ էր։

Ահա ինչու մանկավարժական գրականութիւնը իւր ապաստանը մեզանում գտած է եղել մանաւանդ հասարակական - գրական - քաղաքական պարբերական հրատարակութիւնների մէջ, ուր նա աւելի քիչ է սպասում։ Հասարակական-գրական. քաղաքական թերթերը կամ ամսագիրները կարող են հիւրընկալել մանկավարժական բովանդակութիւն ունեցող գրածքներից միայն ամսիսները, որոնք աւելի ընդհանուր բովանդակութիւն ունեն, հետևապէս և աւելի ընդհանուր հետաքրքրութիւն են ներկայացնում, իսկ եթէ այդ սահմանը ամենայն խստութեամբ անկարելի է եղել միշտ պահպանել, այդ պէտք է բացատրել որպէս մի յատնի զիջումն անճար մնացած մանկավարժներին։

Պր. Յովհաննէս Բարխուդարեանցի ձեռնարկութիւնը՝ հրատարակել «Մանկավարժական գրադարանը» գալիս է լրացնելու մեր պարբերական գրականութեան մէջ եղած մի պակասը։ Եւ այս առաջին գիրքը մեզ հիմքեր է տալիս լուսալու, որ այդ հրատարակութիւնը կոչուած է դեր կատարելու մանկավարժական գործում հայերիս մէջ։ Հիմքերից գլխաւորը այն բաւականին լայն ըմբռնումն է ծրագրի, որ մի ամփոփ մարմին է դարձնում գրքի մէջ զետեղուած բազմատեսակ նիւթերը։ Այստեղ ձեռք ձեռքի տուած գնում են կլասիկական մանկավարժների մասին ուսումնասիրութիւնները՝ նոցա գրած քներ բնագիրների ծանօթութեան հետ, զուտ դպրոցական հայեացքների քննութիւնը տեխնիկական մասին՝ հոգեբանական-փիլոսոփայական տեսութիւնների հետ, որոնցից բղխում են առաջինները, դպրոցների դրութեան նկարագրութիւնների հիմքում դրուած է նոյն քննադատական հայեացքը, ինչ մենք տեսնում ենք աւելի թէօրիական բնաւորութիւն կրող լօդուածներում։ Ամեն բանում երևում է դպրոցի, չկոլալի ոգին, և այդ դպրոցն է՝ Հերբարտ-Ցիլլերեան դպրոցը, ոգին՝ այդ դպրոցի ոգին է, այն դպրոցի, որի նորագոյն աշակերտներից են ինքը հրատարակիչ պ. Յովհաննէս Բարխուդարեանը և «Մանկավարժական գրադարանի» մերձաւորագոյն աշխատակիցները։ Մենք չենք մոռանում Հերբարտ-Ցիլլերեան ուղղութեան քննութեան մէջ, թողնելով նորա պրոպագանդան անելու կոչումն ունեցող մանկավարժներին, բայց սա նկատելու և մեծապէս գնահատելու մի երևոյթ է, որ եթէ մենք ունինք ուսումնարանական գործին սերտ կապած հայ մանկավարժներ, ուսուցիչներ՝ նոքա գերմանական Ենա քաղաքի այն դպրոցից են, որ այժմ պրոֆ. Ռայնի ղեկավարութեամբ շարունակում է Հերբարտի և Ցիլլերի աւանդութիւնները։ Դպրոցի սաների մէջ նկատուող սէրը դէպի գործը, եռանդը, որով նոքա աշխատում են տարածել Հերբարտ-Ցիլլերեան ուղղութիւնը ամեն տեղ ուր միայն նրանց վիճակում է գործել, այդ բոլորը պարտականութիւն է դնում մեզ վերայ լարգանքով վերաբերուել նաև դէպի այն վարդապետութիւնը, առանց որի դպրոցը կը կորցներ իւր կենսունակութիւնը։ Յարգելով վարդապետութիւնը, չնորհաւորում ենք և «Մանկավարժական գրադարանի» հրատարակութիւնը, որպէս արտայայտութիւն մեր նոր մանկավարժական սերունդի ձգտումների, որով այդ հրատարակութիւնը մեր աչքում ստանում է հասարակական երևոյթի բնաւորութիւն։

Մեր ցանկութիւնն էր այս անգամ արտայայտել այս առաջին գրքից ստացած ընդհանուր տպաւորութիւնը, առանց մտնելու մանրամասնութիւնների մէջ։ Միայն մի նկատողութիւն աւելորդ չենք համարում այստեղ և եթէ անել. այն է որ «Մանկավարժական գրադարանի» մէջ ապագայում աւելի լայն տեղ բռնէր հայկական բաժինը, որով կեանքի հետ կապը աւելի մեծ կը լինէր։

Ա. Ա.

ՍԱՀԱԿԵԱՆՑ, ՍԱՀԱԿ քահանայ։ – «Դասագիրք կրօնի» Ա. Բ. Գ. տարիներ։ Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէի։ Ա. գիրք 36 էջ։ Բ. – 36, Գ. 68 էջ։ Գինն է առաջին տեարի 30 կոպ., երկրորդի – 20 կ., երրորդի – 30 կոպէկ։

Ով ընթերցողներից ճանաչում է բարեկրօն քահանայ Սահակ Սահակեանցի հին երկասիրութիւնները, նա անշուշտ կարող է երևակայել թէ այս վերջին գրքերն էլ ինչպիսի աշխատութիւններ են։ Եթէ մեր մէջ կը գտնենք մի քանի անխոնջ աշխատողներ մանկավարժական աշխարհում, անշուշտ նոցա շարքում ևս պէտք է դնենք մեր բարեկրօն քահանային։ Նա նուիրել է իրան մեր աղքատիկ գրականութեան և դիմանալով ամեն խոչնդոտի, արդելքների՝ կամաց-կամաց, սակայն ամուր քայլերով երևան է գալիս իւր գեղեցիկ երկերով, դասագրքերով։ Նախ քան մենք այդ վերջիններին մասին խօսենք, նուիրենք մի քանի խօսք նորա հին աշխատութիւններին։ Հին աշխատութիւնների մէջ տիրում է կատարեալ հերբարտական ոգին։ Մենք գտնում ենք այնտեղ նիւթերի մշակումն հինգ աստիճաններով, մենք գտնում ենք այնտեղ այն նոր մանկավարժական սկզբունքները, որ մինչև այսօր մեր աղքատ գրականութիւնը չի տեսել։ Մի խօսքով առաջին անգամ երևան է գալիս մեր մէջ կրօնի մի սիստեմական դասաւանդութիւն, գործադրութիւն այն դաղափարների, որ լատուկ է միայն գիտական մանկավարժութեան, որի հիմնադիրն է Հերբարտը։ Ով Սահակեանի հին աշխատութիւնների հետ ծանօթ չէ, նա ոչ մի ժամանակ չի կարող այս նոր տեսրները գնահատել, ըստ որում դոքա իրար հետ սերտ կապած են։ Այդ դասատետրների կարևորութիւնը ցոյց տալու համար նա իւր մի դասագրքի մէջ ասում է. «Աշակերտաց ձեռքն որքան պատմութեան մի առանձին դասագիրք տալն աւելորդ է. ամենընտիր և նպատակաւարմար դասագիրքը հէնց Սուրբ Գիրքը՝ բնագիրն է»։ Բայց որովհետև պակասում են մեր մէջ դիւրըմբռնելի և արժանագին բնագրեր, ուստի նա ձեռնարկում է այս դասատետրների կազմութեան, որոնք, իսկ է, բառիս բուն մտքով ասած ինքնուրոյն չեն, ըստ որում նոքա կազմում են այն, ինչ նիւթերի մշակման մէջ «functia» է կոչւում։ Դասաւանդութեան նպատակն է, որ այդ գիտութիւնը չը մնայ առանց գործադրութեան, չը դառնայ մի անմատչելի հարստութիւն, այլ գործադրվի, այսինքն գիտենալն իմանալու փոխադրվի։ Առաջին գրքերը ծառայում են գիտենալուն, իսկ նոր լոյս տեսած դասատետրներն – իմանալուն։ Եթէ աշակերտները նիւթը արդէն սովորել են, իւրացրել են, ապա պէտք է այս գրքերը նոցա ձեռքը տալ, որ այդ սովորածը, ուսածը աւելի ամրանայ

նոցա հոգու մէջ։ Իսկ հարցը նորա մէջն է թէ արդեօք այդ գրքերը արժանի ծառայութիւն կը մատուցանեն դիտենալուն։ Մենք դորան կը պատասխանենք, որ սոքա կազմուած են օրինակելի կերպիւ, լեզուն սահուն, պարզ և հասկանալի է. իսկ պատմութիւնները տուած են այնպիսի ձևով, որ կարող են աշակերտի մէջ անմիջական հետաքրքրութիւն (unmittelbares Interesse) յառաջացնել։ Մեզ աւելի ոչինչ չէ հարկաւոր։

Վերջացնելով իմ երկու խօսքս բարեկրօն քահանայ Սահակեանցի դասատետրերի մասին, աւելորդ չեմ համարում հետևեալն աւելացնել. տալ Աստուած, որ Ս. Գ. Ս. այս մեզ համար կարևոր կրօնուսուցման վերանորոգիչ գործիմէջ նոյն եռանդը պահպանէ ինչպէս հիմա և իւր սկսած կարևոր գործը անկատար չը թողնէ։ Նորա երկասիրութիւններն ունին արդէն մեր ազգատիպ գրականութեան պատմութեան մէջ յարգելի տեղ և միշտ վերանորոգիչ ազդեցութիւն կ'ունենան մեր կրօնուսուցիչների դաստատութեանց վերայ։

Բաբ։

P. S. Յաւելով կարդում եմ «Արարատ» ամսագրի մէջ, որ Էջմիածնի ուսումնական-վարչական յանձնաժողովը իւր իրաւունքը չի համարել նոր դասագրքեր թոյլատրել մինչև կաթողիկոսի դալը։ Առանց ինձ իրաւունք համարելու մտնել իրաւաբանական խնդիրների մէջ՝ լոկ մանկավարժական տեսակէտից պէտք է խորին ցաւս յայտնեմ, որ Տէր Տեղակալի իրաւունքի այդպիսի ըմբռնումով մեր ուսումնարանները առ նուազն մէկ տարի պէտք է զրկուեն այսպիսի պատուական ձեռնարկների օժանդակութիւնից, ինչպիսին են վերը գրախօսուած դասատետրերը։

Բաբ.

ՄՈՃՈՒԵԱՆՑ, ՊԵՏՐՈՍ։—«Բանաստեղծութիւններ»։ Աղէքսանդրապոլ. տպարան Աբրահամ Մալխասեանցի, 1892 թ., 68 երես, գինն է 25 կոպէկ։

Այս գրքի մասին ստիպում է խօսել ոչ թէ արժանիքը, այլ այն հանգամանքը, որ լուութիւնը կը խաբէ հեղինակին և նա, իրան չարունակ բանաստեղծ համարելով, իզուր և նոյն իսկ վնասակար աշխատանք կ'անի գրականութեան համար։ Մանաւանդ բանաստեղծի հռչակ ունենալու ցանկութեամբ հիւանդացած է մեր երիտասարդների մի նշանաւոր մասը, որոնք, չնչին բացառութեամբ, նոյնքան զուրկ են բանաստեղծական ընտրուր շնորհքից, որքան և պ. Մոճուեանը։

Սրանց սրատմը բանաստեղծական կրակի տեղ մի ճճի կայ, որ անհանգիստ է անում, ստիպում է մի գործ կատարել, մի փառք

վաստակել. բայց որովհետև չեն կարողանում կամ չի լաջողւում այդ, գողանում են, մուրում են թեմաներ, մտքեր, ալլանդակում են, լանգեր են թխում և անճոռնի լուսահատ աղաղակներով բարձրանում Ոլիմպոսի գագաթը անլալտ՝ չը կորչելու և աւելի բարձր երևալու համար։ Սակայն նոքա չեն խաբել ընթերցող հասարակութեանը և հայոց Մուսալի համար ընդհանուր արհամարհանք են վաստակել, բանաստեղծի նշանակութիւնը ծիծաղելի են դարձրել. այն տեղն են հասցրել, որ «Բանաստեղծութիւններ» վերնագիրը կրող գիրքը շատ անգամ առանց կարդացելու է պախարակւում։

Այդ դժբախտ հերոսներից մէկն է պ. Մոճոռեանը։ Մեր վկան նորա գիրքն է։

Վերջնենք առաջին ոտանաւորը «Մուսայ», որ իբրև գոհար դրած է գրքի ճակատին. —

«Ոլիմպոսի սուրբ գագաթից Արամազդը զայրացաւ, երբ... մի հողեղէն տեսաւ։ Պերսեփոնին հրամայեց նրան Տարտարոս տանել... Դիւցազները սարսափեցին, բայց Մուսայի ահեղ դէմքը չը սարսափեց (զոչաղ դէմք)։ Այն ժամանակ Արամազդը հարցրեց «Ասէք, Հերմէս, Ապոլլոն... դուցէ ձեր է սա (Մուսան) ժառանգ մի երկրային կնոջից։ Եւ Ապոլլոնը չոքեց, ներում աղաչեց։

«Ներում եմ, ասաց Արամազդ,
Բայց դու չտապիր ողջունել,
Ոլիմպոսի բարձունքից
Անմահ հոգւով սլսակել»։

Ապոլլոնը չը գիտեմ ինչպէս հասկացաւ այս հրամանը, միայն «Խոստացաւ Մուսային իր քնար... երգեց տխուր հրաժեշտով (հրաժեշտը), պատուէրներ տւեց» և երկնածին (չէ՞ որ երկրային կնոջից էր ծնւել) վեհ Մուսան հեշտագին սլացաւ Ոլիմպոսի բարձունքից»։

Մուսայի աշխարհ գալու պատմութիւնն է երգի առարկան։ Բայց ինչու համար Արամազդը զայրացաւ և Տարտարոս ուղարկեց հողեղէնին. խեղճը իսկ «անաւոր բարձունքը չը պղծեց։ Ե՞րբ է Արամազդն արգելել հողեղէններին ներքև չրջել-երևալ։ Չէ՞ր կարելի ուրիշ բանով զայրացնել հայր Արամազդին (օրինակ մի ճանճ քթին նստէր, կամ մի օրինակ բանաստեղծութիւններ ստանար Աղէքսանդրապոլից) Մուսայի քաջութիւնը ցոյց տալու համար։ Բայց միթէ Մուսան իւր ահեղ դէմքի չը սարսափելու համար աքսորւած է Ոլիմպոսի գագաթից. և միթէ երկնայիններից աւելի քաջասիրտ է երկրային կնոջ ծնունդը...

Վերջնենք երկրորդ ոտանաւորը «Իմ բեղնտալին».

Բանաստեղծը իւր պարտիզի ծաղիկներից բաժանում է սիրուն լափրուկին (եթէ բեղնտան լափրուկ է, էլ ինչու չը գրել լափրուկ) և զարդ ընտրում իւր սրտին անչուք (!)։ Ցափրուկը զրկւած իւր վիճակից «վարդափթիթ ծաղկի ստերով անուշ հոտ էլ չի տարածում» (?). երգիչը զղջում է, թէ ինչի (ինչու) քաղեց (վերևն էլ ասում է բաժանեցի-ուրեմն պոկել է) իւր քնքուշ ծաղկին և սպասում է (մենք էլ հետը) չորանալուն։ Բայց, լանկարծ, ով հրաչք, ծաղիկը սենեակի մի լուռ անկիւնում ուրախ,

անհոգ սրտով դարձեալ ծաղկում է և բուրում անցածը խսկատ մոռնալով»։ Եւ սրան բանաստեղծը անուանում է «անգութ բազտին հնազանդուել»։ Ստիպած ենք լսանելու պ. Մոճոռեանին, որ քաղած լսփրուվը եթէ իւր անգութ բազտին հնազանդէր՝ պիտի չորանար, ոչ թէ չորանալուց լետոյ դարձեալ ծաղկէր և բուրէր...

Երրորդ ոտանաւորում պ. Մոճոռեանը պատմում է որ «Լաչն ու աղատ կամարում լուսոյ վերջին նշոյլով մի փոքրիկ վարդագոյն ամպ է տեսել սիպտակ թեւերով, չար հողմերի ճանկերում դանդաղ լողալիս, որի սիրտը, սակայն, չտապում է...»։

Բնութիւնը շատ հրաչալի պատկերներ է ստեղծում, բայց բնութեանը ծանօթ մարդը լաչն ու աղատ կամարում այսպիսի հրաչք չի լինիլ տեսած։ Ամպը վարդի գոյն է ընդունում արշալուսի կամ վերջալուսի շողերից. և բոլորովին կարմրում է կամ միայն եզերքն են կարմրում, բայց երբէք չի պատահիլ, որ ամպի մէջը կարմրէր, իսկ եզերքը սիպտակ մնային. այն էլ մի փոքրիկ ամպի։ Փոքրիկ ամպի «լուսոյ վերջին նշոյլը» և «չտապող սիրտն» էլ բնութեան դաղտնիքներ են, որ Ոլիմպոսի այս սիրելիներն են միայն ըմբռնելի։

Այսպէս, կարդով կարելի էր դնալ մինչև այն ցանկալի, խորհրդաւոր բառը, որ կոչւում է «վերջ». բայց բանաստեղծը մեզ կանգնեցնում է իւր դերեզմանի վրայ։ Երես 39 («Գերեզմանիս վերայ, նէյբ օր. Հ. Մ.-ին)։ Այստեղ իմանում ենք, որ բանաստեղծը մեռած է եղել (և այս երազ չէ), օրիորդը նրա վրայ վերջին անդամ մի բուռն սև հող է ձգել լալով, բայց նա իւր չորացած լսփրուվի նման կրկին լարութիւն է առել։

Մի անդամ, երկնքում աստղեր չը տեսնելով, պ. Մոճոռեանը բացանչում է.

«Գոռող Աստած մի ձեզ հանդգրեց
Նախանձելով ձեր աղատ փառքին,
Թէ՞ անողոք մի բռնակալ ձեզ վանեց
Դէպի մութ վայրեր, լաչն Տարտարոսին...» (երես 18)։

Մի ուրիշ անդամ տեսնելով, որ մի աստղ թռաւ, նա հարցնում է.

«Ասէք, աստղեր... աղատ, չատ փայլեր
Նրա լոյսիցը ժայթքեցին...»
(երես 51)։

Այս բոլորի համար պ. Մոճոռեանը մեզ պատասխանում է.

«Դատարկ է սիրտս և ամայացած...
Ա՛խ, Երբ ես տեսել մի չորցած ծաղկի
Բուրել ու բացել դարնան ցողերով»։ (երես 44)։

Եւ այս խոստովանելով հանդերձ դարձեալ ստիպում է մեզ իւր դատարկ ու ամայի սրտում բանաստեղծի խանդ ու ափսուն որոնել, չորցած ծաղկից բուրմունք ընդունել...։

Պր. Մոճոռեանը ոչ թէ զուրկ է թէկուզ փոքրիկ բանաստեղծի երևակայութիւնից ու շնորհքից, այլ և հասարակ լիչողութիւն անդամ չունի։ Նա առաջին տողում ասածը մոռանում է միւս տողում և այդպիսով չառաջանում են խայտառակ հակասութիւններ, որոնք այնքան շատ են և աչքի ընկնող, որ մարդ ամեն մի ոտանաւոր կարդալուց լետոյ ակամայից լիչում է մի ուրիշ այսպիսի

բանաստեղծի նշանաւոր դարձած տողերը.

«Կապոյտ երկնքում աստղեր են փայլում,
Կարկուտ ու կայծակ գլխիս են թափւում»։

Ինքնաստեղծ այլանդակ բառեր ու նախադասութիւններ որքան կամենաք.—մոլեգնալին վշտեր, անշուք սիրտ, չար ճակատագրի անողոք բաղտ, որոտ հրաման և այլն և այլն։

Ցանգերի ու վանկերի մեծ անհամաձայնութեան մասին էլ չենք խօսում։

Պր. Մոճուռեանը նմանութիւններ շատ ունի. (Վտակ, Ամպ, Տէջ ինձ մի քաղցր քուն, Եթէ սիրտս ոչ մի տեղում, և այլն)։ Այս անլիշատակ նմանութիւններն էլ այնքան են յաջող, որ ինձ լիշեցնում են մի ուրիշ բան.—Մեր գիւղացի քարտաշին տալ էին ձիու պատկեր, որ նմանը փորագրի մի քաջ մարդու գերեզմանի վերայ. ուստէն փորագրել էր և ձիու տեղ դուրս էր եկել էջ։

Այստեղ արդէն ժամանակ է բարի խորհուրդ տալու պ. Մոճուռեանին, թողնել բանաստեղծութիւնը և իւր գործը ճանաչել. թէ չէ, ոչ թէ հոդեղէնների անլայտ մեղքերի, այլ այսպիսի բաների համար միայն Ոլիմպոսի սուրբ գաղաթից կը զայրանայ հայր Արամազդը, և գուցէ Տարտարոս էլ ուղարկի։

Յովհաննէս Թումանեանց։

«ՋԱԻԱԽՔԻ ԲՈՒՐՄՈՒՆՔ»-Ի ԱՌԻԹՈՎ.

(Պատասխան «Ջաւախքի բուրմունք»-ի մասին «Մուրճ»-ի № № 7—8 տպւած գրախօսութեան)։

Հասկանալով ազգագրական նիւթերի անհրաժեշտութիւնը ապագայ գիտնական ուսումնասիրութեան համար, ես ամբողջ մի տարի չրջել եմ Ախալքալաքի ամբողջ գաւառը և Պ. Խալաթեանի կազմած «Ծրագիր Հայ ազգագրութեան» առաջնորդութեամբ աչքերովս տեսած և ականջովս լսած բաները միայն նկարագրել, դրի եմ առել, և ապա դոցանից կազմել մի աշխատութիւն, որ կրում է «Ջաւախք» խորագիրը և որ 1600 երեսների մէջ պարունակում է հետեւեալը.

Ա. Հոդոր։ Ջաւախքի անցեալը հայոց և վրաց մատենագիրներից քաղւած. Ջաւախք և Ախալքալաք.—Խրթիզ, Տիւմուկ կամ Թմոկվի, Ծունդա, Դիմուրդօ, Վարձիա կամ Վարձունիք։

Ջաւախքի տեղագրութիւնը, սահմանները, Ախալքալաքի դաշտավայրը, լեռները, լճերը և գետերը, կլիման, բուսականութիւնը, հանքային ջրերը։

Քաղաքական մասն. Ախալքալաք գիւղերի հեռաւորութիւնը քաղաքից, նշանաւոր գետերը, Կարծախ, Բարալէթ, Արազովա, Սաթխա, Գարելովկա և Կալմիկովների (դուխոբորների հոգևոր պետ) բնակարանը, Սուլդա, Սաղամօ։

Հնութիւններ.—Ծունդալի եկեղեցին, Գիւմուրդու եկեղեցին, Հեթում Ա. թագաւորի հաւաքած սուրբ նշխարների տուփը, Թմոկվի կամ Տիւմուկ, Վարչիա, Մանիցգոմ։ Մուրճ, Քռուոզլու բերդը, Սամսարներ և սոցա ապրում գտնուած վայրենին։

Բնակիչները.—բացարձակ թիւ, տների թիւը, բնակիչների թիւը ըստ սեռի, արական սեռի բնակիչների թիւը ըստ հասակի, ըստ ազգութեան, ըստ դասակարգի, ըստ դաւանութեան։ Ընդհանուր ցուցակ բնակիչների։

Ծննդաբերութիւն.—ծնունդների թիւը՝ ըստ ազգութեան, ըստ մարց հասակի, ըստ սեռի։ Օրինաձին և ապօրինի ծնունդներ։ Սոցա դասաւորութիւնը ըստ ամիսների։

Ննջեցեալներ.—թիւը 5 տարուայ ընթացքում, սոցա թիւը ըստ սեռի, ըստ հասակի, ամիսների համեմատ դասաւորուած։ Ննջեցեալների թիւը քաղաքացիների և գիւղացիների մէջ։

Կարնոյ գաղթը, Կարնոյ գաւառ, Էրզրում և նորա գիւղերը, բնակիչները։ Տնտեսական դրութիւնը՝ ա) քաղաքացիների, բ) գիւղացիների։ Կառավարութիւն՝ ա) նահանգի, բ) գիւղերի։ Դալի և Հայթա։ Կարապետ արքեպիսկոպոս.—մանկութիւնը, Կարապետ կուսակրօն, սով, ազգային դանձանակ, Կարապետեան ուսումնարան, ժանտախտ, ռուս-տաճկական պատերազմ, հայերի վրէժխնդրութիւնը տաճիկներից, հաշտութիւն և հայերի գաղթը։

Հալախսու հայ-կաթոլիկներ։

Թրքախսու հայ-կաթոլիկներ։

Խնուսի և Մշի գաղթականներ (Դիլիֆ, Էլդիա և այլն)։

Հայ-բոշաներ, աւանդութիւններ սոցա ծագման մասին, տնտեսական դրութիւնը։

Դուխոբորներ։

Բնակարանը և իւր պարագաները։

Հանդերձանք։

Ջաւախքի բնական և արդիւնաբերական ուժերը և բնակիչների տնտեսական գործունէութիւնը։ Գիւղացիների հողի մշակութիւնը։ ա. Երկրագործութիւն, հողի քանակութիւնը, մի հոգուն, մի գերդաստան բաշխուած հողի քանակութիւնը, արդիւնաբերած հացահատիկները և նոցա քանակութիւնը։ բ. Այգեպանութիւն.—Այգիների թիւը, բռնած տարածութիւնը, արդիւնաբերութիւնը։ գ. Ծխախոտի մշակութիւնը և արդիւնաբերութիւնը։ դ. Պարտիզպանութիւն։ Հայի հաւաբակաց շտեմարաններ։

Անամնապահութիւն։ Մեղապահութիւն։ Թռչնապահութիւն։ Ձկնորսութիւն։ Որսորդութիւն։ Բեռնակրութիւն։ Ցիթեհանք։ Զրաղաց։ Ոստանկութիւն։ Քաղաքացիների.—ա. արհեստներ, %, գործարանների արդիւնաբերութիւնը. բ. վաճառականութիւն, դաւառից արտահանուող և ներքերուող ապրանքները։

Ժողովրդական լուսաւորութիւնը.—Դպրոցներ, դրադարան-ընթերցարան, թատրոն։

Բ. Հոգեոր։ Ընտանեկան բարք և սովորութիւն։

ա. Ամուսնութեան և հարսանեաց սովորութիւններ։ բ. Տղաբերք և կնունք։ գ. Մանկանց դաստիարակութիւն և խաղ։ I. Խաղալիքներ, օրոցքի չլիսչիկ, ֆռռիկ, փաթլդաղ, ֆսխլի, կարկաղա, նեռուանեղ։ II. Առանի խաղեր.—Ձիւռիս ճիթոնա։ Մամի, մամի մէ կրակմ, տու։ Հատիկ-հատիկ։ Թուխթուր-թուխթուր խաչերկաթ։ Զվիվիկ։ Քոռ մամի։ Տընկլաղոչիկ։ Ձի-ձի։ Ծածկալեղուներ։ Նէարդի։

Թրերով խաղեր. I. Գնդակով խաղեր.—գնդակ, սալի, չարխ, զէարնենք դառնանք, քար թոփի, թաքաւորի թոփ, սատանի ֆէօր, աղբերս դիւրկէար չատր կը չինէ։ II. Հողերով խաղեր.—ած-ած, լոփ լոփ, կռճիկ։ III. Վէգերով խաղեր, վէգ, ալչինալում։ IV. Թոկերով խաղեր.—ձնձղիկ-ֆատիլիկ, կորկոտ ապուր։ V. Քարերով խաղեր.—կըռ-կըռ, լեպ։ VI. Թաչիինակով խաղեր.—Քոռ մամի, աչքը խփուկ, հաւկուր, կուկուլուկու։

Առանց իրերի խաղեր։ I. Թռչելու խաղեր՝ Ատտուրմաներ, սալ ու կոճ, վանք բոլորիկ, էրկան էշ էրկան դոմէշ, թումպուլմ, էշակ, Ջանկիմէանկի չարուխք։ II. Վազելու խաղեր՝ Ես տարալ, առաջ չուռ, զէլն աղէսին հասաւ, թէափալմ, ուիւզ։ III. Շրջանաձև խաղեր՝ Պուտ-պուտ, փափախ լետև դրուվ, սատանի չլիսչիս, էս-էս ոտք ճամխել։

Ցուցախաղեր.—լալ օղնի, բէակմ-բէակմ, մատանի, մըզ-մըզ, չոպան-չոպան։

Կլոր պար.—վեր-վեր, քոռ-օղլի, շաւալի, չիրին, ով սիրուն-սիրուն, չէամպար, քեանտրպաղ և այլն։

Լողալ.—թեն լոզ, զորտնլոզ, չան լոզ, քեաղակ։

Պարերի եղանակներ (Ձայնագրել է պ. Ար. Բրտեան)։ Ով սիրուն-սիրուն, չիրին, չախկուր, նոպաթ խանում, հաչտարակ, բաղտագիւլ, ձայնը հնչեց, ուռում-պարի, սեաքմա, քեանտրպաղ, վեր-վեր, չեամպար, շաւալի, բարի գեղեցիկ, հոլոսը նանա, բուլուլ, զէրիկօ, մի տուր, Արտահան, առաւօտեան ժամանակ, դու զով խնդրես, հերիք որդեակը, լեքքին, լետ ու առաջ, թէարս պար։

դ. Ընտանիքի անդամների իրաւաբանական յարաբերութիւնը։

ե. Ընտանեկան կեանքը։

զ. Հիւանդութիւն և բժշկութիւն.—Հիւանդութեան ոգիներ, բժշկարաններ, ժողովրդական դեղեր։

է. Մահ, թաղումն և մեռելոց։

ը. Հոգու և հանդերձեալ կեանքի մասին։

Գ. Հոգոր։ Հաւատք։

ա. Աստուածութիւն, սրբեր, պաշտօն և սպաս եկեղեցական, կրօնական դրուածքներ։

բ. Հրեշտակներ և ոգիներ բարի և չար, սատանայ, պահապան հրեշտակ, բարի և չար հրեշտակներ, տան պահապան հրեշտակ, թթխմորի ոգի, փերի զգի, (ժողովրդական բարբառով պատումներ սոցա մասին)։

գ. Աշխարհաճանութիւն.—հաւատալիք տարրերի, ֆիզիքական երեւոյթների և բնութեան թաղաւորութիւնների մասին։

դ. Կերպարանափոխութիւն, կախարդներ և կախարդութիւններ.—սեռի փոփոխութիւն, պոչաւոր պառաւներ, եղնգի աչել, գարի ցկել, նետդնել, փիլթա-թափելին։

ե. Անոտիապաշտութիւններ։

զ. Բաղդի և ճակատագրի մասին, երազ, տեսիլք և թովչութիւն։

է. Պասերը, ուխտ և ուխտագնացութիւն։

ը. Տարեալ կարևորագոյն տօներն և նոցա առթիւ կատարուող ծէսերն ու ժողովրդական սովորութիւնները։ Նոր տարի, սուրբ Սարգիս, Տեառնընդառաջ (Տէրնդաղ) Մեծ պաս և միջինք, Ծաղկազարդ (զառզարդար), Զարչարանքի շաբաթ, Զատիկ, Համբարձում, Մալիսի 7։

Հայ գրչագիրներ։

Դ. Հոգոր։ Բարբառի ուսումնասիրութիւնը։ Ալէքսանդր Տոմսոնի „Ахалцыхскій говоръ“ գրքի թարգմանութիւնը, Ախալքալաքի բարբառի տարբերութիւնների մասին ծանօթութիւններով։ Բառ և ոճ 2000 հատ։

Ե. Հոգոր։ «Զաւախքի բուրմունք» խորագրով ժողովրդական բանաստեղծութիւններ. բացի տպածից նաև Մանկական երգեր 18 հատ. Սրբոց երգեր՝ Վառվառալ կուսի և Ս. Կարապետի վիճակի երգեր 100 հատ. Աշուղական երգեր 7 հատ։ Ժողովրդական եղանակներ (ձայնագրել է պ. Բրդեան) 50 հատ։ Գաւառի նշանաւոր աշուղների կենսագրութիւններ, Սիալի և Ջիւանի։ Առակներ 26 հատ։ Հեքիաթներ 30 հատ։ Առածներ 300 հատ։

Բառարան հայերէնից բուշերէն և բուշերէն մի քանի երգեր։

Բացի սորանից 27 լուսանկարչական պատկեր. գաւառի տեսարանների, հնութիւնների, տիպերի և այլն, որոնց համար լատուկ լուսանկար է գնացել Աղէքսանդրապոլից։

Այսպիսի մի ընդարձակ ծրագրով աշխատութեան դժուարութիւնները հասկանալի են նոցա, որոնք ոչ թէ գրքերից, լրագրներից և կամ կողմ-

նակի աղբիւրներից հիւսում են իրանց աշխատութիւնները, այլ մտնելով ժողովրդի բոլոր խաւերի մէջ, համբերութեամբ տանում են անպատմելի և միայն գրողին հասկանալի նեղութիւնները և տալիս են ոչ թէ բանաստեղծութիւն և կամ անձնական տպաւորութիւններ, այլ մի իրական, օբյեկտիւ նկարագրութիւն. այդ է եղել, դոնէ, իմ ջանքը և ահա ինչու այս ամբողջ աշխատութիւնը ներկայացնում է հում նիւթ, ուր չկայ իմ անձնական կարծիքս և կամ հայեացքս։ Ես կը վերադառնամ այդ նիւթերի քննութեան, երբ այդ ծրագրով հաւաքած նիւթերը միջոց կը տան համեմատական ուսումնասիրութեան և երբ ես ուսումնասիրելով եւրոպականը՝ պատրաստ կը զգամ ինձ այդ դժուարին գործին։

Միայն այժմ թող ներէ ինձ լարգելի ընթերցողը, որ համեստութեան դէմ մեղանչում եմ պ. Վանցեանի դատապարտութեան դէմ դնելով Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան լանձնաժողովի 1891 թ. որոշումը այդ ամբողջ աշխատութեան մասին, որի միայն մի տասերորդ մասն է տպել։ «Ձեր «Ջաւախք» աշխատութիւնն ըստ ամենայնի լարմար գործ էր կտակարարի նպատակին և արժանի մրցանակի, եթէ ներկայ ժամանակի տեղւոյս քաղաքականութեան ծանր հսկողութիւնն զմեզ զգուշ չը պահէր, քանզի 'ի նմա ոչ սակաւ տեղեկութիւնք կային Կարնոյ անցեալ դէպքերի վերայ մանրամասնութիւններով, որ անկարելի և անհնարին կընէին զայն ի լոյս ածողն վարձատրել։... Պատճառներն քաղաքական են և ոչ գրական» և պ. Խալաթեանի 1889 թ. լայտնած կարծիքը, թէ «եթէ խնամքով դասաւորէք այդ Ձեր նիւթերը, դա կարող է առաջնակարգ տեղ բռնել մեր այդ ճիւղի գրականութեան մէջ»։ Պարզ է, որ այսպիսի մի աշխատութեան տպագրութիւնը հեռու է մի ամսագրի ծրագրից և ծաւալից, հեռու է նաև մի ուսանողի, և նոյն իսկ մեր Հրատ. Ընկեր. միջոցներից և այս է պատճառը, որ այդ աշխատութիւնը հրատարակելու է մաս մաս, ուրեմն և պարոն Վանցեան թող բարի լինի սպասելու, որ իւր պահանջածներն էլ լոյս տեսնեն։ Միայն մի բան, որ սաստիկ լուզել է և ինձ, այդ տպագրական սխալներն են։ Բայց պ. Վանցեան իզուր է մեղադրում ինձ, դա Հրատարակ. Ընկ. անուշադրութեան արդիւնքն է։ Նորա հրատարակած նոյն իսկ գրական լեզուով գրքերը 'լի են տառասխալներով։ Իսկ ինչ վերաբերում է փչիկներով պակաս տառերը լրացնելուն, այդ ես իմ լանցանքս չէ, որովհետև ապագայում միակերպութիւն պահպանելու նպատակով ես ընդունել եմ պ. Խալաթեանի առաջարկած նշաններով տառերը, բայց որովհետև այդ նշաններով տառերը նոր պէտք էր ձուլել տալ, ուստի և Ընկերութիւնը առանց ինձ իմացնելու՝ նշանները զանց է առել։ Եւ եթէ էա հնչիւնը պահպանել է, դա սրբագրողի չնորհիւն է, որ երկկէտ վերագրով ա-ի առաջ տեղ տեղ աւելացրել է տառը։

Պ. Վանցեան առաջ բերելով սխալները՝ ասում է՝ գրած է զլոխ և

գլուխ, Մայրամ և Մարիամ և այլն և ինչու չի հասկանում, որ երկրորդները լառաջացել են սրբագրողի անուշադրութիւնից և ոչ հաւաքողի «չը գիտենալուց»։ Նորան լայտնի էր, որ ես ծրնչվում և այդ հեռաւորութիւնից ես չէի կարող սրբագրել։

Պ. Վանցեան մեղադրում է ինձ թէ չը գիտեմ (!) որ Զաւախքում կան ինքնուրոյն բարբառներով խօսող գաղթականներ, և վերջը ասում է թէ «Անօրէն մարդկանցից ազատելու աղօթքը... Դանէն անցալ թնդիլն էր ծուխ..., պարերգերից շատերը և այլն չեն պատկանում Զաւախքին այլ կամ գաղթած եկեղեցիներն են հետները բերել, և կամ պատահաբար գիտեցել է մի Զաւախեցի։ Այդպէս դատողին խորհուրդ եմ տալիս. նախ քան ուրիշին մեղադրելը, մի մտնի Դիլիֆ, Էշտիա, Թորիա, Ուճմանա և այլն գիւղերից մինը, այն ժամանակ կիմանալ որ այդ գիւղերի բնակիչները Կարնոյ գաղթի ժամանակ գաղթել են Մշից և Խնուսից և Զաւախքի բնակիչ են։ Իմ նպատակս չէ եղել միայն Կարնի գաղթականների մասին նիւթեր հաւաքել, այլ Զաւախքի ամբողջ ազգաբնակութեան և բացի դրանից այդ գաւառաբարբառի նմուշներն անհրաժեշտ են մի գաւառաբարբառի մի ուրիշ գաւառաբարբառի ազդեցութեան տակ կրած փոփոխութիւններն ուսումնասիրելու համար։ Միևնոյն ժամանակ կարիք չկայ այդ երգերի տակ դնել գիւղի անունը, քանի որ երգի մէջ արդէն ասում է. ինչպէս օր՝

Էլեր է Դիլիֆու հուսին,
Կը տանին մեր բդրի լուսին։ (եր. 27).

Իսկ գրքի դեռ չը տպագրած մասում խօսում է այդ գիւղի բնակիչների որտեղից գաղթելու և նոցա առանձնայատկութիւնների մասին։

Վերջապէս պ. Վանցեան ասում է «Մի քանի տեղեր աւելի աննեբելի սխալներ են արած, այսպէս՝

Կովեր ունինք սև ու կարմիր,
Քեզ կթելու մէկ մասն ընտրիր,
Սեր ու կարագ շատ պատրաստիր։

«Ընդգծեալ երկու տողերը, ասում է նա, ժողովրդինը չեն, այլ թխովի, կեղծ ու արհեստական։ Դոքա մեր գրական լեզուով են գրած»։

Կարծում էի, թէ աւելորդ է բացատրել, որ ոչ միայն այդ տողերը, այլ և ամբողջ երգը ժողովրդինը չէ, այլ ժողովրդական մի անհատի, Գանձա գիւղացի Պողոսինը, ինչպէս և երևում է երգի վերջին տնից.

Ես Պողոսն եմ վալ գանձացի,
Տիրունս տարան, ես շատ լացի,
Սէրս գնաց ես որբ մնացի,
Էլեր ես սէյր աննես, սէյր աննես։

Եւ այսպիսի երգերը անհրաժեշտ են ապացուցանելու թէ ինչպէս գիւղացի երիտասարդութիւնը քաղաքացիների, գիւղական ուսուցիչների և ուրիշների հետ շփելով փոքր ի շատէ սովորում է գրական լեզուն, և ձգտում է իւր երգերի մէջ գործածել այն, ինչպէս որ անում են և մեր աշուղները, որոնց պարզ երգերի մէջ շատ անգամ ցցում են խիստ գրաբար բառեր։

Վերջացնելով խօսքս թողնում եմ լարգելի ընթերցողին եզրակացութիւն անելու։

ԵՐԻԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ։

Նոր ստացուած գրքեր

1) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ.—«Հրաւիրակ երկրին աւետեաց». երկրորդ տպագրութիւն։ Հրատարակութիւն եղբարց Կիւլպէնկեան։ 1892 թ., Երուսաղէմ, տպարան Առաքելական աթոռոյ սուրբ Յակոբեանց. գինն է ?։

2) РАФФИ·—„Золотой пѣтухъ“. Переводъ съ армянскаго Н. М. Кара-Мурза. Тифлисъ, 1892 г. գինն է 1 ռուբլի։

3) ՍԻՆԻՅԻՆ, Ա. Պ., ատամնաբոյժ.—«Հանրամատչելի խրատներ բերանի խոռոչի և ատամների խնամատարութեան մասին խոլերայի ժամանակ»։ Թարգմանեց Թիֆլ. քաղաք. բուժարանի ատամնաբոյժ Հ. Ց. Օրբելի։ Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է՝ ամեն տեղ ձրի։

4) ՄՈՁՈՒԵԱՆՑ, Պետրոս.—«Բանաստեղծութիւններ»։ Ալեքսանդրապոլ, տպ. Աբր. Մալխասեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ։

5) ՇԵՔՍՊԻՐ, Վիլլիամ.—«Մակբեթ», ողբերգութիւթիւն հինգ արարածով։ Թարգմանեց Ստ. Մալխասեանց։ Հրատ. Թիֆ. Հրատարակչ. Ընկերութեան։ Թիֆլիս, տպ. Աբոր Նազարեանի։ 1892 թ., գինն է 50 կ.։

6) ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, Յարութիւն.—«Խոլեր, վոդբիլ մէկ արարածով (արտատպած «Ցարազ»-ից)։ Թիֆլիս, տպ. Աբոր Նազարեանի, 1892 թ., գինն է 10 կոպէկ։

7) «ԱՐԱՌՍ», գրական և գեղարուեստական պատկերազարդ հանդէս. Հրատարակիչ Ս. Գուլամիրեանց։ 1892 թ., չորրորդ տարի, Գիրք Ա. Ս. Պետերբուրգ, տպ. Լիբերմանի. գինն է 2 ռ. 50 կոպէկ։

8) ԲՐՈՌԷՐ, Ռաուլ.—«Փորձանքների (?) բժշկական». սկզբնական օգնութիւն մինչև բժշկի գալը. թարգմ. ֆրանսերէնից Գ. Օհանեան։ Հրատ. Թիֆլ. Հրատարակչ. Ընկերութեան № 60. Թիֆլիս, տպար. Աբոր Տ. Նազարեան, 1892 թ., գինն է 20 կոպէկ։

(Շարունակ. տես ներկայ համարի վերջը)։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ ՐԵՖՈՐՄ

II.

Մեր թեմական դպրանոցների ներկայ կառավարութեան վատութիւնը պարզած է եղել ամենքին, ովքեր միայն մօտ յարաբերութիւն են ունեցել դպրանոցների հետ։ Բայց ամենքը միևնոյն եզրակացութիւնները չեն դուրս բերել այդ դիտողութիւնից։ Դպրանոցների հոգաբարձութիւնների հակադպրոցական արարքների և կամ ուղղակի նոցա անձեռնհասութեան առիթով մեզ պատահել է լսել երեք տեսակ կարծիքներ. առաջինը սա է, թէ պէտք է վատերի կամ վատ կարծած հոգաբարձուների տեղ ընտրել լաւերին. երկրորդը սա է, և այդ կարծիքը պակաս չէ տարածուած, թէ չարիքի առաջն առնելու համար՝ հարկաւոր է, ուսումնական մասին վերաբերեալ, դպրանոցների տեսուչներին տալ լիազօր իրաւունքներ. և այդ դէպքում մանկավարժական ժողովների վճիռները լինեն տեսչի համար ոչ թէ պարտաւորիչ, այլ մնան որպէս խմբի կարծիքներ, որոնցից այսպէս կամ այնպէս օգտուելու իրաւունքը կը մնայ տեսչին։ Երրորդը այս կարող էր լինել, թէ դպրանոցի ուսուցիչները, նախագահութեամբ տեսչի, կազմեն այսպէս կոչուած մանկավարժական ժողովներ, որոնց վճիռները, կայացրած ձայների մեծամասնութեամբ, լինեն պարտաւորիչ տեսչի համար.

Ահա այն բոլոր միջոցները, որոնցից ամեն մէկը կարող է մեր հասարակութեան, կամ ուսումնարանական շրջաններում իւր պաշտպաններն ունենալ։ Մեր առաջին յօդուածում դպրոցական-վարչական ռեֆորմի մասին՝ չարիքի առաջն առնելու համար մենք առաջարկեցինք կազմել մի Ուսումնական Հոգաբարձութիւն, որ ուսում-

նական վերահսկողութիւն ունենար մեր բոլոր թեմական դպրանոց-ների վերայ, ընտրուած լիներ դոյութիւն ունեցող մեր բոլոր թեմական դպրանոցների հոգաբարձուների ձայների առաւելութեամբ և հաստատուած լիներ Վեհափառ Կաթողիկոսից, որին, Պոլոժենիէյի համաձայն՝ պատկանում է գերագոյն պատասխանատուութիւնը և իշխանութիւնը մեր բոլոր դպրոցների համար։

Դպրոցական-վարչական փոփոխութեան միւս ձևերը մենք հա-մարում ենք աննպատակայարմար. և թէև այդ հեշտ նկատելի է, բայց և այնպէս հարկաւոր ենք համարում նոցա քննել, ինկատի ունենալով այն պաշտպանութիւնը որ կարող է նոցանից իւրաքան-չիւրը գտնել թէ ժողովրդի մէջ առհասարակ և թէ դպրոցական շրջաններում մասնաւորապէս։

Նոքա, որոնք ապացուցած չարիքի դէմ ուզում են առնել եղած հոգաբարձութիւններից աւելի լաւ հոգաբարձական կազմ ստեղծելով, որ նոյնն է թէ այս ու այն հոգաբարձուների տեղ հա-մոզելով ժողովրդին ընտրել ուրիշ՝ իրանց կարծիքով աւելի լաւ՝ հո-գաբարձուներ,—դոքա իսկապէս վարչական բեմֆորմի անհրաժեշտու-թիւնը չեն տեսնում։ Բեմֆորմ չէ մէկի տեղ միւսին ընտրելը. այն կարելի է անչափ լաւացնել, անչափ աղնուացնել մի կոլեգիայի, մի հաւաքական մարմնի կազմը, բայց երբ այդ կոլեգիային տրուած են լինում լիազօրութիւններ այնպիսի խնդիրներ վճռելու, որոնց հա-մար նա ձեռնհասութիւն չունի, այն ժամանակ այդ կոլեգիայի ամենալաւ կազմն անգամ չի կարող վերացնել նորա օրգանական պակասութիւնը։ Դպրանոցների հոգաբարձութիւններ ընտրողները՝ ինքը ժողովուրդն է. բայց ժողովուրդը շատ աւելի ընդունակ է ընտրել ժողովրդի և ազգի ընդհանուր շահերը հասկացող և հաւա-տարիմ մարդկանց, քան ընտրել անպատճառ դպրոցական շահեր հասկացող մարդկանց, թէկուզ ծխական պատգամաւորների միջոցով։ Բայց եթէ ժողովուրդը ընտրի էլ դպրոցական գործը հասկացող մարդիկ—իսկ դորա համար ոչ մի երաշխաւորութիւն չկայ—այնուա-մենայնիւ սոքա, ներկայ կանոնադրութիւնների համաձայն, ռոճի-կաւոր պաշտօնեաներ չեն, հետևապէս դպրոցից շատ հեռու գործե-րով զբաղուած մարդիկ են, որոնք միայն ժամանակ առ ժամանակ կարող են շաբաթը մի երկու ժամ նուիրել այդ գործին, մինչդեռ

լիազօր կերպով ղեկավարելու համար պէտք է շարունակ հետաքրքրուած լինել։ Դպրանոցի ղեկավար տեսուչը — ենթադրենք անգամ թէ գերագանց տեսուչ է, — իւր ղեկուցումները սոփլուած է տալ ոչ դպրոցական մարդկանց ժողովին և սոցա մեծամասնութեամբ կայացրած վճիռներին հետևել դպրոցական մանկավարժական բոլոր խնդիրներում։ Այժմեայ կազմակերպութեամբ ուսուցիչները և տեսուչները մնում են առանց բարձր կոմպետենտ ղեկավարութեան, մի բան որ չկայ ոչ մի յառաջադիմական երկրում, իսկ դա մի պակասութիւն է, որի դէմ չի կարելի առնել մէկ հոգաբարձուի տեղ միւսին ընտրելով. հոգաբարձու խօսքը հասկանալով այն իմաստով, ինչ իմաստով որ նա գործ է ածւած ցայժմեայ կանոնադրութիւնների մէջ, և ինչպէս որ կայ այժմ։ Զրկւած ղեկավարութիւնից, նոքա մնում են նաև առանց բարոյական վարձատրութեան, որ կարող է տալ գործիչներին մի կոմպետենտ հաստատութիւն։

Հոգաբարձութիւնների կազմը լաւացնելու ձգտումը արդարացի է, կարևոր է, անհրաժեշտ է՝ ինչ սիստեմի տակ էլ որ ընկնեն մեր դպրանոցները. բայց այն պակասութիւնները, որոնց պատճառով մեր դպրանոցները բարեկարգ վիճակի մէջ լինելուց հեռու են՝ չեն վերացրիլ հոգաբարձուների փոփոխութիւնով։ Հոգաբարձութիւնները այնքան զուրկ են հեղինակութիւնից, որ ոչ մի ուսուցիչ և ոչ մի տեսուչ մեզանում անպատուաբեր չի համարիլ իրան համար, եթէ նա արձակւի դպրոցից առանց ցայլ և այլութեան։ Եւ դորա հակառակը՝ մեզանում ոչ մի ուսուցիչ կամ տեսուչ աւելի հեղինակաւոր չի դառնում և առհասարակ անուն չի վաստակում հէնց նրա համար, որ կարողացել է երկար տարիներ միևնոյն դպրոցում ծառայել։ Ոչ արձակւելն է անպատուութիւն, ոչ մնալն է արժանիք համարւում, — ահա դպրոցական ծառայողների բարոյական վիճակը ներկայ դպրոցական կազմակերպութեան ներքոյ։ Այդպիսի դրութեան մէջ կարելի է միայն գործը քարշ տալ, բայց ոչ վարել, բառիս լաւագոյն մտքով։ Եւ հէնց միայն այդ հանգամանքը ամենավատ յանձնարարականն է որ կարելի է տալ որ և է կազմակերպութեան համար։ — Պակասութիւնը սիստեմի մէջն է և ոչ թէ մարդկանց մէջ. ինչպէս որ լաւագոյն տեսուչները չեն կարողացել և չեն էլ կարող աւողական գործ կատարել, իրանց դիմաց ունենալով լիա-

զօր հոգաբարձութիւններ, այնպէս էլ լաւագոյն մարդիկ չեն կարող բառիս բարձր իմաստով հոգաբարձուներ լինել, քանի որ այժմեայ լիազօր և անպատասխանատու հոգաբարձութիւնների սիստեմը ինքը շատ պակասաւոր սիստեմ է։

II. Տեսնենք այժմ թէ որքան ընդունելի է այն միտքը, որով ներկայ վարչական սիստեմի պակասութիւնների դէմ կարելի է համարւում առնել՝ դպրանոցների տեսուչներին այժմեանից աւելի լայն իրաւունքներ տալով։ Ներսիսեան դպրանոցի ներկայ կանոնադրութեան համաձայն տեսչին ընտրում և արձակում է հոգաբարձութիւնը, հաստատում է Կաթողիկոսը։

Տեսուչը հսկում է դպրանոցի ուսումնական մասի վերայ, վերահսկողութիւն է անում ուսուցիչների դասաւանդութեան վերայ, յաճախելով նոցա դասերին, նախագահում է մանկավարժական ժողովներին, հսկում է աշակերտների բարոյականութեան վերայ, զեկուցումներ է տալիս հոգաբարձութեան այդ ամենի մասին, նոր առաջարկութիւններ է անում հոգաբարձութեանը այս ու այն փոփոխութիւնների մասին ուսուցչական խմբի կամ դպրոցական որ և է այլ խնդրի վերաբերմամբ։ Եւ այս բոլորի նկատմամբ տեսուչը պարտաւոր է սպասել հոգաբարձութեան մեծամասնութեան վճռին։

Նոքա, ովքեր ուզում են որ դերերը փոխուեն, կ'ուզէին որ հոգաբարձութիւնից ընտրուած և կաթողիկոսից հաստատուած տեսուչը լիազօր կերպով տնօրինէր դպրանոցի ուսումնական մասի վերայ, կազմէր ուսուցչական խումբը իւր կամքի համաձայն, կարգադրէր ամեն ինչ լիազօրութեամբ։

Որքան տանելի է սակայն մի այդպիսի դրութիւն։ Եթէ տեսչին ընտրէն ու արձակելը կրկին հոգաբարձութեանը կը պատկանի, այդ հոգաբարձութիւնը, զրկուած լինելով ուսումնական մասին տեղեկանալու հետաքրքրութիւնից, չի էլ կարող գիտակցաբար տեսուչներ փոխել։ Տեսուչներ ընտրող և արձակող հոգաբարձութիւնը այդ դէպքում կարող է ղեկավարուել անձնական կրքերով, անձնական յարաբերութիւններով դեռ աւելի էլ մեծ չափերով քան այժմ է կատարւում, չը նայած որ բան երևութին աւելի հեռուել մարդիկ փոփոխելու բնազդմանը գրեթէ անհնարին է։

Դպրանոցի տեսչին տալ լիազօր իրաւունքներ և միևնոյն ժա-

մանակ տեսչին ընտրելու և արձակելու իրաւունքը հոգաբարձութեանը թողնել, այն հոգաբարձութեանը, որից ուսումնական մասի մէջ խառնուելու իրաւունքը դորանով իսկ խլւում է,—դա այնքան անհեթեթ մի կոմբինացիա է, որ չի նստում մարդու ուղեղում։

Մեզ կ'ասեն՝ որպէս զի հոգաբարձութիւնը չը կարողանայ կոյր կրքերին հետևել, տեսուչը կ'ընտրուի երկար տարիներով, օրինակ 6 տարով, որպէս զի նա կարողանայ այդ ժամանակամիջոցում առաջին դասատնից մինչ վեցերորդ ու վերջին դասատունը սերունդ հասցնել։

Արդ, որքան խելացի է 6 տարով տեսուչ ընտրել տալ մի հոգաբարձութեան, որի անպատասխանատուութիւնը և անձեռնհասութիւնը ակներև կերպով ապացուցած է։ Մի սխալ ընտրութիւն բաւական է որ մի ահագին դպրոց և մի ամբողջ սերունդ դորանով չարաչար տուժեն։ Իսկ սխալ ընտրութիւններ շատ հեշտ են, երբ ընտրութեան գործում հետաքրքրուած չէ ամբողջ ժողովուրդը, ընդհանուր կարծիքը կամ երբ պատասխանատուն մի ձեռնհաս հաստատութիւն չէ։

Բացի այդ բոլորից, դժուար է երևակայել, որ մի հատ մարդ, որ դպրանոցի ուսումնական մասի կատարեալ տէրը կը լինի 6 տարի շարունակ, կարողանայ ամենայն արդարամտութեամբ վերաբերուել դէպի ուսուցիչները և ի չարը գործ չը դնել իւր լայն իրաւունքները։ Փոքր ի շատէ պատուազգաց ուսուցիչ անկարելի է որ ընդունի տեսչի մօտ ծառայութեան մնալ, մի տեսչի, որը ինքը աւելի բարձր և ձեռնհատ մի հաստատութեան կոնտրոլի ներքոյ չի գտնուում։ Լիազօր տեսուչների օրօք ուսուցչական դասակարգի բարոյական վիճակը ամենազգալի կերպով կ'ընկնի, անհամեմատ աւելի քան ներկայ հոգաբարձութիւնների լիազորութեան օրերով։ Թերևս այն դէպքում մենք ունենանք աւելի համերաշխ ուսուցչական խմբեր, բայց այդ խմբերի բարոյական և մտաւոր մակերևոյթը այժմեանից աւելի ստոր կը լինի։ Այդ հաստատ է։

Աւելացնենք, որ այդ սիստեմով դպրանոցները առաջնայ պէս մնում են առանց որ և է կապի իրար հետ և զուրկ՝ մի աւելի ընդհանուր վերահսկողութիւնից։

Մի առանձին դէպք չի ներկայացնում այն, որ մանկավար-

ական ժողովները խորհրդակցական ձայն ունենան։ Լիազօր տեսուչների կառավարութեան ներքոյ մանկավարժական ժողովները չեն կարող ուղղել այն պակասութիւնները, որոնք սիստեմի արմատումն են։

III. Բայց առանձին դէպք է ներկայացնում այն, եթէ մանկավարժական ժողովների վճիռները պարտաւորիչ նշանակութիւն ունենային։ Այդ դէպքում կշռի ծանրութիւնը դպրոցը ղեկավարելու գործում՝ անցնում է տեսչից ուսուցչական ժողովին։ Քննենք և այդ դէպքը։

Մանկավարժական ժողովը, իբր գլխաւոր կարգադրող դպրանոցի ուսումնական մասին, երկու կերպ կարող է կազմուած լինել, նայած թէ ով է ուսուցիչներին նշանակողը՝ հոգաբարձութիւնը թէ տեսուչը։ Ստեղծել մի դրութիւն, որ տեսուչը անպայման հնազանդի այն ժողովի անդամների վճիռներին, որոնց նա ինքն է նշանակել, անկարելի է թւում մեզ, եթէ չենք ուզում որ տեսուչը, օգտւելով իրան յատկացրած իրաւունքից, շարունակ արձակի այն ուսուցիչներին, որոնք մանկավարժական ժողովներում իւր հայեացքների դէմ են։

Ենթադրենք ուրեմն թէ հոգաբարձութիւնն է ուսուցիչներ նշանակում, ինչպէս այժմ է։ Այդ դէպքում տեսչին երկար տարիներով, դէցուք 6 տարով, պայմանաւորած պահելը բոլորովին միտք չունի, այլ ընդհակառակը այդ դէպքում կարող է միտք ունենալ ուսուցիչներին որոշ, օրինակ 6 տարով՝ պահելը։

Եթէ անորոշ ժամանակով է նշանակուած տեսուչը, և մանկավարժական ժողովն է գլխաւոր կարգադրողը, որի անդամները տեսչի հետ կարող են նաև դաշափարական կապ չունենալ, այն ժամանակ տեսուչը ներկայանում է միմիայն որպէս գործադրող մանկավարժական ժողովների վճիռների։ Դա մի դաւ չէ, եթէ միայն հոգաբարձութիւնից նշանակած մանկավարժական ժողովը կարողանայ վերացնել այժմ նկատուած պակասութիւնները մեր դպրանոցների ուսումնական կառավարութեան մէջ։ Արդ, մեր մատնանիշ արած պակասութիւններից մէկը սա է, որ մեզանում ուսումնարանները չունեն մի բարձր ուսումնական իշխանութիւն, որը գլխաւոր ղեկավար հանդիսանար հայոց դպրոցական գործի առհասարակ. մի հատուա-

տութիւն, որը վայելէր բաւականաչափ մեծ հեղինակութիւն՝ քննելու դպրոցական գործերը, ուսուցիչներին և տեսուչներին օգնել կարողանար իւր հրահանգներով և քննութիւններով, մտաւոր և ոգեկան կապ ստեղծէր մեր թեմական բոլոր դպրոցների մէջ և նոցա ու Էջմիածնի ճեմարանի մէջ։ Արդ, ամեն մի դպրանոցի ուսուցչական ժողովները առանձին-առանձին վերցրած՝ ի՞նչպէս կարող են այդ դերը կատարել։ Այստեղ խնդիրը մեր ուսումնարանների և յատկապէս մեր դպրանոցների մտաւոր և ոգեկան ընդհանուր մակերևոյթը բարձրացնելու մէջն է, մի խնդիր որ չի կարող լուծուել, եթէ այժմեայ հոգաբարձութիւնների և տեսուչների իրաւունքները յատկացնենք դպրանոցներում ծառայող ուսուցիչների պատահական և հետերոգէն տարրերից բաղկացած խմբերին։

Մենք կարծում ենք որ բաւական կարելի է համարել քննութիւնը այն սիստեմների, որ կարող են առաջարկուել դպրանոցների վարչական ռեֆորմի մասին, հակադրութեամբ այն սիստեմի, որ մենք առաջարկեցինք մեր առաջին յօդուածում այդ մասին։ Մեր եզրակացութիւնն է, որ ոչ մի զգալի բարենորոգում չի կարելի սպասել ոչ այն դէպքում, եթէ՝

1. Գոհանանք հոգաբարձութիւնների կազմը նորոգելով, ոչ էլ եթէ՝

2. Դպրանոցների տեսուչներին տուեն ուսումնական մասի համար լիազօր իրաւունքներ, և ոչ եթէ՝

3. Դպրանոցներից ամեն մէկի մանկավարժական կոչուած ժողովներին տուեն նոյն իրաւունքները։

Այդ սիստեմները կամ հակավարչական են և ուրեմն աւելի վատ քան եղածը, և կամ չեն լուծում առաջադրած խնդիրը։

Ամեն երկրում, ուր կան ուսումնարաններ, կան նաև ուսումնարանների կառավարչական գլխաւոր օրգաններ։ Այդ օրգանները՝ ամեն երկրում հանրային կրթութեան մինիստրութիւններն են, որոնց կից լինում են տեղ-տեղ նաև ուսումնարանական բարձրա-

գոյն խորհուրդներ, կազմեաց երկրի ուսումնարանական գործիչների լաւագոյն ոյժերից։ Դոցա նման բան մենք ոչինչ չունենք։ Այդ բոլորի տեղ մենք ունէինք մի ժամանակ միայն մի բան՝ հոգաբարձութիւններ թէ թեմական և թէ ծխական դպրոցների համար, որոնք և ֆակտիկական տէրերն էին մեր ուսումնարանների. ժամանակով աւելացուեց ծխական դպրոցների համար թեմական վերատեսուչների հաստատութիւնը, որով ամեն մի թեմի ծխական դպրոցները ընկան մի վերատեսչի վերահսկողութեանը տակ. ծխական դպրոցների հոգաբարձութիւնները այսպիսով իրանք ենթարկուեցին մի յայտնի չափով ընդհանուր վերահսկողութեան։ Թեմական վերատեսչութեան հաստատութիւնը, հոգաբարձութիւններ հաստատելուց յետոյ՝ երկրորդ քայլն էր դպրոցական-վարչական կազմակերպութեան գործում ռուսահայերիս մէջ. մի հաստատութիւն, ուր մինչ 1885 թուականը հոգևոր բարձր իշխանութիւնը ազատ կերպով գործում էր աշխարհականների միջոցով, որոնց միջից դլխաւորապէս նշանակւում էին թեմական վերատեսուչները։ Յայտնի է սակայն, որ 1885 թուականի մարտից մինչ 1886 թուականի սեպտեմբերը՝ ծխական դպրոցների փակելով դադարեց նաև թեմական վերատեսչութիւնը, որ վերականգնուեց նորից միայն 1889 թուականից, բայց արդէն այնպէս, որ միայն հոգևորականներ կարող էին նշանակուել այդ պաշտօնում։

Մենք այս բոլորին դեռ չենք քննում թեմական վերատեսչութեան արժէքը ներկայ պայմանների կամ վարչական սիստեմի մէջ, այլ միայն պատմում ենք թէ դպրոցական-վարչական կազմակերպութեան համար մեզանում ինչ քայլեր են եղած։

Մի երրորդ քայլ, ըստ մեզ, արուած պէտք է համարել կաթողիկոսական կոնդակով 1890 թուից, որով հաստատուեց էջմիածնում Ուսումնական-Վարչական Յանձնաժողովը։ Այդ յանձնաժողովի մասին կոնդակը, որքան մեզ յայտնի է, հրատարակուած չէ. բայց այսքանը յայտնի է, որ ուսումնական-վարչական յանձնաժողովին, որի անդամները նշանակւում են Վ.Եհ. Կաթողիկոսից, յանձնուած է դասագրքերի թոյլատրութեան և ծխական-ուսումնարանների ուսուցիչների և վարժուհիների ընդունելութեան մասին հայ ուսուցչական դասակարգի մէջ՝ վճիռներ կայացնել կամ այդ մասին Վ.Եհ. Կաթողիկոսին զեկուցումներ ներկայացնել։

Ահա մեր ուսումնարանական-վարչական կազմակերպութեան պատմութիւնը լայն գծերով։

Ինչ կազմակերպութիւն է այդ սակայն։ Դա իսկապէս մի կազմակերպութիւն չէ, այլ իրար հետ լաւ չը կապուած օղակներ մի կազմակերպութեան որ գոյութիւն չունի։ Թեմական վերատեսուչը մի մանկավարժական օրգան չէ մեզանում, այլ այսպէս ասած՝ միայն իշխանութեան ձեռք. թեմական վերատեսուչը թեմական առաջնորդի օգնական է, որը, անկասկած, յաչանի ծառայութիւններ է մատուցանում՝ օգնելով հոգաբարձութիւններին աւագուսուցիչներ և ուսուցչո հ. գտնելու, հսկելով ծխակ. ուսումնարանների գէթ արտաքին բարեկարգութեան վերայ, ստուգելով ուսումնարանների հաշիւները և այլն, բայց նա հրահանգիչ օրգան չէ դաստիարակութեան, կրթական գործի. և այնպէս, ինչպէս դրուած է գործը այժմ, թեմական վերատեսչին այդպիսի դեր չի էլ կարելի տալ։

Այժմեայ վարչական quasi կազմակերպութեան վերջին օղակը՝ Էջմիածնի Ուսումնական-Վարչական Յանձնաժողովն է, որի անդամներին նշանակում է Կաթողիկոսը։ Յանձնաժողովին յատկացրած իրաւունքները և պարտականութիւնները մենք վերևը տեսանք. դրա են՝ ուսուցիչների և դասագրքերի ցանկեր կազմելը ծխական դպրոցների համար, հետևապէս և այդ կէտերի վերաբերմամբ թեմական վերատեսուչների կողմից արուած կարգադրութիւնների քննութիւնը։

Նկատեցէք որ թեմական վերատեսչութիւնը ոչինչ գործ չունի թեմական դպրանոցների հետ և նոյնն է Էջմիածնի ուսումնական վարչական յանձնաժողովի կոմպետենցիան։ Նաև այդ յանձնաժողովը վերաբերում է միայն ծխական դպրոցներին։ Հետևապէս ծխական դպրոցների վարչութեան կազմակերպութեան խնդիրը լուծելու համար մեզանում եղել են գէթ փորձեր, թէև ստեղծուած դրութիւնը որքան և իցէ բաւարար մենք համարել չենք կարող։ Մինչդեռ թեմական դպրանոցների վարչական կազմակերպութեան խնդրի լուծումը 60-ական թուականների սկսբից դէս ոչ մի քայլ դէպ առաջ չի արել. և մենք աւելին կ'ասենք՝ 60-ական թուականների սկզբից դէս թեմական դպրանոցների վարչութեան ռեֆորմի խնդիր չի եղած, չը նայելով որ ամենքի ականջը խլացել է հոգա-

բարձրութիւնների, տեսուչների և ուսուցիչների փոխադարձ հայ-հոյելուց, աղմկալի բանակռիւներից։ Բայց այդ ամենից աւելի կարևորը այն է՝ որ ներկայ կազմակերպութիւնը պահում է մեր թեմական դպրանոցները սոսոր դրութեան մէջ։ Դպրանոցների ներկայ վարչական կազմակերպութիւնը, որ իրապէս կայանում է հոգաբարձութիւնների վարչական լիազորութեան մէջ, բանը այն տեղը կը հասցնի, որ մեր դպրանոցները կը դառնան ինչ որ անժամանակեայ հաստատութիւններ։ Բայց այն ժամանակ մեր հանդամանքներում թերևս ամենաբարի ցանկութիւնն անգամ անզօր լինի խանդարուած գործը ուղղելու. չարիքը ակներև է, պակասութիւնները անժխտելի, խնդրի կարևորութիւնը անուրանալի։ Դիմենք խնդրին քանի որ դեռ շատ չէ ուշ։

Այսօրեայ օրս խնդիրը կարող է միայն նրանում լինել, որ մի քայլ անուի դէպի առաջ։ Ինչպէս որ դպրոցական-վարչական գործում մի քայլ արուեց դէպի առաջ, երբ, 60-ական թուականներին, ներկայ հոգաբարձութիւնները հաստատուեցին, այնպէս էլ այսօր մեր դերը կարող է լինել՝ մի քայլ էլ աւելի առաջ անել՝ համեմատ ներկայիս պահանջներին, քանի որ այժմեան պահանջները երեսուն տարի առաջ եղած պահանջները չեն։ Առաջեայ լուծելու խնդիրը սա էր, որ մեր դպրոցների վիճակի հետ կապուած լինի ժողովուրդը։ Այդ խնդիրը լուծուեց՝ երբ ստեղծուեց այն հոգաբարձական հաստատութիւնը, որ ցայժմ դրեթէ անաղարտ կերպով գոյութիւն ունի։ Այն, ինչ կարելի էր լոկ այդ հաստատութիւնով կատարել՝ արդէն կատարուեց. բայց այժմեայ դպրոցական պահանջները առաջեանից բարդ են, դպրոցներից աւելի է պահանջւում, քան թէ այն ինչ կարող են տալ դպրոցական սֆերայից հեռու այլ և այլ պրոֆեսիաների տէր մարդկանցից բաղկացած հոգաբարձութիւնների կառավարութիւնները։ Ժամանակ է որ այժմեանից սկսած մեր դպրոցների և մանաւորապէս դպրանոցների ուսումնական կառավարութիւնը կապուած լինի մի աւելի ձեռնհաս հաստատութեան հետ։ Մենք այդ հաստատութիւնը անուանում ենք Ուսումնական Հոգաբարձութիւն, որի հսկողութիւնը պէտք է տարածուի մէկ կողմից բոլոր թեմական դպրանոցների և միւս կողմից բոլոր ծխական դպրոցների վերայ, վերջիններիս նկատմամբ՝ թեմական վերատեսուչների միջոցով։

Մեր ծրագրով ամեն մի դպրանոց կ'ունենայ իւր հոգաբարձութիւնը առանձին առանձին, ինչպէս և այժմ է, բայց բոլոր դպրանոցների վերայ էլ հասատուած կը լինի մի ընդհանուր Ուսումնական Հոգաբարձութիւն։ Ծխական դպրոցները կ'ունենան հոգաբարձութիւններ, ինչպէս այժմ է. թեմը կ'ունենայ իւր թեմական վերատեսուչը, իսկ թեմական վերատեսուչները կը հրահանգուեն նոյնպէս Ուսումնական Հոգաբարձութիւնից։

Այն սկսբունքը, որը փրկարար դեր է կատարել մեր ազգային ու ժողովրդական կարևորագոյն գործերում, և ոչ աւելի պակաս նաև դպրոցական գործում, այն է ընտրողական սկսբունքը, այդ պէտք է պահպանել նաև Ուսումնական Հոգաբարձութիւնը կազմելու համար։ Էջմիածնի ուսումնական-վարչական յանձնաժողովը հէնց նրանով բաւականին անժողովրդական է, որ նորա անդամները միայն նշանակուած անձեր են և ոչ ընտրուած, էլ չը խօսելով այն բանի մասին, որ նրան յատկացրած դերը շատ սահմանափակ է և նորա անդամների համար այդ պաշտօնը կողմնակի պաշտօն է։ Մեր կարծիքով ուսումնական-հոգաբարձութեան կազմի համեմատական լաւութեան համար ամենամեծ դրականը կարող է տալ հնաւուրց ընտրողական սկսբունքը։ Ուսումնական հոգաբարձութիւնը չը պէտք է լինի մի առանձին բան՝ դրուած հոգաբարձութիւնների կողքին, այլ նա պէտք է բխած լինի սոցանից։ Եւ ինչպէս որ հոգաբարձութիւնները բղխում են ժողովրդի կամ սորա ընտրած պատգամաւորների ընտրութիւններից, այնպէս էլ Ուսումնական Հոգաբարձութիւնը պէտք է բղխի բոլոր թեմական դպրանոցների հոգաբարձուների ընտրութիւնից, հասատուութեամբ Վ.Ե.Հ. Կաթողիկոսի։

Այսպիսով կազմուած Ուսումնական Հոգաբարձութիւնը կը ներկայացնի ժողովրդի ինտելիգենցիայի մէջ եղած դաղափարների հոսանքների արդիւնքը. իսկ եթէ նա այդ բանը կը ներկայացնի՝ այդ արդէն ինքը մի կարևոր կրթական նշանակութիւն կ'ունենայ ազգի համար ընդհանրապէս։ Այսպիսով ընտրուած Ուսումնական Հոգաբարձութիւնը կը լինի դպրանոցների հոգաբարձութիւնների համար և՛ օգնական և՛ իշխանութիւն միաժամանակ։ Բղխած լինելով ընտրութիւններից՝ նա կ'արտափայլի մի յայտնի չափով նաև մեր կրթական ոյժերի իշխող կարծիքները։

Մեզ կարող են հարցնել՝ եթէ այժմեան հոգաբարձութիւնները բաւարարութիւն չեն տալիս մեր պահանջներին, ինչ հիմք կայ կարծելու թէ նոցանից ընտրուած Ուսումնական Հոգաբարձութիւնը նոյն պակասութիւնները չի ունենալ։ Դորա պատասխանը պարզ այս է՝ որ ժողովրդից ընտրուած մարդիկ կարող են իրանք անձեռնհաս լինել մի որոշ գործ կառավարելու, բայց նոքա կարող են ձեռնհաս լինել այն մարդկանց ընտրելու, որոնց մասին հասարակաց կարծիքը դաղափար է կազմել թէ նոքա դպրոցական գործը կարող են դեկավարել։

Ուսումնական հոգաբարձութեան անդամները կը լինեն պաշտօնեաներ, որոնք ամբողջովին նուիրուած կը լինեն իրանց գործին։ Այդ հաստատութիւնը առ ի պաշտօնէ կը հետևի դպրոցական գործին նաև այլ երկիրներում, մանկավարժական և առհասարակ դպրոցական գրականութեանը, կարևոր նիւթերը կը հասցնի դպրոցների ուսուցիչների և տեսուչների գիտութեանը, մինչև այժմեայ կազմակերպութեան ներքոյ այդ մասին խօսք անգամ չի կարող լինել։ Ունենալով դպրոցների դեկավար մի այդպիսակ հաստատութիւն, ուսուցիչները իրանց պարտաւորուած կը տեսնեն հետևել գրականութեանը և ոչ թէ իրանց ժամանակը վատնել ապարդիւն ընդհարումների վերայ, որոնց մեծ մասը յառաջանում է հէնց ձեռնհաս ու կոչումն ունեցող դեկավարների պակասութիւնից և կամ ննջել այն ինքնագոհութեան զգացմունքի մէջ, որ ուսուցիչը, բացի ուսուցանելուց՝ իբր թէ ուսանելու պարտաւորութիւնից ազատ է։

Ուսումնական հոգաբարձութիւնը կոչուած կը լինի դեկավարելու նաև ծխական-եկեղեցական դպրոցները, բայց միայն իւր առաջարկած և թեմական առաջնորդներից հաստատուած թեմական վերատեսուչների միջոցով։ Այդպիսով կապ կը ստեղծուի թեմական դպրանոցների մէջ և նոցա ու ծխական դպրոցների մէջ, մի կապ, որ ներկայումս գոյութիւն չունի։

Ներկայումս ծխական դպրոցներում աւագ-ուսուցիչներին և աւագ-ուսուցչուհիներին նշանակում են ոչ թէ ծխական ուսումնարանների հոգաբարձութիւնները, այլ թեմական վերատեսուչները։ Դորա հակառակ թեմական դպրանոցներում տեսուչներ ընտրողները հոգաբարձութիւններն են։ Քանի որ, մեր ծրագրած սիստեմով, թե-

մական վերատեսուչները առաջարկելու են առաջնորդների հաստատութեանը Ուսումնական Հոգաբարձութեան կողմից, ուրեմն եթէ թեմակ. վերատեսուչները նաև բեֆորմից յետոյ պահպանեն այդ իրաւունքը, այդ չի հակասիլ բեֆորմի ոգուն, այլ ընդհակառակը այդ կը համապատասխանի նրան։ Դորա հակառակը դպրանոցներում տեսուչներ նշանակելը կամ առաջարկելը այժմ վերապահուած է հոգաբարձութիւններին, բայց բեֆորմից յետոյ պէտք է յատկացուի Ուսումնական Հոգաբարձութեան, որը իսկական ղեկավարը պէտք է լինի մեր դպրոցների ընդհանրապէս, իսկ աւելի անմիջապէս՝ մեր թեմական դպրանոցների։

Ուսուցիչներ ընտրելու գործում ծխական ուսումնարանների աւագ-ուսուցիչները և աւագ-ուսուցչուհիները, որպէս յայտնի է, վայելում են աւելի մեծ իրաւունքներ, քան թեմական դպրանոցների տեսուչները. թէև գործակցութեամբ հոգաբարձութիւնների, բայց աւագ-ուսուցիչները իրանք են կազմում իրանց ուսուցչական խմբերը։ Այդ կարգը աւելի է համապատասխան բեֆորմի ոգուն, քան դպրանոցների կարգը, որով ուսուցիչներին ընտրելու միակ իրաւունքը վերապահուած է հոգաբարձութիւններին։ Ուսումնական հոգաբարձութիւն ստեղծելով՝ միանգամայն տրամաբանօրէն վարուած կը լինենք՝ յատկացնելով դպրանոցների տեսուչների ընտրութիւնը Ուսումնական Հոգաբարձութեան, իսկ ուսուցչական խումբ կազմելու գործը՝ յատկացնելով տեսուչներին, ենթադրելով որ դպրոցներում ուսուցչութիւն անելու իրաւունք ունենալու համար՝ Ուսումնական Հոգաբարձութիւնը նոցա ցուցակը կը կազմի։ Տեսուչը ուսուցչական իրաւունք ունեցողների ցուցակից ընտրում է ում ցանկանում է և առաջարկում Ուսումնական Հոգաբարձութեան հաստատութեանը։ Եւ քանի որ Ուսումնական Հոգաբարձութիւնը նաև անձնական վերահսկողութիւն է ունենալու դպրանոցների վերայ, ուստի տեսչի այն կամայականութիւնը, որ հետեւութեամբ կ'արտայայտուէր եթէ չը լինէր մի Ուսումնական Հոգաբարձութիւն, այլ ևս ներկայ սիստեմով տեղի ունենալ չի կարող վնասակար լինելու չափով։

Քանի որ Ուսումնական Հոգաբարձութեանն է անցնում դպրանոցների ուսումնական մասի ղեկավարութիւնը և վերահսկողութիւնը, հետևապէս դպրանոցների հոգաբարձութիւնների պաշտօնը

կը լինի 1) Ուսումնական Հոգաբարձութեան անդամների ընտրութիւնը և 2) դպրանոցների տնտեսական մասի հոգացողութիւնը։ Բայց դպրանոցի հոգաբարձութիւնը, եթէ ուսումնական մասի վերաբերեալ կ'ունենայ որ և է առաջարկութիւն կամ նկատողութիւն անելու, այդ նա կարող է անել Ուսումնական Հոգաբարձութեանը, որից միայն կախուած կը լինի խնդրին այս կամ այն ընթացքը տալ։

Աւելացնենք որ Էջմիածնի Ուսումնական-վարչական յանձնաժողովը դորանով զառնում է աւելորդ. նորա գործը կը կատարի Ուսումնական Հոգաբարձութիւնը։

Սորանով մենք առ այժմ կարող ենք վերջացնել մեր ասելիքը դպրոցական-վարչական բեմորմի մասին։ Դպրոցական բեմորմի խնդիրը չի համբերում յետաձգութեան։ Յետաձգութիւնը կ'ունենայ ամենավատ հետևանքներ ազգի համար։ Հրաւիրում ենք հասարակաց ուշադրութիւնը այդ խնդրի վերայ։ Որպէս ամեն մի փոփոխութիւն, համոզուած ենք որ նաև այս մէկը կը հանդիպի ընդդիմախօսութիւնների. բայց մենք նոյնչափ և դեռ աւելի համոզուած ենք, որ խնդրի քննութիւնը կը հասցնի ամենքին այն եզրակացութեանը, որ դպրոցական-վարչական բեմորմը ներկայիս ամենաանյետաձգելի խնդիրներից է։

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

ԹԻՖԼԻՍԻ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ԱՆԿՈՒՄԸ։—ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ։

Այն, ինչ ճակատագրական կերպով պէտք է պատահէր՝ պատահեց։ Թատրոնական կոմիտեսը այժմ պէտք է խոստովանէր իւր սխալ ընթացքը։ Նա ընտրեալ էր ներկայ տարեայ մայիսի 3-ին անկանոն կերպով, ծուռ ճանապարհներով, ոտնատակ անելով այն սկզբունքները, որոնք հիմք էին կազմում 1891 թուականի յուլիսի 11-ին կայացած ընտրութիւնների։ «Մուրճ»-ի ընթերցողները արդէն բաւականին ծանօթ են Թատրոնական գործի կազմակերպութեան հետ անցեալ տարի ու այս տարի։ Ինչ վերաբերում է այս տարուան, ես յղում եմ ընթերցողներիս «Մուրճ»-ի անցեալ №№ 3 և 5 համարներին։ Այդ 5-րդ համարում ես իմ գրածը վերջացրել էի այսպէս.

«Այսպիսով գալ 1892/3 թ. սեզոնին Թատրոնի գործը կը կրի ոչ այն լայն հասարակական բնաւորութիւնը (ինչ 1891/2 թուականին), այլ կը համարւի որոշ խմբի պատասխանատուութեան վերայ բարձած մի գործ։ Հասարակութիւնը իւր թերահաւատութիւնը դէպի նոր կոմիտեսը և հակակրութիւնը դէպի կատարուած իրողութիւնը ցոյց տուեց նոյն հէնց ընտրութեան օրը, աւելի քան կիսով չափ դատարկ պահելով Թատրոնական դահլիճը, չը նայած, որ այդ օրը ներկայացումը տրւում էր յօգուտ Թատրոնական ֆոնդին։ Երբէք մի գործ չի եղել աւելի լաւ ճանապարհի վրայ, որքան հասարակական բնաւորութիւն կրող հայկական Թատրոնի գործը, որը սակայն, հազիւ հիմնւած՝ արդէն հանդիպեց հակահասարակական տարրերի աւերիչ հոսանքին»։

Եւ իրաք, Թատրոնի գործի մէջ սկսեցին երևան դալ անձնա-

կան յաւակնութիւններ, որոնք թելադրեցին մի խումբ մարդկանց իրանց նպատակին հասնելու համար՝ անկանոնութիւններ թոյլ տալ և մոլորեցնել հասարակութիւնը. նոքա հրաւիրեցին հասարակութիւնը մայիսի 3-ին, իբր թէ նախկին կոմիտեի հաշիւները լսելու և ընդունելու համար, բայց թագցրել էին իրանց գաղտնի դիտաւորութիւնը՝ նոյն այդ նիստում նոր կոմիտեա կազմելու համար ընտրութիւններ կատարել, որպէս և եղաւ։ Հակահասարակական ամենավատ բնազդումները պար էին խաղում իշխան Աւատունու շուրջը, որը նոյնքան էր փայլում այն ժամանակ, որքան զգուշաւոր կերպով այսօր է յետ կանգնել գործից, երբ այլ ևս ձեռնտու չէ անունը հնչեցնել։

Ոլոր-մոլոր ճանապարհներով իրանց նպատակին հասնելու համար՝ գործի գլուխ կանգնողները սխալուած եղան նոյն իսկ չը լսուած խրոխտութեամբ հրաժարուել առաջարկուած հասարակական գումարից։

Միանգամայն պարզ էր որ ժողովում մեծամասնութիւն կազմող խմբի այդպիսի վարմունքը ոչ այլ ինչ էր եթէ ոչ այս՝ «մենք չենք ուզում ճանաչել անգամ»։ Ահա այդ է ճշգրիտ դրութիւնը, որ ստեղծուեց մայիսի 3-ին։ Ժողովի մեծամասնութիւնը ոչ միայն «համաձայն» չէր փոքրամասնութեան հետ, այլ նա, այդ արհեստական մեծամասնութիւնը, իւր վարմունքով յայտարարեց թէ նա չի ուզում ճանաչել այդ փոքրամասնութեանը։

Հարցը սա է. կարող էր արդեօք հաստատ հիմք ունենալ թատրոնը, որի պահպանութիւնը պահանջում է բաւականին մեծ չափով նաև յամակրութիւն դէպի ընդհանուր գործը։ Իմ խորին համոզմունքն է, որ հայկական թատրոնը ներկայ բոպէիս դժուար կարող է գոյութիւն ունենալ լոկ իւր պարունակութիւնով, պիեսների հետաքրքրականութիւնով և դերասանների ոյժի զօրութիւնով. թէ եղած պիեսները և թէ եղած ոյժերը այնպէս են, որ մեր թատրոնը չի կարող իրա հետ պինդ կապած պահել հասարակութիւնը։ Որպէս զի հասարակութիւնը կապուած լինի թատրոնի հետ, բացի դրանից պէտք է մի բան ևս՝ ցանկութիւն հասարակութեան կողմից հետևել դերասանական ոյժերի և առհասարակ թատրոնական գործի ասպիճանական զարգացման։ Ես չեմ կարող սքանչանալ մեր բոլոր դերասանների կամ դերասանուհիների խաղով. բայց

ես շատ հետաքրքրվում եմ նրանով, թէ ինչպէս այս կամ այն դերասանը գնալով յառաջադիմում է և կամ ինչպէս է արտայայտում այդ յառաջդիմութիւնը։ Այդ յառաջդիմութեան և նորա այլ և այլ արտայայտութիւնների մասին դաղափար կազմելու համար ես ինձ պարտաւորուած եմ զգում շարունակ յաճախել թատրոնը։ Նոյնը, ինչ ասացի դերասանական ոյժերի մասին՝ պէտք է հասկանալ նաև պիեսների նկատմամբ. ես կարող եմ չը հաւանել տրուած ամեն մի պիես. բայց ինձ չի կարող չը հետաքրքրել բեմերտուարը կազմելու մէջ անուելիք յառաջդիմութիւնը, ինձ չի կարող չը հետաքրքրել այս կամ այն պիեսի արած տպաւորութիւնը ոչ միայն ինձ վերայ, այլ և հասարակութեան լայն շրջանների վերայ։ Այսպիսով ես շատ անգամ զոհում եմ զուտ էսթետիկական պահանջս՝ զարգացման երևոյթներին հետևելու պահանջիս համար։ Ահա ուրեմն մի զգացմունք կամ մի պահանջ, որը շատերի համար կարող է հիմք ծառայել թատրոնի հետ կապուելու, թատրոնը միշտ յաճախելու, առանց նոյն այդ թատրոնում ամեն անգամ էսթետիկական մեծ բաւարարութիւն գտնելու։ Եւ ահա ես գտնում եմ որ թատրոնը կենդանի պահելու համար պէտք է զարգացնել հասարակութեան մէջ գործին հետևելու պահանջը. իսկ ներկայ հանգամանքներում այդ կարելի է անել ամենից յաջող կերպով, եթէ թատրոնը ինքը լայն մտքով հասարակական լինի, առանց խառնելու գործի մէջ անձնական յատկութիւններ խշխանութիւն բանեցնելու, առանց ոլոր-մոլոր ճանապարհների դիմելու գործի գլուխ կանգնելու համար։ Եւ յանկարծ դուք տեսնում էք որ անձնապաստան մարդկանց մի խումբ գալիս ու ասում է ձեր երեսին՝ թէ «Դուք ով էք»։

Եւ սակայն նոքա, որոնց ժողովի մեծամասնութիւնը ճանաչել չէր ուզում, խորհուրդ էին տալիս գործը շարունակել անցեալ տարւայ նման. այն է՝ թոյլ տալ որ ժողովին մասնակցի ամեն մարդ, առանց խորութեան, վճարով ոչ պակաս քան դիցուք մի ռուբլի, ընտրել մասնաժողով սեզոնի համար ապահովագրամ հաւաքելու, կամ նուիրատուութիւնով և կամ աբոնեմենտով, ապա մի նոր ժողովում ընտրել կոմիտետ՝ թատրոնը մի տարի ևս կառավարելու համար։

«Մենք առանց «ձեր» փողերի էլ գործը կը տանենք, դուք ով էք, մենք ձեզ չենք ուզում ճանաչել, դուք խօսեցէք երբ «մենք»

մեր ընտրութիւնները կատարած-վերջացրած կը լինենք», ահա մեծամասնութեան տրուած պատասխանը։

Եւ ընտրեցին ում միայն ուզեցին, ընտրեցին ոչ պակաս քան տասներկու անձն, և կարծեցին թէ մեծ յաղթանակ են տարել։ Հեռաւոր հասարակութիւնը, որ միայն թատրոնի գոյութեան մասին է մտածում, ուրախ էր որ մի որ և է կոմիտեա կայ, առանց մտածելու թէ ինչ բարոյական ոյժ կարող է ներկայացնել մի կոմիտեա, որ ծնուել էր արհամարհանքից դէպի հասարակութիւնը։ Խրախուսուած անցեալ տարուայ թատրոնական-եկամտի յաջողութիւնից՝ ժողովի մեծամասնութիւնը ոչինչի տեղ էր դնում այն բարոյական յարաբերութիւնը, որով պէտք է կապուի հասարակութիւնը թատրոնի հետ, որպէս զի այդ թատրոնը յաճախորդներ ունենայ նոյն իսկ այն ժամանակ, եթէ նա առաջնակարդ ասպղերով փայլելու ոյժը չունենայ։

Ամբողջ կէս տարի, դեռ ապրիլից սկսած՝ սառոյցի կտորներ էին հալցնում հասարակութեան գլխին, և այժմ եկել ու զարմանում են որ հասարակութիւնը նոյն տաքութեամբ չի վերաբերում դէպի թատրոնը, ինչպէս անցեալ տարի։

Ես այս նիւթի մասին նորից խօսում եմ նպաստած լինելու համար, որ հասարակական գործերում աւելի մեծ մաքրութիւն տիրէ, քան ինչ կարող է մեզ ներկայացնել թատրոնական կոմիտեի կազմելու այս տարուայ պատմութիւնը։ Եւ տեսէք թէ որքան պէտք է հեռացած լինի հասարակութիւնը թատրոնական գործից, որ թատրոնական կոմիտեաը հեռանում է թատրոնը վարելու գործից՝ առանց թոյլատրութեան այն ընդհանուր ժողովի, որի հաւատարմատարն է նա՝ այդ կոմիտեաը, և ոչ միայն առանց թոյլատրութեան, այլ և հեռանում է առանց տեղեկացնելու իրան ընտրած ընդհանուր ժողովին, առանց նրան հաշիւ ներկայացնելու։ Այդպիսի բան կարող է պատահել, երբ կոմիտեաը իւր սեպհական գործը համարի թատրոնական գործը... Եւ հէնց անցեալ տարուայ կոմիտեաը նոյն այդ սխալով չը բացեց այս տարուայ խառնաշփոթութիւնը, երբ նա ինքնագլուխ կերպով ապրիլին որոշեց թէ ընդհանուր ժողովին նոր անդամներ գրողները պարտաւոր են տասը ռուբլի վճարել։ Այն ժամանակ առանց իրան ընտրող ժո-

ղովի թոյլատրութեան նա սկսեց իրան չը պատկանող կարգադրութիւններ անել ընդհանուր ժողովի նկատմամբ. հիմա էլ առանց իրան ընտրող ժողովի գիտութեան և թոյլտրութեան՝ նա իրա իրաւունքն է կարծում՝ գործը ինքնագլուխ կերպով թողնել կամ ուրիշներին յանձնել։

Քանի որ հասարակական գործավարութեան տարրական կանոնները և սկզբունքները չեն հասկանալ այդպիսի գործերի մէջ խառնուողները՝ մինչև այդ ժամանակ ընդհանուր գործ ընդհանուր ոյժերով սկսել ու յաջողութեամբ և տեղդապէս շարունակելը անհնարին բան կը լինի։ Բաւական չէ ամեն անգամ ասել ու բղաւել թէ «թատրոնը սուրբ գործ է». թատրոնի դաղափարի սրբութիւնը դեռ մի պատճառ չէ որ պղծութիւն և անիրաւութիւն կատարուի նորա անունով։

3. Դ. Այս տողերը գրուեցին երբ լրագիրներում կարդացի թատրոնական կոմիտեի ունեցած երկու վերջին նիստերի արձանագրութիւնները։ Այժմ, հակառակ կայացրած վճիռների, նորից լսում ենք թէ կոմիտեաը շարունակում է իւր ստանձնած գործը։ Մինչ կարճ միջոց երևի կը պարզուի խնդիրը։

Ներկայ հոկտեմբերի 29-ին ուսուցչուհիների և դաստիարակչուհիների ընկերութեան բնակարանում այն անձերի խումբը, որը կառավարում է ռուսերէն լեզուով կատարուող ժողովրդական ընթերցանութեան գործը Թիֆլիսում, լսեց յանձնաժողովի հաշիւը սեպտեմբերի 1-ից 1891 թ. մինչ սեպտեմբերի 1-ը 1892 թ.։

Ժողովրդական ընթերցումների գործը ռուսերէն լեզուով, որի համար 1890 թուականին արած առաջին փորձի մասին ես առիթ եմ ունեցել նոյն այս տեղում խօսել երկուս ու կէս տարի առաջ, «Մուրճ» 1890 թ. № 5, ահա արդէն երկու տարի է որ կազմակերպել է Թիֆլիսում։ Այն ժամանակուայ առաջին փորձը ես արձանագրեցի այսպէս՝

«Ալդպիսի տուերաւոր պատկերներով ժողովրդական ընթերցումների (публичныя лекціи съ туманными картинами) մի փորձ արուեց Թիֆլիսում նեկայ (1890 թ.) մայիս ամսի 6-ին, նախաձեռնութեամբ մի քանի անհատների, ռուսների համար, առ այժմ կլասիկական գիմնազի սենեակնե-

րից մեկում։ Փորձը պէտք է կրկնէր մի երկու անգամ ևս, իսկ ներկայ (1890 թ.) սեպտեմբերից պէտք է գործը կազմակերպւի և կանոնաւոր ընթացք ստանայ»։

Եւ գործը իրօք կազմակերպւեց. կարդացած հաշուից իմանում ենք, որ շնորհիւ թէև փոքրաթիւ, բայց շատ եռանդուն և ջանք չը խնայող մարդկանց մի խմբի այդ համակրելի գործը պահպանւում է։

Սեպտեմբերի 1-ին լրացած հաշուական տարում յանձնաժողովը բաղկացած է եղել 37 հոգուց, որոնցից 23 տղամարդ, 14-ը կանայք։ Դոցանից 21 հոգի ուսուցչական շրջանից, 8 հոգի ատենադպիրներ և 8 հոգի էլ ուրիշ կոչման տէր մարդիկ։ Ընդամենը հաշուական տարում կարդացել են 15 դասախօսութիւն, որոնց յաճախել են 2,648 հոգի, միջին թւով ուրեմն ամեն մի դասախօսութեան՝ 176 հոգի։

Յայտնի է (տես «Մուրճ» 1890 թ. № 5) որ Ռուսաստանում, համաձայն 1876 թւականին տւած կանոնների, ժողովրդական կոչւած ընթերցումները չը պէտք է դուրս գան որոշ ծրագրից, այսինքն ժողովրդի առաջ կարելի է կարդալ միայն այնպիսի տպւած գրւածքներ, որոնք կան այդ բանի համար կազմած ցուցակում։ Մեզ, կովկասցիներիս, համար այդ հանգամանքը նամանաւանդ նեղացնող է, որ որքան ինձ յայտնի է, այդ ցուցակում բնաւ չը կան հայ ու վրացի գրականութիւնից վերցրած շարադրութիւններ։ Հապա եթէ հայ ու վրացի կամ թուրք հասարակ ժողովրդի համար դասախօսութիւններ կամ պարզօրէն՝ գիրք կարդալու, ընթերցում անելու ցանկութիւն լինի մեզանում, այն ժամանակ ինչ պէտք է արած։ Միակ ելք՝ առանձին թոյլտւութիւն խնդրել Կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուից, ներկայացնելով վերջինիս ընթերցում մի բնագիրը։ Ասել է թէ նաև իրաւապէս տեղական լեզուներով հրապարակական ժողովրդական ընթերցանութիւնը նոյնն է թէ գոյութիւն չունի։

Վերոյիշեալ Ընկերութիւնը, հարկաւ պաշտօնական ցուցակից վերցնելով, կարդացել է և մոգական լապտերով լուսաբանել է հետևեալ գրքերը՝ Պոլտաւա (362 լսողներ), Լոմոնոսով (307), Կայսերական Ընտանիքի հրաշալի ազատումը հոկտ. 17-ին 1888 թ.

(268 լսող), Սուվորով (250), Կրըլով և նորա առակները (231 լսող), Տէրն մեր Յիսուս Քրիստոսի անպատումը (217), Հայրենական պատերազմ 1812 թ., 2 ընթերցում (90+175 լսող), Պետրոս Մեծը — 2 ընթերցում (147+170 լսող), Միխաիլ Ֆէոդորովիչ Ռոմանովի ընտրութիւնը (150 լսող), թէյը և նորա օգտակարութիւնը (128), սուրբը Տիխոն Զադոնսկիյ (67 լսող), Սորոչինի տօնավաճառը (46), ծառը և նորա կեանքը (40 լսող)։

Ես այս փակերը արձանագրում եմ իբրև փորձեր մի նոր սկզբնաւորութեան, որի հետ թերևս կապուած լինի ժողովրդական հրապարակական ընթերցումների կազմակերպութիւնը մեզանում։ Չեմ ուզում սակայն մոռացութեան տալ, որ ժողովրդական ընթերցումների կարևորութիւնը մեր գաւառական ինտելիգենցիայի շրջաններում ոչ միայն զգացուել է, այլ և այդ բանի համար զանազան փորձեր են եղած Ախալցխայում, Ագուլիսում և թերևս այլ տեղերում, շարունակութեան համար հանդիպելով երիտասարդութեան կամքից անկախ խոչնդոտների։ Պէտք է սակայն ասած, որ մի անգամ որ գործի կարևորութիւնը ճանաչուած է՝ խոչնդոտների պատճառով գործից յետ կանգնել չը պէտք է, այլ հարկաւոր է գոնէ առ այժմ ժողովրդական ընթերցումներից խլել նոցա բացարձակ հրապարակական բնաւորութիւնը, տնային կերպարանք տալով նոցա։

Յիշեալ ռուսական ընթերցումներին յաճախորդները կազմում են դեռ ևս մեծ մասամբ դպրոցների աշակերտներ, բայց հասարակ ռուս ժողովուրդն էլ բացակայ չէ. այսպէս օրինակ միայն 10 ընթերցումներին ներկայ են եղել հասարակ ժողովրդից 356 հոգի, սոլդատներ՝ 237, աշակերտներ և երեխաներ՝ 682 և ուրիշ հասարակութիւնից՝ 198 հոգի։ Իսկ այս տարուայ բոլոր 15 ընթերցումներին ներկայ են եղել 2,648 հոգի, մինչդեռ առաջին տարին, այն է սեպտեմբերից 1890 թ. մինչ սեպտեմբեր 1891 թ. ընթերցումներ եղել են 11 անգամ, 1,801 յաճախորդներով։

ԼՈՒՍԻՆԻ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻ ՏԳԵՂ, ԵՐԵՒՈՅԹԻ ԱՌԻԹՈՎ.

Արձանագրելով մեր կուսակցական կեանքի աչքի ընկնող երևոյթները, չենք կարող մատնանիշ չը լինել «Արձագանք»-ի այն պամֆլետական յօդուածի վրա, որ կոմէդիական դրուածքի ձևով երևեցաւ այդ լրագրի ֆելիետոնների մի քանիսում և որ կրում է, ցաւելով պիտի ասել, մեզ բոլորիս ծանօթ Սիւլիւկի ստորագիրը։ Մատնանիշ պէտք է լինել թէկուզ այն պատճառով, որ նա առաջինը առիթ տուց հասարակութեան խօսակցութեան և երկրորդ նրա համար, որ այդ յօդուածը չօշափում է այնպիսի անձնաւորութիւններ, որոնց մենք երբէք չէինք ցանկանալ հանդէս բերած տեսնել մեր հասարակութեան առջև այդպիսի լուսաւորութեան տակ...։ Ինչպէս արդէն նկատեցին ուրիշները չատ ճիշդ կերպով, այս դրուածքը, որ պամֆլետական է—իսկ թէ պամֆլետական է՝ դրան վկայում է այն հանգամանքը, որ հէնց այդպիսի կոչումով նա պատում է չատ չատերի բերանում—հէնց միայն այն պատճառով, որ նա պամֆլետական է—ամփոփում է արդէն իր մէջ իրեն նուազեցնող, սպանող պատճառները, հետևաբար և բնաւ չի կարող ունենալ այն ոյժը և այն հետևանքները, որ աչքի առաջ ունէին նրան հրատարակող պարոնները այդ դրուածը տպագրութեան յանձնելու րոպէին։ Դրականական դրուածները պիտի ունենան որոշ, աւելի աղնուացնող, աւելի կրթողական նշանակութիւն հասարակութեան համար. իսկ պամֆլէտները այդ ոյժը ունենալ չեն կարող, ինչպիսի գաղտրիկ և գեղեցիկ ձևերի տակ էլ և չը յայտնուէին նրանք։ Հէնց դա է պատճառը, որ մենք, ուրիշների հետ միասին, հակում ենք զէպի այն կարծիքը, որ այդպիսի գրուածները, ոչ մի աղնուացնող նպատակի չը հասնելով, անուղղակի անդրադառնում են իրանց հեղինակների վրա։ Իսկ եթէ դա այդպէս է, մենք կարծում ենք, բնաւ հարկաւոր չէր տպագրել մի այնպիսի գրուած, որն աւելի ուղղուած է դէպի, կարելի է ասել, դեռ ևս ոչ բոլորովին պաղած մի դիակ։ Հարկաւոր չէր այն պատճառով, որ Ռաֆաէլ Պատկանեանը, լաւիտենականութեան անցած րոպէին, արժանի էր աւելի իր լաւ կողմերից լիշելու, արժանի էր աւելի իր դրական յատկութիւնների կողմից գնահատելու, քան նսեմանալու «րոպէի և գիտակցութիւնը մթնեցնող կրքի տակ յօրինուած գրուածքներում...»։ Հարկաւոր էր այդ լաւագոյն կողմերից լիշատակել հէնց թէկուզ իր դ ո ր ծ ն ա կ ա ն նշանակութեան համար—նրա ընտանիքը ապահովելու նկատմամբ։ Մեզ թւում է, թէ «Արձագանք»-ն իր այդ վարմունքով—մեր մեջ խնդրի իրաւաբանական տեսակէտը—այսինքն թէ նա որքան իրաւունք ունէր տպագրել մի յօդուած, որի լոյս ընծայելու մասին դեռ որոշ պատասխան չունէր,—մեզ թւում է, ասում ենք, թէ «Արձագանք»-ն իր այդ վարմունքով աւելի ակնյայտ կերպով

հանդէս բերեց հասարակութեան առաջ իր հակակրելի և նեխած կողմերի մի անկիւնը, որոնց նա մինչև այսօր կասէք աւելի խուլ կերպով էր կրում իր մէջ։ Մի լայնեի ռուս գրող մի սրամիտ նկատողութիւն է արել. «Լաւ, շատ լաւ են անում որոշ մարդիկ—ասում է նա, երբ իրանց նեխած կողմերն հանդէս են բերում հասարակութեան առաջ այնպիսի բոպէներում և պարագաներում, որ նրանց իսկական գինը բոլորի համար անկասկածելի է դառնում։ Լաւ է նրա համար, որ այդպիսով մարդիկ աւելի ՝ջլաւ կը ճանաչեն «գործողներ» տիտղոսի տակ թաղնուած իրանց կեղծ բարեկամներին...»։

Այո, ցաւալի իրողութիւն է, բայց պէտք է արձանագրել։

ԱՌ. ՂՈՒԼԵԱՆՑ

Թիֆլիս.

ԾԱՆ. ԽՄԲ.-Տպելով այս գրածքը, մեր դիտաւորութիւնն է եղել արտայայտելու տեղ տալ հասարակաց կարծիքին, որին կցում ենք նաև մեր ձայնը, գտնելով որ Սիւլիւկի «Աստառ» գրածքի հրատարակութիւնը Արձագանքի մէջ վիրաւորական ակտ էր դէպի հանգուցեալ բանաստեղծի յիշատակը և, դորանից անկախ՝ գրականական խիստ ոգեղ մի վարմունք։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Բրիտանական բժշկական ընկերութիւնը։ Արևելագէտների IX ժողովը Լոնդոնում։ Բանաստեղծ Շելլիի ծննդեան հարիւրամեակը։ Ջիովաննի Վերգան և Պիետրո Մասկանի։ Դրական վաստակի գնահատութիւնը Ֆրանսիայում։ Խաղաղութեան դաշնակցութեան ժողովները Բեռն քաղաքում։ Բերլինի համաշխարհային ցուցահանդէսի վիճակը։ Մի քրէական գործ։ Ամերիկայի գիւտը։ Զիկագոյի համաշխարհային ցուցահանդէսը։ Ամերիկական գլխաւոր կուսակցութիւնները։ Հանրապետականների ժողովը Միննեապոլիս Դեմոկրատականների ժողովը Զիկագո։ Նոր գրքեր։

—Բրիտանական Բժշկական Ընկերութիւնը ունեցաւ իւր 60-րդ ժողովը Նոտտինգեմ քաղաքում, ներկայութեամբ 1200 դելեգատների։ 1) Օրէնքների մասին ընդդէմ արբեցողութեան. 2) Միջոցներ արբեցողութեան դէմ և այս ախտի ենթարկուածներին բժշկի վկայականի համեմատ հիւանդանոցներում ընդունել տալու մասին. 3) Ուսանողները և ուսումնարանները բժշկական քննութեան ենթարկելու մասին. 4) Առաջադիմութիւնների մասին բժշկական գիտութեան բոլոր ճիւղերի մէջ։

Այս պ. Հալտոնը մի տաք ճառ արտասանեց կին բժիշկներին ընկերութեան անդամ ընդունելու մասին, իսկ տիկին Հեռեռետ Լինդերսոնը մատնացոյց արեց, որ այս րոպէիս Անգլիայում գործում են 140 կին բժիշկներ զոկտորութեան աստիճանով և 130 հոգի, որոնք ուսանում են բժշկութիւնը։ Մի քանի ճառախօսների ճառերից յետոյ կին բժիշկներին վիշեալ Ընկերութեանը անդամ ընդունելու առաջարկը ընդունուեց մեծ ոգևորութեամբ։

—Արևելագէտների IX համաժողովը տեղի ունեցաւ Լոնդոնում։ Առաջին նիստը (նոր տոմար սեպտ. 4-ին) կայացաւ նախագահութեամբ պրոֆ. Մաքս Միւլլերի։ Ներկայացուցիչներ էին ուղարկել ժողովին՝ 11 տէրութիւններ, 27 գիտնական ընկերութիւններ և 13 համալսարաններ։ Հայերից ներկայ էին հայր Ս. Պարոնեան, պրոֆ. Մ. Զերազ, Յակոբեան և Արսէն Դնունի—«Արևելք» լրագրի թղթակիցը։

«Տայմս» լրագրի սեպտեմբեր 6 համարում տպւած է սրա պաշտօնական ծրագրի վերաբերեալ համաժողովի զբաղմունքներին նաև հետևեալը.

«Յետագայ ներկայացուցիչները նշանակուեցան օտար պետութիւնների

կողմից՝ կոմս դը Գուբերնատիս—Իտալիայի, ֆոն Բիւհլեր—Աւստրիայի, պրոֆ. Լանման—Միացեալ Նահանգների, պրոֆ. Կիհլհորն—Գերմանիայի, պրոֆ. Կիհլ—Շուեցիայի, Կեմբրիջ համալսարանի փոխ-կանցլերը—Անգլիայի, պրոֆ. Մինաս Ջերազ—«Արմէնիայ»-ի կողմից և այլն։

Այս ներկայացուցիչներից կազմած յանձնաժողովի առաջին նստում—պէտք է վճռէր մասնաւոր Արևելագէտների զալ համաժողովի ուր ժողովելու խնդիրը։—Ժընեւ (որտեղից ստացած էր պրոֆ. Նաւիլ'ի հրաւէրը), թէ Բուխարեստ (որտեղից ստացած էր Ռումանական թագաւորի հրաւէրը)։ Մասնաժողովը—պ. Մ. Ջերազի պատճառաբանութիւնները լսելուց յետոյ միաձայն ընդունեց պրոֆ. Նաւիլ'ի հրաւէրը Արևելագէտների X համաժողովը Ժընեւ գումարելու համար, իսկ Ռումանական թագաւորի հրաւէրը սիրալիր ընդունել XI համաժողովի համար։

Սեպտ. 6 նստում Իտալիայի ներկայացուցիչ կոմս Անջելօ դը Գուբերնատիսը համաժողովի Մարդաբանական բաժնում կարդաց իւր մի զեկուցումը «Առասպելի դերը ժողովրդական հեքիաթներում» և ապա առաջարկեց հիմնել Լոնդոնում մի Միջազգային ընկերութիւն Արևելքի հեքիաթները ապելու համար։

Այս առաջարկութեան օգտին խօսել են 4—5 ուրիշ անդամներ, որոնցից յետոյ խօսք է առել պրոֆ. Մինաս Ջերազ կարդալու համար իւր «Ծանօթութիւնները հայ դիւցազանութիւնից» հետևեալ բովանդակութեամբ. 1) Արևը և նրա պաշտամունքը, 2) Լուսընկա և սրա սեռը, 3) Աստղ և սրա ազդեցութիւնը մարդուս վիճակի վրա, 4) Աղբիւր—Ջրի պաշտամունքը, 5) Եփրատ—սրա հոգին, 6) Սրբազան ծառեր—սրանց նմանութիւնը հոգի առած էակներին, 7) Վիշապ—սրա ծնունդը և մահը, 8) Նախնեաց պաշտելը—մահի գաղափար, 9) Գիշերմութ—անձնաւորումն գիշերային խաւարի, 10) Աղէքսանդրի դուստրը—հուշկապարիկ [1]) Մի կնոջ մասին մի առասպել, 11) Կախարդութիւններ—պէսպէս գործադրութիւններ, 12) Վեցհազարեայ—գիրք գաղտուկ գիտութիւնների, 13) Դևեր—սրանց դերը, 14) Փերիները—ժողովրդական հաւատք, 15) Ալք—չաստուածութիւններ, որոնց կոչումն է խեղդել ծնող մայրերին, 16) Խրբբլիկ—արթուն և չարաճճի չաստուածութիւն և իւր հունարները, 17) Խեղերելէզ—չաստուածութիւն, որը նշանակում է երեխայոց, սրանց ծնելուց առաջ, 18) Դրող—նմանեցրած Հերմեսի'ն կամ Թոթին, 19) Կաղանդ—իբր փոխարինող հին Ամանոր չաստուածին, 20) Տեառնընդառաջ—կրակի պաշտամունք, 21) Շուտիկ—սրա նմանութիւնը լոյն դիւցազանութեան ըմբռնումեան հետ, 22) Գուջիւղ—նմանութիւն Պրիապի հետ, 23) Շեստ—նմանութիւն Սիւսի հետ, 24) Խոնջոլոզ—նմանութիւն վեղական դիւցազանութեան հետ—Եզրակացութիւն։

---

[1]) Une sirène, сирена.

Պրոֆ. Մ. Զերազի ընթերցումից լետոյ-Ալքերի պարսկական ծագումի մասին մի նկատողութիւն արեց պ. Դարմեշտետերը, ապա պ. Գուբերնատիսը իւր գոհունակութիւնը յայտնեց հնագիտական զեկուցումի մասին, իսկ դոքտոր Տայլորը (Dr. Tylor) այն միտքը յայտնեց, որ պրոֆ. Զերազի զեկուցումը կարող է առաջին մասը կազմել պ. Գուբերնատիսի առաջարկած հրատարակութեան մէջ։

Սեպտ. 7-ին։ Արևելագէտների համաժողովի արիական բաժնում կարդաց իւր զեկուցումը հայ հասարակութեանը քաջ ծանօթ դիտնական պ. Գ. Ա. Շռումքը «Հայկական ուսումնասիրութիւնների առաջադիմութեան մասին»։ Պր. Շռումքը պաշտպանում էր 1) Հայերէնի կարևորութիւնը համեմատական լեզուագիտութեան մէջ, 2) Պատմական արժէքը հայ հնախօսութեան (archéologie, арxеологія) և հայ գրականութեան։ Առաջին կէտը ապացուցանելու համար պ. Շռումքը երկարօրէն խօսեց հայ դրարառի և աշխարհաբառի մասին, լիշատակելով նաև բոլոր միւս բարբառները։ Յարգելի դիտնականը մատնացոյց անելով մի նոր ժողովրդական պոէմայի լայնագործութեան վրա, աւելացրեց թէ «թերևս անկարելի չէ որ Արմէնիան վաղը ունենայ Ֆինլանդիայի նման իւր ժողովրդական Կալեւալա՛ն»։ Իւր զեկուցման երկրորդ մասը փաստաբանելուց լետոյ—պ. Շռումքը առաջարկեց հիմնել մի «Միջազգային ընկերութիւն հայ ուսումնասիրութիւնների ընդարձակման համար»—նման այն ընկերութեան, որի նպատակն է լունական ուսումնասիրութիւնները։

Պր. Շռումքի առաջարկութիւնը պաշտպանում են պրոֆ. Կոուէլլ՛ը (Cowell) և Մ. Զերազ, ապա պ. նախագահը խոստանում է արձանագրել պ. Շռումքի առաջարկութիւնը ատենագրութեան մէջ։

—Նոյն համաժողովը ունկնդիր է եղել պրոֆ. Ասսամից ստացած մի թղթակցութեան—որի մէջ նա խօսում է Ասորեստանի և Բաբելոնիայի մէջ տեղի ունեցած պեղումների մասին և գտնված հնութիւնների աւերման մասին։

Մաքերի փոխանակութիւնից լետոյ ժողովը ընդունել է պրոֆ. Հալվարտի հետեւալ որոշումները.

1) Ժողովը ցաւ է լայտնում, որ թրքական կայսրութեան գաւառների մէջ հնութիւնները ոչնչացուում են և թէ լուսով է, որ թիւրք կառավարութիւնը միջոցներ ձեռք կառնի այդ աւերման առաջքն առնելու համար։

2) Փափաքելի է, որ Եւրոպայի և Ամերիկայի դիտնական ընկերութիւնները և անձերը համաձայնութիւն կայացնեն միաբան դիմում անել, իւրաքանչիւրը իւր կառավարութեան, որպէս զի վերջիններս իրանց ազդեցութիւնը դրած դնեն Բ. Դրան վրա, որ արտօնութիւն տայ փորձառու հնախուզներին խուզարկութիւններ անելու իրանց անձնական կամ իրանց

կառավարութեան հաշվի, գտնված առարկաներից երկու կողմերին էլ բաշխելու համար ապագայում մի կարգադրութիւն անելու։

Անգլիական բանաստեղծ Շելլի՛ն սրա ծննդեան 100 ամեակի առիթով՝ անցեալները լիշեց ամբողջ Եւրոպան և մանաւանդ Իտալիան, որը նրան գրկաբաց հիւրասիրել էր, բայց ուր սակայն բանաստեղծը զոհ գնաց դեռ բոլորովին երիտասարդ հասարակում։ Նա ծնուեց 4 օգ. 1792, մեռաւ 4 լուլ. 1822) ծովի մի փոթորկից։ Շելլին սիրում էր մեն մենակ նստել մի փոքրիկ նաւակի մէջ և լոյս դնելով իւր սեփական բաղձանքների ոգին՝ ծովային պտոյտներ անել Ադրիական ծովի երեսին։ Նա նաւակ էր նստել մի գեղեցիկ օր, երբ ծովը լանկարծ ալէկոծւում է և կուլ տալիս նշանաւոր բանաստեղծին։

Արտաքսած Օկսֆորդ համալսարանից իւր կրօնական անհաւատ լինելու պատճառով, մերժւած իւր հօրից չարաբաղդ մի պսակի առիթով, որ արել էր իւր ծնողների կամքի հակառակ և դատաստանական վճիռներով զրկւած իւր որդոց դաստիարակելու—Շելլին վարում էր Վիքերի տեսլով մի աղմկալոյզ կեանք լի ֆիզիկական և հոգեկան տանջանքներով։ Շելլին հասցրել էր իւր բարեկամ Բայրոնի սկեպտիկականութիւնը պանտէիսմի և ատէիսմի։ 17 տարեկան հասակում իւր «Մաբ Թագուհի» գրւածքում նա ցոյց է տալիս թէ մինչ որ աստուծանի անհատական անսահման ազատութեան նա կը կամենար փոխել ներկայ կեանքի հասարակական, քաղաքական ու կրօնական պայմանները։

Ծնւած 1792 Լոնդոնում Շելլին իւր գրւածքների մեծամասնութիւնը գրել է Իտալիայում։ Հռոմում—իւր Պռոմեթէոսը, Ֆլորենցիայում—Մեղուը, Վենետիկում—Էգենական ըլուրներ Լիւորնօյում—Cenci և այլն։

Երբ ծովի մէջ գտնւեց նրա մարմինը, նա այրւեց Բայրոնի կարգադրութեամբ և մոխիրը բերւեց Հռոմ։ Մի մարմարէ տախտակի վրայից պէտք է ձեռքով հեռացնել սպիտակ ծաղիկները կարդալու համար։

Percy Bysshe Shelley.
Cor cordium.

—Լրագրերը հաղորդեցին որ Ջ. Վերգան մի դատ էր սկսել ընդդէմ պ. Մասկանլի՛ի մի խոշոր գումար պահանջելով թէ ինչու այս վերջինս՝ առանց համաձայնութիւն ստանալու՝ փոխադրել էր օպերայի իւր վիպական գրւածքներից մէկը։

Դատաստանը ենթարկեց. Մասկանլի՛ին լօղուտ Վերգայի 100.000 ֆրանկ տուգանքի (այն ենթադրութեամբ որ Մասկանլին իւր օպերայից ձեռք բերած կը լինի սրա քառապատիկը)։

Ո՞վքեր են դոքա։

Այդ անունները սակայն գրեթէ անծանօթ են հայ ընթերցողների մեծամասնութեանը։

Ջիովաննի Վերգա'ն համարւում է իտալական Էմիլ Զոլա, այնպէս՝ ինչպէս որ Էդմոնդո Ամիչիսը համարւում է իտալական Օկտաւ Ֆեոլէ. իսկ Լուիջի Կապուանան — իտալական Պոլ Բուրժէ [1])։ Ջիովաննի Վերգա'ն նէրում է իւր գրիչը մեծ մասամբ իւր հայրենիքի նկարագրութեան,—հայրենիքի՝ որ հռչակւած է իւր աղքատութիւնով։ Նա անխնայ կերպով հրապարակ է հանում գիւղական կեանքի ամբողջ մերկութիւնը և առանց խիստ գոյներ խնայելու պատկերացնում է գիւղացիների ծուլութիւնը, սրանց անառակութիւնները, ցածութիւնները և այլն. և այս ամենի հետ միաժամանակ հարաւային դեղեցիկ բնութիւնը, երբեմն խաղաղ, երբեմն մռնչող ծովը, կապուտակ երկինքը, դողդոջուն արմաւենիները, երբեմն հրապուրիչ և երբեմն վայրենի բնութեան տեսիլները։ Ջ. Վերգա գրած ունի շատ մանր գրուածքներ, որոնց թւումն է վիշեալ Cavalleria Rustiicana'ն, որը նիւթ տւեց թէ Մասկանի'ի երաժշտութեան և թէ նոյն անունը կրող մի դրամայի, որը խաղացւել է առաջին անդամ 1884 թ. 14 յունւարի Տուրինի թատրոնում մասնակցութեամբ Սառա Բեռնարի հռչակը վայելող իտալուհի՝ դրամատիկական դերասանուհի՝ Էլեոնորա Դուզէ'ի և ունեցել անպէս յաջողութիւն։

—Էմիլ Զոլա'ի նոր աւարտած «la Débâcle» ռոմանը մեծ խօսակցութեան միակ առարկայ եղաւ։ Թողնելով «Մուրճ»-ի կրիտիկոսներին այդ գրուածքի գրական արժանաւորութիւնների մասին խօսելու դնենք այս տեղ գրական ու լրագրական վաստակների դրամական գնահատութեան աստիճանները Ֆրանսիայում։

«Պարիզի Արձագանք», Ժիլ Բլաղ, Ֆիգարօ լրագրերը վճարում են նշանաւոր գրողներին ամեն մի քրոնիկի համար 200 ֆրանկ, 250 ֆրանկ, 300 ֆրանկ, 350 ֆրանկ։ Այդ քրոնիկ գրողներից մի քանիսը նաև վիպագիրներ են. Ռոման Սիլվեստր, Կատուլլ Մենդես, Էմիլ Բերժերա, Հանրի Ֆուկիէ, Ժան Բիշպեն և այլն։

Եւ լրագրի այն համարները, ուր կան այդպիսի անունների ստորագրութիւններ վաճառւում են հազարներով։ Աւելորդ չի լինիլ փիշել այստեղ որ ֆրանսիական լրագրերը գրեթէ չունին Ֆրանսիայում տարեկան բաժանորդներ։ Ոչ, ալ լրագիրը գրեթէ 90%-ով ծախւում է հատով և այդ է պատճառը որ լրագրերը ընկնում են մեծ անունների եաւից։ Նոքին են անում և ամսագրերը որոնք տարւայ վերջից շատ առաջ չտասում են

---

[1]) Ֆրանսիացի ժամանակակից կրիտիկոս և հոգեբանական վիպասան։

գլուխարարել ի գիտութիւն ամենքի—թէ ամսագիրը գալ տարւայ համար ունի իւր թղթակցում այս ինչ նշանաւոր ռոմանիստի կամ այս ինչ հռչակաւոր վիպագրողի ռոմանը կամ վէպը։

«Տան» («Temps»=ժամանակ) լրագրի լուրջ թատրոնական բաժին տանող Ֆրանսիսկ Սարսէյ'ը ստանում է ամսական միմիայն 1000 ֆրանկ [1]), մինչդեռ հասը մի սու արժող, օրինակի համար, «Petit Journal» (փոքրիկ լրագիր), Petit Parisien (փոքրիկ պարիզեցի) լրագրերը իրանց ֆելիետոններում տպող Ռիչբուռ'ի կամ Կաբրիէ դը Մոնտեսկեն'ի ֆրանսիական թերթ ճաշակի ռոմանի ամեն մի տողին վճարում են մէկ ու կէս ֆրանկից սկսած մինչև $3^1/_2$ ֆրանկ։ Ինչ ասել կուզի որ լրագիրը և ամսագրերը ձեռք են բերում առաջին տպագրութեան իրաւունքը, իսկ գրած.քի առանձին հատորով արտատպելը կամ թարգմանութեան տալու իրաւունքները մնում են հեղինակի ձեռքին։ Այդ հաշուով առաջին տպագրութեան համար La Vie Parisienne թերթը վճարեց Զոլային սրա Դեբակլի համար 30.000 ֆրանկ, Illustration թերթը վճարեց Ալֆ. Դոդէին սրա Անմահի համար—նոյնքան, Revue Illustrée թերթը վճարեց Զոլայի Երազի համար (Le Rève)—25.000 ֆրանկ, Մոպասանը իւր «Աբելի ուժեղքան մահը» գրած.քի համար ստացաւ 12.000 ֆրանկ, Զոլան իւր Մարդ գազանի համար ստացել է 30.000։ Նոյն ձևով l'Illustration թերթը ձեռք է բերել Դոդէի «Ընտանիքի պաշտպանը» 30.000 ֆրանկով և Revue Hebdomadaire թերթը Զոլայի «Բժիշկ Պասկալը»—35.000 ֆրանկով։ Պատահում է նաև որ թերթերը ձեռք են բերում երկրորդ տպագրութեան իրաւունքը վճարելով տողին կէս ֆրանկ։ Գալով առանձին հրատարակութիւններին (առաջին տպագրութիւնից յետոյ որ և է թերթում) հեղինակը ստանում է հրատարակիչ դրավաճառից ծախած դրքի ամեն մի օրինակի համար—25 սանտիմից սկսած մինչև կէս ֆրանկ։ Զոլայի Դեբակլը առանձին դրքով լոյս է տեսել արդէն 134 տպագրութեամբ! Իւր բոլոր գրած.քների համար մինչ օրս Զոլան ստացել է մօտ մէկ ու կէս միլիոն ֆրանկ, նոյն թւում 200.000 ֆրանկ թարգմանելու տուած իրաւունքներից։ Ընդամենը Էմիլ Զոլայի մինչ օրս ծախուած դրքերի թիւը հասնում է մի շատ պատկառելի գումարի այն է 1.338.000 հատորի։

Այս բեղմնաւոր գրողը, քսան տարի անխոնջ գրական աշխատանքից յետոյ, ստանում է ներկայումս տարէնը թէ իւր հին գրած.քների վաճառումից ու թարգմանելու տուած իրաւունքներից և թէ նոր գրող ռոմանների մօտ հարիւր հազար ֆրանկ։ Եւ երբ անցեալները մի թերթի աշխատակից Զոլայի հետ ունեցած տեսակցութեան ժամանակ խօսք բացարաւ սրա հարստութեան մասին—Զոլան բացականչեց. «Այդ առասպել-

---

[1]) Ֆրանկը որ արժէ ներկայ կուրսով 40 կոպ ունի 100 սանտիմ կամ 20 սու. ասել է թէ սուն արժէ 2 կոպ.։

ներ են թէ իւր Զոլան միլիոնատէր է... Պարիզում չքեղ ապրելու համար հարկաւոր է տարէնը 3 միլիոն, իսկ ես ստանում եմ... Հարիւր հազար ֆրանկ, բայց թէ ամենահասարակ գեղարուեստօրէն չինած մի սեղանը արժէ ներկայումս 10.000 ֆր. և մնացած էլ սրա համեմատութեամբ...

Զոլան բացառութիւն չի կազմում մարդկանց մէջ, որպէս զի մոռանալով իւր նախկին չքաւոր դրութիւնը, ներկայումս երբ նա ապրում է պալատների մէջ և ձեռք բերում 10.000 ֆրանկանոց սեղաններ—նա իրան դարձեալ չքաւոր չը համարի...

Եւ նայելով անցեալի վրա ինչ ենք տեսնում։ Լա. Բրիւյեռ ֆրանսիացի բարոյագէտը [1]) իւր նշանաւոր Les Caractères գրած.քը գրեթէ ձրի զիջելով իւր հրատարակչին՝ սրան միջոց տուեց ձեռք բերելու 300.000 ֆրանկ, Դիդերօ [2]) փիլիսոփան ստացաւ իւր «Փիլիսոփայական մտածմունքների» համար 600 ֆրանկ, Բեռնարդէն դը Սեն Պիեռը [3]) իւր Voyage à l'Ile de France գրած.քի համար ստացաւ միմիայն 1000 ֆրանկ, Ժան Ժակ Ռուսսօն [4]) իւր հռչակաւոր Էմիլի համար միմիայն 6000 ֆրանկ։ Սրա «Նոր Էլօիզ» վէպը իւր ժամանակին այնպիսի հռչակ էր ստացել, որ գիրքը վերցնում էին կարդալու և ամեն մի ժամին վճարում 60 սանտիմ!

Գալով Անգլիային տեսնում ենք որ այստեղ գրողները աւելի լաւատ են վարձատրւում։ Տեկերէյը ստանում է մի գրած.քի համար 125.000 ֆրանկ, Էլիոտը իւր Romola'ի համար 175.000, կոմս Բեկոնսֆիլդը իւր Էնդիմիոնի համար 300.000 ֆրանկ, և մինչդեռ Բայռոնը ստացել էր իւր Չայլդ Հարոլդի համար 106.875 ֆրանկ, Միլտոնը իւր «Կորուստեալ դրախտի» համար միմիայն 125 ֆրանկ. բայց Վալտեր Սկոտն է՝ որ իւր բազմահատոր գրքերի համար ստացել է մօտ $2^1/_2$ միլ.։

«Խաղաղութեան դաշնակցութեան» կողմնակիցները [5]) Շէյցարիայի Բեռն մայրաքաղաքում անցեալ օգոստոսի վերջերին երկու համաժողովներ ունեցան։

Մեր ընթերցողներին լայտնի են այս դաշնակցութեան նպատակները—թէ հակապատերազմականութիւնը և միջազգային միջնորդութիւնը և թէ դաշնակցութեան գործադրած միջոցները։

---

[1]) 1639 թ. ծնւած ու 1696 վախճանւած։

[2]) Դենիս Դիդերօ՝ 1713—1784 թ.։

[3]) Հելվետական հաւերէն բազմիցս թարգմանած «Պող և Վիրգինիայի», ծնւած 1737, վախճ. 1784.

[4]) Նշանաւոր գրող, ծնւած 1712, վախճանւած 1778։ Ցայտնի իւր գրած.քների ոճի նրբութեամբ ու մտքերի երբեմն տարօրինակութեամբ։

[5]) Տես «Մուրճ» № 7—8 երես 1209։

Այս ժողովները աչքի էին ընկնում իրանց կարգապահութեամբ և ոչ մի ջանք չէր խնայած հեռացնելու համար պայթող և սուր կերպարանք ունեցող հարցեր (նման Էլզաս-Լոթարիդիայի հարցին), այնպէս որ ժողովի նիստերը չէին լիշեցնում նախորդ համաժողովները, որոնք տեղի էին ունեցել՝ 1867 թ-ին Ժընեում, նախագահութեամբ Դարիբալդի՝ի, 1868 թ-ին Լոնդոնում նախագահութեամբ Վիկտոր Հիւգոյի և 1869 թ. Բեռնում նախագահութեամբ Էմիլիո Կաստելարի։

Ներկայ տարւայ առաջին ժողովի նիստը էր օգոստոսի 10/22։ Նիստերը շարունակւել են մի ամբողջ շաբաթ մասնակցութեամբ զանազան երկիրներից եկած հին ու նոր աշխարհի ներկայացուցիչների թւով 300-ից աւելի նախագահութեամբ հանրապետութեան խորհրդական (conseiller fédiéral M. Ruchonnet) պ. Ռիւշոննէի։ Մասնակցողների թւում կային և դեղեցիկ սեռից՝ բարոնուհի տ. Բերթա Սուտտները. (Աւստրիայից), փաստաբան Տ. Լոկուդը (Ամերիկայից), հայուհի Տ. Թումայեանը և այլն։ «Զէնքերը վայր» գրքի հեղինակ բարոնուհու ֆրանսերէն արտասանած ճառերը շարունակ ընդհատւում էին ծափահարութիւններով։

Այս համաժողովներին մասնակցողները ըստ ազգութիւնների բաժանւում էին այսպէս 96 անգլիացի, 94 շէյզարացի, 76 ֆրանսիացի, 41 իտալացի, 26 աւստրիացի, 20 ամերիկացի, 11 ռուման համալսարանականներ, 10 չիլեացի, 6 բելգիացի, 5 գերմանացի, 4 դանեմարկացի և 1 հայուհի։

Օգոստոսի 17/29-ից սկսեցին երկրորդ համաժողովի նստերը,—համաժողովի, որին մասնակցում էին մի միլիոն պարլամենտների անդամներ, թւով երկու հարիւրից աւելի և նախագահութեամբ Շէյզարիայի խորհրդական Նիւմա Դրոզի (Numa Droz)։

Թւենք երկու համաժողովների վճիռ որոշումներից մի քանիսը։

1) «Խաղաղութեան» դալ համաժողովը նշանակել Չիկագոյի ցուցահանդիսին 1893 թ.։

2) Խաղաղութեան դաշնակցութեան մշտական կենդրոնատեղին համարել Բեռն քաղաքը։

3) Ձեռնարկել հաստատելու Միջազգային Միջնորդ դատարան, որին դիմելը պարտաւորեցուցիչ դարձնել բոլոր պետութիւններին պատերազմ լայտարարելուց առաջ։

Պարլամենտների անդամները վճռել են։

1) Իրանց տէրութիւններին ընդունել տալ մասնաւորների սեփականութեան զերծ պահպանելը ծովի վրա պատերազմների ժամանակ։

2) Միջնորդ դատարանի ենթարկել տալ՝ կայանալիք դաշնագրերի մի առանձին լօղւածով՝ պատահելիք վէճերը՝ վերաբերմամբ առևտրի և նաւադնացութեան, արդիւնագործական, գրական և գեղարուեստական սեփականութիւնների։

Լրագրերը հաղորդում են նաև որ Բեռնում ժողովված համալսարանականները վճռել են համահամալսարանական դաշնակցութիւն հաստատել և այդ նպատակի համար մի համաժողով գումարել Հռոմում։

Լինի թէ չլինի ցուցահանդէս Բերլինում։

Այս հարցը շատ էր զբաղեցնում բոլոր գերմանացիներին վերջին երկու երեք ամիսներս։ Մինչ այս մինչ այն՝ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնոն իւր որոշումը և վճիռը տուաւ 1900 թվի ցուցահանդիսի համար Պարիզում և այս քայլը աւելի ևս չիսթեցրեց գերմանացիներին։

Էօժեն Բիխտերի Ազատամիտ լրագիրը երկար շարունակեց իւր յարձակումները։ «Պարիզը, իւր ասելով, երկու զօրեղ առաւելութիւններ ունի այս դէպքում, նրա շրջակայքի գեղեցկութիւնը և հիւրերին տրուելիք զարճութիւնների բազմազանութիւնը։ Ֆրանսիան թատրոնների երկիր է, իսկ մեր թատրոնների խաղացած պիեսները ֆրանսիական են. օտարը կը նախադասի բնագրում լսել ու տեսնել քան մեզանում թարգմանուածն... Ցանկանում ենք այնուամենայնիւ յաջողութիւն, թէև մեր հաւատը մեր ցանկութիւնների հետ մի մակերեսի վրա չէ»։

Մի ուրիշ առարկութիւն, որ առհասարակ անում էր ցուցահանդիսի դէմ Գերմանիայում՝ է ցուցահանդէսների ապարդիւն լինելը. գերմանական արտաքին առուտուրը երկրորդ տեղն է բռնում Եւրոպայում (առաջինը է անգլիականը) և, եթէ ցուցահանդէսների բերած օգուտը ապացուցած լինէր, անգլիացիք ձեռք չէին քաշած լինիլ այդ ձեռնարկութիւններից՝ անգլիական 1862 վերջին ցուցահանդիսից յետոյ։

Սակայն յօգուտ ցուցահանդիսի (1897—1898 թվերից մինում կայանալու պայմանով) աշխատող շատ կան։ Ինքը Բերլին քաղաքը յատկացրել էր 10 միլիոն մարկի օժանդակութիւն։ Հաւանական կառավարիչ համարւում էր պր. Ռեոլո (Reuleaux), որը այսպէս էր ձևակերպում իւր ծրագիրը. նմանողութիւն չը լինի. եթէ մենք չունեցանք սեփական մոքեր՝ աւելի լաւ է ետ կանգնել»։

Մի ուրիշ գործ, որ պակաս չէր զբաղեցնում գերմանացիներին,—մի դատական գործ էր ընդդէմ մի հրէայի, որը իբր թէ մի քրիստոնեայ երեխայ էր մորթել՝ արիւնը ձեռք բերելու համար։ (Procés de Cleves)։

Այս գործը բնորոշում է այն իրողութիւնը, որ ամբոխը գրեթէ միակերպ է, միատեսակ է իւր զարգացման աստիճանով թէ Ռուսիայում, թէ Աւստրա-Հունգարիայում (ուր այդպիսի մի պրոցես նմանապէս մեծ աղմուկ էր հանել) և թէ Գերմանիայում։

Հաւատալ չի լինում թէ մենք ապրում ենք XIX դարու վերջում,

ուր ամբոխի նախապաշարումները դեռ շարունակում են պահպանել իրանց ոյժի ամբողջութիւնը։

Տեղական լրագրերը լիքն էին արշինանոց տեղեկատու սիւնեակներով դատաստանական դահլիճում տեղի ունեցած վկաների ցուցմունքների ու փաստաբանների արտասանած ճառերի վերաբերեալ։

1891 թ. յունիս 29 կորած տղայի անունն էր Յովհաննէս Հեգգման։ Մեղադրուողը էր մի մսավաճառ հրէայ Բուչոֆ'ը։ Մեղադրածը արդարացուած է։

Ամերիկայի գիւտը արուած է, ինչպէս յայտնի է, նոր տոմարով 12 հոկտեմբեր 1492 թ.։ Ամերիկացիները մեծ և փառաւոր պատրաստութիւններ տեսան այս դէպքի առիթով։ Ցօնները սկսել են հոկտ. 8 Նիւ-Իօրկում ներկայութեամբ բոլոր հասարակական և մշակների ընկերութիւնների։

Հոկտ. 9-ին կիւրակէ օրը, Նիւ-Իօրկի բոլոր եկեղեցիներում քարոզների համար նիւթ առնուց Ամերիկայի 400-ամեայ գիւտը։ Հոկտ. 10-ին մի փառաւոր թափոր 15.000 հոգուց բաղկացած մի խմբի (իտալացիներից, սպանիացիներից և մեքսիկացիներից) XV դարու շքեղ զգեստներով՝ ներկայութեամբ նախագահ Հարրիսոնի, նահանգապետների և այլն։ Ճաշից յետոյ տեղի ունեցաւ Կոլումբոսի արձանի բացումը Կենդրոնական պարկի մէջ։ Հոկտ. 10-ին երեկոյեան 10 կառախմբեր մեկնեցին Նիւ-Իօրկից դէպի Չիկագո պաշտօնական անձինքներով (նահանգապետներ, քաղաքագլուխներ և այլն) և նոյն ամսի 12-ին տեղի ունեցաւ ցուցահանդէսի օրհնութիւնը։ Գալ տարուայ համաշխարհային ցուցահանդէսը իսկապէս որոշուած էր ի յիշատակ այս 400 ամեակի, բայց եռաձգուեց գլխա որպէս աչքի առաջ ունենալով աղմկալի նախագահական ընտրութիւնները։

Առ այժմ ծախսուած է ցուցահանդէսի վրա 17 միլ. դոլլար [1]), իսկ ամբողջ գումարը պիտի հասնի 22 միլ. դոլլարից աւելի։

Մուտք է սպասւում մօտ 24 միլ. դոլլար, որոնցից մօտ 18.750.000 դոլլար մուտքի տոմսերից։

Յետագայ աղիւսակից ընթերցողը կը տեսնի թէ համեմատաբար նախորդ համաշխարհային ցուցահանդէսների հետ՝ Չիկագոյինը ինչ բարձր աստիճանի վրա է դրուած։

Ապագան ցոյց կը տայ թէ ամերիկացիների երազած յոյսերը ինչ չափով կարդարանան։

---

[1]) 1 դոլլարը=մօտ 2 ռուբլի։

Ահա լիշեալ աղիւսակը։

		Սկիր տարածութիւն։	Լիրանդաների թիւը։	Աղբիւրների թիւը։	Տեղերի թիւը։	Օրական տարածման թիւը։	Ցուցանողների դրամագլուխը։
			հազար	ֆլ.		հազար	
1851 թ.	Լոնդոն . . .	21	17	6	144	42	
1855 »	Պարիզ . . .	24½	22	5	200	26	5 միլ. դոլ.
1862 »	Լոնդոն . . .	23½	29	6	171	36	2.3 » »
1867 »	Պարիզ . . .	37	52	10	217	47	
1873 »	Վիեննա. . .	40	42	7	186	39	7.85 » »
1876 »	Ֆիլադելֆիա.	60	60	9	156	62	
1878 »	Պարիզ . . .	60	52	13	194	67	
1889 »	Պարիզ . . .	75½	60	32	183	181	6.50 » »
1893 »	Չիկագո. . .	400					22 միլիոն։

—Միացեալ Նահանգների նախագահի ընտրութիւնը, որը, ինչպէս լայտնի է տեղի է ունենում չորս տարին մի անգամ, մեծ կարևորութիւն ունի Հիւսիսային-Ամերիկայի կեանքի համար, թերևս նաև ամբողջ աշխարհի—քանի որ նախագահի քաղաքական և տնտեսական ուղղութիւններից են կախած լինելիք յարաբերութիւնները բոլոր պետութիւնների հետ։ Ներկայ նախագահ Հարրիսոնը պատկանում է հանրապետական կուսակցութեան և ընտրուեց 1888 թ. ընդդէմ ռամկական Գրովեր Կլիւելանդ'ի (Grover Cleveland) աջակցութեամբ Ջեմս Բլեն'ի։ Առաջինը թէև ստացել էր 5.440.531 ձայն, բայց նրա կողմն էին ամերիկական դաշնակցութեան 20 նահանգներ 233 քէֆներ ներկայացնող, մինչդեռ երկրորդը, Կլիւելանդը, ստացել էր աւելի ձայներ այն է 5.538.434 ձայն որ տուել էին 18 նահանգներ ունենալով միմիայն 168 քէֆ։ Նախագահական ընտրութիւնը կապուած է բազմաթիւ ներքին շահերի հետ, շահեր, որոնց հետ կապ ունի այս կամ այն կուսակցութեան յաղթելը. եթէ եկող նոյեմբերին հանրապետականները յաղթեցան լանձին Հարրիսոնի, նորին ռամկապետականների ջանքերի լոգուտ սոցա թեկնածուին,—ապա տեղի կունենան մեծ փոփոխութիւններ թէ կառավարչական շրջաններում գանուող անձերի մէջ և թէ, որ առաւելն է, վարչական ուղղութեան մէջ։ Ներկայ հանրապետականները լանձին Հարրիսոնի հակած էին աւելի դէպի ունեոր դասը, դրամատիրականը,—մինչդեռ ռամկապետականները իրանց ու-

շաղրութիւնը աւելի պիտի դարձնեն չունեոր և աշխատաւոր դասի դրութիւնները բարւոքելու վրայ։

Երկու քաղաքական որոշ կուսակցութիւններ, որոնք ներկայումս ասպարիզի վրայ են Ամերիկական քաղաքական կեանքում, են լիշեալ հանրապետականները և ռամկապետականները, որոնք ժամանակ չեն կորցնում դալ նախապահական կուի համար պատրաստելու։ Երկու կուսակցութիւններն էլ ժողովներ ունեցան, ուր վիճաբանւում էին կուսակցութեան, այսպէս ասած, դաւանանքի խնդիրը և ուր քէարկեցան նախագահական թեկնածուները։ Այս ժողովները նախապատրաստական են և Ամերիկայում կոչւում են «համաձայնութեան ժողովներ» կամ «դաշնադրութիւն» (convention)։

Ամենից առաջ գումարւեց հանրապետականների կուսակցութիւնը, որի ընդունած ուղղութեան ծրագրի ուրագիծը (որը plat-forme է կոչւում) ի միջի այլոց հետևեալ կէտերն է պարունակում։ 1) Նա խոստանում է անփոփոխ թողնել Մակ-Կինլէյ'ի (Mak-Kinley) բիլլի [1]) պրոտեկցիոնական միջոցները իրանց ամբողջութեամբ, 2) Նա լիշատակում է եւրոպական պետութիւնների լօժարութիւնը Ամերիկայի առաջարկութեամբ ժողովելու երկմետալական խնդրի առիթով [2]), 3) պարունակում է մի քաղաքական ակնարկ ընդդէմ Անգլիայի և Ռուսիայի, 4) լիշատակում է թէ Նիկարագուայի ջրանցքը պիտի իրագործւի, 5) խոստանում է անկախութեան պատերազմի վետերաններին նշանաւոր թոշակներ։

Այս կէտերը կարօտ են մեկնութեան, որովհետև մեծ կապ ունենալով երկրի տնտեսութեան հետ, քաղաքականութեան հետ—բնորոշում են հանրապետականների ուղղութիւնը։

Առաջին կէտը նպաստաւոր է գործարանատէրերին ու դրամատէրերին—նոցա արդիւնագործութիւնը կը շարունակի պաշտպանւել եւրոպական արդիւնագործութեան մրցումից՝ չնորհիւ Մակ Կինլէյի բիլլի պահպանման։

Երկրորդ կէտը լիշած է արծաթի հանքարատէրերին գրաւելու համար. իրաւ է եւրոպական պետութիւններից շատերը համաձայնւել են ներկայ լինելու դրամի երկմետալական համաժողովի, բայց լայտնի չէ արդեօք ժողովի վճիռները կ'ընդունւեն ամենքի կողմից, թէ ոչ։

Երրորդ կէտը մի քաղաքական հունար է՝ ուրիշ ոչինչ,—հունար, որը թերևս ձայներ որսալու համար լինի։

---

[1]) *Այս օրէնքի չնորհիւ օտար ոչ հում և մշակած ապրանքները չեն կարողանում ներմուծւել Միացեալ Նահանգները առ հապին մաքսերի պատճառով։*

[2]) *Տես «Մուրճ» № 7—8։*

Զորրորդ կէսը Ֆրանսիացիների դէմ է և Ֆրանսիական ձեռնարկութեան դէմ, որ դեռ վախճանի չի հասել, դա է Պանամայի կանալը։ Հինգերորդ կէսը վերջապէս ամենախայտառակն է և ահա ինչու։ Անկախութեան պատերազմից 7 տարի յետոյ թոշակի գումարը հասնում էր տարեկան 30 միլ. դոլլարի։ Ներկայումս պատերազմից մօտ 30 յետոյ թոշակի գումարը հասել է 141 միլ. դոլլարի, իսկ ստացողների թիւը դեռ 878.000 հոգի են, մի թիւ, որ թերևս դերազանցում լինի անկախութեան պատերազմին կռուողների բոլոր թիւին։ Անցել են տարիներ և ստացողների թիւը իսկի չի պակասում։ Բանը նրանում է որ ամեն թոշակաւոր ունի 2 կամ 3 քէյ։ Այսպիսով այս ձայները դնում, ձեռք են բերում ի վնաս պետական եւմատցոյցի։

Մինեսոտայում տեղի ունեցած ժողովում Բենեամին Հարրիսոնը ստացաւ 904 ձայներից 535, որոնցից 183 պետական աստիճանաւորներ են։

Ռամկապետական կուսակցութեան ժողովին անցնելուց առաջ մի երկու խօսք 3 Ամերիկաների միութեան կամ պան-ամերիկական (Համա ամերիկական) համաժողովի մասին [1]։ Երկու երեք տարի սրանից առաջ այդ խնդիրը շատ էր վիճաբանւում. կազմել ընդդէմ եւրոպական պետութիւնների՝ մի միութիւն երեք Ամերիկաներից՝ հիւսիսային, կենտրոնական և հարաւային Ամերիկաներից։ Բոլոր Ամերիկաների պետութիւններից և կառավարութիւններից Հիւսիսային Ամերիկա ուղարկած պատգամաւորները անասելի կերպով չքեղ ու սիրալիր ընդունելութիւն գտան իրանց այցելած Հիւսիսային Ամերիկայի ամեն մի քաղաքում։ Ապա տեղի ունեցաւ մի ժողով Վաշինգտոնում, որի առաջին նիստն էր 1889 թ. հոկտ. 2, նախագահութեամբ Ջ. Բլենի։ Հիւսիսային Ամերիկայի առաջարկութեան հետևանքը պէտք է լինէր — երեք Ամերիկաներից ի մի ձուլելը՝ նոր աշխարհի բոլոր սահմանները փակելով հին աշխարհի արդիւնաբերութիւնների համար՝ ամերիկական ամբողջ տարածութեան վրա եղբայրութեան, արդարադատութեան, խաղաղութեան հաստատելը, նաւագնացային և երկաթուղային գնացքների և դծերի կառուցանելը, կապելով ամենահեռաւոր կէտերը իրար հետ, այսպէս ասած հիւսիսային ընեռը հարաւայինի հետ։

Միմիայն վիճաբանութիւնների ժամանակ հրաւիրածները նկատեցին Հիւսիսային Ամերիկայի գերիշխելու ձգտումները ամբողջ Ամերիկան կլանելու համար, և ետ քաշեցին, որով և փուլ եկաւ դղեակ-շինութիւնը այն մարդու, որը է արտաքին գործերի մինիստր Ջեմս Բլենը, և որը իրաւամբ իւր դիպլոմատիական արժանաւորութիւնների շնորհիւ՝ ամերիկական Մակեաւել է կոչւում։

---

[1]) Le congrès des trois Amériqus, 1889—1890 par Amédée Prince գիրքը, հրատարակւած 1891 թ., մանրամասն տեղեկութիւններ է պարունակում այս համաժողովի մասին։

Հանրապետականների համաժողովի վճռի լայնանալուց յետոյ ռամկապետականները նմանապէս մի համագումար ժողով են կազմում, որ և տեղի էր ունեցել անցեալ յունիսի 22, Չիկագօ քաղաքում։ Կանգ առնենք այդ ժողովի զբաղմունքների վրա մի գաղափար տալու համար ամերիկական քաղաքական կեանքից։ Մինչդեռ հանրապետականները Միննէապոլիս դրեթէ առանց տատանման ու երկար վիճաբանութեան ընտրեցին Հարրիսոնին, ռամկապետականների որոշումները չատ էլ որոշ չէին և պարզ լայտնի չէր թէ արդեօք Կլեվելանդը կլաղթի թէ ոչ, քանի որ սկզբից լայտնի էր որ Նիու-Իորկի նահանգը ամբողջապէս Դաւիդ Հիլլի (David B. Hill) կողմն էր։ Այս հանգամանքը նրանով էր նշանաւոր, որ այդ նահանգի քվէների թիւը ամենամեծն է։ Բացի Կլեվելանդի, Հիլլի անուններից խօսում էին նաև Boies'ի համար, Մորրիսոնի, Կեմպելի, Գորմանի—որոնք գուցէ լաղթէին, եթէ միայն երկրորդ քվէրկութեան ժամանակ չատ քվէներ ունեցող նահանգներից մէկն ու մէկը անցնէր սրանց մէկի կողմը։

Յունիս 22, ժամը 11½, ժողովը բացւեց։ Նիստը տեղի ունէր մի ժամանակաւոր փայտեայ շինութեան տակ, ուր խռնւած էր 20.000 աւելի մի բազմութիւն։ Մէջ տեղ գտնւում էին պատգամաւորները։ Նստի նախագահ ընտրւեց ծերագոյնը—պ. d'Owens'ը, ապա մի կարճառօտ աղօթքից յետոյ զբաղմունքների նախագահ ընտրւեց Ուիլլիամ (արևմտեան Վիրգինիայից)։ Ամենից առաջ վիճաբանութեան է ենթարկւում նախօրօք պատրաստած (ռամկապետական) կուսակցութեան պահանջքների ծրագիրը։

Այդ ծրագրի երկրորդական նշանակութիւն ունեցող հարցերը մի կողմ թողնելով՝ ուշադրութիւն դարձնենք նրա գլխաւոր կէտերի վրա։ Ռամկապետական ծրագիրը բողոքում է պրոտեկցիոնիստ սիստեմի դէմ, որը, իւր ասելով հաւասար է «մի տուրքի՝ որ վերցնւում է ամբոխից լօգուտ սակաւաթիւ գործարանատէրերի»։ Ռամկապետական ծրագիրը ընդդէմ է այն հանգամանքներին, «որոնց շնորհիւ 17.000 անձինք տիրում են մեծ հանրապետութեան ամբողջ հարստութեան կէսը, իսկ 250 դրամատէրեր մի տասներկրորդականը գոլքի, որ բաժանւած է 63 միլիոն քաղաքացիների մէջ։ Վիճաբանութիւնների ժամանակ հեղինակաւոր առենախօսներից մէկը պ. Neal'ը այն միտքը լայտնեց որ ներկայ տնտեսական դրութիւնը, որի մեղաւորներն են հանրապետական կուսակցութիւնը և դրա պարագլուխ նախագահ Հարրիսոնը—նմանւում է այն քաղաքական դրութեանը, որից ազատելու համար ամերիկացիները ապստամբեցին Անգլիայի դէմ և որ նոյնանման միջոցների պէտք է ձեռնարկել և այժմ ընդդէմ հանրապետականների։

Այս կէտը ամենանշանաւորն է ռամկապետական ծրագրի մէջ և հոգատարութիւնը աշխատաւոր դասակարգի համար ընդդէմ սակաւաթիւ դրամատէրերի՝ լինելու է նախագահական ընտրութիւնների կռւի պայ-

քարը։ Այս մեծ ինդիրը կլանելով բոլոր այլ խնդիրները՝ միացրեց բոլոր ռամկապետականներին։

Ծրագրի մասին եղած վիճաբանութիւնները տեւեցին 6½ ժամ և երեկոյեան ժամը 6 էր, երբ ծրագիրը ամբողջապէս ընդունուեց ներկայ եղած ռամկապետական պատգամաւորների կողմից։ Ապա դիմեցին քւէարկութեան։ Ժողովի նախագահը սովորութեան համեմատ նահանգների այբուբենական կարգով հարցնում է նահանգի թիկնածուի անունը, եթէ նահանգը համաձայնութեան է եկել մի անուան վրա։ Բոլոր նահանգների անունները տալուց յետոյ տեղի է ունենում մի երկրորդ քւէարկութիւն, որի ժամանակ երբ դարձեալ տրւում են նահանգների անունները—ամեն մէկ նահանգի ներկայացուցիչը յայտնում է իւր վերջնական որոշումը՝ յայտնելով թէ նա այսքան քւէ տալիս է այս թիկնածուին, այսքանը այս մէկին և այլն, իսկ եթէ որ և է նահանգ միաձայն ընտրած ունի մի թիկնածու,—նոյն նահանգի ներկայացուցիչը յայտարարում է թէ իմ նահանգը իւր բոլոր այսքան քւէները տալիս է միաձայն այս ինչ թիկնածուին։

Որովհետև սկզբից յայտնի չէր թէ ով կը յաղթի և չկար տրամադրութիւն Կլեվելանդին միաձայն ընտրելու,—քիչ աւելի մանրամասն խօսենք ընտրութիւնների մասին՝ լիշեցնելով որ Նիու-Իօրկի նահանգը (որը ի դէպս ասած Empire-State, այսինքն պետական նահանգ է անւանւում) ունէր իւր թիկնածուն յանձին Դ. Հիլլի։

Ուրեմն միայն թիկնածուների անունը հարցնելով (առանց քւէների թւի) քարտուղարը կոչում է բարձրաձայն՝

—Ալաբամա։

Պատասխան չկայ։ Ալաբամա նահանգի քւէները բաժանւած լինելով, ներկայացուցիչը չի յայտարարում նահանգի թիկնածուի անունը, բայց թէ նա կը պատասխանի երկրորդ հարցի ժամանակ՝ ասելով թէ իւր քւէներից ում ինչքան է տալիս։

—Արկանզաս, հարցնում է քարտուղարը։

Թէև կարծւում է, որ Արկանզասը Կլեվելանդի կողմն է, բայց նահանգի ներկայացուցիչը յայտարարում է որ խօսելու հերթը զիջանում է Նիու Ջերսի (Neu-Jersey) նահանգի ներկայացուցչին։

Տեղիցը վեր է կենում Նիու Ջերսիի ներկայացուցիչ պ. Աբբեատը (Abbett), որը ընդսմին է և նահանգապետ և առաջնակարգ հռետորի հռչակ է վայելում։ Սա իւր յաջող ճառի մէջ առաջ է բերում բոլոր այն հանգամանքները, որոնք խօսում են Կլեվելանդի օգտին և իւր ճառը վերջացնում ասելով՝ որ Նիու Ջերսի՛ն, որի ներկայացուցիչն է ինքը, իւր բոլոր ձայները կտայ Կլեվելանդին։ Անասելի ծափահարութիւններ և աղմուկ։ Կլեվելանդի հակառակորդները պիտի աչխատեն որ սա չանցնի առաջին ընթերցումի ժամանակ—քանի որ այդ հանգամանքը նրան կը նպաստի

աղղելով յաջորդ հռետորների վճռի վրա։ Աղմուկը շարունակւում է, Կլեվելանդի համախոհները իրար են նայում, հակառակորդները իրար, հանդիսականներից շատերը խաղացնում են իրանց թաշկինակները օդի մէջ, ոմանք բղաւում—մի խօսքով կատարեալ խառնաչփոթութիւն, որովհետև գլխաւոր թիկնածուի անունը արդէն արտասանուեց։

Երբ խաղաղութիւնը նորից տիրում է դահլիճում, նահանգապետ ներկայացուցիչը բարձրաձայն շարունակում է այսպէս. «Եթէ ձեզ հարցնելու լինին թէ ինչու Կլեվելանդի անունը այսպիսի ուրախութեամբ ընդունուեց այստեղ ձեր ներկայութեամբ, ինչու անունը այդ մարդու, որը ոչ տեղեր ունի բաժանելու, ոչ միլիոններ իրան պաշտպանելու, ամենաաչքի ընկնող մարդն է մեծ ռամկապետական և ամերիկական միութեան կուսակցութիւնների համար—պատասխանեցէք որ նա է, որովհետև առաջինն էր՝ որ իւր 1887 թ. նախագահական պատգամագրութեան մէջ քաջութիւն ունեցաւ մերձենալ կենսական խնդրին, սկզբունքները վերադասել իւր անձնական շահերին, քաջութեամբ մատնացոյց անել ներկայ տնտեսական վարչութեան վանգները, և պատրաստ լինել դիմադրելու ամբոխի հարստահարելուն դրամատէրերի կողմից։ Եթէ այսօր պարզ և որոշ է դրւում—խնդիրը հասարակաց շահերի և կարող փոքրամասնութեան մէջ—այդ բանում պարտական ենք Կլեվելանդին։ Ռամկապետական կուսակցութեան քէարկութիւնը կը սրբագործի ձեր ցոյց տուած ընդունելութիւնը դէպի նրա թիկնածութիւնը և իշխանութեան կը հասցնի այդ արդար մարդուն, որին մենք պատիւ ենք համարում մեր շարքերին պատկանելը տեսնել։ Ես չեմ կասկածում որ այն վառաւոր ցոյցերից յետոյ, որոնց դուք ներկայ էիք՝ հակառակ բոլոր ժամանակաւոր տարաձայնութիւնների,—ես չեմ կասկածում որ բոլոր ձայները ռամկապետական կուսակցութեան եկող նոյեմբեր ամսին կը տրուեն Գրովեր Կլեվելանդի անուան։ Ճառի այս վերջը առաջ է բերում մեծ աղմուկ և բողոքներ Նիու-Իորկի պատգամաւորների կողմից, բայց նահանգապետ Աբբետսը՝ որը դիտմամբ էր այդպիսի ձև տուել իւր խօսքերին՝ բացականչում է բարձրաձայն. «ես ասել էի բոլոր ձայները ռամկապետական կուսակցութեան. ես չէի ասել Նիու Իորկը»։

Տեղի է ունենում աւելի ևս մեծ աղմուկ, նորից խառնաչփոթութիւն, նորից բողոքներ Նիու-Իորկի պատգամաւորութեան կողմից և նոր ու աւելի ուժեղ ծափահարութիւններ հանդիսականների կողմից նահանգապետի Աբբետսի խօսքերի հասցէին։ Ինչպէս կը բաժանուեն ձայները—ահա գլխաւոր հարցը։ Նիու Իորկը տէր է 72 ձայնի, Պենսիլվանիան 64, Իլլինոյսը 48։ Քանիսը կտրուեն Հիլլին, քանիսը Կլեվելանդին։

—Կալիֆորնիա, հարցնում է քարտուղարը։

—Կալիֆորնիան, ասում է սրա ներկայացուցիչը, իւր հերթը տալիս է Նիու-Իորկին։

Գիշերաւ ժամի մէկն է։

Ոտի է կանգնում է պ. Witt'ը—Կլեւելանդի կուսակցութեան հակառակորդը—Կլեվելանդի՝ որին մի ուրիշ ճառի մէջ նոր ատենախօսը անուանել էր «Կաւի ոտներով մի քուրմ»։ Այս անգամ պ. Վիտտը աւելի զգոյշ է դանուում և լոկ Հիլլի թեկնածութիւնը գնում,—մի թեկնածութիւն՝ որին պաշտպան են հանդիսանում թէ գեներալ Sickles'ը—անկախութեան պատերազմի ներկայացուցիչներից մին և թէ ժողովրդական ատենախօս Bourke Cockran'ը։

Սոցա թեկնածուի անունը նմանապէս, բայց աւելի սակաւ ոգևորուած ծափահարութիւնների է արժանանում և այն աւելի փոքր չրջանից։ Հերթը դալիս է միւս նահանգներին։ Յիշատակւում են նոր թեկնածուներ. Մորրիսոն, Կեմպել Գորման։

Դառնում է ժամը 2, երբ պատգամաւորներից մէկը առաջարկում է նիստը լուսաձգել կէսօրեան։

Առաջարկութիւնը մերժւում է և գիշերաւ ժամը երեքին սկսում է վերջնական քէարկութիւնը առանց ճառախօսութիւնների և առանց վիճաբանութիւնների

—Ալաբամա, նորից հարցնում է բարձրաձայն կերպով ալբուքենական կարգով պ. քարտուղարը։

—Ալաբամա նահանգը, պատասխանում է սրա ներկայացուցիչների նախագահը, տալիս է 14 ձայն Գրովեր Կլեւելանդին, 2 Հիլլին, 1 ձայն Boies'ին, 2 ձայն Գեմպելլին, 1 ձայն Կորմանին։

Կլեւելանդի համախոհները ուրախանում են. նրանց նպատակն է բաժանել տալ ձայները։

—Արկանզաս։

—Արկանզասը տալիս է իւր 16՝ ձայները Գրովեր Կլեվելանդին։

—Կալիֆորնիա։

Նա տալիս է իւր 18 ձայները Կլեվելանդին։

Ուրեմն առաջին քէարկութեան ժամանակ խօսքը տալով Նիուիորկին՝ գիտաւորութիւն ունէր արագացնել հակառակորդների լաստարարութիւնը։

—Կոլորադո։

4 ձայն Հիլլին, 5 ձայն Boies'ին։

Հերթը գալիս է խոշոր նահանգներին։

—Իլլինոյս։

—Իլլինոյսը, պատասխանում է սրա պատգամաւորութեան նախագահ Ա. Սաուենսոնը, տալիս է իւր 48 ձայները Գրովեր Կլեւելանդին։

—Նիու-Իորկ։

—72 ձայն Հիլլին, պատասխանում է նահանգի ներկայացուցիչը։

Մինչև այս յայտարարութիւնը Կլեվելանդը ունէր մեծամասնութիւն, բայց 72 խոշոր թիւը նրան փոքրամասնութեան դարձրեց։

Պենսիլվանիան իւր 64 ձայները արձանագրում է Կլեվելանդի համար այս նոր յայտարարութիւնը նորից մեծամասնութեան է դարձնում Կլեվելանդի թեկնածութիւնը և պատճառ դառնում նոր աղմուկների և անկարգութեան խառնաշփոթութեան։

—Տեխասը իւր 23 ձայները տալիս է Կլեվելանդին, բացականչում է ոգ խառնաշփոթութեան միջոցին Տեխասի ներկայացուցիչը և աղմուկը և ամբոխի դղրդումը հասցնում ծայրաստիճանի և բուռն բողոքների, երբ յաղթել կարծող Կլեվելանդի կուսակցութեան տաքարիւնները բաց են անում իրանց յաղթող թեկնածուի կապոյտ և ոսկեգոյն դրօշակը։ Բողոքները կրկնապատկւում և եռապատկւում են, երբ Դիկինսոնը Միչիգանի նահանգից, ոտի կանգնելով՝ համարձակում է ամբոխին հանդստանալ և անկարգութեամբ առիթ չը տալ իրանց որոշումները չը յայտնած նահանգներին՝ իրանց վճիռը վերջին բոպէին ի վնաս Կլեվելանդի փոխելու։

Խաղաղութիւնը նորից տիրում է դահլիճում և ութը նոր նահանգներ հերթով տալիս են իրանց ձայները Կլեվելանդին, որ և ստանում է մեծամասնութիւն։ Քարտուղարը պատրաստւում է ազդարարել ժողովին քւէարկութեան արդիւնքը, բայց նրան կանխում է սենատոր Դանիելսը Վիրգինիայից։

—Ես խնդրում եմ ժողովից նախագահից քւէարկութեան ենթարկել հետեւեալը. «Գրովեր Կլեվելանդը նշանակւեց միաձայն հաւանութեամբ թեկնածու ռամկապետական կուսակցութեան 1892 թ. նախագահական ընտրութիւնների համար»։

Այս առաջարկութեանը հետեւում են որոտընդոստ ծափահարութիւններ։

Bourke Cockran'ը խօսք է ուզում։ Ամենքը սպասում են մի բողոքի։

—Իսկ ես, ասում է նա, խնդրում եմ ի նկատ առնել, որ Նիու-Իորկի պատգամաւորութիւնը—որը մինչև հիմա էր ի նպաստ Հիլլի—խոնարհւում է մեծամասնութեան վճռի առաջ և մի մարդու պէս ոտի կը կանգնի Կլեվելանդին—ռամկապետական կուսակցութեան ընտրածը յայտարարելու։ Այսպէս վերջացաւ այդ օրւայ ընտրութիւնը տեւելով $16^1/_2$ ժամ։

Ձայից յետոյ նորից ժողով եղաւ, թեկնածու ընտրելու փոխնախագահութեան համար։ Առանց սկզբում մեծամասնութիւն ունենալու ընտրւեց գենեռալ Ստեվենսոնը չնորհիւ չատերի՝ վերջին բոպէին փոխած որոշման՝ սրա օգտին։

Օտար լեզուներով նորերս լոյս տեսած գրքերից արձանագրենք.

—Arménie, Kurdistan et Mesopotamie par M. le comte de Cholet. (Արմէնիա, Քուրդիստան և Միջագետք ճանապարհորդական տպաւորութիւններ դուքս դը Շոլէի)։

Հեղինակը արել է իւր ճանապարհորդութիւնը անցեալ տարի։ Նրա գրքից մէջ բերենք մի քանի տող միայն վերաբերեալ հայերին։ «Հայերի դրութիւնը երբեմն անտանելի է և ես երբէք չէի կարող երևակայել, որ թշուառութիւնը կարող լինէր այդ աստիճանին հասնել սրանց երկրի մի քանի մասերում։ Տաճկական լուծը ծանրանում է սրանց վրա ամեն օր աւելի ու աւելի ծանր և ես անկարող էի վկայ լինել առանց լուզվելու թէ անթիւ անիրաւ հարկապահանջումներից ու կեղեքումներին և թէ այնանհամար անիրաւութիւններից, որոնց հայերը անընդհատ զոհ են դառնում։

—Voyage au Mont Ararat, de Jules Leclercq. (ճանապարհորդութիւն դէպի Արարատ սարը, Ժիւլ Լեկլերկի—Բելգիական թագաւորական Աշխարհագրական Ընկերութեան նախագահի)։

Բուրդոն, Բ.—Էմոցիաների և տենդենցների արտայայտութիւնը լեզվի մէջ։ Պարիզ (գինն է մօտ 3 ռ.)։

Դեժոբ, Ժ. (Dejob, C.).—Հանրային կրթութիւնը Ֆրանսիայում և Իտալիայում 19-րդ դարում։ Պարիզ, գինն է 1 ր. 50 կոպէկ։

Շովէն, Ժ.—Պատմական էտիւդ կանանց մատչելի պրոֆեսիաների մասին։ Պարիզ, գինն է 3 ռուբլի։

Բրոնն'ս, Հ. Գ.—Կենդանական աշխարհի դասակարգութիւնը, գիտնականօրէն ներկայացրած խօսքով և պատկերով. հատոր III. Մոլլուսկներ։ Նորից մշակեց Հ. Սիմրոթ. տետր I. Լէյպցիգ, գինն է 70 կ.։

Ռեցիուս, Գ.—Բիոլոգիական հետազօտութիւններ։ Նոր շարք, III. Ստոկհոմ. նկարներով, գինն է 16 ռուբլի։

Ռոմէնս, Գ. Ժ.—Դարվին և ըստ Դարվինի։ Դարվինի թէօրիայի մեկնութիւնը և բացատրութիւնը դարվինական վիճելի խնդիրների։ Հատոր I. Դարվինի թէօրիան։ Անգլերէնից թարգմանեց դերմաներէն Բ. Ֆեստէր։ Լէյպցիգ։ Պատկերով և 124 նկարներով, գինն է 4 ռուբլի։

Էլիս, Ժ.—Վ. Է. Գլադստոն։ Լոնդոն, գինն է 1 ռ. 50 կոպ.։

Ընդհանուր պատմութիւն, մասնակցութեամբ Ֆ. Բեցոլդի, Ալ. Բրիվնէրի և ուրիշների, հրատարակութեամբ Վ. Օնկէն'ի։ Մասն VII, հատոր I, նկարներով և քարտէսներով։ Բերլին, գինն է 8 ռուբլի։

Մոլոկէ.—Գրուածքներ և լիշատակարաններ։ Հատոր V։ Բերլին, գինն է 2 ռ. 50 կոպէկ։

Շիլլերի նամակները, հրատարակութեամբ և ծանօթութիւններով Ֆ. Ժոնասի։ Հատոր I. Շտուտգարտ, պատկերով, գ. 1 ռ. 50 կոպ.։

Շտոլպէ, Հ.—Բնաղդերի զարգացման երևոյթներ։ Վիեննա, գինն է 2 ռուլի։

Հոմմէլ, Ֆ.—Եգիպտական կուլտուրայի բաբելոնական ծագումը։ Միւնիխէն, գինն է 4 ռուբլի։

Բրիւնետիէր, Ֆ.—Ֆրանսիական թատրոնի էպոխաները 1636—1850. Պարիզ, գինն է 1 ռ. 75 կոպէկ։

Ֆ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾԸ

Գերմանիայի կայսր երիտասարդ Վիլհելմ II-ի և նորա կանցլեր Կապրիւի կառավարութիւնը ներկայումս կանգնած է մի ծանր դրութեան առաջ, որ հէնց իրանք են ստեղծել զինուորական մի նոր օրինագծով, որի վիճակը շատ անորոշ է։ Մեր ընթերցողներին արդէն յայտնի է թէ ինչ պարտութիւն կրեց Կապրիւին դպրոցական այն օրինագծի համար, որը, եթէ ընդունուէր ռայխստագից գերմանական դպրոցները կը մատնէր կրօնական դաւանութիւններին. և այդ հանգամանքից անկասկած ամենից շատ կ'օգտուէին կաթոլիկ գերմանացիք՝ տարրական դպրոցները կղերականացնելու համար։ Գերմանեայի ազատամիտ մասի ուժեղ բողոքը սակայն ստիպեց կառավարութեանը՝ այդ օրինագիծը յետ վերցնել. կոմս Կապրիւիին այդ պարտութիւնը թանկ նստեց նրանով, որ նա մնալով Գերմանիայի կանցլեր՝ հրաժարուեց պրուսական մինիստրութեան նախագահ լինելուց, մնալով նորա մէջ լոկ որպէս մի անդամ՝ պարզ մինիստրի պաշտօնով։

Մի այդպիսի ծանր դրութիւն էլ ստեղծուում է այժմ զինուորական նոր օրինագծով, որով ենթադրուում է գերմանական զօրքի թիւը մեծացնել, աւելացնելով զօրքը պահպանելու ծախքը ամեն տարի 60 միլիոն մարկով, և այդ ծանրութիւնների փոխարէն՝ զինուորական ծառայութիւնը երեք տարուց իջեցնելով երկու տարուան։

Զինուորական օրինագիծը մինչ այժմ դաղտնի էր պահուում հասարակութիւնից, բայց առաջարկուած էր «Միութեան խորհրդին» (Bundesrath), որ ժողովն է գերմանական բոլոր 25 պետութիւնների ներկայացուցիչների։ Միմիայն այն օրինագծերը կարող են

ռայխստագին առաջարկուել, որոնք հաւանութիւն են գտնում միութեան խորհրդի կողմից։ Արդ, այդ օրինագծի բովանդակութեան հետ նորերս ծանօթացրեց «Կեօլնի լրագիրը»։ Օրինագծի բովանդակութիւնը շատ կարևոր է, քանի որ նորա յօրինելու շարժառիթները զուտ քաղաքական են, և եթէ ռայխստագից ընդունուելու, հետևապէս եթէ նա օրէնք դառնալու լինի՝ մեծ հետևանքներ պէտք է յառաջացնի ամբողջ Եւրոպայի համար, սասակացնելով պատերազմական պատրաստութիւնները նաև միւս տէրութիւններում։

Օրինագծի համեմատ Գերմանիայի զօրքը խաղաղութեան ժամանակ պէտք է լինի 492,068 հոգի հասարակ զինուորներով, բաժանուած այսպէս. հետևակ (ինֆանտերիա) 711 բատալիոն, հեծելազօրք (կաւալերիա) 477 էսկադրոն, դաշտային ռմբաձիգ զօրք (արտիլերիա) 494 բատարէ, հետևակ ռմբաձիգ զօրք՝ 37 բատալիոն, ռահվիրայ զօրք (պիոներ) 24 բատալիոն, երկաթուղային զօրք 7 բատալիոն ու բեռնող զօրք (տրէն) 21 բատալիոն։ Ունտեր-օֆիցէրների, օֆիցերների, բժիշկների և զինուորական վարչութեան ծառայողների թիւն էլ ըստ այնմ պէտք է կազմի։

Զօրքի աւելացնելովը օրինագիծը որոշում է ծառայութեան տևողութիւնը հետևակ զինուորների համար երկու տարի, վոխանակ ցայժմեան երեք տարուան։

Զօրքի թիւի այս նոր աւելացումը հիմնւում է ազգաբնակութեան աճման և քաղաքական պայմանների փոփոխութեան վերայ, որ իբր թէ կատարուած է ի վնաս Գերմանիայի։

Օրէնքով 11 մարտի 1887 թ. խաղաղութեան ժամանակ զօրքի թիւը աւելացուեց մինչ 468,409 հոգի, օրէնքով 15 յուլիսի 1890 թ. այդ թիւը աւելացուեց մինչ 486,983 հոգի, և այժմ ահա առաջարկւում է որ 1-ն ապրիլից 1894 թուականի այդ թիւը հասցնի 492,068 հոգու։

Օրինագծի պատճառաբանութեան մէջ ասուած է որ գերմանական զօրքի ոյժը առաջ կայանում էր ընդհանուր զինուորագրութեան սկզբունքի մէջ, բայց որ այդ սկզբունքը այժմ արդէն ընդունուած լինելով նաև հարևան պետութիւններում՝ Գերմանիայի առաւելութիւնը այդ կողմից ոչնչացել է։

Ֆրանսիայում, ասւում է այդտեղ, օրէնքով 15 յուլիսի 1889 թ. ընդհանուր զինուորագրութիւնը ամենայն խստութեամբ կատարելագործութեան է հասցրած: Խաղաղութեան ժամանակ ֆրանսիական զօրքը այս վերջին երեք տարիներում եղած է միջին թւով ամեն տարի 519,000 հոգի, ամեն տարի զինուորակոչութեան նշանակւած թիւը 1890 թւականի համար 230,000 հոգի, իսկ 25 տարեայ զինուորակոչւածների թիւը, դէն գցելով 25% որպէս կորուստ, շուրջ 4,053,000 հոգի:

Օրինագծի հեղինակների ասելով՝ նոյն անդադրում կերպով աշխատում է նաև Ռուսիան, որի զօրքը խաղաղութեան ժամանակ 1889 թւականին էր 926,000, 1892 թ.—987,000, որից միայն 100,000 հոգի Ասիայումն են կանգնած: Զինուորակոչւածների թիւն է տարեկան շուրջ 281,000 հոգի, որից 24,000-ը Ասիայում: 23 տարեայ համագումարով զինուորութեան պատրաստւածների թիւն է 25% դուրս գալով—4,556,000 հոգի:

«Այսպիսի հանգամանքների դիմաց, ասւում է օրինագծի յառաջաբանում, մենք ունենք միայն մի միջոց՝ մեր ապահովութիւնը և անկախութիւնը պահպանելու համար—մեր ազգային զինուորական ոյժի կատարեալ շահագործումը: Պէտք է մի օրգանիզացիա ստեղծւի, որը բոլոր պիտանի ոյժերը կարողանայ ընդունել, և այն ժամանակ միայն կարող է Գերմանիան ամեն յարձակմանը հանդիստ սպասել»:

Մինչ այժմ գերմանական զօրքի թիւը որոշւում էր եօթը տարով. այժմ, ըստ նոր օրինագծի, բաւական է համարւում 5-ական տարեշրջան նշանակել, քանի որ ժողովրդի թւահամարը կամ վիճակագրութիւնը, որպէս նաև ռայխստագի ընտրութիւններն էլ 5-ական տարեշրջաններում են կատարւում:

Կառավարութիւնը հաշւում է որ նոր սիստեմով Գերմանիան կը պատրաստի 24 տարում 4.400.000 զինուոր, չը հաշւած ազգաբնակութեան աճումից յառաջացած յաւելումը:

Գերմանական կառավարութեան այս նոր օրինագիծը հանդիպում է զօրեղ ընդդիմադրութեան մի քանի պատճառներով: Նախ զօրքի թիւը աւելացնելով՝ պահանջւում է միանգամից մօտ 90 միլ. մարկ և ամեն տարի մօտ 60 միլիոն աւելի ծախք, քան մինչ

այժմ։ Շատերը համարում են այդ նոր բեռը անընդունելի Գերմանիայի համար։ Երկրորդ՝ շատերը համարում են երկամեայ ծառայութիւնը իբր աւելի կարճ միջոց, քան հարկաւոր է լաւ զինուոր պատրաստելու համար։ Երրորդ՝ շատերը հարցնում են՝ հապա ինչին է ծառայում երեքպետեան դաշնակցութիւնը, եթէ նա չը պէտք է կարողանայ կատարեալ ապահովութիւն ապահովեցած երկիրներին՝ յարձակումներ յետ մղելու համար։

Շուտով կ՚իմանանք թէ ինչ ընթացք կը ստանայ այս նոր օրինագիծը։ Արդէն սպասւում է որ ռայխստագը կը մերժի կառավարութեան այդ օրինագիծը, որի հետևանքը կը լինի՝ ռայխստագի լուծումը։ Բիսմարկի կուսակցութիւնը հակառակ է այդ նոր օրինագծին։

Ζ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1893 Թ. ՀԱՄԱՐ։ Ներկայ № 10 լոյս տեսնելուց յետոյ, Նոյեմբերի 1-ից սկսում է «Մուրճ»-ի բաժանորդագրութիւնը 1893 թուականի համար։ «Մուրճ»-ի խմբագրութիւնը վայելում է որ սոյն 1892 թուականի բաժանորդները կ՚աշխատեն իրանց բաժանորդագրութիւնը վերանորոգելու ցանկութիւնը վաղօրօք յայտնել։ Ներկայ համարով ուղարկում ենք բաժանորդներից ամեն մէկին 2-2 հատ գրամական ծրարներ, խնդրելով աւելորդները իրանց չրջանում բաժանել։

REVUE D'ORIENT ET DE HONGRIE ֆրանսերէն չաբաթաթերթը իւր № 43 առ 23 հոկտ. 1892 թ. տպել է մի բանասիրական յօդուած նուիրած «Մուրճ» ամսագրին։ Յօդուածը խորագրած է «Une revue arménienne: le Mourtsch» և ստորագրած՝ Յակոբ Զիլինգարեան։ Հեղինակը մեծ համակրանքով է վերաբերուում դէպի «Մուրճ»-ը, անուանում է նորան «անկասկած առաջին ամսագիրը հայերի մէջ» և վերջացնում է այսպէս՝ «այս պարբերականը առաջին հայկական թերթն է, որ ամենից լաւ ի նկատ է առնում իւր ընթերցողների պահանջները և շահերը»։

ՌԱՖԱԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ գրուածքների տպագրելու իրաւունքը։ Հանգուցեալ պօէտի ալրին՝ տիկին Հռիփսիմէ Պատկանեան յայտարարում է հետեւեալը. «Յայտնում եմ որ հանգուցեալի կայքի և զաւակների վրայ խնամակալներ նշանակուած ենք՝ ես (հանգուցեալի ալրին), Խ. Խ. Զալխուշեան և Ի. Մ. Ալաճալեան, և առանց մեր համաձայնութեան՝ պօէտի ոչ մի գրուածք չը պէտք է տպագրուի։ Միայն արտատանումներ հրատարակող լրագիրները իրաւունք ունեն արտատպել Գամառ-Քաթիպայից։ Իմ և իմ զաւակներիս իրաւունքները պաշտպանելու համար, նաև յարգելով հանգուցեալ ամուսնուս վիշտակը՝ ես ուզեցի սահմանուած հաւատարմութիւնս նրա բարեկամ՝ երդուեալ հաւատարմատար Գ. Խ. Զալխուշեանին, որին նոյնպէս յանձնարարեցի կարգի բերել հանգուցեալ պօէտի թղթերն ու նամակները։

«Ներկայ նամակը չի վերաբերում Ռաֆայէլ Պատկանեանի գրուածների մեծ. տիկին Վալերիէ Բանանեանի հրատարակութեանը, որ այդ աշխատանքը իւր վրայ է առել իմ զաւակներին ապահովացնելու համար միայն և որին հանդուցեալ մարդս իւր կենդանութեան ժամանակ ուղարկեց իւր հեղինակութիւնները»։

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ի հրատարակիչ պ. Յ. Բարխուդարեանը խնդրում է մեզ յայտնել, որ «Մանկավարժ. Գրադարան»-ի մէջ տպուած Ս. քահ. Սահակեանի յօդուածում «Բարոյական փիլիսոփայութիւն» վերնագրով, պակաս է յառաջաբանը, որ սխալմամբ միայն չի տպուել։ Յօդուածը, երբ լոյս տեսնի առանձին գրքոյկով, կ'ունենայ պակասող յառաջաբանը։

Պր. ՄԿՐՏ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ, որ «Մուրճ»-ում վարում է վրաց ընտիր վէպերի թարգմանութիւնը, խնդրում է մեզ յայտնել, որ հայոց բեմի համար նա թարգմանել է «Հայրենիք» դրաման, որ փոխադրուած լինելով ֆրանսիական «La patrie» պիեսից, մեծ յաջողութիւն ունեցաւ վրաց բերի վերայ։

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ, բացի գրախօսութեան մէջ լիշուածներից՝

9) ՂԱԶԱՐԵԱՆ, Յակոբ.—«Ֆէրօ». քրդական լեգենդա։ Հրատ. «Աղբիւր» և «Տարազ» պատկերազարդ հանդէսների։ Թիֆլիս, տպարան Արօր Տիգրան Նազարեանի, 1892 թ., գինն է 15 կոպէկ։

10) ՄՈՒՐԱԴԵԱՆՑ, Մելքիսեդեկ Եպիսկ.—«Հովւական աստուածաբանութիւն» Կ. Պոլիս, տպարան Ն. Կ. Պէրպէրեան, 1892 թ., գինն է?։

11) ՄԱՌ, Նիկ.—«Ամաւնալին ուղեորութիւնից դէպի Հայս». նկատողութիւններ և քաղուածներ հայկական ձեռագրերից։ Թարգմ. Ոնոփրիոս Անոփեան։ Վիեննա, Մխիթարեան տպ. 1892 թ., գինն է 1 ֆր. 25 սանտիմ։

12) ԱՂԱՑԵԱՆՑ, Ղ.—Մեր ուսուցիչներին ընկերական նէր։ «Աղբիւր Տարազ-ի» պրէմիա։ Տպ. Տ. Նազարեանցի 1892 թ.

13) ВЕСЕЛОВСКІЙ, Юрій.—Изъ исторіи армянской сцены, արտատպուած Театръ ամսաթերթից։

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

		Ր.	Կ.
	«ՄՈՒՐՃ» *ամսագիր*, 1889 *թ.*, *երկու հատորով*	12	—
	Նոյնը «*Մուրճ*»-*ի այժմեայ բաժանորդների համար* . .	7	—
2.	«ՄՈՒՐՃ» *ամսագիր*, 1890 *թուականի*, *երկու հատորով* .	12	—
	Նոյնը «*Մուրճ*»-*ի այժմեայ բաժանորդների համար* . .	7	—
3.	ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«ՑԵՑԵՐ» (*վէպ*).	1	—
4.	ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ (*Ղզլարցի*)՝ «*Մանուկների մարսողութ. գործարանների հիւանդութիւնները*» . .	—	05
5.	ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.—«ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», *վէպ հայ-կաթոլիկների կեանքից*	1	—
6.	ԼԷՕ.—«ԿՈՐԱԾՆԵՐ» (*վէպ*).	—	50
7.	Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ս.—«ՀԱՑ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ»։ (*կեանքից պատկեր*).	—	40
8.	ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ».	—	60
9.	ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«ԲՂԴԷ», *վէպ*	1	20
10.	ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.—«ԽԱԹ-ՍԱԲԱ» (*հայ բոշան. կեանքից*	—	15
11.	ՄԱՐԻՍԵԱՆ, *տիկին* Մ.—«ՀԵՂԻՆԷ» (*մեծ վէպ*), *ա. մասը*	—	50
12.	» » » » *բ. մասը*	—	75
13.	ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ, Ց.—«ՍԵՒ-ԼԵՌՆՑԻՔ» (*տոհմագ. պատկ.*)	—	15
14.	ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ».	—	03
15.	» » «ՄԻՆԱՍԻ ԵՋԸ».	—	03
16.	» » «ԵԶԻԴ ԱՂՋԻԿԸ»	—	05
17.	» » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
18.	» » «ՆԻԱՁԻԱԾ ԿԵԱՆՔԸ». . .	—	03
19.	» » «ՄԵՐ ԻՆՉԸ ԿԸ ՊԱԿՍԻ . .	—	03

20. ՔԻՇՄԻՇԵԱՆՑ, ԱԼ.—«ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ» . . . . — 15
21. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.—«ՄԻԿՐՈԲՆԵՐԸ» . . . . . — 10
22. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ». — 10
23. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ.—«ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՒԱԾՔՆԵՐ» . . . — 15
24. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ». . . . . — 20
25. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ» . . . . . — 50
26. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ». . . . . — 50

Դիմել՝ Въ Редакцію журнала „МУРЧЪ“. *Վճարել կարելի է նաև պոստի մարկաներով։*

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա. Արասխանեանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարդարուած հին եգիպտական, փիւնիկական և ասորական գրութիւններով և Արևելքի հին պեսուութիւնների քարտէզով)։

281 *երես, յառաջաբան եւ նիւթերի ցանկ*

պատած է **800** *օրինակէ, փայլուն Ներկի վերայ*

Գինն է ճանապարհածախսով միասին **1** *բուբլի*

Պէտք է դիմել կամ հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, *և կամ՝* Въ центральный книжный магазинъ. *Ուսումնարաններին անուամ է* 20% *զիջում։*

ՍՏԱՑԻԵՑ „ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ" ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ ԵՒ ՇՈՒՏՈՎ ԿՈՒՂԱՐԿՒԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Առաջին գրքի բովանդակութիւնն է

I Յառաջաբան. Հրատարակիչ։

II Յովհաննէս Ամոս Կոմենիոսն և նորա մանկավարժութիւնը. Յ. Բարխուդարեանց։

III Պարիզի միջնակարգ դպրոցները (Լ. Լ. Մարկովից. Յ. Թ.)։

IV Ենայի ճեմարանական մանկավարժական սեմինարիոնը և նորա կազմակերպութիւնը. Յ. Բարխուդարեանց։

V Բարոյական փիլիսոփայութիւն. Սահակ քհ. Սահակեանց։

VI Կովկասեան մանկավարժների արդի դերը իրանց տաճկահպատակ ազգայիններին գործում. Յ. Տէր-Միրաքեան։

VII Համառօտ ծրագիր Ներսիս. Հոգ. ուսումնար. գիշերօթիկ սաների դպր. ճանապարհորդութեան. Ի. Յարութիւնեանց։

VIII Կամքի զարգացումն (Հոգեբ.-մանկավ. խորհրդածութիւն.)։

IX Լինհարդ և Գերտրուդ, գործ Հայնրիխ Պեստալոցցու. Ի. Ծ.

X Գրագիտութ. Ռուսաստանի մէջ. (Վիճակագր. տեղեկութ.)։

XI Պրուսիայի ժողովր. դպր. մասին. (Վիճակ. տեղեկութ.)։

XII Բուլգարիայի դպրոցները. (Վիճակագր. տեղեկութիւններ)։

XIII Ընդհ. տեսութիւն մանկավարժ. աշխարհից. Մարթօնիկ։

XIV Ընդհանուր Մանկավարժութիւն. Տ. Յիլլերի Ի. Յ.

XV Մանկական խաղերի նշանակութ. դաստիարակն. համար։

XVI Գրախօսութիւններ.

1) Արասխանեանց, Աւետիք, Արևելեան ազգերի հին պատմութիւնը. Բար.

2) Prof. Dr. Lazarus, Ideale Fragen.

3) Rembrandt als Erzieher.

XII Մանկավարժական տեղեկութիւններ։

XIII Մի քանի խօսք. Յ. Բարխուդարեանց։

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ»-ի բաժանորդագինն է 2 ր.

Իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ. . . . . 1 ր. 50 կ.

Երկրորդ գիրքը լոյս կը տեսնի դեկտեմբերին։ Բաժանորդագրութիւնը շարունակւում է։

«Մանկավարժական Գրադարան»-ի խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Іоаннесу Бархударіанъ. Николаевск. ул., № 23. Домъ Завріева.

Հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իւր հրատարակութեամբ մամուլի տակից դուրս են եկել և վաճառւում են կենդրոնական Գրավաճառանոցում հետևեալ նոր գրքերը.

№№		Ր.	Կ.
47	Հոսոսի Զեռատեսրը. Պոռոյտ մը Պոլսոյ թաղերուն մէջ. Կ. Պարոնեանի	1	—
50	Սասմայ Ծռեր. Գարեգին սարկաւագի	—	50
51	Ջաւախքի բուրմունք. Ե. Լալայեանի	—	25
52	Սպենսերի դաստիարակութիւն. թարգմ. Մ. Ղազարեանի.	1	—
53	Մրոռան. Շմիդտի.	—	20
54	Խան-Միրան, Սէյլանի.	—	20
55	Տարաս-Բուլբա, Գոգոլի.	—	40
57	Երկու քոյր, Ղ. Աղայեանի	—	25
58	Խրիմեան Հայրիկի Դրախտի ընտանիք և	—	60
59	Սիրաք և Սամուէլ.	—	50
60	Բրոքէրի՝ փորձանքների բժշկարան.	—	20
61	Մակբեթ Շէքսպիրի	—	50

Գրավաճառները կանխիկ վճարելով օգտւում են 20% զիջումով. ճանապարհածախսը ընկերութեան վրայ է։

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՈՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

աշխարհի մէջ կարեմեքենաների բոլոր ցուցահանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարեւոր ընկերներ տան տիկիններին և ամենայն օգնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆՒՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում՝ Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գոռվենկի պրոսպեկտի վերայ, Միքելմանովի տան և նրա բաժանմունքների մէջ։

Բաղում՝ Մեքայէլեան վաղվցում, Միրզա Աւագեանի տ.
Քութայիսում՝ Բուլվարի դէմ Զերեկովի տ.
Բաթումում՝ Նոռխ-Մելիքեան վաղվցում, Կուզովի տ.
Ասխաբադում՝ Գոստինենի դուռը № 2, Տ. Ա.Ֆանասեւի։
Երեւանում՝ իմ Ղամբարդ դարձակալների մօտ։

և նրանց ճանապարհորդող գործակալների մօտ

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.
ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԷՅԳԼԻՆԳԵՐ



Գնողները կարող են, եթէ կամենում են, գրամը հետզհետէ վճարել տակաւ քանակութեամբ, այն է՝ չաբաթով կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով գրամը վճարելու համար։

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնւում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են ասեղներ, թել, մեսաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաէժանագին գներով։

„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԻԱԾ Է

Տարեկան գին և. 10 ր.

Բաժանորդագրութեան համար դիմել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ՝ Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ.—*կենտրոնական գրավաճառանոց։*
» *պ. Յովհաննէս Թումանեանց, Միհոնի փողոց № 27։*
ՌՈՍՏՈՎ.—ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.—*Եղբ. Պ. և Գ. Ռենանեաններ։*
ԲԱԹՈՒՄ.—*պ. Սարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Ծոմեաններին)։*
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.—*պ. Ստեփան Արասխանեանց։*
ՄՈՍԿՎԱ.—*պ. Վարդան Թումանեանց* (Чистые Пруды д. Тупицына
» *պ. Ստեփան Վարդազարեանց,* (Б. Харитоньевскій, № 6)։
ՕԴԵՍԱ.—*պ. Միքայել Մուրադեանց (գրասն. եղբ. Ծոմեաններին)։*
ԹԱՒՐԻԶ.—*պ. Առաքել-բեկ Միքայելեանց։*
ՋՄԻՒՐՆԻԱ.—*պ. Յ. Տէր-Միրաքեանց (Մեսրոպ. վարժարան)։*
ՄԱՐՍԷՅԼ.—*պ. Սիմէոն Միրզայեանց։* Rue St Jacques № 86։
ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ *գտանուում է Թիֆլիս, Վեր. Ամիրեան փողոց, տուն № 8։*